



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2019

9(47.925)

U-76

027

9 (47.925)

4-76

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ը Ն Դ Մ Է Ձ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՀՌՈՎՄԱՅ

190 ԷՆ Ն. Ք. մինչև 428 յ. Ք.

48/14

ՀԱՄԱՌՈՑ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՅՍ ՇՐՋԱՆԻՍ


ԴՈԿՏ. Հ. Յ. ԱՍՏՈՒՐԵԱՆ

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն

12079

ՎԵՆԵՏԻԿ — Ս. ՂԱԶԱՐ

1912



2004


12723



129
34
9

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Աղբիւրք և մատենագրութիւն	1
Ներածութիւն	7
Արտաշէսեան հարստութիւն	17
Անցման շրջան	136
Արշակունեաց հարստութիւն	160
Յաշէրոշած	
Ա. Արտաւագդ Ա	329
Բ. Պլուտարքոսի արժանահաւատութիւնը .	334
Գ. Լուկոլլոսի և Տիգրանայ զօրաց թիւը .	338
Դ. Կորբուղոնի գրուածք իբր աղբիւր իր գործոց	334
Ե. Կենսագիրք կայսերաց	348
Զ. Հայոց պատմիչները	350
Է. Ժամանակագրութիւն հայ թագաւորաց	376
Յանկ	379



ԵՐԿՈՒ ԽՕՍԲ ՇԱՅ ԸՆԹԵՐՑՈՂԻՍ

Աշխատողքիչեր գոր կը ներկայացնեն հայ հասարակողքեան՝ ազատ քարգմանողքիչերն է իմ *Die politischen Beziehungen zwischen Armenien und Rom (Venedig 1911)* գրողքեան, գոր աղեղայ տարի իբր դոկտորողքեան աշարտաձառ ներկայացողքած էի Պրիպողքի (Չողեղեղիող) համարարանիև փիղիտփայական քաժնիև :

Ինժի աշարողողողքած նիղքը քեև շատ ընդարձակ էր աշարտաձառի մը համար, աակայն սիղող յանձն առի գայն, վասնղի աողող ինձ առիղ կ'ընժայողքեր հայկական պատմողքեան աժնեկեև կարևոր և միանղամայն աժնեկեև շիող շրղանիև վրայ իմ տեողողիչեև ներս և քննողողիչեևներս հրապարակ հանեղող :

Գղիտաողող նպատակս եղած է գեղեղիկեև աշեղի ձիղղը փնողող և մեր պատմողողքեան հիմները աշեղի գողացնեղ, աողող համար հարկ էր յողն և հողողմայեղի գրեղեղ քողող մատեևաղիղները աղքեև աղեղեղ, աղձանաղողողիչեև ներող և դրամներող յատողղ ողղաղողողիչեև


մ'ընծայել. մէկ խօսքով, հարկ էր մեր
պատմութեան աղբիւրները և վաշերագրերը
ձոխացնել, անոց տալ այն կարևորոչիւնը
որչափի արժանի են: Ինչպէս աղբիւրները
նոյնպէս նաև գտնուք մեկնող մատենագրոչ-
քիւնը անհոշնասպէս կը կորսնցնեն իրենց ի-
մաստէն, երբ անոք չկարդացոչին բուն իսկ
բնագրի շեղոչին մէջ, ոչր միայն հեղինակի
ոգին դրոշմոշած է: Մեր պատմութեան աղ-
բիւրները ևս այ իմ կողմանէս իրենց բնա-
գրին մէջ մի առ մի անաչառ քննութեան
անցնելոշ միջոց, յաճախ շատ գոհացոչիչ և
միևնչև հիմայ եղածներէն տարբեր արդիւնք-
ներոշ հասած են: Ոչչադիր աչքէ մը ան-
շոշտ պիտի չվրիպին հոն եղած ատաղճի և
տեսութեանց նորոչքիւնները:

Այսոշհանդերձ հեռի են կատարեալ գործ
մը ներկայացնելոշ յաշակնութեան. մանա-
շանդ մատենագրութեան մասին կարելի էր
դեռ շատ երկեր տեսնել և յիշել: Իրաւ է
որ Միշնչրնի մէջ, ոչր ընթացքիս նախկին
երկոշ տարիներն անցոշցած են, ձոխ գրա-
տոշն մը գործածելոշ դիշրոչքիւնն ոշնեցայ,
բայց իմ գրոչքիւնս առաշարկոշած և շա-
րադրոշած է Չոշիցերիոյ փոքրիկ քաղաքի
մը մէջ:

Գործս ամբողջական Հայոց պատմութիւն
մը չէ, այլ քննական ոշտոշմնասիրոչքիւն մը

վեց դարերոշ շրջանի մը: Քննադատութեան
չորոշքեկեկ զգոշչանայոշ համար ջանացի եիշ-
քը աստիճան մը պատմեշ և երկայացեկշ,
փախչեղով միանգամայն երկար խորհրդա-
ծոշքիշեկեկերե: Յաշեղոշմեկերը և փոփոխոշ-
քիշեկեկերը, որոնք գերմանեկեկ թնագրեկ կը
տարբերիկ, ասկաշ եկ և միայն հայ ըն-
թերցողի դիշորոշքեան համար կատարոշած:

Եոր պատմագիրեկեկ ոմանք Հայաստանը
բաժեկեցիկ Վերիկ և Ստորիկ բազաշորոշ-
քիշեկեկերոշ, և ոմանք պատմոշքիշեր աշան-
դեցիկ ըստ ազգայիկ և օտար պատմիչեկ-
երոշ: Ես աշեղորդ համարեցայ Յաւեղուածիկ
մեջ խօսիշ այս խեղիիրեկերոշ մասիկ, վասնզի
իրականիկ մեջ այդպիսի բաժանոշմեկեր տեղի
ոշեկեցած չեկ, և պատմոշքիշեր իր աղբիշը-
կեկերոշն մեջ ոշտոշմեկասիրած միջոց ոչ մեկ
րոշրջ պատճառ կամ վկայոշքիշեկ գտայ, որ
այդ բաժանոշմեկերը արդարացեկ: Պատմոշ-
քեան անկանխակաշ ոշտոշմեկասիրոշքիշեր կ'ը-
սե, թե Հայաստանի մեջ մեկ բազաշո-
րոշքիշեկ մը միայն եղած է և ազգայիկ ոշ
օտար պատմիչք այդ մեկ բազաշորոշքեան
վրայ միայն կը խօսիկ: Երկայ գորիծս մեջ
պիտի տեսնոշի այս ձշմարտոշքիշեր:



ԱՂԲԻԻՐՔ ԵՒ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ընդարձակ և քննական տեղեկութիւն մը տալ հոս բոլոր աղբիւրներուն , զորս գործածած եմ , պիտի չյարմարէր այս փոքրիկ աշխատութեանս շրջանակին մէջ : Այս թերին լրացնելու համար ջանացի քննազիրներու լաւագոյն հրատարակութիւնները միայն գործածել : Այսու հանդերձ թէ՛ գրութեանս ընթացքին և թէ՛ Յաշեղոշածին մէջ աւանդած եմ , ինչ որ քանի մը հին հեղինակներու վրայ մասնաւոր կերպով դիտելի և հաղորդելի կարևոր համարած եմ : Գալով մատենագրութեան , ջանացի ամենէն աւելի ծանօթ և աղբերաց քննութեամբ նշանաւոր եղած և այս շրջանիս համար հեղինակութիւն կազմող պատմագիրները և մասնագիտական երկերը ի խորհրդակցութիւն կոչել , առանց զանց ընելու խիստ քննութենէ մ'անցնել թէ՛ հնոց աւանդութիւնն և թէ՛ նորերու հասկացողու-

թիւնը, ինչ որ գործիս ամէն էջին վրայ
պիտի տեսնուի:

Հոս կը դնեմ գլխաւոր աղբիւրները և
մատենագրութիւնը, իրենց հրատարակու-
թիւններով և համառօտութիւններով.

Աղբիւրք

Ագաթանգեղոս, վէնետիկ 1862.

Ամմիանոս, հրտրկ. V. Gardthausen, Լայպցիկ
1874 (Bibliotheca Teubneriana).

Ապպիանոս, հրտրկ. L. Mendelssohn, Լայպցիկ
1879 (B. T.).

Գիողոր Սիկիլիացի, Ամսդերտամ 1746. (նաեւ
ի FHG հտր. Բ).

Եղիշէ, վէնետիկ 1852.

Եւսեբիոս, վարք Կոստանդ. Ֆրանքֆուրտ առ
Մայն 1822.

Զոնարաս, հրտրկ. G. Niebuhr և Buttner, Պոն
1841-1897.

Զոսիմոս, հրտրկ. G. Niebuhr, Պոն 1837.

Թեմիստիոս, հրտրկ. D. Petavius և J. Hardui-
nus, Բարիզ 1684.

Լիբանիոս, հրտրկ. J. Reiske, Ալտընպուրկ
1793-97.

Լիվիոս, հրտրկ. W. Weissenborn, Լայպցիկ
1897 (B. T.).

Լուկիանոս, Ամսդերտամ 1743.

Խորենացի Մովսէս, վէնետիկ 1865.

Կասսիոս Դիոն, հրտրկ. L. Dindorf, Լայպցիկ
1863 (B. T.).

Կիկերոն, հրտրկ. C. F. W. Müller, Լայպցիկ
1898 (B. T.).

- Մեմոնն Հերակլէացի (ի FHG հրտ. Գ).
 Յովսեպոս, Ամսդերտամ 1626.
 Յուլիանոս կայսր, Լայպցիկ 1796.
 Յուստինոս (= Տրոկոս Պոմպէոս), հրտրկ. J. Jeep, Լայպցիկ 1868 (B. T.).
 Պլինիոս, բնական պատմ. հրտրկ. E. Littré, Բարիզ 1860.
 Պլուտարքոս, Զուգակշիռք, հրտրկ. C. Sintensis, Լայպցիկ 1874 (B. T.).
 — Բարոյականք, հրտրկ. G. Bernardakis, Լայպցիկ 1889 (B. T.).
 Պողիւբիոս, Բարիզ 1880 (Didot).
 Սալուստիոս, հրտրկ. A. Eussner, Լայպցիկ 1897 (B. T.).
 Սուէտոնիոս, հրտրկ. C. L. Roth, Լայպցիկ 1894.
 Ստրաբոն, հրտրկ. A. Meineke, Լայպցիկ 1895 (B. T.).
 — հրտրկ. C. Müller, Բարիզ 1853 (Didot).
 Տակիտոս, հրտրկ. Inama & Ramorino, Միլան 1893.
 Փարպեցի Ղազար, վէնետիկ 1873.
 Փալստոս Բիւզանդացի, վէնետիկ 1889.
 Փրոնտինոս (Յուլիոս), հրտրկ. Gundermann, Լայպցիկ 1886 (B. T.).
 Փրոնտոյ (Կոռնել.), հրտրկ. A. Mai, Հոնովմ 1823.
 CIL = Corpus inscriptionum latinarum, Berlin 1863.
 FHG = Fragmenta historicorum græcorum, ed C. Müller, Paris 1883 (Didot).
 Paneg. lat. = Panegyrici latini, ed. A. Baehrens, Leipzig 1874 (B. T.).
 Vitæ (imperatorum). Այժմեան ընդհանուր գործածուածեան համեմատ սոսկ Vita ձևով կոչում կ'ընեմ Սպարտիանու, Կապիտոլինոսի, վուլկատիոսի, Լամպրիտիոսի, Տրեպելլիոսի և վոպիսկոսի անուամբ ծանօթ հաւաքածոյն, որ է SHA = Scriptores historiae augustæ, ed. H. Peter, Leipzig 1884.

Մատենագրութիւն

- A. Abruzzese, Le relazioni fra l' Armenia e Roma al tempo di Augusto, Padova 1903, (*Քաղուած* Rivista di storia antica *էն*, N. S. VII 2-3, 4; VIII 1).
- E. Babelon, Les rois de Syrie, d'Arménie et de Commagène, Paris 1890.
- H. Cohen, Medailles impériales, Paris 1959.
- K. Eckhardt, Die armenische Feldzüge des Lucullus, Leipzig 1909 - 10 (*Քաղուած* *Klio* *էն հար.* IX 400-412, *հար.* X 72-151; 192-231).
- J. Eckhel, Doctrina numorum veterum, Wien 1792-8.
- E. Egli, Feldzüge in Armenien von 41-63, in Büdingers Untersuchungen zur röm. Kaisergeschichte I, Leipzig 1868.
- G. Ferrero, Grandezza e decadenza di Roma, Milano 1902.
- V. Gardthausen, Augustus und seine Zeit, Leipzig 1891-1904.
- E. Gibbon, The decline and fall of the roman empire, London 1797.
- A. Guldenpenning und J. Ifland, Kaiser Theodosius der Grosse, Halle, 1878.
- K. Güterbock, Römisch-Armenien und röm. Satrapien im IV. bis VI. Jahrhundert, Königsberg 1900.
- A. von Gutschmid, Geschichte Irans und seiner Nachbarländer, Tübingen 1888.
- Untersuchungen über die Geschichte des Königreichs Osroëne, Petersburg 1887.

- V. Langlois, Numismatique de l'Arménie. Paris 1859.
- J. Marquart, Untersuchungen zur Geschichte Erans, Leipzig 1907, (*Քաղաքաբանական փոփոխություններ* Philologus 57, Suppl. X).
- Eransahr, Berlin 1901.
- Th. Mommsen, Römische Geschichte Bd. I-III, dritte Aufl. 1861; Bd. V, sechste Aufl. 1909 Berlin.
- Res gestæ divi Augusti (Monum. Ancyra.), zweite Aufl. Berlin 1879.
- Th. Nöldeke, Geschichte der Perser und Araber zur Zeit der Sasaniden, aus der arabischen Chronik des Tabari, Leyden 1879.
- Aufsätze zur persischen Geschichte, Leipzig 1887.
- PW = Pauly-Wissowa: Paulys Realencyclopädie der klassischen Altertumswissenschaft, neue Bearbeitung, herausgegeben von G. Wissowa, Stuttgart 1894.
- Prosopographia imperii romani sæc. I. II. III., von E. Klebs, P. Rohden und H. Dessau, Berlin 1897-98.
- G. Rawlinson, The sixth great oriental monarchy, London 1873.
- Th. Reinach, Mithridates Eupator, Paris 1890.
- G. R. Sievers, Studien zur Geschichte der röm. Kaiser, Berlin 1870.
- H. Schiller, Geschichte der röm. Kaiserzeit, Gotha 1883.
- Geschichte des röm. Kaiserreichs unter der Regierung des Nero, Berlin 1872.
- L. Tillemont, Histoire des empereurs durant les six premiers siècles de l'Eglise, Bruxelles 1707-1710.
- F. Tournebize, Histoire politique et religieuse de l'Arménie, Paris (1910).

ZDMG = Zeitschrift der deutschen morgen-
ländischen Gesellschaft, Leipzig 1847.

- Ա. Գարագաշեան, Քննական պատմութիւն Հա-
յոց, Թիֆլիս 1895:
- Յ. Գաթրըրճեան, պատմութիւն տիեզերական,
Վիեննա 1849-52:
- Հ. Հիւբշման, Հին Հայոց տեղւոյ անունները
(Թրգմ. Բ. Պիլէզիկճեան), Վիեննա 1907:
- Յ. Տաշեան, Ուսումնասիրութիւնք Ագաթանգե-
ղեայ գրոց, Վիեննա 1891:



Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն

Այն երկիրը որ մէկ կողմանէ Եփրատայ և Կասպիական ծովուն և միւս կողմանէ Կուրի և Տաւրոսեան շղթայից մէջ կը տարածուի, կը կոչուի Հայաստան: Բայց այն սկիզբէն ի վեր Հայոց հայրենիք եղած չէ: Հայք գաղթեցին հոն նախ քան զարուն Քրիստոսէ առաջ: Հայաստանի նախկին և իր արձանագրութիւններով մեզի ծանօթ բնակիչն եղած է Ասորեստանցիներէն Ուրարտացի կոչուած ժողովուրդը, որ հաւանականաբար ինքզինքը Խաղտի կը կոչէր՝ իրեն գլխաւոր աստուծոյն անուամբ: Խաղտեաց ծագումն ստոյգ կերպով հաստատուած չէ տակաւին: Իրենց բարձր քաղաքակրթութեան վկայ են իրենց տաճարներն և ամրոցները, ջրմուղները և այլ շինութիւններն, մետաղէ և քարէ արտադրութիւններն, ինչպէս նաև կաւագործութիւնը, բայց մասնաւորապէս այն բազմաթիւ արձանագրութիւնները, որոնց մնա-

ցորդք պահուած են դեռ մինչեւ այսօր :
 Իրենց քաղաքական զօրութեամբ Ասորես-
 տանցոց ամենէն վտանգաւոր թշնամիներն
 եղան, և թէպէտ ստէպ անոնցմէ պար-
 տուած, սակայն փայլուն յաղթանակներ
 եւս տարած են անոնց վրայ : Ինչպէս
 վինքլէր կ'ըսէ, «անոնք ասորեստանեայ
 թագաւորաց շատ աշխատութիւն տուին և
 անոնց հետ Ասորիքի տիրապետութեան
 վրայ կռուեցան¹» : Նոյն իսկ Միջագետ-
 քը, որ Ասորեստանցոց կը վերաբերէր,
 ազատ չէր անոնց յարձակումներէն :

Հնդկրոպական ժողովուրդներու հոսան-
 քովը թէ՛ Ասորեստանցիք և թէ՛ իրենց
 դրացի Խաղտիք կամաց կամաց տեղի տուին,
 մինչև որ իրենց անունը պատմութեան
 ասպարէզէն անյայտացաւ և դարուն նախ
 քան Քրիստոս² : Միևոյն ժամանակ կը

1. H. Winckler, in Helmolts Weltgesch. III 59.

2. Խաղտեաց մասին ընդհանուր կերպով միայն ցոյց
 կու տամ հետևեալ աշխատութիւնները. Lehmann -
 Haupt և W. Belckի տեղեկատուութիւնները in Si-
 tzungsb. der kgl. preuss. Akad. der Wiss. zu
 Berlin 1899 VII 116-120, թարգմանուած in Հանդէս
 Ասորեայ 1899 էջ 281-284: Նոյն տարուան երկրորդ
 տեղեկատուութիւն մը, անդ էջ 845-9, նմանապէս թարգ-
 մանուած Հանդէսի մէջ 1900, էջ 65-8. Zeitschr. für
 Assyrol. IX 82-99. 339-360. XIII 307-322. Լե-
 մանի յօդուածը in Deutsche Rundschau, 1884 Գեկտ.,
 in Wiener Zeitschr. für die Kunde des Morgen-
 landes, 1900 Heft 1-2 էջ 1-45, թարգմ. in Հանդէս

գտնենք Ուրարտացւոց աշխարհին մէջ նոր
և հնդեւրոպական ժողովուրդ մը . Հա-
յերը :

Ուսկի՞ց եկան Հայերը . ո՞ր աշխարհն
եղած է իրենց սկզբնավայրը :

Շատ փորձեր եղած են այս հարցմանց
պատասխանելու . պարզագոյն ճամբան կը
թուի ինձ անոնց լուծումը հնոց քով փրն-
տուի : Հերոդոտ և Եւտոքսոս կը համարին
թէ Հայք Փոլիւզացւոց ճիւղ մ'են , — հետե-
ւաբար Սրեմուտքէն եկած¹ : Սյս աւան-
դութիւնը կատարելապէս կը հաստատուի
հայերէն լեզուի քննութեամբ : Վասն զի
հայերէնը իւր ճայնաբանական օրէնքնե-
րով կը պատկանի — ինչպէս որ Հիւբըշ-
ման² ապացուցած է և իւր ցուցումն այժմ
առ հասարակ ընդունուած է գիտնական-
ներէն — հնդեւրոպական լեզուաց եւրոպա-

Ա.մ. 1900. իւր գիրքն Materialien zur älteren Gesch.
Armeniens und Mesopotamiens, Berlin 1907.
Հիւբըշմանի Հին Հայոց տեղոյ անունները (Թարգմ. հայ.
Վիեննա 1907). Հեաաքրքրական պատկերներ Delitzschի
Palasttore von Salmanasar IIին մէջ. Keilinschrift-
liche Bibliothek մեծ հաւաքածոյն և քաղուածոյ մը
3. Սանտալճեանի «Ասորեստանեայ և Պարսիկ սեպա-
գիր արձանագրութիւնք», Վիեննա 1901. Ed. Meyer,
Gesch. des Altertums I, Berlin 1909².

1. Հերոդոտ 7, 73. Եւտոքսոս առ Ստեփ. Բիւզան-
դացւոյ 'Αρμενία.

2. Hübschmann, Arm. Gramm. I 16; II 399
և այլուր :

կան խմբին և ո՛չ թէ իրանականին, թէև նա կարի շատ իրանական տարր կը բովանդակէ: Դեռ ուրիշ վկայութեանց վրայ ևս յենլով կարելի է ըսել, թէ Հայերը Փոխազացոյ հետ թրակիայէն, որ է՝ Եւրոպայէն Փոքր Ասիա եկած և Ալիսի հովտէն ու Փոքր Հայքէն անցնելով մտած են բուն մեծ Հայաստան, որ այնուհետև իրենց անունը կրեց և հոն հաստատուեցան՝ մասամբ նուաճելով և մասամբ ալ հալածելով խաղտիները: Հայերը կը գրտնենք վերջը Դարեհ վշտապետայ (521-486 Ն. Ք.) հետ — որուն Պեհիստանի արձանագրութեան մէջ առաջին անգամ կը հանդիպինք Արմինեա անուն — պատերազմի բռնուած, և երեք արիւնահեղ ճակատամարտներէն վերջ իրենց երկիրը մարապարսկական պետութեան սատրապութեան մը վերածուած, որ, ըստ Հերոդոտեայ, արքունի հարկաց երեքտասաներորդ շրջանակին կը պատկանէր: Իբր 400 թուականին Ն. Ք., Յունաց Նահանջ Բիւրին ատեն, երկիրը բաժնուած էր արևելեան և արևմտեան Հայաստաններու¹:

1. Քանի մը գրուածներ Հայոց ծագման և լեզուին վրայ. P. de Lagarde, Armenische Studien, Göttingen 1877. Fr. Müller, Armeniaca I 1865; II 1870; III 1871; IV 1874 Wien. F. Justi, Hand-

Արիմենեանց կործանմամբ երկիրը աւելի բնիկ իշխաններու և տիրող սատրապներու ձեռքն ինկաւ քան Մակեդոնացոց։ Աղեքսանդր երբէք չկոխեց հայկական հողը. իսկ Միհրանայ կամ Նէոպտղոմէոսի զայն նուաճած ըլլալը յոյժ տարակուսական է և մեզ բացայայտ կերպով չէ աւանդուած։ Կը թուի թէ Որոնտէսի սատրապական ընտանիքը հոն ամուր դիրք մը ստեղծած է իրեն և կրցեր է իր այդ դիրքը պահել։ Սելևկեանց ժամանակ «Հայաստան ճանչցաւ իրաւցնէ Սելևկոս Նիկատորի վերագոյն իշխանութիւնը, սակայն մնաց բնիկ իշխաններու ձեռքը, որոնք հարկ վճարելու միայն պարտաւորուած էին և միշտ փորձեր կ'ընէին այս կապն ալ խզելու»¹։

buch der Zendsprache, Leipzig 1864. H. Hübschmann, Armenische Grammatik, I. Teil 1895; II. Teil 1897 Leipzig. Նոյն, Armenische Studien, Leipzig 1883. Նոյն, Հին Հայոց տեղւոյ անուններն, Վիեննա 1907. P. Kretschmer, Einleitung in die Gesch. der griechischen Sprache, Göttingen 1896. Ed. Meyer, Gesch. des Altertums (Bd. I 613-629), Berlin 1909. Oberhummer und Zimmerer, Durch Syrien und Kleinasien (ԳԼ. XVI H. Zimmererէն իսկ ԳԼ. XXIV F. Hommelէն գրուած) Berlin 1899. G. Perrot et Ch. Chipiez, Histoire de l'art dans l'antiquité, vol. V. 1900.

1. Beloch, Griech. Gesch. III, 2. Abteil. 296. Յուսարինոս 38, 7.

Կը յիշատակուին իբրև այսպիսի աւելի կամ պակաս անկախ իշխաններ Մեծ Հայոց կողմերը Որոնդ կամ Երուանդ (իբր 318ին ն. ֆ.), Արտաւազդ (Ardoates, 315ին) և Արտաբազան (220ին). իսկ Փոքր Հայոց և Ծոփաց կողմերը Արշամ (235?), Քսերքսէս (217ին) և ուրիշներ. վերջապէս Արտաշէս ի Մեծ Հայս և Չարեհ, ի Ծոփս, որոնք, երկրին բնիկ ժողովրդեան զգացմանց վրայ վստահ և զաղտնի բանակցութեան մէջ մտնելով այդ ժամանակները Ասիոյ մօտեցող Հռովմայեցւոց հետ, ապստամբեցան Սելևկացիներէն և հիմնեցին անկախ թագաւորութիւն մը, որ Հռովմէն իսկոյն ճանչցուեցաւ : Արտաշէսով Հայոց պատմութիւնը կը մտնէ նոր շրջանի մը մէջ : Արդեօք Արտաշէս արքունի ցեղէն էր թէ սոսկ իր տաղանդով առաջ գացած նախարարական մը, կամ թէ նա յիշեալ թագաւորներու յաջորդ մ'էր, չենք գիտեր : Մեր գիտցածը այս է, որ նա բնիկ Հայ մ'էր և Սելևկեանց կողմանէ զօրավարի կամ կուսակալի պաշտօն կը վարէր ի Հայս. իրմէ առաջ Հայաստանը անկախ չէր և ինքն անոր անկախութիւն տուաւ. իրմով սկսաւ կարգաւորեալ հարստութիւն մը և թագաւորութիւն մը ի Հայս :

Այս թագաւորութեան Հռովմայ հետ ու-

Կեցած քաղաքական վերաբերութիւնները
 համառօտիւ ներկայացնելու միջոց՝ ստի-
 պուած եմ կէտեր և մասնական դէպքեր
 շօշափել, որոնք՝ ճշդօրէն խօսելով՝ թէև
 անձուկ կապ մը չունին երկու ժողովուրդ-
 ներու անչուլթեանց հետ, սակայն կարևոր
 են ամբողջը լուսարանելու համար: Ու-
 բեմն այս շրջանին Համառօտ Հայոց
 պատմութիւն մ'ընել կը պարտաւորէ
 նոյն իսկ նիւթը, ամէն վայրկեան պատ-
 մութեան կապը շրնդհատելու համար: Ար-
 դէն աղբիւրներուն պակասը յաճախ կը
 ստիպէ պատմիչը ընդհատելու իր պատ-
 մութեան կապը և վտանգի մէջ կը դնէ իր
 նկարագրութեան թելը կորսնցնելու: յի-
 րաւի երբեմն ան կը զուարճանայ աղբե-
 րաց առատութեամբ, բայց աւելի յաճախ
 հազիւ ովասիսի մը կը հանդիպի չոր ա-
 նապատին մէջ:

Հայոց պատմութեան այն շրջանը, ո-
 րուն վրայ մենք պիտի խօսինք, սովորու-
 թիւն է պարզապէս «Արշակունեաց թա-
 զաւորութիւն» անուանել, որ անճիշդ է:
 Հայաստանի մէջ Արշակունի հա-
 ըրստութիւն մը գոյութիւն ու-
 նեցած չէ մինչև քրիստոնէական
 թուականին 66 երորդ տարին:
 Մեր խօսելիք իբր 618 տարուան ընդար-


ձակ շրջանը՝ իրարմէ որոշակի երեք տար-
 բեր փոքրագոյն շրջաններու կը ստորա-
 բաժանուի: Առաջին, ժամանակ բնիկ հայ
 հարստութեան, Արտաշէս առաջնոյ, հիմ-
 նադրին ազգային թագաւորութեան, յո-
 ռում թագաւորները միայն հայ ժողո-
 վըրդեան շահերը կը դիտեն և որդին կը
 յաջորդէ հօրը. այս թագաւորները իրա-
 ւունք ունէին դրամահատութեան,
 որ այս հարստութեան վերջին թագաւո-
 րէն յետոյ այլևս կը դադրի բոլորովին:
 Երկրորդ, ժամանակ անցման, Արտաշէսի
 հարստութեան սպառումէն մինչեւ Արշա-
 կունեաց հաստատուիլը, յորում զանա-
 զան ցեղէ և զանազան տեսակ շահեր
 փնտոող իշխաններ կը նստին Հայոց գա-
 հին վրայ: Երրորդ, ժամանակ Արշակու-
 նեաց, յորում Պարթև թագաւորաց ընտա-
 նիքէն (= Արշակունի) ճիւղ մը, իբր Հա-
 յոց արքունի ցեղ՝ Հայոց գահին վրայ կը
 հաստատուի. այս հարստութիւնը ներկա-
 յացուց հայ և պարթև շահերը մինչև Ար-
 շակունեաց կործանումն ի Պարսկաստան
 Սասանեանց ձեռքով. անկից սկսեալ հայ
 և հռովմէական շահերը: Մինչև այս փո-
 փոխութիւնը՝ Հայոց գահը կը վերաբերէր
 Պարթևաց թագաւորին որդւոյն կամ եղ-
 բօրը, իսկ անկից յետոյ Հայոց թագաւո-
 րին անդրանկան իրաւունքն եղաւ այն:


Ասոնցմէ կը հետեւի բնական բաժանումն Հայաստանի և Հոռվմայ վերաբերութեանց.

Ա. Բնիկ հայազգի թագաւորաց կամ Արտաշէսեան հարստութեան ժամանակ (իբր 190 ն. Ք. — 1 յ. Ք.).

Բ. Օտարազգի թագաւորաց կամ Անցման շրջանի ժամանակ (իբր 1-66 յ. Ք.).

Գ. Պարթևական թագաւորաց կամ Արշակունեաց հարստութեան ժամանակ (66-428 յ. Ք.):





Չորդները քաջակորով իշխաններ չէին, ուստի քաղաքներ ու ժողովուրդներ իրենք զիրենք ազատ հռչակեցին կարգաւ: Պարթևաստանի, Բակտրիոյ, Հայաստանի և Հրէաստանի մէջ նոր թագաւորութիւններ կանգնուեցան: Բայց ամենէն աւելի ջլատեց Սելևկեանց զօրութիւնը Հռովմայեցւոց յառաջխաղացումն: Հպատակ ժողովուրդները Հռովմայեցիներէն խրախոյս և աջակցութիւն գտան: Սկիպիոնի փառաւոր յաղթութիւնը Անտիոքոս Մեծի վրայ, Մագնեսիոյ մօտ (190ին վերջերը¹ ն. Ք.) նշանը եղաւ անկախութեան մը ընդհանուր շարժման. Փոքր Ասիոյ մեծ մասն ինկաւ հռովմէական ազդեցութեան տակ: Արևելքի բոլոր ժողովուրդները վազեցին Հռովմ, և ծերակոյտը նպաստեց անոնց և ջանաց կատարել անոնց իղձերը:

Ի՞նչ ըրաւ Հայաստան:

Մագնեսիոյ պատերազմէն առաջ կ'իշխէին հոն երկու հայազգիներ, Արտաշէս և Չարեհ, իբր զօրավարք Անտիոքոս երրորդի: Անտիոքոսի բռնադատ թոյլտուութեամբ անոնք հոն իբր անկախ իշխաններ կը տիրէին, մէկն՝ արևելեան, իսկ միւսն՝ արևմտեան ու փոքրագոյն մա-

1. Wilcken առ PW «Antiochos» 25.

սին մէջ: Հոովմայ և թագաւորին մէջ պատերազմ ծագած միջոցին՝ անոնք առաջինին կողմը բռնեցին, և յաղթութենէն վերջը իրենք զիրենք թագաւոր հռչակելով, իբր այսպիսի ճանչցուեցան ծերակուտէն¹: Ամենահաւանական է թէ այս առթիւ առաջին հայկական նուիրակութիւն մը Հոովմ գացած է. գայս կը թելադրէ մեզի Պողիւբիոսի ընթերցումը²: Նոր թագաւորները, որոնք իբր ճարտար զօրավարներ փորձ էին զինուորական իրաց, գործածեցին իրենց բովանդակ տաղանդը և պատերազմական արուեստը, ընդարձակելու համար նոր հիմնուած տէրութիւնը: Զարեհ, բացի քանի մը ուրիշ տեղերէն, ունէր Ակիսենէ (Acisene Հանձիթ?), Ողոմանտիս և Ծոփք գաւառները, վերջնոյս կարկատիոկերտ մայրաքաղաքին հետ: Ասկէ վերջ Զարեհի անունը այլևս չլսուիր³:

Շատ աւելի մեծ էր մասը, զոր Արտաշէս Ա. գրաւեց: Նա առած էր Հայաստանի հարուստ և կարևոր կեդրոնավայրը. բերրի դաշտավայրեր, զբոյցներով նուիրական եղած լեռներ, ջրաշատ գետեր և հովիտներ — որոնց մօտ Հայը մինչև այսօր դեռ

1. Սարաբոն 11, 14, 15.

2. Հմմտ. Պողիւբ. ԻԲ 1, 7, 16.

3. Սարաբ. 11, 14, 2. 14, 5. ՊԼԻՆ. 6, 11, 10.

նախամեծարութեամբ մը կը նստի, — մէկ
 խօսքով Այրարատայ հողը: Նա կը միա-
 ցնէր քաջայանդուզն զօրավարի և հեռատես
 քաղաքագիտի յատկութիւնները: Այդ յատ-
 կութիւններն էին՝ որ զինքը հպատակու-
 թենէն անկախութեան, սպարապետութե-
 նէն թագաւորութեան բարձրացուցին: Այժմ
 ելաւ նա իր անձուկ սահմաններէն և ա-
 րևելակողմը՝ Մարաստանէն գրաւեց Կաս-
 պիական (յետնոց Փայտակարանը), Փաւ-
 նիտիս և Վասպուրական գաւառները, հիւ-
 սիսակողմը Վրացիներէն առաւ լեռնային
 Տայք (Պարիատրիսը), Կղարջք (Խորսենէ)
 և Գուգարքը, արևմտակողմը և հիւսիս-
 արևմտակողմը Խալիւբներէն և Մոսիւնիք-
 ներէն առաւ Կարինը և Դերջանը, Եկե-
 դեացը և Անտիտաւրոսի շուրջը գտնուող
 երկիրները Կատաւոններէն՝ իսկ հարա-
 ւակողմը Տմորիքը¹ Ասորիներէն առաւ²: Իր
 տիրապետումները մնայուն էին, և զիտցաւ
 զանոնք իր տէրութեան այնպէս յօդել, որ
 այնուհետև անոնք իբր բնիկ հայկական
 նահանգներ նկատուեցան:

1. Հիւրջման, Հայոց տեղոյ անունները, էջ 21. Mar-
 quart, Eransahr էջ 170 ծան. 2: Քիբերտի ի Mo-
 natschr. der k. Akad. der Wiss. zu Berlin 1873,
 S. 173 կ'ուզէ Տարօն կարդալ:

2. Սարաբոն 11, 14, 5. Հմմտ. Հիւրջման Հայ.
 Տեղ. 16-22.

Շատ լաւ հասկցաւ Արտաշէս իր տէրութիւնը միաձև ձուլել և ազգային գիտակցութիւն ներշնչել ժողովրդեան: Թերևս իր ժամանակ սկսան առաջին անգամ միաձոյլ տարր մը կազմել զանազան ցեղեր, որոնք լեռներով և ձորերով իրարմէ բաժնուած և իրարու հետ թոյլ կերպով կապուած էին: Չանաց վերջ մը տալ հին դրութեանը, որ անոր մէջ կը կայանար, որ երկրին մէջ տիրող շարք մ'իշխաններ իրարմէ անկախ կ'իշխէին և անկարող էին դիմադրելու օտարին: Անշուշտ ձուլելու այս ձևովին վերագրելու է յարձակումը, զոր 163ին ըրաւ նա իր վախճանած ընկերակցին Չարեհի թագաւորութեան վրայ: Արտաշէս կ'ուզէր անոր ժառանգները ասպարիզէն հեռացնել, բայց իրեն դրացի Արիարատ Ե (163 - 130) կապազովկացին, որուն դիմած էր Մերուտան թագաժառանգը, չուզեց համաձայնիլ անոր իղձերուն և Մերուտանը իր հայրենի գահը դարձուց¹: Արիարատ

1. Դիող. Սիկ. De virt. et vitiis (ԼԱ գրքէն) էջ 584. Maiի քով (Script. vet. nova coll. II 438) փոխանակ Մերուտանայ կայ 'Αρα. Ժ.* պակասաւոր անունը: FHGի մէջ Միւլլէր այս հատակաորը 163դ տարուան մէջ կը գնէ: Նոյնպէս Niese ի PW «Ariarathes» V 5 կ'ընդունի 163 թուականը: — Մերուտան անունը նորագոյն ձև մ'է հին Միհրորուզանին, հմմտ. Marquart, Eransahr էջ 170:

չէր ուզեր անշուշտ հզօր Արտաշէսը իրեն անմիջական դրացի ունենալ : Արտաշէս Ծոփքը իր երկրին միացնելու ծրագիրը կը տակեց իւր յաջորդներուն, որոնցմէ Տիգրան Մեծն կատարեց զայն :

Բայց զօրաւորագոյն կապը, որով այս հանճարեղ հիմնադիրը իր նոր գրաւած երկիրները և զանազան ցեղերը իրարու հետ միացուց, եղաւ մի միակ ազգային լեզուի մը գործածութիւնը մտցնելը¹ : Նա առաջին վայրկենին ըմբռնեց ազգային լեզուի մը կարևորութիւնը : Ամէն իրաւունք ունինք հաւատալու թէ նա ազգին մտաւորական և քաղաքակրթական զարգացման համար շատ բան ըրած է : Իր յունական դաստիարակութեամբը հիմը դրաւ Հայաստանի մէջ յունական կրթութեան մը, այն պէս որ իր յաջորդները պարծանքով մը յոյն գիտուններ իրենց արքունիքը կը պահէին :

Նա գիտցաւ գնահատել, ինչպէս յունական կրթութեան կարևորութիւնը, նոյնպէս մեծ կարգեղոնացւոյն Աննիբաղի զինուորական հանճարը : Սա Հայոց արքունիքը հիւր եղաւ : Աքսորեալը ինչ ինչ բաներ սովրեցուց Արտաշիսի և խորհուրդ

1. Սար. 11, 14, 5.

տուաւ անոր — երբ օր մը Երասխայ ափունքները շրջելով ի բնէ ամուր կէտ մը գտած էր — գետին ափանց վրայ քաղաք մը հիմնել: Նա իսկոյն ներկայացուց թագաւորին յատակագիծ մը: Արտաշէս սիրով ընդունեցաւ առաջարկը և կարքեդոնացւոյն յանձնեց անոր շինութեան վերակացութիւնը: Այս կերպով կանգնեցաւ մեծ քաղաք մը, երեք կողմէն պատկառելի գերով պաշտպանուած, իսկ ցամաքակողմէն պատուարով ամրացած, որ հիմնադրին առնուամբ Արտաշատ կոչուեցաւ և այնուհետև եղաւ Հայոց մայրաքաղաքը¹:

Յառաջակողմեան Ասիոյ ամէն կարևոր գործերուն մէջ իր բաժինը ունէր Արտաշէս: Անոր անունը կը գտնենք այն դաշինքին մէջ, զոր 180ին Ն. Ք. կնքեցին մէկ կողմանէ՝ Եւմենէս Պերգամոցին, Արիարաթ Ապադոլկացին և Բրուսիաս Բիւթանիացին, իսկ միւս կողմանէ՝ Փառնակ Պոնտացին և Միհրդատ արքայ Փոքր Հայոց: Վերջիններս Գաղատիոյ մէջ գրաւումներ ըրած էին, բայց առջիններուն անակնկալ միութենէն և յարձակումէն սարսափած, բռնադատուեցան ստորագրել խաղաղութեան դաշինք մը²:

1. Ստր. 11, 14, 6. ՊԼՈՒՄԱՐՐՐՈՍ ԼՈՂԿՈՂՈՍ 31. Իբոդ. ՍԻԿ. Ի FHG. II էջ X 9.

2. Պողիւբ 26, 4, 6.

Արտաշէսի յաջողութիւնները այնքան ատան գնով չգնուեցան: Սելևկեանք չէին ուզեր հրաժարիլ իրենց գերիշխանութեան իրաւունքէն Հայաստանի վրայ, հակառակ անոր որ Հռովմ զՀայաստան ազատ թագաւորութիւն ճանչցած էր: Ժամանակ մը Անտիոքոս Դ (175-164) ամենէն հզօր իշխողը դարձաւ յառաջակողմեան Ասիոյ մէջ: Յետ ակերելու պոնտական գաւառները՝ անցաւ Եփրատը, յարձակեցաւ Հայաստան և յաղթութիւն մը տարաւ հոն Արտաշէսի վրայ (իբր 165 Ն. Ք.)¹:

Պարտեալը ստիպուեցաւ յիրաւի ընդունիլ խաղաղութեան պայմանները, սակայն չմոռցաւ կրած ճախողութիւնը: Ուստի դաշնակցեցաւ Տիմարքոսի հետ, որ Սելևկեանց տեղակալն էր Մարաստանի մէջ և ինքզինքը իբր Մարաց թագաւոր ճանչցնել տուաւ ի Հռովմ ծերակոյտէն: Տիմարքոս, անտարակոյս Արտաշէսի գրնդերով միասին, քալեց Դեմետրիոս Ա՛ (162-152 Ն. Ք.) դէմ, և հասնելով գրաւեց Զեզմա Եփրատին մօտ, ոչ շատ հեռի

1. Դիոդ. Սիկ. ի FHG II էջ X 9. Ապպիան Ասորականք 45. 46 կը համարի թէ Արտաշէս պատերազմին մէջ բռնուած ըլլայ. Մակաբայեցիք Ա. 3, 37. Յովսեպոս Հնախ. 12. 297. Պորփիր առ Հերոնիմեայ Comment. in Daniel c. XI v. 44. սա կ'ըսէ թէ Արտաշէս յարձակում մը պատրաստած էր Ասորւոց վրայ:

Անտիոքէն և յետոյ յաղթանակաւ զԲաբելոնիա (161). Բայց յաջորդ տարին իր անգթութեան համար սպանուեցաւ¹ :

Այս գործակցութենէն վերջ մեր տեղեկութիւնները կը դադրին Արտաշէս Ա՛ վրայ: Նա դեռ մինչեւ ե՞րբ թագաւորեց՝ չենք գիտեր. սակայն ապահովապէս երեսուն տարի գահակալած պիտի ըլլայ ընդամէնը:

Իր բանակին զօրութեան վրայ խօսք կ'ըլլայ. կ'ուզենք հաւատալ որ Արտաշէս Ա. ինչպէս հայկական թագաւորութեան հիմնող, նոյնպէս ալ հայկական բանակին կազմակերպողն եղած ըլլայ² : Այս մեծ անձնաւորութիւնը անտարակոյս իրենց երգերով անմահացնել փորձեցին ի Հայս ամենահին ժամանակներէ ի վեր նըշանաւոր երգիչներ³ :

1. Գիող. Սիկ. ի FHG II էջ XII 13. Թուականի համար տես հոն Միւլլէրի ծանօթութիւնները և Gut-schmid, Gesch. Irans 40-42.

2. Գիող. Սիկ. ի FHG II էջ X 9.

3. Բնաւ տարակոյս չի կայ, որ հայ երգիչները այսպիսի թագաւոր մը, որ երկրին անկախութիւն տուաւ և ընկճեալ ժողովուրդը օտարին լծէն ազատեց, իրենց երգերով անմահացուցած պիտի ըլլան: Անոր համար կարելի է Խորենացոյ մօտ ինչ ինչ երգերը, որոնք Արտաշէս մը կ'երգեն, ասոր վերագրել. այսպէս Ա. 30, ուր Արտաւազդ որդւոյն և Արտաշատայ հիմնուելուն վրայ կը խօսուի. նոյնպէս Բ 53ը, ուր կասալիական գաւառին նուաճման վրայ կը խօսուի, կարելի է Սորա-

ԱՐՏԱԻԱԶԴԱՒ մասին այնչափ միայն գիտենք, որ նա Պարթևաց Միհրդատ թագաւորին հետ պատերազմեցաւ՝ սորա իշխանութեան վերջին տարիները¹ :

Իսկ ՏԻԳՐԱՆ ԱՒ մասին այսչափ միայն գիտենք, որ նա հայր էր Տիգրան Երկրորդի² :

Դեռ դարերու հեռաւորութեան մէջ ծածկուած այս մութին մէջէն արեգական պէս վեր կը բարձրանայ ՏԻԳՐԱՆ ԲՒ (95-55 ն. Ք.)³ փայլուն անձնաւորութիւնը,

բոն 11, 14, 5ի հետ կապ ունենայ: Գարձեալ պէտք էր աւելի ասոր քան որ և է ուրիշ Արտաշէսի մը (= Տըրդատ Ա?) վերագրել, ինչ որ Խորենացի Բ 59, վաճառականութեան, ճամբաներու շինութեան և ուրիշ բարեկարգութիւններու մասին ի Հայս Արտաշէսի մը անուամբ աւանդած է: Վասն զի, բացի անկից որ բազմաթիւ Արտաշէսներու մէջ սա միայն կը յիշուի յունական կրթութեամբ զարգացած, դժուարին պիտի ըլլար վերոյիշեալ բարեկարգութիւնները — թերևս նաև դեռ ինչ ինչ բաներ որոնք Վաղարշակի մը կը վերագրուին — յետաիգրանեան ժամանակի մէջ դնել. որովհետև Տիգրան Բի և անոր քաղաքակիրթ որդւոյն Արտաւազդայ ժամանակ պէտք ենք Հայաստանը մեծաւ մասամբ արդէն օժտուած ենթադրել յիշեալ կարգադրութիւններով:

1. Տես Յաշեղոշած, Ա. Արտաւազդ Ա:

2. Ապպիան Ասորականք 83:

3. Իր գահակալութիւնը ծանօթ է մեզ Պլուտ. Լոշկ. 21էն: Երբ 70ին Կղոզիոս իրեն եկաւ, ան կը թագաւորէր արդէն 25 տարիէ ի վեր: Իսկ իր մահը դնելու է 56 կամ 55ին, վասն զի Կիկերոն իր pro Sextio 58-59 ճառին մէջ, զոր 56 տարւոյ փետրուար 9ին խօսած է, կ'ըսէ Տիգրանայ համար, «դեռ այսօր կը թագաւորէ նա»: Միւս կողմանէ 54ին Արտաւազդ Բ արդէն գահի վրայ կը գտնենք:

զոր իր ժողովուրդը Մեծ կոչել սովոր է :
Անոր ապագայ գործերը լաւ դատել կա-
րենալու համար՝ պէտք է անոր անցեալին
վրայ ակնարկ մը նետել : Վասն զի այս
թագաւորին ժամանակ է՝ որ Հայաստան
տեսաւ իր բաղդի աստղին բարձրանալը,
գագաթնակէտն հասնելը և միանգամայն
նսեմանալը : Ան Հայաստանը տիեզերա-
կան պատմութեան մէջ մտուց և անոր
սահմանները մշտնջենապէս հաստատեց :
Իր թագաւորութիւնը հայկական ազատու-
թեան ոսկեդարն եղաւ : Իրեն ժամանակ
Հայաստան մեծ պետութեանց կարգն ան-
ցաւ :

Տիգրան՝ Արտաշէս Ա՛ սերնդէն և Տի-
գրան Ա՛ որդի էր¹ : Քառասուն տարի թա-
գաւորեց ան, և կեանքի շատ այլազան
հանգամանքներու մէջ գտնուեցաւ : Սկիզբը
պատանդ էր Պարթևաց քով². Թուի թէ
իր հայրը պարտութիւն մը կրած էր ա-
նոնցմէ : Բայց Պարթևք ոչ երբէք տիրե-
ցին Հայաստանի³ : Տիգրան ստիպուեցաւ

1. Ստրաբոն 11, 14, 15. Ապպիան Ասոր. 83.

2. Ստրաբոն. անդ : Յուստինոս 38, 3. prologi 42.
Ապպիան Ասոր. 83. Արիանու քով (FHG III 588)
պահուած աւանդութիւն մը զինքը նախ սատրապ կ'ընէ
աշխարհագրապէս զեռ անորոշ տեղւոյ մը մէջ, Χολο-
βητηνῆ.

3. Ստրաբոն 16, 1, 19.

Եօթանասուն հայկական հովիտներ իբր
փրկանք տալ Միհրդատ ԲԷ, որպէսզի կա-
րենայ իր հայրենիքը դառնալ¹:

Իր հասուն հասակը, իր բռնադատ դե-
զերումն օտար երկրի մը մէջ՝ իրեն բա-
ւական ժամանակ և առիթ տուած էին լըր-
ջօրէն մտածելու և ուսումնասիրելու իր
ապագայ կեանքը, իր ծրագիրները: Գահ
ելաւ նա արդէն իբր փորձ մարդ մը և

1. Սար. 11, 14, 15. Յուստին 83, 3. Gutschmid, Gesch. Irans 80 կը համարի թէ Պարթևք Տիգրանը զէնքի զօրութեամբ հայրենի զահին վրայ դրին ընդդէմ իր հակառակորդ Արտաւազդ առաջնոյ: Սակայն այս բանս ոչ մէկ պատմիչ աւանդած է մեզ. Սարաբոն կ'ըսէ պարզապէս թէ դարձաւ, ἔτυχε καθόδου, իսկ Յուստինոս՝ թէ հայրենի թագաւորութիւնը դրկուեցաւ, in regnum paternum remissus. Ուրեմն զէնքի խնդիր չկայ: Եթէ Պարթևք իրեն օգնած ըլլային հակառակորդի մը դէմ, այն ատեն Տիգրան անշուշտ երախտապարտ պիտի ըլլար իրենց և Սարաբոնի յիշած վճարոշմն պիտի հասկնայինք իբրև նոշեր: Բայց այդ այդպէս չէ. վասն զի Տիգրան զայն իբրև փրկանաց զին կը համարէ և Եօթանասուն հովիտները պատերազմով ետ կ'առնու: Հետևաբար Տիգրանայ պատանդութենէ ազատութիւնը Պարթևաց Արտաւազդ Աի դէմ պատերազմին ժամանակ դնելը շատ քիչ հաւանական է: Միևս կողմանէ դիտելու է որ Արտաւազդ շատ կանուխ կ'ապրէր, ինչպէս որ մենք փորձեցինք ապացուցնել Յաշեղոշած Աին մէջ: Մենք չենք գիտեր թէ Տիգրան երբ պատանդ էր. Սարաբոնի խօսքերն աւելի կ'ուզեն ըսել թէ իր զահակալութենէն անմիջապէս առաջ չէր. այդ ժամանակ նա 45 տարեկան էր: Նաև Յուստինոս ասոր համաձայնիլ կը թուի երբ կ'ըսէ. Erat eo tempore Tigranes rex Armeniae, obses Parthis ante multum temporis datus, nec olim in regnum paternum remissus.

իւր ուշադրութեան առարկայ ըրաւ զլիաւորապէս բանակին վերականգնումը, «հետեակազօրը ձիերու վրայ բարձրացուց, պարսաւորները քաջ աղեղնաւորներ ըրաւ, շերտաւորները սրով և նիզակով զինեց և մերկերը (γυμνής, բերկազէն) վահանով և երկաթեայ զգեստով զրահաւորեց»¹: Ինքը կրնար միշտ վստահ ըլլալ բանակին վրայ, վասն զի արդէն ինքն իբր զինուոր մը կ'ապրէր, և ութսնամեայ ալեւորութեան ժամանակ իսկ իր զօրաց զլուխը անցած պատերազմի դաշտին վրայ անոնց առաջնորդեց: Յատուկ խնամոց առարկայ ըրած էր հեծելազօրը, թեթևազէն և զրահաւոր զնդերու բաժնուած, որ և յատկապէս ճարտար էր հին արևելեան փախուստ ձևացնելու և վազած միջոցին յետսակողմը նետեր արձկելով զինքը հալածող թշնամին վիրաւորելու մէջ²:

Երեք տարուան մէջ Տիգրան այնպիսի համբաւ մը շինեց, որ իր բարեկամութիւնը դրացիներուն ցանկալի եղաւ: Պոնտոսի մէջ գրեթէ քսան տարիէ ի վեր կ'իշխէր Միհրդատ Զ Եւպատոր: Երկու մեծ մարդիկը շուտով հասկցան զիրար, գնահա-

1. Խորեն. Ա. 24. հմմտ. Պլուտ. Լուկ. 26:

2. Կասսիոս Դիոն 36, 7:

տեցին փոխադարձաբար մէկզմէկ և իսկոյն առնչութիւններ հաստատեցին իրարու հետ: Որովհետև երկուքն ալ իրարու պէտք ունէին, մէկը իր յանդուգն ծրագիրները ի գործ դնելու համար, իսկ միւսը առաջնոյն բարեկամութեամբը ապահովուած իր երկրին սահմաններն ընդարձակելու համար: Անոնք կնքեցին գաղտնի դաշինք մը, որուն մէկ գլխաւոր պայմանը ծանօթ է մեզի՝ մինչև այսօր հասած պարբերութեան մը շնորհիւ, որ է, միասին մղուած ամէն պատերազմներու մէջ՝ աւարը, գերին և գանձերը Տիգրանայ պիտի ըլլային, իսկ երկիրը՝ Միհրդատայ: Երկրորդ յօդուածով մը որոշած ըլլալ կը թուին, թէ վերջինը դէպի հիւսիս և արևմուտք — ուրեմն Հռովմայ դէմ, — իսկ առաջինը դէպի արևելք և հարաւ — ուրեմն Պարթևաց դէմ — պիտի ուղղէր իր աշխարհակալական քայլերը: Այս կերպով երկուքն ալ իրենց կոնակէն ապահովուած էին: Բացի ասոնցմէ նաև փոխադարձ օգնութեան խոստումներ տրուեցան, թէև Հայաստանի մէջ Պոնտացի օգնական զնդեր չենք տեսներ, բայց հայ զինուորներ կը գտնենք Միհրդատայ ծառայութեան մէջ: Այս դաշինքին իբրև կնիք ծառայեց խնամութիւն մը, որով Տիգրան ի-

րեն հարս առաւ Միհրդատայ գեղեցիկ և կիրթ դուստրը կղէտպատրան¹ :

Միհրդատայ գլխաւոր ծրագիրներէն մէկն էր գրաւել կապաղովկիան, իր ազդեցութեան տակ ձգել Բիւթանիան : Այս բանս երկար շփոթութիւններու պատճառ եղաւ, և Տիգրան նախ այս խնդիրներու մէջ գործակից եղաւ Պոնտացւոյն : Հայր Միհրդատայ յորդորմամբ և անոր շահերուն համար մտաւ կապաղովկիա իրեն և պոնտական գնդերով, անկից հալածեց հռովմէական ծերակուտէն դրուած Արիոբարզանը՝ որ Հռովմ փախաւ, և հոն կըրկին անգամ հաստատեց Միհրդատայ փոքրահասակ որդին Արիարաթ Ը և Գորդիոսը՝ իբր անոր խնամակալ (93 ն. Ք.) : Բայց քիչ մը վերջ (92ին) Սուլլա Արևելք եկաւ իբրև փոխպրետոր կիլիկիոյ, հալածեց թագաւորական գնդերը մինչև Եփրատ, և կապաղովկիոյ գահին վրայ հաստատեց Արիոբարզանը, որ Հռովմէասէր կը կոչուէր² :

1. Յուսարին 38, 3. Պլուտ. Լուկ. 22. Ապպիան Միհր. 104. Th. Reinach, Mithr. Eupat. էջ 105 կրտ. L'alliance politique fut scellée par une union de famille; Tigran épousa une des filles de Mithridate, Cléopatre, princesse trois fois moins âgée que lui, mais douée d'une intelligence ouverte et d'un courage viril.

2. Պլուտ. Սուլլա 5. Յուսարին 38, 3.

Երկու թագաւորները սակայն չմոռցան Հռովմէն ընդունած հարուածնին: Սուլլայի հեռանալէն (իբր 90) անմիջապէս վերջ սկսան շփոթութիւնները Բիւթանիոյ մէջ. վասն զի Նիկոմեդէս Բ (141—91) հոն մեռնելով՝ երկու զաւակ թողած էր. Հռովմ հաստատեց երիցագոյնը Նիկոմեդէս Գ (91—74), մինչդեռ կրտսերը Սոկրատ՝ Միհրրդատայ քով ապաւինեցաւ: Միհրդատ պոնտական բանակ մը տուաւ Սոկրատայ, որ իր եղբայրը հալածեց և գրաւեց Բիւթանիան: Միևնոյն ժամանակ դրդեց Միհրդատ նաև Տիգրանը, — վասն զի ինքը չէր ուզէր Հռովմայ հետ յայտնի կռուիլ Սուլլայի հետ կրած դաշինքին պատճառաւ, — որ իր Միհրան և Բագուաս (Μίθρας, Βαγώας) զօրավարներուն ձեռքով կապաղովկիան գրաւեց Միհրդատայ հաշուին: Արիոբարզան երկրորդ անգամ փախաւ հոնկից և երկու հալածեալ թագաւորները Հռովմ գացին¹: Մերակոյտը այնպէս ձեացուց, իբր թէ Միհրդատ ո՛ր և է դեր մը կատարած չըլլայ, և խնդրեց անկէ որ երկու թագաւորներու վերստին հաստատուելուն օգնէ: Միհրդատ բնակա-

1. Յուստին 38, 3. Ապպիան Միհր. 10. 11. Reimach, Mithr. Eup. 97-101.

նապէս զլացաւ ո՛ր և է օգնութիւն, որով հետև կապաղովկիոյ վրայ պահանջներ ունէր¹ : Ուստի փախստեայ թագաւորները հաստատուեցան իրենց գահին վրայ միայն ծերակուտական տեղակալ Ակուիլիոսի և Մանլիոս Մալտինոսի ձեռքով : Բայց Ակուիլիոս թեթևամիտ մէկն էր և Նիկոմեդ Բիւթանացին իր թագը շատ սուղի գնած էր Հռովմայեցիներէն, ուստի զանոնք գոհացնելու համար սկսաւ թագաւորը աւազակային արշաւանքներ ընել պոնտական երկիրներուն մէջ : Միհրդատ գանգատեցաւ Մանլիոսի, որ միայն երկդիմի պատասխաններ տուաւ իրեն, այն ատեն Միհրդատ իր Արիարաթ որդին զօրքով կապաղովկիա դրկեց և Արիոբարզանը երրորդ անգամ անկէ հալածեց : Ասով թշնամութիւնները յայտնապէս սկսած էին և ահաւոր պայթումի մը կը սպասէին, որ շատ չուշացաւ գալու² :

Մինչդեռ Միհրդատ Հռովմայեցւոց դէմ կը զինուէր, Տիգրան իր տէրութիւնն ընդարձակելու գործով զբաղած էր : Ան իր երկրակալութիւնները հաւանականաբար թոփքով սկսած է : Հոն կ'իշխէր դեռ Չա-

1. Ապպիան Միհր. 11

2. Ապպ. Միհր. 15. Reinach, Mithr. Eup. 115-120.

րեհի սերունդէն մէկը, Արտանէս, որուն երկիրը Տիգրան առանց մեծ դժուարութեան Հայաստանի կցեց¹: Ծովքէն անցաւ Կորդուք, որուն բնակիչները երբեմն Յունաց նահանջող բիւրին աւելի մնաս հասուցած էին՝ քան նոյն իսկ Պարսից թագաւորը, և գրաւեց Սարիզ և Սիդալկ ամուր քաղաքները և Բինակ անառիկ ամրոցը: Այս նահանգին բնակիչները յետոյ կարևոր ծառայութիւններ մատուցին Տիգրանայ, թէ իրենց քաջութեամբ և թէ իրենց ճարտարութեամբ մեքենական արուեստներու մէջ²:

Երբ գրաւեց Տիգրան նաև ուրիշ զանազան փոքր իշխանութիւններ և քաղաքներ, ինչպէս Եդեսիա, իր զօրութիւնը և իր բանակը զգալի կերպով աճեցան, այնպէս որ նոյն իսկ Ասորիներ իրենց ապահովութիւնը և փրկութիւնը անկէ սկսան յուսալ³: Որովհետև Ասորաց թագաւորութիւնը վերջին Սելևկեաններու ժամանակ

1. Ստրաբոն 11, 14, 15.

2. Ստր. 16, 1, 24. Պլուտ. Լուկ. 21. 26. 29.

3. Յուստինոս 40, 1 կ'ըսէ բացայայտ կերպով թէ Ասորիները զՏիգրան կանչեցին. իսկ Ապպիան նոյնպէս բացայայտ կերպով կը հաստատէ թէ Տիգրան զանոնք զէնքով նուաճեց: Երկուքն ալ կրնան իրաւունք ունենալ, վասն զի Տիգրան մէկ կուսակցութենէ կանչուեցաւ, իսկ միւսը զէնքով հպատակեցուց:

այնչափ տկարացեր էր ներքին կոիւնե-
րով, որ հոն զօրաւոր կուսակցութիւն մը
կազմուեցաւ՝ իրենց երկրին անդորրութիւ-
նը օտարին օգնութեան մէջ փնտռելու :
Արդ այս կուսակցութիւնը նախադասեց
Տիգրանը աւելի քան Միհրդատը և Պար-
թևները. որովհետև Տիգրան, բացի իւր
յատուկ ոյժերէն, Պոնտացւոյն հետ խնա-
մութեամբ կապուած էր և Պարթևաց հետ
դաշնակից էր : Ուստի ՏԳին դիմեց ան
դէպ ի Ասորիք խոշոր բանակով մը,
զոր Ապպիանոս չափազանցելով 500,000
զինուորէ կազմուած կը համարի, հալա-
ծեց Անտիոքոս Եւսեբիոս թագաւորը, նուա-
ճեց դիմադրող քաղաքները և փորձեց ձեր-
բակալել նաև կղէոպատրա կամ Սելենէ
թագուհին, որ քաղաքները իրեն դէմ կը
զրգռէր : Տիւրոսի, Սիդոնի, Պերիդոսի և
բովանդակ Փիւնիկիոյ քաղաքներուն մէջ
հայկական դրօշը բարձրացաւ : Դամաս-
կոսի վրայ տիրապետութեան կը վկայեն
դեռ իր դրամները¹ : Իսկ Անտիոքայ մէջ ի-
րեն ընդհանուր տեղապահ կարգեց Բա-
զարատը, որուն տրամադրութեան տակ
դրաւ բազմաթիւ գնդեր : Այսպէս այս

1. Eckhel, Doctr. num. III 248. Հմտ. Ամմիանոս
13, 8, 9:

նոր գաւառը կը տարածուէր եփրատական Ասորիքէն կամ կոմագինէէն — որ է՝ այսօրուան Չէյթունի և Մարաշու կողմերէն — մինչև Եգիպտոսի սահմանները¹։ Հայկական շատ հին և շատ տարածուած աւանդութեան մը համեմատ, Տիգրան՝ մեծ բազմութիւն մը Հրէաներու ի Հայս փոխադրեց և հայ պատմիչներ գիտեն բազմաթիւ հրէական գաղթականութիւններ ի Հայս²։ Յովսեպոս այսչափ միայն կը պատմէ որ, երբ Տիգրան ահագին բանակով մը Փիւնիկիոյ մէջ հրէական սահմանէն ոչ շատ հեռի կը գտնուէր, Աղեքսանդրաթագուհին, զարհուրելով Տիգրանի մօտաւորութենէն, հրեշտակութիւն մը խրկեց անոր թանկագին նուէրներով, և աղաչեց որ իր ժողովրդեան հանդէպ բարեացակամ ըլլայ։ Տիգրան ընդունեցաւ թագուհւոյն նուէրները և ապահովեց զայն իր բարի տրամադրութեանց մասին³։

Իրեն Ասորիքի վրայ ստացած իշխա-

1. Ապպիան Ասոր. 48. 49, հմմտ. Marquart, E-ransahr էջ. 174. Reinach, Mithr. Eupat. 312 4'ը-սէ. La Syrie respira; pendant quatorze ans elle connut, avec l'humiliation d'une domination é-trangère, la paix, la sécurité et la prospérité.

2. Փաւստոս Դ 55. Խորեն. Բ 14. 16:

3. Յովսեպոս Հնախօսութիւն 13, 16. Հրէական պատերազմ 1, 5, 3.

նութեան բնական հետեանքովն էր, որ Տիգրան սկսաւ պահանջներ ընել նաև Կիլիկիոյ և յարակից երկիրներուն վրայ. վասն զի Կիլիկիա կը համարուէր Սելևկեան պետութեան մաս մը:

Իբր 77ին, յետ մահուան Սուլլայի, Տիգրան երրորդ և մեծագոյն արշաւանք մ'ալ ըրաւ ի Կապադովկիա: Այս արշաւանքն ալ ընելուն՝ Միհրդատ մղած էր զինքը: Տիգրան Կապադովկիան պատեց իբրև ցանցի մը մէջ, անոր բնակիչներէն, ըստ Ապպիանու՝ 300,000 հոգի, փոխադրեց ի Միջագետս և գլխաւորապէս իւր նորակառոյց Տիգրանակերտին շրջակայքը և մէջը, ուր արդէն ուրիշ օտարականներու բազմութիւն մը փոխադրած էր¹: Տիգրան կ'ուզէր արևելեան հին բռնապետներու նման բռնի միջոցներով Միջագետքը բազմամարդացնել, ինչպէս որ վերջին ժամանակներս Շահ Աբաս հայկական ամբողջ քաղաքներ Պարսկաստան փոխադրեց, իր երկրին մէջ ձեռագործը, ճարտարարուեստը և վաճառականութիւնը զարգացնելու համար:

Այս կերպով գրաւեց Տիգրան Կապադովկիոյ, Կիլիկիոյ և Կոմագինէի մէջ քա-

1. Ապպիան Միհր. 67.

դաքներ, որոց գեղարուեստի հարստութիւնները¹ ի Հայաստան, իսկ բնակիչները թէ ի Հայս թէ ի Մարս և թէ ի Միջագետս փոխադրեց, որովհետեւ կ'ուզէր այս աշխարհներուն մէջ քաղաքակրթական տարրը ծաւալել²:

Թէ բուն երբ սկսան իր պարթևական պատերազմները և աշխարհակալութիւնները, չենք գիտեր ճշդիւ: Այսչափը յայտնի է՝ որ անհուն ատելութիւն մ'ունէր ան Պարթևաց դէմ, և ոչ ոք կրցաւ իրաւցնէ այնչափ խոնարհեցնել զանոնք՝ ինչպէս Տիգրան³: ԳՁ թուականին Պարթևաց սահ-

1. Փոքր Ասիոյ յունական քաղաքներէն ի Հայս բերաւ յունական դից արձաններ. «Առաջին գործ զմեհեանսն շինել կամեցաւ. իսկ քրմացն որ եկեալ էին ի Յունաց, զմտաւ ածեալ զի մի ի խորագոյն Հայս վարիցին, պատճառեցան ըղձութիւնս, իբր թէ դիքն անդէն կամին զբնակիլն: Որում հաւանեալ Տիգրան, կանգնեաց զուժովական պատկերն Դիոսի յամուրն յԱնի, և զԱթենայն ի Թիւ, և զԱրտեմիդայ զմիւս պատկերն յԵրիզայ և զԵփեստուն ի Բագայառինջ: Բայց զԱփրոզիտայ զպատկերն իբրև Երակլեայ տարփաւորի, անորին պատկերին Երակլեայ հրամայեաց կանգնել Յաշտից տեղիսն», Խորեն. Բ 14: Փոքրասիական արձանագրութեան մը մէջ կ'ըսուի Պոմպէոսի համար, «Աստուածոց արձանները և ուրիշ դրօշեալները և միւս մտացած զարդը թշնամիներէն առնելով, դիցուհւոյն նուիրեց...» Դիոդ. Սիկ. առ Mai, Script. vet. nova coll. II 129.

2. Ապպիան, Ասոր. 48. Սարաբոն 11, 14, 15. Յուստին 40, 1; 2. Յովսեպոս Հնախ. 13, 16. Դիոն. 36, 18. Մալալաս 8. Պլուտ. Լոշկ. 21, Պոմպէոս 33.

3. Պլուտ. Լոշկ. 21. Marquart, Eransahr էջ 174

մանը կը հասնէր մինչև Եփրատ, ուր անոնք առաջին անգամ Հոովմայեցիները ճանչցան Սուլլայի անձին մէջ¹: Յամին 84 կը յիշուի անոնց դաշնակցութիւնը Տիգրանայ հետ², և ինծի անհաւանական չթուիր՝ Տիգրանայ պարթևական կարևոր աշխարհակալութիւնները և ասոնց հետ կապ ունեցող Տիգրանակերտի հիմնարկութիւնը սոյն թուականէս վերջ և իր ասորական տիրապետութեան հետ վերաբերութեան մէջ դնել: Որովհետև ոչ մէկ վկայութիւն ունինք ասոր հակառակ, և միակողմանէ ծանօթ է որ Միհրդատ Բ՛ պէս հզօր թագաւոր մը կ'ապրէր դեռ 86ին ի Պարթևս:

Ուրեմն 84էն վերջն էր որ մտաւ Տիգրան ի Միջագետս, նուաճեց ամուր տեղերը և գրաւեց Մծբինը, որ ռազմագիտական յոյժ կարևոր կէտ մ'էր. զայն եռապատիկ պարսպով և խրամով մը ամ-

կը համարի որ, Պարթևք ստիպուած ըլլան դաշինքով մը ոչ միայն Միջագետքը Տիգրանայ յանձնել, այլ նաև իրենց արքայից արքայ տիտղոսէն ևս հրաժարիլ ի նըպաստ անոր: Եւ յերաւի 89-87 և 80 տարիներէն մնացած արձանագրութեանց մէջ յիշուող Գոտարզ Ա և Ռոտէս Ա թագաւորները սոսկ արքայ տիտղոսն ունին: Եւ արդեօք Լուկուլլոսի զՏիգրան միայն արքայ կոչելը Պարթևներն իր կողմը շահելու համար չէ՞ր:

1. Պլուտ. Սոշլլա 5.

2. Յուստին 40, 1.

րացուց և իր հարաւային զինարանը և պատերազմի գործերուն կեդրոնն ըրաւ : Անոր վերակացութիւնը յանձնեց իր Խուրս (կամ Գոռ Γούρας) եղբոր : Արաբացի ցեղերն ալ նուաճեց և հաստատուն կերպով բնակեցուց զանոնք Եդեսայի և Խառանու մէջ¹ :

Տիգրան մտաւ Ադիաբէն և աւեր դարձուց Նինուէի և Արբեւայի շրջակայքը, յետոյ քալեց փոքր Մարաց կամ Ատրպատականի մէջ գտնուող Ադրաբանան դղեակին վրայ, որ հազիւ տասը քիլոմէդր հեռի գտնուող Եկբատանայ միջնաբերդը կը համարուէր : Այս ամրոցին առումը մեծապէս բարձրացուց իր վարկը թէ՛ Պարթևաց և թէ՛ իր զինուորներուն առջև : Յետոյ իրեն հարկատու ըրաւ Կասբից ծովուն հարաւ և արևմտակողմը տարածուող երկիրները մինչև Վրաց Կուր գետը : Հոն Աղուանից և Վրաց թագաւորներն իրեն դաշնակից եղան, ինչպէս որ Մարաց և Կորդուաց իշխողներն ալ իր աւատընկալներն եղած էին : Պէտք է որ Պարթևաց և ուրիշ ժողովուրդներու հետ Տիգրան յաղթական դեռ ուրիշ շատ պատերազմներ մղած ըլ-

1. Ստրաբոն 16, 1, 26 ; 1, 27. Պլուտ., Լուկ. 26, Պունպ. 39.

լայ, ինչպէս որ իր պետութեան սահմանները զայն ենթադրել կու տան. սակայն դժբաղդարար իր դիւցազնութիւններն ու յաջողութիւնը այնքան պատմողներ ունեցած չեն ինչպէս իրեն ձախողութիւնները¹ :

Տիգրան կը գտնուէր հիմայ իր զօրութեան գագաթնակէտին վրայ : Համեստ սկզբնաւորութենէ մը Մեծ թագաւոր մ'եղած էր, և հայրենի ժառանգութիւնը բազմապատիկ ընդարձակած և ամրացուցած էր : Կրնար հպարտութեամբ իր շուրջը նայիլ և ամենայն իրաւունքով ինքզինքը «արքայից արքայ» անուանել :

Այս զօրութիւնը և զինուորական ոյժը կարելի չէ երևակայել առանց երկրին ներքին բարեկեցութեան : Հայը վաճառական ժողովուրդ մ'եղած է : Մենք կը տեսնենք զինքը ամենահին ժամանակներու մէջ, որ իր ոգորահիւս և կաշեայ նաւակներուն մէջ նստած Եփրատայ ու Տիգրիսի վրայէն դէպ ի Բաբելոն կամ Միջագետքի շահաստանները կը նաւէ, և Միջին դարու մէջ կարաւաններով Եւրոպիոյ մեծ վաճառատեղիներու մէջ արեւելեան ապրանքներ ի ցոյց կը դնէ : Եթէ այս

1. Ստրաբոն 11, 14, 15. Իսիդոր Խար. ի Geogr. graeci min. I 250. Պլուտ. Լոշկ. 26. 31. Gutschmid, Gesch. Irans 82. Marquart, Eransahr էջ 173.

բանս կը կատարուէր օտար տիրապետութեանց ժամանակ, ո՞րչափ աւելի եռուզեռ եղած պիտի ըլլայ այդ շարժումը Տիգրանայ պէս հզօր թագաւորի մը ժամանակ, որ բովանդակ յառաջակողմեան Ասիոյ մէջ ամենէն ազդեցիկ իշխանն էր և Արևելքի վաճառականութեան գլխաւոր ճամբաներն իր ձեռքն ունէր: Հայաստանի հողին վրայ ցանցի մը պէս տարածուած փոքր և մեծ գետերը, հայկական ձիուն և բեռնակիր ջորիին ծանօթ բազմութիւնը, կոխուած դրամին առատութիւնը, և թագաւորին հրզօր պաշտպանութիւնը նպաստեցին և դիւրացուցին վաճառականական շարժումը:

Հարստութեան և ուժի յորդութեան այս պահուն Տիգրան հիմը դրաւ մեծ քաղաքի մը, Տիգրանակերտի, որ պիտի անմահացնէր իր անունը: Այս քաղաքին դիրքին վրայ շատ վիճուած է. ոմանք կը դնեն զայն Միջագետաց մէջ, իսկ այլք՝ Սղերդը կամ Պիթլիսը և կամ Աղձնեաց մէջ տեղ մը, որ է այսօրուան Մայաֆարկին կամ Փարկին, Տիգրիսի վերին ընթացքին հիւսիսակողմը¹: Ինծի այնպէս կը թուի՝ թէ

1. Այս խնդրոյն վրայ խօսող մատենագրութիւնը տես Հիւրշմանի Հին Հայոց տեղւոյ անունները էջ 414: Վերջին գործն է Lehmann-Hauptի Armenien einst und jetzt, Berlin 1910. Նաև Լեման Փարկինը Տի-

իրաւունքը վերջիններուն է. վասնզի, բաց ի ուրիշ պատճառներէն, նաև Փաւստոս, զոր ես հոս շատ վստահելի և այս խընդրոյս մէջ հեղինակութիւն ունեցող կը համարիմ, այդ կողմերը կը դնէ զայն¹:

Նպատակէս դուրս է հոս. ճշդեւ այն խնդիրը, թէ Տիգրան յիրաւի նոր մայրաքաղաք մը հիմնեց, ինչպէս արդի հեղինակներէն շատերը կը հաստատեն: Այսչափը սակայն ստոյգ է որ հեղինակութիւն կազմող հին մատենագիրները, ինչպէս Ստրաբոն, Պլուտարքոս, Ապպիանոս, Տիգրանակերտը երբէք մայրաքաղաք չեն անուաներ. իրենց համար Հայոց մայրաքաղաքը դեռ միշտ Արտաշատն է²: Տարօրինակ կը թուի ինծի բնութեամբ ամուր հին մայրաքաղաքը փոխադրել Մի-

գրանի քաղաքը կը համարի: Նոյն կարծիքէն էր նաև իր քաջ բայց դժբաղդաբար շուտով վախճանած ճանապարհորդակիցը W. Belck. Egli էջ 303. իսկ այլև Սդերդը կը համարին:

1. Փաւստոս Դ, 24. Ե 27. Փաւստոսի վկայութիւնը լաւ կը յարմարի Լուկուլլոսի ծրագրին, որ կը կայանար կարելի եղածին չափ երազ հասնել և պաշարել Տիգրանակերտը: Արդեօք Մելիտինէ (Մալաթիա) համառօտ ճամբան էր Միջագետաց դաշտավայրներուն մէջ գտնուող քաղաքի մը: Ապահովապէս ոչ. բայց Մելիտինէէն կրնար Լուկուլլոս շուտով հասնիլ Աղճնեաց մէջ կանգնած քաղաք մը:

2. Հմմտ. Ստրաբոն 11, 14, 6. 14, 15. Պլուտ. Լուկ. 31. Ապպ. Միհր. 104.

ջագեաքի շէմին վրայ, դեռ հազիւ գրաւուած երկիրներուն սահմանները, լեցնել զայն օտարականներով, ու ենթարկել զայն անապատէն եկող բոլոր թշնամիներուն յարձակմանց: Բայց եթէ փոխանակ զայն մայրաքաղաք երևակայելու՝ ո՛ր է է հիմնարկութիւն մը համարինք, որ իբրև միութեան կեդրոն մը պիտի ծառայէր Տիգրանի նոր գրաւած աշխարհներուն և Հայաստանի մէջ, այն ատեն հիմնադրին զաղափարը մեզ աւելի ընդարձակ և աւելի հեռատես պիտի տեսնուի, ինչպէս որ ալ էր: Տիգրանակերտ պէտք էր ըլլալ և եղաւ կեդրոն մը վաճառականութեան. Յոյները հոն իրենց արուեստները կը գործէին և ընդարձակ վաճառականութեան մը կարաւանները հոս իրարու կը հանդիպէին: Նա պիտի ըլլար կամուրջ մը, որուն վրայ Արևելք պիտի ողջունէր Արևմուտքը: Արտաշատը՝ հայ ժողովրդեան քաղաքական ուժին, իսկ Տիգրանակերտը՝ անոր վաճառականական ոգւոյն մարմնացումը պիտի ըլլար: Մենք Տիգրանակերտը Հայոց մայրաքաղաք կոչելու այնչափ քիչ իրաւունք ունինք, որչափ բոլոր Աղեքսանդրիաները, Սելեւկիաները, Անտիոքիաները մայրաքաղաքներ կոչելու զանոնք հիմնող թագաւորաց:

Մինչդեռ Տիգրան այս կերպով կը զբա-
դէր, Միհրդատ վերջացուցած էր իր պա-
տրաստութիւնները մեծ արշաւանքին հա-
մար (88): Յամաքէն կը տանէր գրեթէ
500,000 հետեակազօրաց և 40,000 ձիա-
ւորաց բանակ մը, իսկ ծովու վայ ունէր
400 նաւ: Կարճ ժամանակի մէջ զբաւեց
բովանդակ Փոքր Ասիան, Յունաստանը,
Մակեդոնիա և Եգէական ծովու կղզիներ
ընդ մեծամասնութիւնը: Ամենուրեք ով-
սաննայով ընդունուեցաւ ան՝ իբր ազա-
տարար հռովմէական դառն լուծէն: Հռովմ
սարսափեցաւ և Եփեսոսի հրովարտակը
ամենուն ոգին ցնցեց: Սուլլայի յանձնուե-
ցաւ անոր դէմ պատերազմը, և սա Քե-
րոնէի և Որքոմենոսի յաղթութիւններով
Միհրդատը Եւրոպայէն քշեց և հռովմէա-
կան Արևելքին մեծագոյն մասը կրկին ետ
տուաւ: Սակայն ասով պատերազմը վեր-
ջացած չէր, այլ սոսկ ընդհատուած: Մու-
րենա անուամբ տեղակալին զրգռութեամբը
Միհրդատ երկրորդ անգամ արշաւեց հռով-
մէական երկիրները, բայց Կիւզիկոսի մօտ
Լուկուլլոս անոր յառաջխաղացումը
կասեցուց (74/73): Աւելի սովէն և փո-
թորիկներէն՝ քան լեգէոններէն պարտուած
քաշուեցաւ Պոնտոս, բայց հոս ալ չկրցաւ
ինքզինքը պաշտպանել Հռովմայեցւոց դէմ

և փախաւ Հայաստան, Տիգրանայ քով
ապաւէն մը գտնելու համար¹ (72): Այս
գործով Միհրդատ պատերազմը փոխադրեց
Հայաստան, և ինչպէս որ ինքը Տիգրա-
նայ երազ մեծնալուն շատ նպաստած էր,
նոյնպէս ալ ինքը եղաւ գլխաւոր պատ-
ճառներէն մէկը անոր երազ անկման:

Տիգրան ընդունեցաւ փախստականը,
տուաւ անոր հեռաւոր ամրոց մը, բայց
զայն իր տեսութենէն հեռի պահեց քսան
ամիս:

Բնականաբար հոս հարցում մը կը ներ-
կայանայ մեր առջև. Տիգրան կ'ուզէ՞ր
արդեօք Լուկուլլոսի հետ պատերազմիլ:
Պլուտարք սոյնպիսի դիտաւորութիւն մը
կը վերագրէ իրեն, բայց կան ինչ ինչ
հանգամանքներ, որոնք զայդ չեն հաս-
տատեր²: Յիրաւի Տիգրան տասնեակ տա-
րիներ առաջ Փոքր Ասիոյ մէջ ըլլած իր
արշաւանքներով հռովմէական զգացումը
վիրաւորած էր, բայց Հռովմ գանոնք եր-
բէք լրջօրէն չառաւ և առիթը ներկայա-
ցած ժամանակ Սուլլայի ձեռքով բողոք
չըրաւ: Եւ ոչ իսկ Լուկուլլոս կը յիշեցնէ
այդ բաները Տիգրանայ: Կարելի չէ ուղ-

1. Մեմոն գլ. 44. 46. 55. Պլուտ. Լուկ. 19.

2. Պլուտ. Լուկ. 23, հմմտ. 25: Տես Յաշեղոշած, Բ.
Պլուտարքոսի արժանահաւատութեան վրայ:

դակի գրգռում և հետևաբար պատերազմելու դիտաւորութիւն անուանել Տիգրանայ ըրածը, որով ընդունեցաւ Միհրդատը՝ իր աները, և հեռաւոր բերդի մը մէջ անոր ապաստանարան մը շնորհեց:

Երկար ժամանակ մը չենք լսեր որ նա Միհրդատայ հետ միաբան գործ մը գործած ըլլայ. կը թուի թէ տարիքին յառաջելովն աւելի խոհեմ քաղաքականութեան մը հետևած ըլլայ. անշուշտ Միհրդատայ ահագին պարտութիւնները Քերոնէի և Որքոմենի մօտ զինքը համոզած էին՝ թէ Հռովմայեցւոց զինուորական կըրթութիւնը գերազանց էր:

Պատերազմի դիտաւորութիւն կամ մանաւանդ փափագ ունէր Լուկուլլոս¹: Թէև պէտք է իրեն իրաւունք տանք՝ որ կը պահանջէր իր պարտեալ թշնամին իրեն յանձնել, սակայն միւս կողմանէ պէտք չէ անտեսել նաև անոր պատերազմելու անյագ ցանկութիւնը (և ընչաքաղցութիւնը): Միևնոյն շարժառիթները մղեցին Լուկուլլոսը Տիգրանայ դէմ, ինչ որ քիչ յետոյ պիտի մղեն զինքը Պարթևաց դէմ

1. Աիկերոն ևս կը թուի ասիկայ հաստատել երբ կ'ըսէ, «մէկը (Միհրդատ) ազատ ձգուած, իսկ միւսը (Տիգրան) գրգռուած, կը համարին թէ առիթը ներկայացած է իրենց՝ Ասիան գրաւելու» pro Manilia 4.

քալելու, առանց մասնաւոր առիթ մը տըրուած ըլլալու վերջիններուն կողմէն¹: Դիտելու է նաև որ Լուկուլլոս ո՛չ հայկական և ոչ ալ Պարթևական պատերազմի մը համար ծերակուտէն կամ հռովմէական ժողովուրդէն հրաման ընդունած էր². Իր կամքն էր միայն իրեն հրամայողը: Եթէ Տիգրան պատերազմի դիտաւորութիւն ունեցած ըլլար, երկու տարի Միհրդատը իրմէն հեռի չէր բռներ, որպէս զի Պոնտացին զինքը պատերազմի չգրգռէ³: Ինչ աւելի արդար պատճառ կար՝ քան իր աները պաշտպանել: Եւ սակայն նա զայս չըներ, այլ առանց հոգ ընելու Ասորիք կ'երթայ, որպէս զի այն տեղեր զրաւումներն ընդարձակէ: Եւ ոչ իսկ իր արեւմտեան սահմաններուն վրայ պահապան գունդեր կը կարգէ: Երկու տարի (72-70) վերջ, երբ այլևս Պոնտոսի նուաճումը ապահովուած կը թուէր, յանկարծ օր մը Անտիոք տնկուեցաւ Ապպիոս կղաւղիոս Պուլքեր, Լուկուլլոսի պատգամաւորը: Տիգրան այդ ժամանակ Ասորիք Պտղոմայիսի

1. ՊԼՈՒՄ. Լուկ. 30. 31:

2. Ferrero, Grandezza e decadenza di Roma I 282. K. Eckhardt, Die armenische Feldzüge des Lucullus, 74. 196. 198.

3. Մեմոն 46, 1. 55, 1. հմմտ. ՊԼՈՒՄ. Լուկ. 22

(Ակկոն) պաշարմամբ զբաղած էր¹ : Նա առաւ քաղաքը և եկաւ Անտիոք, ուր Հռովմայեցի պատուիրակը — յետ Տիգրանայ իշխանները ծածուկ իրենց թագաւորին դէմ զրգուելու — Միհրդատայ յանձնումը պահանջեց զրգուիչ լեզուով մը, հակառակ պարագային՝ պատերազմ սպառնալով : Տիգրան պատասխանեց որ ինքն ալ լաւ գիտէ թէ Միհրդատ յանցաւոր է. բայց չկրնար զանիկայ, իր կնոջ հայրը և իր հիւրը, Հռովմայեցւոց մատնել, առանց բովանդակ աշխարհէն պախարակուելու իբր մէկը, որ ամենանուիրական պարտքերուն դէմ կը մեղանչէ². այսուհանդերձ այն պարագային՝ որ Հռովմայեցիք իրեն դէմ պատերազմ հռչակեն, ինքն ալ պիտի գիտնայ ինքզինքը պաշտպանել³ :

Սոյն պատասխանը համեստ և չափաւոր էր, և Տիգրանայ պատւոյն և պարտ-

1. Պլուտ. Լուշկ. 21: Տիգրան վերջապէս հոս ձերբակալեց Կղէոպատրա կամ Սելենէ թագուհին և զայն բանտեց Սելեւկիոյ մէջ, ուր յետոյ զայն զլխատել տուաւ Ասորիքէն մեկնած միջոց, Սար. 16, 2, 3. Յովսեպոս Հնախ. 13, 16: Այս Սելեւկիան բերդ մ'էր Եփրատայ վրայ, զոր պէտք չէ շփոթել Որոնտէս գետի վրայ գտնուող Սելեւկիա քաղաքին հետ, որ Անտիոքի նաւահանգիստն էր. Տիգրան չկրցաւ այս վերջինս նուաճել, Եւտրոպիոս 6, 14:

2. Մեմնոն 46, 2:

3. Պլուտ. Լուշկ. 27:

քին համապատասխան, վասն զի ինքը պէտք
չէր երկրորդ Աննիբաղը Պրուսիասի նման
իր ոխերիմ թշնամիներուն մատնել, քանի
որ դեռ զինուոր և քաջողջութիւն (այդ
ժամանակ Տիգրան եօթանասուն տարեկան
էր) ունէր:

Երբ Ապպիոս դարձաւ առ Լուկուլլոս
և սա «յարմար գտաւ Տիգրանայ դէմ պա-
տերազմիլը», բան մը՝ զոր իր անձնական
և նաև հռովմէական պետութեան մեծա-
գոյն շահերը կը պահանջէին, Լուկուլլոս
պատրաստուեցաւ յանկարծակի յարձա-
կում մ'ընելու ի Հայս¹: Տիգրան ալ, երբ
տեսաւ թէ պատերազմը անհրաժեշտ էր,
իսկոյն կանչեց Միհրդատը և զայն ընդու-
նեցաւ արքունական ամէն շքեղութեամբ:
Երկու թագաւորներն երեք օր առանձնա-
ցան և բոլորովին լռելեայն խորհեցան ի-
րենց դիրքին վրայ. երկար մտածելէն յե-
տոյ վերջապէս ծրագիր դրին, որ աւելի
երազ գործեն քան Հռովմայեցիները և զա-
նազան կողմերէն անոնց վրայ յարձակում
գործեն Կիլիկիա, Լիկաոնիա, Պոնտոս և
Ասիա: Ծրագրէն իսկոյն գործի անցան:
Տիգրան՝ Պոնտացւոյն տուաւ 10,000 հայ
հեծեալներ, և արդէն իր ունեցած 20000ին

1. Պլուտ. Լուկ. 23. Ապպ. Միհր. 84:

հետ Պոնտոս զրկեց¹ : Իսկ ինքը կիւրիոյ
 և Լիկաոնիոյ վրայ պիտի յարձկէր² —
 բան մը՝ որ Լուկուլլոսն ալ գիտէր —
 երբ լսեց թէ Հռովմայեցիք Եփրատը ան-
 ցած են³ :

1. Մեմոն 55. Կիկերոն pro Sextio 48; pro Ma-
 nilia 23. Ապպիան Միհր. 85 կ'ըսէ թէ Միհրդատ պա-
 տերազմէն անմիջապէս առաջ Տիգրանայ քով հասաւ :
 Այս հաւանական չթուիր :

2. Պլուտ. Լուկ. 23 :

3. Այս իրականութեանց հանդէպ, որ է առաքումն
 Միհրդատայ ի Պոնտոս Հռովմայեցիներն զբաղցնելու և
 իր պատրաստութիւնը յարձակման մը համար, քիչ մը
 տարօրինակ կ'երևի, երբ Պլուտարքոս Լուկ. 25 ամէն
 պարագայի մէջ կ'ուզէ պնդել, թէ Տիգրան ի Հայս բու-
 լորովին անհոգ կեցած էր և միայն գոռոզ խօսքեր կը
 շոյլէր : Իբր թէ տեսած չըլլայ իր շուրջը բոլորեող
 պատերազմին հրդեհը և գլխատած ըլլայ այն մարդիկը,
 որոնք զայն իրեն կ'իմացնէին : Սակայն Մեմոն 56
 կ'աւանդէ փոքր բաղխումներ, որոնք Հռովմայեցւոց Տի-
 գրանակերտի առջև տեսնուելէն շատ կանուխ, թերևս դեռ
 Մոփաց մէջ, տեղի ունեցան : Գարձեալ, եթէ Տիգրան
 անգործ տունը նստաւ և միայն շողոքորթներու խօսքե-
 բուն մտիկ կ'ընէր, այն ատեն ի՞նչպէս պէտք է մեկնել
 իր զօրաց բազմութիւնը. արդեօք դիւրի՞ն գործ մ'էր
 Մարաստանէն, Վրաստանէն, Միջագետքի անապատնե-
 րէն այնքան բազմաթիւ մարդիկ միասին բերել : Նմա-
 նապէս Մերուժանի գնդերը Հռովմայեցւոց վրայ յան-
 կարծական և վտանգաւոր վայրկեանի մը մէջ յար-
 ձակում գործեցին. պարագայ մը՝ որ կը ցուցնէ թէ ի
 Հայս գիտէին թշնամւոյ մը զալուստը և անոր դէմ պա-
 տրաստութիւն մը կար : Ուրեմն մենք ստիպուած ենք
 ընդունելու, որ թագաւորը պատերազմին կարևորութեան
 լաւ գիտակից էր և Հռովմայեցւոց զալէն առաջ ար-
 դէն բաւական մեծ պատրաստութիւններ տեսած էր : Բը-
 նականարար ի Հայս չէին կարծեր որ թշնամին այսքան
 շուտ յարձկի — մանաւանդ որ դանդաղութիւնը Լու-
 կուլլոսի պատերազմներուն յատկանիշն եղած էր, — սա-

Լուկուլլոս Պոնտոսի քաղաքները մեծ
 մասամբ կամ նուաճած կամ շահած էր.
 Բայց իրեն համար կենսական կարևորու-
 թիւն մ'ունեցաւ կապադովկիոյ Արիոբար-
 զան թագաւորին բարեկամութիւնը, որ
 Հռովմայեցւոց տրամադրութեան տակ դրաւ
 ամէն ինչ, որ իր պատերազմէն խնայուած
 աշխարհը կրնար ընծայել, գունդեր և զըլ-
 խաւորապէս պարէն. որով Լուկուլլոս ե-
 տեի կողմէն ապահովուած և պարենաւո-
 րուած էր, պարագայ մը՝ զոր Միհրդատ
 առ Հրահատ գրած նամակին մէջ կը շեշ-
 տէ, որուն Մեմնոն յատուկ կարևորութիւն
 մը կու տայ և զոր Պլուտարք կը լռէ:
 Լուկուլլոս յանկարծ անցաւ Եփրատը Մե-
 լիտինէի (Մալաթիա)¹ մօտ՝ երբ ջուրը
 ցած էր, և արագաբար Ծոփքը անցաւ՝
 Տիգրանակերտի վրայ դիմելով: Սակայն
 ճամբան, շատ հաւանականաբար դեռ Ե-
 փրատայ հայկական եզերաց վրայ ի Ծոփս,
 ուր ընդհանրապէս Հայոց թագաւորին գան-
 ձերը կը պահուէին, պաշարեց ամբողջ մը
 իր լեգէոններուն մէկ մասով, մինչ միւս

կայն արթնութիւն պակաս չէր հոն և բոլորովին անհոգ
 և անգործ չէին նստեր, ինչպէս որ Պլուտարքոս կ'ուզէ
 մեզի հաւատացնել, և լեգէոնաց Եփրատը անցնելը թա-
 գաւորէն ծածուկ չմնաց, ինչ որ դարձեալ ինքը կ'ուզէ:

1. Տակիտ տար. 15, 27 կ'ըսէ թէ նա Մելիտինէն
 սկսեալ ճամբայ մը շինեց կամ բացաւ:

մասը դէպ ի Տիգրանակերտ ղրկեց : Այդ ամբողին մէջ կային Տիգրանայ հարձերը և զանձերը : Ան իսկոյն գունդեր ղրկեց հոն, որոնք Հռովմայեցւոց աչքին առջեւ մտան ամբողը և եթէ լեգէոնական մը համարձակէր ճամբարէն դուրս ելնել՝ անոր վրայ նետերու կարկուտ մը կը տեղային : Գիշերը հեծեալներու գունդ մը հարձերով և զանձերով մեկնեցաւ և զանոնք անվրտանգ Տիգրանայ մօտ բերաւ¹ : Երկրորդ օրը կատաղի բաղխում մը տեղի ունեցաւ, յորում Հռովմայեցիք յաղթեցին թագաւորական գունդերուն : Բայց թէ արդեօք ամբողն ալ առնուեցա՞ւ՝ չենք գիտեր² :

Երբ Տիգրան Հռովմայեցւոց մօտենալը լսեց, փոքր բանակ մը ղրկեց Մերուժան

1. Մեմնոն 56. Ապպ. Միհր. 84 կը համարի թէ այս դէպքը ուշ և Տիգրանակերտի մօտ պատահած ըլլայ. բայց Ապպիանու ճիշտ այս գլուխը նաեւ ուրիշ անճրշդութիւններ կը բովանդակէ : Ծովաց մէջ Հայոց թագաւորները բազմաթիւ բերդեր ունէին իբրև զանձատուն. ասոնցմէ մէկն էր արքունական բերդն Բնաբեղ, Հայր մարդպետին յանձնուած, ուր երբեմն թագաւորներն ալ կու գային բնակելու, Փաւստոս Գ 12. Դ 24. Ե 5.

2. Պլուտ. Լուկ. 24 կ'աւանդէ թէ Ծովաց բնակիչներն Հռովմայեցիները ուրախութեամբ ընդունեցան. բայց հազիւ երկու տող վար ևս կ'աւանդէ, թէ ինչպէս անոնք իրենց բերդերը զոցեցին Հռովմայեցւոց առջև : Նաև Աիկերոն pro Manilia 23 կ'ըսէ. « Երբ Լ. Լուկուլլոս բանակով անոր (Տիգրանայ) թագաւորութեան մէջ եկաւ, շատ մը ժողովուրդներ մեր սպարապետին դէմ զրգոռած էին » :

(Արծրունույ) հրամանատարութեամբ անոնց յառաջխաղացումն արգիլելու համար:

Մերուժան յարձակում մը գործեց Հոովմայեցւոց վրայ այնպիսի վայրկեանի մը մէջ, յորում անոնք ճամբորդութենէ յոգնած՝ բանակ զարնելու վրայ էին: Բաղխում մը տեղի ունեցաւ Սեքստիլիոս տեղակալի գունդերուն և Մերուժանիններուն մէջ. և թագաւորական գունդերը բոլորովին յաղթուեցան, որոնց զօրավարն արիաբար ինկաւ պատերազմի դաշտին վրայ¹:

Այս պարտութիւնը լսելով Տիգրան՝ Տիգրանակերտի մէջ թողուց իր Մանգէոս զօրավարը և, ինչպէս կը տեսնուի, նաեւ Միհրդատի զօրավարներէն մէկ քանին², տալով պաշտպանութեան համար պէտք եղած գունդեր, պարէն և պատերազմի պաշար, և ձգելով իր սրտի հատորին պէս սիրած քաղաքը՝ քաշուեցաւ Տաւրոսի մէջերը:

Երբ այս բաները կը կատարուէին, Հոովմայեցիք յառաջացան դէպի այն մեծ, գեղեցիկ և դեռ չվերջացած քաղաքը: Ման-

1. Պլուտ. Լոշկ. 25. Ապպ. Միհր. 84 Մերուժանայ սոսկ 2000 հեծեալ կու տայ:

2. Մեմոն 57.

գէոս ներս փակուեցաւ իր բնիկ և յոյն վարձկաններէ կազմուած գնդերով¹ :

Այդ ժամանակ Տիգրան եւս Տաւրոսի մէջերը խմբած էր մեծ բանակ մը, թե-
րևս երեք անգամ² աւելի մեծ քան Հոով-
մայեցւոցը և յառաջ քալեց իր քաղաքը
ազատելու համար : Միհրդատ իր քովը
չէր. իբր թէ սա զինքը յորդորած ըլլայ
իւր յոյն պատգամաւորներուն ձեռքով, որ
Լուկուլլոսի հետ դէմ առ դէմ ճակատելով
չպատերազմի, այլ իր հեծելագնդերով
անոր բանակին պարենաւորումն արգիլէ
և զայն ետ քաշուելու ստիպէ³ : Եթէ այս
տեղեկութիւնը ստոյգ է, կրնայ ստոյգ ըլ-
լալ նաև այն թէ Տիգրան՝ իր անցեալ
յաղթութիւններուն վրայ վստահ՝ փափա-
գած ըլլայ նոր փառք մ'ալ աւելցնել ա-
նոնց վրայ՝ յաղթելով Հոովմայեցւոց, ո-
րոնք իրենց կողմանէ իրեն պատերազմ
հրատարակած էին : Այսպիսի առիթներու
մէջ բնականաբար շողոքորթները փոքր
դեր մը չեն խաղար :

Տիգրան իր բանակը զետեղած էր բար-
ձրութեան մը վրայ, որ այնչափ յարմար

1. Ապպիան Միհր. 84 :

2. Տես Յաշեղոշած, Գ. Լուկուլլոսի և Տիգրանայ
զօրաց թիւը :

3. Պլուտ. Լուկ. 26. Ապպ. Միհր. 85 :

չէր իր ուժերը գործածելու, ինչպէս որ Միհրդատ ալ կը գանգատի այդ մասին¹ : Պատերազմին օրը (6 հոկտ. 69) ան իր բանակին աջ թևը տուաւ Մարաց թագաւորին Միհրդատայ, ձախը Ադիաբենաց թագաւորին, իսկ ինքը մէջ տեղ կեցաւ : Իր սպառազէն հեծելագնդերը կանգնած էին բլրան մը ստորոտը :

Լուկուլլոս Մուրենան թողուց Տիգրանակերտի քով լեզէոնով մը, պաշարումը շարունակելու համար, իսկ ինքը բանակին մեծ մասովը քալեց Տիգրանայ դէմ : Երեք օր վերջը դուրս հանեց իրենները ճամբարէն և անարգել անցաւ բաւական մեծկակ գետէ մը, որ երկու թշնամի բանակներու մէջէն կ'անցնէր և սկսաւ յարձակումը : Լուկուլլոս կարելի եղածին չափ զգուշացաւ ճակատ առ ճակատ կռուելէն բանակի մը հետ, որ իրենինէն երեք անգամ աւելի մեծ էր : Ռազմագիտական ճարտար շարժումով մը առանց տեսնուելու ելաւ նա 1200 զինուորով — երբ իր բանակին մեծամասնութիւնը թշնամուոյն դիմաց ճակատած էր — այն բլրան վրայ, որուն ստորոտը Տիգրանայ զրահաւոր հեծ-

1. Սալուստիոս, հատակտորք, Միհրդատայ նամակն առ Արշակ :

եալները կը գտնուէին, որոնք իրենց կրած ծանր զրահներուն և զէնքերուն համար բաւական դիւրաշարժ և թեթևոտն չէին: Հռովմայեցին յարձակեցաւ յանկարծակի այս ծանրաբեռնած հեծեալներուն վրայ, մղեց զանոնք հետևակներու շարքերուն մէջ, և՛ յառաջ քան օրինաւոր ճակատամարտ մը տեղի ունենալը՝ այնպիսի շփոթութիւն մը ձգեց հայկական բանակի շարքերուն մէջ, որ այլ ևս յարձակում կամ դիմադրութիւն անկարելի էր: Շփոթութիւնը աւելի ահաւոր եղաւ, երբ թրակացի և Գաղղիացի հեծելագնդերը սկսան կատաղաբար յարձակում գործել և հալածել: Փախուստն ընդհանուր էր և հետապընդումը երկար և անզուժ¹: Ասոր շորդեց բանակետդին աւարառութիւնը²:

1. Պլուտ. Լուկ. 28 գրեթէ բովանդակ հայկական այրուծին և 100,000 հետևակ սպաննել կուտայ, իսկ Հռովմայեցիներէն մեռած են կ'ըսէ 5 հոգի և վիրաւորուած են 100: Արդէն մեր Յաշեղոշածին մէջ ապացուցած ենք որ Տիգրանայ բովանդակ բանակը հազիւ 80,000 հոգի կար, որմէ բնականաբար չկրնար 100,000 հոգի մեռնիլ: Ուրեմն նաև անկեւոյ թիւը ահռելի կերպով չափազանցուած է: Անոր համար ես աւելի ընդունելի կը գտնեմ, ինչպէս որ Eckhardt, Die arm. Feldzüge des Lucullus էջ 111 նոյնը ըրած է, Փլեկոն թրակացույ աւանդածը, ի FHG III 606 հտկար. 12, թէ մեռեալներու թիւը կը հասնէր 5000, բայց գերի ինկնողները շատ աւելի էին:

2. Պլուտ. Լուկ. 28, հմմտ. Eckhardt էջ 100-104.

Տիգրան ապաստանեցաւ ամրոց մը, ուր Միհրդատ՝ — զոր ինքը պատերազմէն առաջ կանչած էր և որ քանի մը օր վերջը հասաւ — մխիթարեց և քաջալերեց եօթանասնամեայ ծերունին¹ :

Այդ ժամանակ Լուկուլլոս դարձաւ Մուրենայի քով, որ Տիգրանակերտը կը պաշարէր: Քաղաքին մէջ զինուորական ապրտամբուլթիւն մը ծագեցաւ: Վարձկան յոյն զինուորները, որոնք մեծ մասամբ կիլիկիայէն և կապադովկիայէն էին, կասկածելի դարձան իրենց մատնչի վարմունքով ընդհանուր հրամանատար Մանգէոսին. նա զինաթափ ըրաւ զիրենք և կ'ուզէր պատժել: Բայց Յոյները, որոնց հետ միացած էին օտար բնակչութեան մէկ մասը և գըլխաւորապէս Միհրդատի յոյն զօրավարները, գրաւեցին աշտարակ մը և գիշերատեն Հռովմայեցիները ներս մտուցին², կամ ինչպէս կ'ըսէ Մեմնոն, « Միհրդա-

1. Մեմնոն 56, 2. Պլուտ. Լուկ. 29: Այս առթիւն մէջ կը յիշատակուի, որ Պոնտացին զՏիգրան դարձեալ իր արքայական զգեստներով զարդարած ըլլայ, զորս սա իր որդւոյն տուած էր: Այս արդեօք հրաժարո՞ւմ մ'էր Տիգրանայ կողմէն ի նպաստ իր որդւոյն: Արդեօք կըրտսեր Տիգրանի Ծովաց թագաւոր պսակուիլն հատուցո՞ւմ մ'էր իրմէ ետ առնուած թագի մը: Արդեօք այս ժամանակէն կը սկսին կրտսեր Տիգրանայ տժգոհութիւնը, թշնամութիւնը և թագի համար կռիւները իր հօր հետ:

2. Ապպիան Միհր. 84. 86. Պլուտ. Լուկ. 29.

տայ զօրավարները, որոնք քաղաքին մէջ էին, յուսահատեցան և մատնեցին քաղաքը Լուկուլլոսին, պայմանաւ որ զիրենք ազատ թողու»¹ : Ուստի Յունաց մատնուած թեամբ անուեցաւ քաղաքը, որ մինչև նոյն ժամանակ քաջաբար պաշտպանուած էր, մասնաւորապէս հրակէզ կպրածիւթի բոցերով, որ պաշարողաց մեծ վնաս կը հասցնէր այրելով անոնց մեքենայները, առանց ինք մարելու ջուրի ձեռքով : Հոովմայեցիք քաղաքին մէջ մեծ հարստութիւններ գտան, զոր Լուկուլլոս յափշտակութեան մատնեց իր զօրաց, բացի 8000 տաղանդ կոխուած դրամէն, զորս հասարակաց գանձին համար պահեց : Հայ նախարարաց կիներուն հետ պատուաւոր կերպով վարուեցաւ, որպէս զի անոնց ամուսինները շահի : Տիգրանակերտ մասամբ կործանեցաւ և գիւղի մը վերածուեցաւ, օտար բնակչութիւնը, որ է Յոյներ և բարբարոսներ, իրենց հայրենիքը դարձուեցան² :

Բայց մէկ յաղթութեամբ երկիրը նուաճուած չէր : Տիգրան և Միհրդատ անմիջապէս նոր բանակ մը կազմեցին, այն-

1. Մեմօն 57, 3.

2. Ստրաբոն 11, 14, 15. Պլուտ. Լուկ. 29. Կասսիոս Գիոն 36, 3a. Ապպ. Միհր. 86 :

քան մեծ որքան առաջինը, գրեթէ 70,000 հոգի: Փորձեցին նաև Պարթևաց թագաւորը իրենց կողմը շահիլ և մասնակից ընել հասարակաց գործոյն: Այս նպատակաւ իրեն խօսք տրուեցաւ Միջագետքը ետ դարձնելու, զոր Տիգրան գրաւած էր: Բայց Հրահատ չընդունեցաւ առաջարկը և շարունակեց իր բարկութիւնն ընդդէմ Տիգրանայ՝ անոր ըրած նոր պատերազմի մը պատճառաւ. նա աւելի հաստատուեցաւ իր ձեռնթափութեան մէջ Լուկուլլոսի պատգամաւորութեամբ մը, որ նոյնպէս իրեն Միջագետքը կը խոստանար, եթէ չէզոք դիրք մը պահէր: Հրահատ սակայն երկդիմի դեր մը խաղաց և չէզոք մնաց, բայց առանց Հռովմայեցւոց հետ համաձայնութիւն մ'ունենալու և առանց իր պահանջներէն ետ կենալու Ատրպատականի, Մեծ հովիտներու և Միջագետքի վրայ, զորս ետ դարձնել Տիգրան բոլորովին մերժեց, վասնզի տակաւին նա ինքզինքը բաւական զօրաւոր կը զգար¹: Միայն իրենց ու-

1. Սալուստիոս, Նամակ Միհրդատայ առ Արշակ Մեմոն 58. Պլուտ. Լուկ. 30. Ապպիան Միհր. 87. Կասսիոս Գիոն 36, 3: Գծուարին խնդիր մ'է որոշել թէ Հրահատին բուն խնդրածը ինչ էր և ինչ բան Տիգրան տրամադիր էր տալու: Մեմոնի համեմատ Տիգրան զիջած ըլլայ Միջագետք, Ատրպատական և Մեծ Հովիտները անոր թողուլ, իսկ Պլուտարքոսի համեմատ

ժերով մնացած, — մեծ մասով հայկական, որովհետև Միհրդատայ Պոնտացի զօրքը շատ սակաւ էր, — պատերազմը վերստին սկսան թագաւորները: Այս անգամ Միհրդատ զօրքերը Հռովմայեցւոց պէս հրահանգած և բանակը անոնց պէս դասաւորած էր¹: Իրենց գլխաւոր ոյժը կը կայանար հեծելազօրքին մէջ:

Լուկուլլոս 69/68ի ձմեռը կորդուք անցուց, որուն թագաւոր Չարբիենոսը Տիգրան սպաննել տուած էր, Հռովմայեցւոց հետ մատնութիւն ընելուն համար²: Լուկուլլոս կը մտածէր կորդուքէն Պարթևաց վրայ քալել, վասն զի Տիգրան չէր ուզեր յատնի ճակատամարտով իրեն հետ չափուիլ, այլ կը նախադասէր պատեն յարձակումներով անոր բանակին պարենաւորումը արգելուլ: Բայց լեզէոնները ըմբոստացան իրենց սպարապետին դէմ և չուզեցին ի Պարթևս արշաւանք ընել, ասոր

Պարթևը կը բանակցի միայն Միջագետքի մասին, Եթէ առաջինին ըսածը ճիշդ ըլլայ անհասկանալի կը մնայ թէ Հրահատ ինչո՞ւ դեռ իր բարկութեան մէջ կը յամառի, երբ իր խնդրածները լիուլի կատարուած են: Նա Հռովմայեցիներէն չվախնար, այլ իր շահը կը փնտռէ, որ պատճառաւ ևս նա միևնոյն ժամանակ երկու կողմերու հետ ալ կը բանակցի:

1. Ապպիան Միհր. 87. Մեմոն 58. Սալուստիոս անդ:

2. Պլուտ. Լուկ. 21. 29:

վրայ Լուկուլլոս վճռեց դարձեալ Տիգրանայ դէմ քալել¹, որը սակայն իրեն համար շատ աղետալի պիտի ըլլար:

Երբ 68 տարւոյն ամառուան կէսերը հասած էր, հռովմայեցի սպարապետը թողուց Ասորոց և Միջագետքի գաւառներն ու հայկական Տաւրոսները անցնելով մտաւ բուն Հայաստան: Հոս նա թէ կլիման և թէ բնակչութիւնը բոլորովին տարբեր գրտաւ: Այլևս յունական գաղթականութիւններ չկային, որոնց ձեռնտուութեան վրայ կարենար իր յոյսը դնել: Հոս Լուկուլլոս ամէն կողմ թշնամոյ հանդիպեցաւ և մենք չենք լսեր որ նա զինուորական նշանաւոր գործ մը կատարած ըլլայ այս տեղ: Հոս Տիգրան և Միհրդատ հաւատարմաբար ի գործ կը դնէին իրենց ծրագիրը, որ է, յայտնի չպատերազմիլ և թշնամոյն պարենաւորումը արգիլել: Կը տեսնուի որ այս ծրագիրը շատ լաւ յաջողած է:

Բացայայտ կերպով կը շեշտուի, թէ Լուկուլլոս կ'ուզէր մինչև Հայոց մայրաքաղաքը Արտաշատ երթալ, ուր կային Տիգրանայ կիները և տղաքները: Ճամբան Տիգրան շատ անգամ յարձակում գործեց անոր վրայ, բայց կ'ըսուի թէ նա միշտ ետ

1. ՊԼՈՒՄ. Լռչկ. 30:

մղուեցաւ : վերջին և վճռական պատե-
րազմը տեղի ունեցաւ Արածանւոյ ափանց
վրայ :

Հայոց դիմացը, — այսպէս կը պատմէ
Պլուտարքոս այս պատերազմը, — Լու-
կուլլոս Արածանիէն անցուց իր զօրքը և
թէև ի սկզբան Հայոց հեծելագունդը զի-
րենք քիչ մը նեղը խօթեց, բայց վերջա-
պէս Լուկուլլոս յաջողեցաւ իր լեզէոնա-
կաններու ձեռքով թշնամին ի փախուստ
դարձնել և զանոնք երկար հալածել : Այս
յազթուլթենէն վերջ իր բանակին մէջ ապրս-
տամբուլթիւն մը ծագեցաւ և զօրքը իրեն
դէմ ըմբոստանալով մերժեց յառաջ քա-
լել : Լուկուլլոս բռնադատուեցաւ ետ դառ-
նալ և եկաւ Մծբին¹ :

Ինծի կը թուի թէ Պլուտարքոսի այս
պատմածն ընդունելու համար շատ մեծ
զգուշութիւն պէտք ենք գործածել : Ես
կ'ընդունիմ որ Լուկուլլոսի ետ դառնա-
լուն պատճառ եղան հայկական ձմեռը և
զօրաց գէշ տրամադրութիւնը, որմէ նաեւ
ապստամբութիւն ծագեցաւ : Բայց պէտք է
գիտնալ որ հռովմայեցի զինուորը ամէն
բանէ առաջ ընչաքաղց է. նա դրամ և
հարստութիւն կ'ուզէ. այս բանը կը տես-

1. Պլուտ. Լուկ. 31. 32.

նենք մենք Լուկուլլոսի կենսագրութեան
ամէն էջին վրայ. զօրքը կը կողոպտէ քա-
ղաքներ հակառակ սպարապետի կամքին.
այն իր դատարկ քսակը կը նետէ Լուկուլ-
լոսի առջեւ և ստակ կ'ուզէ իրմէ : Հա-
զիւ թէ Մծբնայ կը մօտենան այլևս չը-
խօսուիր զինուորական ապստամբութեան
մասին, և այս այն պարզ պատճառաւ,
վասն զի բանակը թշնամոյն հարուածնե-
րէն ազատ էր այլևս և կարևոր եղածն
ունէր : Ի՞նչ աւելի դիւրին բան կար Հոով-
մայեցի զինուորի համար, քան դեռ քանի
մ'օր ալ հետևիլ սպարապետին, (վասն զի
Արտաշատ Արածանիէն այնքան ալ հեռու
չէր), և կողոպտել Հայոց մայրաքաղաքը
ինչպէս Տիգրանակերտ, որ կրնար իրենց
ստակ և հարստութիւն բերել որչափ կ'ու-
զէին : Եւ ինչո՞ւ Արածանիի յաղթութենէն
օգուտ չքաղել :

Բայց զօրքը ուրիշ կերպով մտածեց և
հրաժարեցաւ հարստութենէն : Այս հրա-
ժարման պատճառը պէտք ենք ուրիշ բանի
մէջ փնտռել : Այս անգամ Հոովմայեցի
զօրաց յառաջ խաղացումը այնպէս դիւրին
չէր ինչպէս Տիգրանակերտի վրայ քալած
ժամանակ, յորում իրենց դիմացը թշնամի
մեծ բանակ մը չունէին : Հիմայ երկու
թագաւորներ երկու ընտիր բանակներու

զլուխ անցած՝ Տիգրան կը հրամայէր հեծեալներու Միհրդատ հետևակներու: Անոնք կը զգուշանային բաց պատերազմէ մը և եթէ Հռովմայեցիք մէկուն վրայ յարձկէին միւսը կ'անցնէր իրենց ետևը և երկու սուրի մէջ առնելով կը վնասէր իրենց և վրտանգի մէջ կը դնէր իրենց բանակը¹: Հայկական թեթև այրուծին շարունակ իրենց շուրջը կը թափառէր և զինքը հալածողներուն շատ վտանգաւոր էր, որովհետև փախստեան միջոց նետեր յետսակողմ արձակելով կը վիրաւորէր զիրենք²: Թշնամի բանակի մը մօտակայութեան արդիւնքները, որ է պարէնի պակասութիւն և վիրաւորեալներու բազմացումն, սաստիկ ըզգալի եղան հռովմէական բանակին մէջ: Նաև աշնանային ցուրտը (սեպտեմբեր էր) շատ կը նեղէր վիրաւորները: Այսպիսի հանգամանքներու մէջ յառաջխաղացում մը անկարելի էր: Այս հանգամանքները կշռելով է որ միայն նախ մեզի հասկանալի կը դառնայ թէ ինչո՞ւ համար Լուկուլլոս երեք ամիսներու երկար ընթաց-

1. Այսպիսի Միհր. 87. հմմտ. Eckhardt, Die Arm. Feldzüge des Lucullus էջ 207:

2. Պլուտ. Լուկ. 31 կը թուի թէ այս արևելեան հին սազմական հրահանգը հասկցած չէ կամ չէ ուզած հասկնալ:

քին մէջ, — բուն ամառուան ջերմագոյն ամիսներէն մինչև սեպտեմբերի վերջերը¹ — կրցաւ Տաւրոսէն մինչև Արածանի միայն առաջ երթալ, որ համեմատաբար շատ կարճ ճամբայ մ'է:

Կարծեմ որ պատահած իրերու վրայ մենք աւելի ճիշտ և հաւատարիմ տեղեկութիւն կը ստանանք, եթէ վայրկեան մը Պլուտարքոսի Լուկուլլեան գովասանական երգը մէկդի թողունք և Կասսիոս Գիոնը լսենք. «Լուկուլլոս սկսաւ նոյն տարուան (68) ամառուան կիսուն — վասն զի գարնան անկարելի էր թշնամեաց երկիրը յարձակիլ տիրող ցրտին պատճառաւ — ինչ ինչ կողմեր աւերել, որպէս զի բարբարոսները դիմադրութեան և պատերազմելու բռնադատէ. բայց երբ ատով ոչ ոք տեղէն շարժեցաւ, նա ինքն զնաց անոնց վրայ: Յառաջխաղացման ատեն հայկական այրուձին հռովմէականը նեղը խօթեց, բայց հետևակներու հետ բաղխելէ հետի կեցաւ² և ամէն անգամ ետ քաշուեցաւ, երբ Լուկուլլոս իր ասպարա-

1. Պլուտ. Լուկ. 31. 32:

2. Eckhardt անդ էջ 210 իրաւունք չունի այս կըտորը տարբեր հասկնալու հակառակ Մոմսընի (Römische Gesch. III 75), որ Գիոնի բացատրութիւնը շատ ճիշտ հասկցեր է:

կիրները հեծելագնդին օգնութեան կը տա-
նէր: Այսուհանդերձ թշնամիներ ոչ թէ որ
և է մնաս մը չկրեցին, այլ նաև անոնք
նետեր կը տեղային յետսակողմ՝ իրենց
յարձակողներու վրայ, և շատերը հոն ան-
միջապէս սպաննեցին և դեռ աւելի բազ-
մութիւն մը վիրաւորեցին: Այս վէրքերը
անտանելի էին և դժուարաւ բուժելի. վասն
զի Հայերը կը գործածէին թունաւոր և
երկու ճանկով սլաքներ, այնպէս որ ա-
նոնք թէ դուրս հանելով և թէ վէրքին
մէջ թողլով երազ մահ մը կը պատճա-
ռէին. որովհետև սլաքի ճանկերէն մէկը,
զոր կարելի չէ ոչ մէկ կերպով դուրս
հանել, կը մնար մարմնոյն մէջ: Արդ, երբ
շատերը վիրաւորուած էին, ուրիշները մե-
ռան և դեռ ուրիշներուն անդամները կը-
տրատուած էին և միանգամայն ուտելիք
կը պակսէր¹, Լուկուլլոս մեկնեցաւ անկից
և եկաւ Մծբինի վրայ»²:

1. Հմմտ. Ապպիան Միհր. 88 հակառակ Պլուտար-
քոսի Լուկ. 31 կողմնակցական աւանդութեան:

2. Կասսիոս Դիոն 36, 6-8. Կիկերոնի յետագայ
խօսքերը կրնան թէ զինուորական ապստամբութեան և
թէ կրուած ձախողութեան մը վերաբերիլ. «Լուկուլլոս,
այր զերազանց, այնպէս վարեց գործերը, որ անոնց մեծ
և հոչակաւոր սկիզբները [սկզբնական յաջողութիւնները]
ոչ թէ իր բաղդին այլ քաջութեան, իսկ այս վերջին
գործերը, որ քիչ մ'առաջ տեղի ունեցան, ոչ թէ իր
յանցանքին այլ բաղդին վերագրել կը թուին», pro
Manilia 10.

Հիմայ մեզի յայտնի են բուն պատճառները թէ ինչո՞ւ համար զօրականը չուզեց յառաջ քալել և ինչո՞ւ հրաժարեցաւ Հայոց մայրաքաղաքին կողոպուտէն: Յաղթական և ընչաքաղց հռովմայեցի բանակ մը չէր ըներ ինչ որ ըրին Լուկուլլոսի զօրքերը:

Կ'ուզեմ հոս յիշել Պլուտարքոսի կրատոսի կենսագրութենէն կտոր մը. այս զօրավարը երբ Պարթևներէն սաստիկ նեղը խօթուած էր և մեծ ձախողութեան մէջ կը գտնուէր, յիշատակելով իր զօրաց՝ ուրիշ Հռովմայեցի սպարապետներու ըրած կորուստները, կ'ըսէ ի մէջ այլոց, «Նաև Լուկուլլոս առանց արեան չյաղթեց Տիգրանի»¹: Սոյնպիսի խօսք մը ծաղրական պիտի ըլլար մարդու մը բերնին մէջ, որ 30,000 զինուոր կորսնցուց և իր ձախողութիւնը կը համարձակի բաղդատել ուրիշի մը հետ որ, ըստ Պլուտարքեայ, 5 մեռեալ միայն ունեցաւ ամբողջ արշաւանքի ընթացքին միջոց: Պլուտարքոս կրատոսի բերանը կը դնէ, ինչ որ պէտք էր ինքն Լուկուլլոսի կենսագրութեան մէջ յիշել:

Ինձ կը թուի թէ կրնանք ընդունիլ որ Լուկուլլոսի յառաջխաղացումն ի խոր Հայս

1. Պլուտ. կրատոս 26.

այնքան դիւրին գործ մը չէր և թէ յաղ-
թութիւնները միշտ իր տրամադրութեան
տակ չէին: Բացի ձմեռէն, որ Հայաստա-
նի մէջ երբէք յունիս, յուլիս կամ օգոս-
տոսին չսկսիր, Լուկուլլոսի զօրքերը ի-
րենց սպարապետը յետս դառնալու ստի-
պելու համար ունէին ուրիշ պատճառ-
ներ, որոնք պատմագիրներէն տկար շեշ-
տուած են:

Արածանւոյ կռիւէն վերջ Լուկուլլոս
ստիպուեցաւ դէպի հարաւ ետ դառնալ,
ուր դաշնակից Արաբներէն և Ասորիներ-
էն լաւագոյն ընդունելութիւն մը կրնար
յուսալ: Եկաւ Մծբին և պաշարեց զայն:
Այս քաղաքը, որ Տիգրանայ կարևորա-
գոյն ստացուածքն էր Միջագետաց մէջ,
բովանդակ հնութեան մէջ նշանաւոր եղած
է իբր ռազմագիտական կէտ մը: Այդ ժա-
մանակ նա, ինչպէս արդէն ըսինք, եռա-
պատիկ պարիսպներով և խրամով ամրա-
ցուած էր, և հոն կային բաւական պա-
հապան գնդեր Տիգրանայ Խուրս (կամ
Քոռ) եղբօր հսկողութեան տակ: Տիգրան
այնքան ապահով էր քաղաքին անառիկու-
թեան մասին, որ նա և ոչ իսկ զայն ա-
զատելու համար օգնութեան եկաւ: Լու-
կուլլոս ամիսներով պաշարեց զայն և ա-
մէն արուեստ ի գործ դրաւ, բայց իր յար-

ճակուճներն ի դերև կ'ելնէին պաշտպանողաց և մասնաւորապէս Կալլիմաքոսի ճարտարութեամբ, որ կանխապէս Ամիսոս քաղաքը պաշտպանած էր Հռովմայեցւոց դէմ: Երբ մութ, անձրևոտ ու փոթորկալից գիշեր մը պաշարուածները իրենք զիրենք յաղթող կարծելով պարսպաց պաշտպանութեան անհոգացեր էին և Հռովմայեցիքը թողած հեռացած կը համարէին, ասոնք գրաւեցին քանի մը դատարկացած աշտարակներ, լեցուցին խրամը և տիրացան քաղաքին: Թագաւորին եղբօր և միջնաբերդի մէջ ամրացած գունդերու ազատելը շնորհեց Լուկուլլոս, երբ ասոնք յանձն առին միջնաբերդը իրեն յանձնել: Չմեռուան մնացած ամիսները Մծբին անցուց հռովմէական բանակը (68/67)¹:

Երբ Հռովմայեցւոց բանակը դէպի հարաւ դարձած էր, երկու թագաւորներն ալ դիմեցին հռովմէական երկիրները, զանոնք կողոպտելու և եթէ կարելի է կրկին ետ գրաւելու համար և պատերազմի ասպարէզը օտար հողի վրայ փոխադրելով թըշնամին իրենց երկրէն դուրս բերելու նպատակով: Տիգրան հայկական գնդեր տուաւ Միհրդատայ և զայն դարձեալ Պոնտոս

1. Կասսիոս Դիոն 36, 8-10. Պլուտ. Լուկ. 32:

խրկեց: Կայծակի մը պէս սլացաւ Միհրդատ, կրկին գրաւեց քաղաքները, կոտորեց Փաբիոսի զօրքերը, ոչընչացուց Տրիարիոսի բանակը¹: Իսկ ինքն Տիգրան նախ հետևեցաւ Լուկուլլոսի բանակին, որ պէսզի զայն նեղէ յարատև, յետոյ Տիգրանակերտի մօտ մեծ վտանգի ենթարկեց Լուկիոս Փաննիոսի բանակը, զոր Լուկուլլոսի երազահաս օգնութիւնը միայն ազատեց²: Ասկէ վերջ Տիգրան յարձակեցաւ ի Կապադովկիա, աւերեց զայն, դարձեալ անկից հալածեց Արիոբարզանը և կը ըստպանար Ասիա նահանգը մտնել³: Նա Կիլիկիոյ մէջ տեղակալներ ունէր, որոցմէ Մենեմախոս Յոյնը Հռովմայեցւոց կողմնանցաւ⁴:

Հիմայ ինչո՞վ պէտք է մեկնել երկու թագաւորներու այս յանդգնութիւնը և գործերը: Դիւրին է, ինչպէս Պլուտարքոս կ'ընէ, Լուկուլլոսի գովասանութեան երգին յանգը կրկնել և ըսել. Անոնք կը փախչին յաղթող Լուկուլլոսի առջև! Բայց

1. Պլուտ. Լուկ. 35.

2. Կասսիոս Դիոն 36, 10. Մոմսըն Römische Geschichte III 69-70.

3. Պլուտ. Լուկ. 25, Ապպ. Միհր. 87. Կիլիկերոն pro Manilia 25. 45: Արձանագրութիւն Դիոդոր Սիկիլիացւոյ մօտ (առ Mai, Script. vet. nova coll. II 129):

4. Կասսիոս Դիոն 36, 19.

գործերը այս յանգը կրկնել չեն թուիր: Լուկուլլոս կը լսէ և կը տեսնէ ինչ որ իր շուրջը կը կատարուի, յաղթուածները դուրս կ'ելնեն իրենց երկրին սահմաններէն, կ'աւերեն և կը տիրեն յաղթողներու երկիրը: Հռովմէական յաղթող բանակը Մծբին քաշուած անգործ կը դիտէ կատարուածները:

«Լուկուլլոս, որ թերևս կարող ըլլար այդ ձախողութեանց մասամբ մը դարման ընել»¹, դիմեց դէպի Պոնտոս, բայց բան մը չկրցաւ ընել: Վասնզի «Միհրդատ ամրացած էր Տալաւրեան բարձունքներու վրայ և իրեն դէմը չեկաւ, միւս Միհրդատ, արքայ Մարաց և փեսայ Տիգրանի, յանկարծական յարձակումներով կը սպաննէր Հռովմայեցիներէն շատերը, որոնք հոս հոն ցրուած էին, ասոնցմէ զատ կը ծանուցուէր ինքնին Տիգրանայ գալուստը և զօրքը ապստամբեցաւ...: Լուկուլլոս օգնութիւն խնդրեց որ իրեն չտրուեցաւ, տազնապի մէջ էր և կը վախէր առանց պաշտպանութեան մնալ: Նմանապէս կ'երկնչէր օտար հողի վրայ կենալ»²:

Այս է հռովմէական բանակին ճշմարիտ

1. Կիկերոն pro Manilia 26:

2. Կասսիոս Դիոն 36, 16-17:

պատկերը, որ երբէք չնմանիր յաղթող
 բանակի մը: Այս բանակը պէտք է որ
 շատ կրած ըլլայ. նա վեհերոտ է և շատ
 մեծ կորուստներ ունեցած է: Եւ եթէ թա-
 գաւորները զայն իրենց երկրին շէմին վը-
 րայ առանձին կը ձգեն, այդ կը մեկնուի
 միայն անով որ, իրենք զայն կ'արհա-
 մարհէին և մեծ կարևորութիւն չէին տար
 անոր: Այսպէս դարձեալ ակամայ կու գանք
 այն համոզման, թէ Արածանույ կռիւր և
 ի ներքին Հայս չուն' շատ ծանրի նստած
 է Հռովմայեցոց և Պլուտարքոս — եթէ
 նոյն իսկ լաւատես աղբիւրները կամ իր
 Լուկուլլոսի համար համակրութիւնը զինքը
 մոլորցուցած ըլլան — իրաւունք չունի
 պարտութիւնը արքայներու վերագրելու,
 որոնցմէ սակայն կը վախէ և կը զգուշա-
 նայ կարծեցեալ յաղթողը, ինչպէս որ տե-
 սանք: Յետ այնքան շատ և այնքան մեծ
 պարտութիւններու, զորս Պլուտարքոս զի-
 տէ պատմել, մեզի տարօրինակ կու գայ
 լռութիւնը խաղաղութեան բանակցութեան
 մասին, որ սակայն բնական հետեանքը
 պէտք էր ըլլալ այդ պարտութեանց: Ընդ-
 հակառակն, յաղթողները յարկ մը չեն
 գտներ յաղթուած երկրի մէջ, որուն տակ
 իրենք զիրենք պատսպարեն կլիմայի խըս-
 տութեանց դէմ. զինուորները դառնապէս

կը գանգատին, և նաև կողոզիոս կը նկարագրէ իրենց խղճալի վիճակը, երբ նա զանոնք ապստամբութեան կը յորդորէ¹:

Յամի 68 Լուկուլլոսի բանակին տժգոհութիւնն իր գագաթնակէտն հասած էր: Մէկ մասը կ'ուզէր զինուորական ծառայութենէ ազատ ըլլալ. բայց դեռ մեծագոյն մաս մ'ալ ուրիշ սպարապետ մը կը խնդրէր: Կը թուի թէ Հայոց, Պոնտոսի և Մարաց թագաւորները նոր յարձակում մը պատրաստած էին Լուկուլլոսի վրայ. Միհրդատ Մարը կը դեզերէր հռովմէական ճամբարին մօտերը, Պոնտացին անկից շատ հեռու չէր. իսկ Տիգրան կապաղովկիայէն կը վազէր մեծ բանակներով: Լուկուլլոս փախուստ կու տայ և կը մտածէ Տիգրանի չուէն յոգնած բանակին վրայ յանկարծական յարձակում մ'ընել. բայց իր զինուորները իրեն հետևեցան միայն մինչև կապաղովկիոյ սահմանը և աւելի յառաջ քալել չուզեցին: Ոչ ոք մտաւ կապաղովկիա, ուր Տիգրան մեծ աւերումներ գործած էր և իր «մեծ բանակներով» կը սպառնար նաև Ասիա նահանգը գրաւել. բայց զՏիգրան զսպեց մերձաւոր ներկա-

1. Պլուտ. Լուկ. 32, 34, հմմտ. Ապպիան Միհր. 88, 90:

յութիւնը Պոմպէոսին¹, զոր քիչ վերջ հռովմէական ժողովրդեան որոշողութիւն մը Լուկուլլոսի յաջորդ անուանեց: Լուկուլլոս իր զինուորներէն թողուեցաւ, իսկ հռովմայ մէջ կորսնցուց նա իր լաւագոյն նեցուկները, որ է ազնուապետականները. վասն զի այդ ժամանակ յաւիտենական քաղաքին մէջ կատարուած յեղաշրջումներով ռամկավարական կուսակցութիւնն իշխանութեան գլուխ անցած էր: Լուկուլլոսի անկման նպաստեց նաև ժողովրդեան տրիրուններու յարձակողական լեզուն, զորս ասպետաց (որ է դրամատէրներու) հզօր դասակարգը իրենց կողմը շահած էր, վասն զի Լուկուլլոս Ասիոյ մէջ չափ մը դրած էր ասպետներու վաշխառութեանց:

Լուկուլլոս հռովմայեցի զօրավարներու ամենաերևելիներէն մէկն էր. իր յաղթութիւնները Կիւզիկէի, Քաբիրայի և Տիգրանակերտի մօտ կը ցուցնեն հռովմէական հրահանգի և պատերազմական արուեստի գագաթնակէտ մը: Եւ եթէ դժուարաւ կըրնանք վերագրել իրեն յաղթութիւն մը Արածանւոյ մօտ, սակայն իր դեռ ողջանդամ բանակով մը ներքսագոյն Հայաստանէն դարձը մեր զարմացման արժանի է:

1. Կասսիոս Գլոն 36, 16-17. Պլուտ. Լուկ. 35. Կիկերոն pro Manilia 45. Ապպիան Միկր. 87:

Լուկուլլոս դարձաւ ի Հոովմ և վարեց հոն անգործ և շոայլ կեանք մը, իսկ Ս. րևելքի գործերը «67/66ի ձմեռը ճիշդ այն տեղ էին, ուր որ էին 75/74ի ձմեռը»¹ :

Հիմայ վայրկեան մը թողլով արտաքին պատերազմները, տեսնենք Տիգրանայ պետութեան ներքին վիճակը :

Առանց շատ վարանելու կրնանք ըսել, որ Տիգրանայ կառավարութիւնը շատ չէր տարբերեր արևելեան բռնապետի մը կառավարութենէն : Երկաթեայ կամքով և զօրաւոր նկարագրով մարդ մը, ան գերազանցօրէն գիտցաւ թէ՛ իր կամքը զօրել տալ իր հպատակներուն վրայ և թէ՛ իր գաւազանին տակ ենթարկել իր դրացի ժողովուրդները : Եւ բուն իսկ իր բռնապետական կամ լաւ ևս իր ազդեցիկ վարումին կը պարտի ան իր մեծութիւնը և իր ոյժը. վասնզի առանց ասոր պիտի չկարենար իր իշխանութեան հպատակեցնել բազմաթիւ գրեթէ անկախ նախարարները, որոնք սակայն երկրին զօրութիւնը կը կազմէին : Յիրաւի Հայոց պատմութեան բովանդակ ընթացքին մէջ կը տեսնենք, որ երկիրը միայն այն ատեն զօրաւոր և ինքնապաշտպանութեան կարող վիճակի մը մէջ է,

1. Մոմսըն Römische Geschichte. III 72.

երբ բուն թագաւոր մը կը յաջողի իր կամքին զօրութեամբ նախարարաց ոյժը ջախջախել և զանոնք իր բարձրագոյն նրպատակներուն գործածել:

Ուստի շատ հասկանալի է, որ քանի մը նախարարներ և նոյն իսկ իր որդիները, թերևս պարթևական արքունիքէն կամ Հռովմէն գրգռուած և կամ յատուկ իշխանասիրութենէ մղուած, կը ցանկային Տիգրանի անկումը: Այսպէս ան բռնադատուեցաւ 66ին Ն. Ք. իր յաղթական բանակները կապաղովկիայէն և Կիլիկիայէն հանել և իր հարազատ որդւոյն դէմ տանել:

Տիգրան՝ կղէտպատրայէն, Միհրդատայ դստերէն¹, երեք որդի ունեցած էր. Չարեհ, որ քանի մը մտերիմներու հետ դաւակցութիւն մը գործեց իր հօր դէմ, և դաւակիցք՝ անտարակոյս ահաւոր երդման մը ձև տալու համար՝ աջ ձեռքերնէն արիւն հանեցին և խմեցին. բայց դաւը յայտնուեցաւ Տիգրանայ, և Չարեհ իր ընկերներով ինկաւ կռուի դաշտին վրայ²:

1. Մեմոն 46, 2. 55, 1:

2. Վաղերիոս Մաքսիմոս 9, 11. Ապպիան Միհր. 104: Գրամ մը կայ հետևեալ գրութեամբ. Ζαδριάδρου βασιλέως βασιλέων, Չարեհի արքայիև արքայից, (Գաթրրճեան Բ 72): Այս դրամն ընդհանրապէս Արտաշէս Աի ընկեր Չարեհի կը վերագրուի, որ բուն փոքր թագաւոր մ'էր: Կարելի չէ՞ արդեօք ենթադրել, որ այս

Երկրորդ որդին, նոյնպէս փառասէր, փորձեց իր հօր արքունական թագը դեռ անոր կենդանութեան միջոց իր գլուխը դնել, զոր Տիգրան կտրել տուաւ: Երրորդը, իր անուանակից Տիգրանը, կը թուի թէ ինքն հայրը տեղ մը թագաւոր կարգած էր, (հաւանականաբար Մոփաց և Կորդուաց վրայ): Բայց փառասէր երիտասարդը անով զոհ չեղաւ, ան փորձեց գրաւել Արտաշատի աթոռը բովանդակ Հայաստանի վրայ: Հայրը փութաց Կապադովկիայէն, յաղթեց Կոուի մէջ իր որդւոյն, որ իր աներոջ՝ Պարթևաց Հրահատ Գե քով փախաւ և զանիկայ համոզեց իր հօր դէմ քալելու: Այս համոզելը այնքան աւելի դիւրին եղաւ, որքան արդէն Հրահատ առիթ մը կը փնտռէր Տիգրանէն վրէժ խնդրելու:

Այսպէս 66ին պարթևական գունդեր և հայ փախստականներ Հայաստանի վրայ քալեցին և Արտաշատը պաշարեցին: Մերունին Տիգրան, յետ քաղաքը առատ պարէնով ապահովելու, լերանց մէջ քաշուեցաւ բանակով մը: Ի զուր պաշարեցին

Չարեհի ապստամբութիւնը այնչափ մեծ էր, որ ան իբր հակաթոռ թագաւոր մը իր անուամբ դրամ կոխած լէւլայ, փոխ առնելով իր հօր տիտղոսները, ինչպէս այնքան անգամ պատահած է Պարթևաց մէջ: (Կան ալ որ այս դրամը կեղծ կը համարին):

Պարթևք այդ անառիկ բերդաքաղաքը , վասն զի թէ՛ քաղաքին և թէ՛ գիւղական բնակչութիւնը ծերունւոյն կողմն էր : Հրահատ ստիպուեցաւ իր աշխարհը ետ դանաւ , բայց իր զօրքէն մաս մը թողուց կրտսեր Տիգրանայ քով , պաշարումը շարունակելու համար : Երբ ծերունին Տիգրան ստուարացած գունդերով եկաւ իր մայրաքաղաքը ազատելու համար , հոն Արտաշատի պարսպաց տակ տեղի ունեցաւ արիւնահեղ պատերազմ մը՝ հօր մը մէջ , որ իր անցեալ յաղթանակները կը յիշէր , և որդւոյ մը՝ որ գեղեցիկ բայց անիրաւ փառքերու կը ցանկար : Յաղթութիւնը հաւատարիմ մնաց ծերունի Տիգրանին :

Կրտսերը նախ փախաւ իր մօրը հօր՝ Միհրդատայ քով , որ ճիշդ քիչ մ'առաջ յաղթուած ըլլալով Պոմպէոսէն՝ աւելի վատ վիճակի մը մէջ կը գտնուէր քան զինքն : Այն ատեն Տիգրան դիմեց Պոմպէոսին , որ կրնար իրեն պէս մատնչի մը պէտք ունենալ¹ :

Պոմպէոս Լուկուլլոսի գունդերուն մեծ մասը իր դրօշին տակ ընդունած էր , և երկու զօրավարները 66ին Գաղատիոյ մէջ տեսակցութիւն մ'ունեցան , որ իրենց փոխա-

1. Ապպ. Միհր. 104. Դիոն 36, 51.

դարձ նախանձը և թշնամութիւնը աւելի սաստկացուց: Լուկուլլոսի գունդերէն դուրս՝ Պոմպէի տրամադրութեան տակ էր բովանդակ Արևելքի նահանգներուն և դաշնակից թագաւորներուն զինուորականութիւնը: Ապպիանոս անոր կու տայ 70,000 հետևակ, 4,000 հեծեալ, 6,000 նաւ: Գիշերային պատերազմի մը մէջ ան յաղթեց Միհրդատայ (66), որ երկրորդ անգամ իր նուիրակները դրկեց Տիգրանայ. իսկ ինքը անոնց կը հետևէր իր ուղտերով և մնացած զօրքով: Բայց Տիգրան սաստիկ բարկացած էր Միհրդատայ դէմ, վասնզի կը համարէր թէ ան է իր որդին իրեն դէմ զրգռողը. ուստի անոր պատգամաւորները շղթայի զարնել տուաւ¹, իսկ Միհրդատը,

1. Կը տեսնուի որ Տիգրան երկար ժամանակէ ի վեր Միհրդատայ վրայ կը կասկածէր: Նա 72ին չուզեր Միհրդատայ հետ գործ ունենալ և միայն իր կնոջ Կղէոպատրայի թախանձանքէն բռնադատուած կը խոստանայ դաշինք մը, բայց զայն կնքելու կը յապաղի (Մեմնոն 43, 2): Նոյնպէս կը տեսնենք որ 70ին Միհրդատ ինքզինքը կ'արդարացնէ Տիգրանայ առջև, և կասկածներու և զժտութեանց պատճառ կը համարուին իր յոյն խորհրդականները, որոնք մահուամբ կը պատժուին (Պլուտ. Լուկ. 22): Այս գործը նաև անով կը հաստատուի որ, Տիգրան Միհրդատը քսան ամիս իր տեսութենէն հեռի և բերդի մը մէջ բանտարգեալի մը պէս պահեց (Մեմնոն 46, 1. 55, 1. Պլուտ. Լուկ. 25. Ապպ. Միհր. 82): Կրտսեր Տիգրանայ ապստամբութիւնը և Միհրդատայ քով փախչիլը կը ցուցնէ, թէ ծերունի Տիգրանին կասկածները բոլորովին անհիմն չէին: Անոր համար է որ

որ արդէն ի Հայս Խոտենէ (Խորսենէ? Կղարջք) հասած էր, հալածեց իր երկրին սահմաններէն¹ :

Երբ կրտսերն Տիգրան Պոմպէոսին քով եկաւ, սա Եփրատայ կողմերն էր տակաւին և կը մտածէր Պոնտացւոյն ետևէն երթալ և բռնել զայն: Բայց հայը հրաւիրեց զինքը իր հայրենեաց վրայ յարձակելու: Ուրեմն Հռովմայեցիները մտան Հայաստան Եկեղեաց կողմէն և երիտասարդ մատնիչը կը ծառայէր անոնց իբրև քաջ առաջնորդ. վասն զի կը տեսնուի որ Պոմպէոս իրեն յոյս տուած էր շատոնց ցանկացած թագր ստանալու: Միևնոյն կերպով վարուած էին Հռովմայեցիք նաև Պոնտոսի մէջ Միհրդատայ և անոր որդւոյն հետ. *divide et impera!* բաժնի և տիրի: Մատնչին առաջնորդութեամբ քանի մը քաղաքներ ինկան Հռովմայեցւոց ձեռքը և Պոմպէոս սկսաւ քալել Արտաշատի վրայ² :

հիմայ իրաւունք ունենալ կը կարծէ, երբ Միհրդատայ պատգամաւորները շղթայի կը զարնէ և իր աներոջ գլուխը բերողին հարիւր տաղանդ կը խոստանայ (Պլուտ. Պունպ. 32):

1. Պլուտ. Պունպ. 32. Դիոն 36, 50. Ապպիան Միհր. 101:

2. Պլուտ. Պունպ. 33. Դիոն 36, 51. Ապպ. Միհր. 104:

Ծերունի Տիգրանայ դիրքը այժմ խիստ դժուարին էր: Դառն սրտով մը տեսաւ որ իր և թերևս նաև իր տէրութեան վախճանը մօտեցած էր: Այժմ ինքը միայնակ կը գտնուէր երեք մեծ թշնամիներու դիմաց. նախ Պարթևները, որոնք իր ոխերիմ նախանձորդներն և թշնամին էին և Պոմպէի պատգամաւորներուն ձեռքով հեռի բռնուած՝ Միհրդատայ կամ իրեն հետ ո՛ր և է բանակցութիւն ընելէ: Երկրորդ Հռովմայեցիները, որ ահագին բանակներով իր մայրաքաղաքին վրայ կը քալէին, և որոնք Միհրդատը ջախջախած և անոր երկիրը հռովմէական նահանգի մը վերածած էին և բոլոր դրացի թագաւորութեանց և աշխարհներուն վրայ կը հրամայէին: Երրորդ և ամենէն չարն էր ներքին երկպառակութիւնը, որով իր որդին և իր աւատառու իշխանք իրեն հետ թագի համար կը կռուէին: Ի՞նչ պէտք էր ընել ան այսպիսի հանգամանքի մը մէջ:

Տիգրան գործեց այնպէս՝ ինչպէս խոհեմութիւնը և իր ծերունւոյ նուազած այրականութիւնը իրեն կը թելադրէին: Ան գերադասեց աւելի Պոմպէոսին հետ բանակցիլ, քան իր որդւոյն ձեռքը մատնուիլ, և կամ իր երկիրը հռովմէական նահանգի մը վերածուած տեսնել: Պոմպէոսի համ-

բաւը, քաղցրութիւնը և մարդասիրական ոգին շատ ծանօթ էր Արևելքի ժողովրդոց և իր առաքինութիւնները զինքը սիրելի ըրած էին անոնց առջև: Նաև Տիգրան շատ բան լսած էր այն քաղցրութեան մասին, զոր Հռովմայեցին ցոյց տուած էր իր ծովահէններու դէմ մղած պատերազմին մէջ¹:

Ուստի ան ուղարկեց խաղաղութեան պատգամաւորներ առ Պոմպէոս և անոր յանձնեց Միհրդատայ դեսպանները: Կըրտսերն Տիգրան ուզեց այս բանակցութիւնները արգելուլ, բայց Հռովմայեցին առանց անոր ուշ դնելու դիմեց դէպ ի Արտաշատ, ուր սիրով ընդունուեցաւ: Հռովմայեցի սպարապետը իր բանակը զարկաւ գրեթէ քսան քիլոմետր հեռի քաղաքէն, բայց Տիգրան զինուորաց թոյլ տուաւ քաղաքը այցելելու:

Յետ կանխապէս բանակցութիւններով յարմարցնելու, Տիգրան ինքնին գնաց հռովմէական ճամբարը, ուր Պոմպէոս իրեն հետ շատ ազնիւ վարուեցաւ: «Որպէս զի Պոմպէոսի առջև ինքզինքը թէ՛ յարգանքի և թէ՛ կարեկցութեան արժանի ցուցնէ, Տիգրան միջին ճամբայ մը բռնեց նախկին փառաւորութեան և արդի խոնարհութեան

1. Ա.պ.պ. Միհր. 104:

մէջ» :¹ Ան ձիով զնաց հռովմէական բանակը, և «Պոմպէոս ի պատիւ անոր ընդառաջ դրկեց զինուորական տրիբուններ և ճիւղորաց բարձրաստիճան սպայներ, որոնց մօտենալէն վախնալով թագաւորին ընկերացողները փախան, վասն զի առանց նախապէս իմացնելու եղած էր . . . : Ոմանք կը պատմեն թէ՛ Տիգրան Պոմպէոսէն կոչուելով խրճակիրներ ընկերացան իրեն»² : Տիգրան մօտեցաւ Պոմպէի և արևելեան ուժով ողջունեց զայն : Հռետորական այլաբանութեան մը մէջ, որուն սկզբնական աղբիւրը Կիկերոնի ճառ մ'է³, կ'աւանդուի թէ ան իր թագը Հռովմայեցւոյն ոտքը դրած ըլլայ :

Պոմպէոսի վարմուքը իրեն հետ շատ բարեկամական էր : Անիկայ ծերունին նստեցուց իր աջակողմը, իսկ կրտսեր Տիգրանը իր ձախակողմը : Յետոյ դրին խաղաղութեան դաշինքը (66 ն. Ք.) : Տիգրանայ պիտի մնար իր հայրենական—հայկական տէրութիւնը, ասոր մէջ կը հասկցուէին նաև իր պարթևական գրաւումները :⁴ — վասն զի Հռովմ կ'ուզէր Տիգրանայ ոյժը

1. Դիոն 36, 52. Փլորոս 3, 5. Ապպ. Միհր. 104 :

2. Ապպ. անդ :

3. Կիկերոն, ճառ յաղագս Սեքստեայ 58 :

4. Ստրաբոն 12, 1, 24 :

տկարացնել, բայց ոչ Պարթևը զօրացնելով: Այս բանս յայտնի կը տեսնուի քիչ մը վերջը Տիգրանայ և Հրահատայ մէջ ծագելիք հողի խնդիրներուն մէջ: — Բայց Տիգրան պէտք էր հրաժարիլ իր Ասորուոց, Փիւնիկիոյ, Գաղատիոյ(?), Կապադովկիոյ, Կիլիկիոյ և ծովեզերեայ գրաւումներէն: Գարձեալ, Տիգրան պէտք էր վեց հազար տաղանդ վճարել իբր պատերազմի տուգանք, (գրեթէ 33 միլիոն ֆրանք): Ասկէ վերջը Պոմպէոս հաշտեցուց հայրը որդւոյն հետ, որուն տուաւ Ծոփաց և Կորդուաց թագաւորութիւնը, և ծերունիէն խոստում առաւ որ զայն պիտի նշանակէր իբր իրեն յաջորդ¹:

Դձռ ուրիշ պայման մ'ալ, որ իր հետեանքներով շատ մեծ նշանակութիւն ունեցաւ և որ մինչև հիմայ քիչ նկատի առնուած է, դրաւ Պոմպէոս Հայոց թագաւորին վրայ. Այնուհետև Հայոց թագաւորները պէտք էին իրենց գահակալութեան համար Հռովմայ հաճութիւնը ստանալ²:

1. Կիլիկիոն յաղագս Սեքստեայ 58-59: Ապպիան Միեր. 104-105. Պլուտ. Պոմպ. 33. Դիոն 36, 53. հմմտ. Ferrero, grandezza e decadenza di Roma I 326:

2. Փլորոս 4, 12. Ապպիան Նախաբան 3. Զոսիմոս 3, 32. Ներոնի և Տրայիանու պատերազմները զլխաւորապէս այս իրաւունքի հետեանքովն են:

Ասով Հոովմայեցոց աւատատուութեան իրաւունքի մը հիմը դրուեցաւ ի Հայս, թէև այդ ժամանակ Հայաստան հոովմէական աւատառու տէրութիւն մը չեղաւ բառին բուն իմաստով. այդ սկզբունքը զարգացաւ յետագայ դարերու ընթացքին մէջ:

Ասոր վրայ Պոմպէոս հռչակեց Տիգրանը բարեկամ և դաշնակից Հոովմէական ժողովրդեան¹, և բեմը շրջապատող զօրականը բարձրաձայն աղաղակեց, Տիգրան արքայ Հայոց: Այս բաները ուրախութեամբ լեցուցին յուզուած ծերունին, որ երբ տեսաւ թէ այս կերպով յաղթանակ մը տարաւ իր որդւոյն վրայ, ամէն հոովմայեցի զինուորին նուէր տուաւ 50 դահեկան, ամէն հարիւրապետին 1000, և ամէն տրիբունի տաղանդ մը²:

Իր հօր սոյն յաղթանակին վրայ՝ կրտսեր Տիգրանը բոլորովին վհատած էր: Իր յոյսերը ի դերև ելած էին. հոովմայեցի ըս-

1. Կիկերոն յաղագս Սեքստեայ 59:

2. Թէև փոքրիկ տարբերութիւններ կան, բայց ընդհանուր կերպով համաձայն են Ստրաբոն 11, 14, 10. Պլուտ. Պոմպ. 33. Ապպ. Միհր. 104. Ferrero I 326ի համեմատ 50 դահեկանները կ'ընեն զրեթէ 38 ֆրանկ, 1000 իբր 800, իսկ 10,000 իբր 8000, թէև նոյն ժամանակ ազնիւ մետաղները շատ աւելի մեծ արժէք մ'ունէին:

պարապետը և բանակը, զորս խորամանկ ծերունին իր կողմը վաստկիլ գիտցած էր, իր հայրը ճանչցած էին իբրեւ օրինաւոր թագաւոր երկրին, իսկ ինքը իր մատնութեան համար այն միայն ընդունեցաւ, զոր արդէն ունէր. հետեւաբար սաստիկ տժգոհ էր: Դեռ աւելի դառնութեամբ լեցուեցաւ, երբ որոշուեցաւ որ յիշեալ վեց հազար տաղանդները պիտի վճարուէին այն գանձերէն, որոնք իր իշխանութեան տակ գտնուող բերդերուն մէջ պահուած էին:

Հիմայ սկսաւ դարձեալ գաղտնի բանակցութեան մէջ մտնել տժգոհ նախարարներու և Պարթեւաց հետ՝ ընդդէմ Հոովմայեցւոց: Իսկ նոր դաւադրութիւն մ'ալ լարեց իր հօրը դէմ և պատրաստուեցաւ փախչիլ: Ճիշդ նոյն օրերը Պոմպէոս ճաշի հրաւիրեց հայրը և որդին, բայց երիտասարդ Տիգրանը չգնաց հոն: Իր գաղտնի դաւակցութիւնները մէջտեղ ելան և Պոմպէոս զայն շղթայի զարնել տալով իր յաղթանակին պահեց: Այն ատեն ծերունին Տիգրան գրաւեց Օոփաց և Կորդուաց բերդերը և բերաւ վեց հազար տաղանդները¹:

Պոմպէոս Հայաստան թողուց իր տեղակալ Ափրանիոսը գունդերով, իսկ ինքը

1. Գիտն 36, 53. Ապպիան Միհր. 105:

զնաց ընդդէմ Աղուանից և վրաց և հաւ-
լածեց նաև Միհրդատը: Աղուանից թա-
գաւորն Որոզ, որ բարեկամ էր կրտսեր
Տիգրանայ, փորձ մ'ըրաւ զայն ազատե-
լու. ան երեք կողմէն յարձակում գործեց
Հոովմայեցւոց վրայ և ինքն անձամբ յար-
ձակեցաւ Մետելլոսի զօրաբաժնին վրայ,
ուր կը պահուէր Տիգրանը, բայց հոով-
մէական կրթութեան առջեւ յաղթուելով
ստիպուեցաւ հաշտութիւն խնդրել: Պոմ-
պէոսին ետ դարձած միջոց Հրահատ ալ
պարթև դեսպաններ դրկեց և իր փեսան
ետ պահանջեց. բայց Հոովմայեցին չու-
զեց յանձնել, ըսելով թէ անիկայ աւելի
իր հօրը կը վերաբերի քան իր աներոջ:

Այսպէս ուրեմն երիտասարդ Տիգրանը
իր կնոջ և դստեր հետ միասին շղթայի
զարնուած Հոովմ բերուեցաւ և Պոմպէի
յաղթանակին մէջ տարուեցաւ (61ին)¹:
Հոովմայեցի սպարապետը կրնար զայն
յաղթանակէն վերջ կապիտուլիոնի առջև
սպաննել. բայց անիկայ խնայեց անոր և
թողուց որ Փլաւիոս ծերակուտականին
հսկողութեան տակ ապրի²: Սա յետոյ

1. Պլուտ. Պոմպ. 33. Ապպ. Միհր. 105. Դիոն 38, 30:

2. Այս խնայումը թերևս քաղաքական նկատումնե-
րով կատարուեցաւ: Նախ Պարթևաց թագաւորին պատ-
ճառաւ, որուն գուսարը, Տիգրանայ հարսը, Հոովմ կը

ԵՏին պրետոր ընտրուեցաւ: Միւնոյն տա-
 րին նաև Կղոզիոս, Լուկուլլոսի ծանօթ
 պատգամաւորը և Յուլիոս Կեսարու բա-
 րեկամը, տրիբուն ժողովրդեան ընտրուե-
 ցաւ և Հռովմայ մէջ ամենակարող էր: Իր
 տրիբունութենէն տարի մ'առաջ Կղոզիոս
 երկրորդ անգամ մ'ալ ի Հայս Տիգրանայ
 քով իբր պատգամաւոր ղրկուած էր¹, և
 մենք ամէն իրաւունք ունինք հաւատալու
 թէ, այս առթիւ Հայերը կ'ամ խնդրած էին
 իրմէ և կամ կաշառած էին զինքը, որ
 Տիգրանը գերութենէն ազատէ: Ուստի երբ
 օր մը ինքը Փլաւիոսի քով խնջոյքի հրա-
 լիրուած էր, անկէ խնդրեց Տիգրանը տես-
 նել: Փլաւիոս Տիգրանը ներկայացուց և
 Կղոզիոս զայն իրեն հետ միասին սեղանի
 նստեցուց, յետոյ տիրացաւ Տիգրանայ ան-
 ձին և բռնութեամբ զայն պրետորին ձեռ-
 քէն յափշտակելով իրեն տունը բերաւ և հոն
 շղթայազերծ կը պահէր: Փլաւիոս բո-
 ղոքեց, Պոմպէոս քանի մ'անգամներ իր գե-
 րին ետ պահանջեց, բայց Կղոզիոս ոչ մէ-
 կուն մտիկ ըրաւ, վասն զի այդ ժամանակ

գտնուէր: Երկրորդ և աւելի հաւանականաբար, Պոմ-
 պէոս կ'ուզէր այն քաղաքականութիւնը սկսիլ, զոր յե-
 տոյ Օգոստոս այնքան յաջողակ կերպով գործածեց. այ-
 սինքն Հայոց և Պարթևաց քանի մը թագապահանջներ
 ի Հռովմ միշտ իրենց տրամադրութեանց տակ ունենալ:

1. Կիկերոն առ Ատտիկոս 2, 4, 2:

իրմէ զօրաւոր մարդ չկար Հռովմայ մէջ :
 Ան նաւ մը դրաւ Տիգրանը և ծովով
 փախցուց. բայց սաստիկ փոթորիկները
 փախստականը ափունք նետեցին Անտիու-
 մի մօտ, — այսօրուան Բորթոյ տ' Անցիոյ,
 քիչ մը հարաւ Տիբերիսի գետաբերնէն :
 Կղոզիոս անմիջապէս հոն դրկեց Սեքստոս
 Կղոզիոսը բազմութեամբ զինուած մար-
 դիկներու, որպէս զի Տիգրանը ապահով
 իրեն քով բերեն : Երբ Փլաւիոս և Պոմ-
 պէոս եղածը լսեցին, պրետորը հոն դի-
 մեց, նմանապէս զինուած մարդիկներով,
 որպէս զի Տիգրանը բռնութեամբ յափըշ-
 տակեն Կղոզիոսէն : Ապպեան ճանապարհին
 վրայ, չորրորդ քարին մօտ, սաստիկ կռիւ
 մը տեղի ունեցաւ երկու խումբերուն մէջ,
 ուր բազմաթիւ փլաւեաններ ինկան, ի
 մէջ այլոց նաև Պապիրիոս Հռովմայեցի աս-
 պետը, որ խիստ մտերիմ բարեկամ էր
 Պոմպէի. իսկ Փլաւիոս հազիւ կրցաւ իր
 գլուխը ազատել փախուստով¹ : Կը տես-
 նուի որ, այս դէպքերը Հռովմայ մէջ բա-
 ւական յուզում առաջ բերած են² : Անհան-

1. Ասկոնիոս Պետիանոս էջ 41-42, հրակ. Kiessling-Schoelի, Պերլին 1875. Ասկոնիոս մատենագիր է առաջին դարու. գրած է Կիկերոնի ճառերու մեկնութիւն, մեռած է իբր 88 յ. Ք. : Կիկերոն յաղագս Միլոնի 7.

2. Կիկերոն առ Ատտիկոս 3, 8, 3. (յամի 58էն).

դարտ Տիգրանին, որ իր մայրենի պապուն շատ կը նմանի, մնացած օրերուն վրայ ա՛յլևս տեղեկութիւն չունինք. հաւանականաբար Պոմպէոս զինքը Հռովմ ըստ պաննել տուաւ¹: Վասն զի արդէն 52ին կողոզիոս Միլոնի ձեռքով սպանուեցաւ և Պոմպէոս հիւպատ ընտրուեցաւ:

Արդ, երբ Պոմպէոս Աղուաններու և վրաց դէմ յաջողութեամբ պատերազմեցաւ, Երուսաղէմ դիմեց Հայաստանի և Ասորոց վրայէն: Ի Հայս լսեց որ Պարթևները կորդուաց վրայ յարձակում գործած էին: Այս գաւառը Տիգրանայ կը վերաբերէր: Ուստի Պոմպէոս անոր հաճոյք մ'ընելու համար՝ հայկական գունդերուն միացուց նաև Ափրանիոսի գունդերը, որոնք միասին գրաւեցին կորդուքը և այդ երկիրը իր անդորրութիւնը գտաւ Հայոց ձեռքին տակ: Ափրանիոս յետոյ մոլար ճամբաներով Միջագետք հասաւ²:

Գրաւուած աշխարհներուն մէջ Պոմպէոս քանի մը նոր կարգադրութիւններ ըրաւ,

Քոչ եւ Պոմպէի խօսքերը նամակներէդ իմացայ: Հասարակապետոչքեան մեջ աշնքան մեծ շարժում մ'ըլլայ չեմ տեսներ, որքան դոչ կամ կը տեսնես եւ կամ զիս միսրաբերոչ համար կը պատմես: Վասն զի Տիգրանը մեկդի բողոքով, ամեն բան մեջտեղէն վերցաւ:

1. Ապպիան Միհր. 105:

2. Դիոն 37, 5. Պլուտ. Պոմպ. 36:

և բոլորովին փոփոխեց ինչ որ Լուկուլոս սահմանած էր: Փոքր Հայքը, որ առաջ Միհրդատայ էր, տուաւ Գաղատիոյ Դիոտարոս թագաւորին¹: Ծոփքը նուիրեց Կապադովկիոյ Արիոբարզան թագաւորին, ի վարձ ցոյց տուած հաւատարմութեան²: Տիգրանայ թողուց Միջագետքի մեծ մաս մը³: Յետոյ կռուեցաւ Մարաց Դարեհ թագաւորին հետ և անկէ զնաց Հրէից դէմ:

Հռովմայեցւոյն հեռանալէն վերջ մէկ անգամ միայն խօսք կ'ըլլայ խաղաղութեան վրդովման մասին: Այսինքն՝ Հրահատ սահմանի մը խնդրոյ համար Հայաստան յարձակեցաւ, սկզբան յաղթուեցաւ, բայց յետոյ ինքը զօրացաւ: Խնդիրը երկու կողմէն ալ Պոմպէոսի ներկայացուեցաւ (64 կամ 63 ն. Ք.), որ դեռ Արեւելք կը դեգերէր: Տիգրան խնդրեց անոր ձեռնտուութիւնը իբր՝ դաշնակից, իսկ Հրահատ անոր բարեկամութիւնը: Պոմպէոս կը զգուշանար Պարթևաց հետ զարնուիլ, իբր

1. Եւարոպիոս 4, 14:

2. Ապպիանոս Միհր. 105 միայն նաև Կորդուքը Կապադովկացւոյ կու տայ, բայց, ինչպէս կը տեսնուի, իրաւունք չունի: Վասն զի Պլուտարքոս և Կասսիոս Դիոն զայն հայկական կը համարին, ինչ որ արդէն իրաց ընթացքէն կը հաստատուի:

3. Ստրաբոն 16, 1, 24:

դատաւոր երեք մարդ զրկեց, որպէս զի խնդիրը արդարութեամբ լուծեն: Թագաւորները ընդունեցան այս մարդիկը իբր դատաւոր, բայց խնդիրը խոհեմութեամբ իրենց մէջ կարգադրեցին. վասն զի ո՛վ որ յաղթող ելլէր, Հոովմայեցիները իրեն թըշնամի պիտի ընէր, ասկէ զատ թագաւորները կընային միշտ իրարու պէտք ունենալ ընդդէմ հասարակաց թշնամիին, որ է՝ Հոովմայեցիներուն դէմ¹:

Այս հաշտութենէն վերջ գրեթէ կը դադրին մեր տեղեկութիւնները Տիգրանայ մասին²: Տիգրան կը թագաւորէր դեռ մինչև 9 փետրուար 56ին, և հիւանդութեամբ վախճանեցաւ 85 տարեկան պատկառելի հասակի մէջ³:

Այս է համառօտիւ անոր քաղաքական կեանքը կամ մանաւանդ անոր վերաբերութիւնները Հոովմայեցւոց հետ. վասն զի ներքին քաղաքականութեան վրայ գրեթէ ոչինչ գիտենք, իսկ Հոովմայեցւոցմէ դուրս

1. Դիոն 37. 6-7, Ապպիան Միհր. 106:

2. Ինչպէս վերը տեսանք, Կիկերոնի նամակաց մէջ (առ Ատտ. 2, 4, 2 և 2, 7, 2, երկուքն ալ 59ի ապրիլէն ն. Ք.) կը յիշուի Հոովմայեցւոց դեսպանութիւն մը առ Տիգրան, որուն զլուխ կեցած էր Ապպիոս Կղոզիոս Պուլքեր, Լուկուլլոսի երբեմնի պատգամաւորն և աներձագը: Այս դեսպանութեան նիւթը ինչ էր չենք գիտեր:

3. Լուկիանոս Մակրոբիի (Երկայնակեացք) 15:

ժողովուրդներու հետ վերաբերութեանց մասին ալ շատ ցանցառ ծանօթութիւններ միայն ունինք: Հռովմէական կրթութեան և հրահանգին հանդէպ ան տակաւին «բարբարոս» մ'է, և իր զօրութիւնը անոնց չհաւասարիր: Բայց զարմանք չէ որ յաղթուեցաւ հռովմէական կրթութեան և գինուց առջև, որուն դիմաց խոնարհեցան աւելի մեծ և աւելի պատերազմասէր ժողովուրդներ, ինչպէս Գաղղիացիք, Սպանիացիք և Մակեդոնացիք:



Տիգրան Բ Մեծն (թիւ 1).

Իր բուն մեծութիւնը պիտի տեսնուէր իր ներքին քաղաքականութեան և Հռովմայեցւոցմէ դուրս ժողովուրդներու հետ առնչութեան մէջ, բայց դժբաղդաբար այդ մասին շատ քիչ բան աւանդուած է: Մենք պէտք չէ Պլուտարքոսի մը, որ կուսակցական ոգի ունի, գրչին ազդեցութեան

ենթարկուինք: Թագաւոր մը, որուն իշխանութեան ժամանակ Փիւնիկէ, Ասորիք, Միջագետք, Մարք, Կաւկասեան աշխարհներ, Կապադովկիա, (դաշտայինն) Կիլիկիա հայկական գաւառներ եղան, պէտք է այնչափ դիւրաւ արհամարհուի: Ասոնք իրողութիւններ են և ոչ թէ մտաց գիւտասոնք արդիւնք են թագաւորին կամքին և բանակին զօրութեան և կը վկայեն անոր ինչպէս քաղաքական՝ նոյնպէս նաեւ զինուորական բարձր կարողութեանց¹:

1. Շատ իրաւամբ է որ Հայոց հին հեթանոս երգիչները այսպիսի դիւցազ մը երգած են: Այս երգերուն մնացորդները (Խոր. Ա, 24-31), թէև իրենց սկզբնական կերպարանքին տակ պահուած չեն, ապացոյցներ են այն համակրութեան, զոր ժողովուրդը այս ազգային դիւցազին համար ունէր: — Տիգրանէն մնացած են մեծ բազմութիւն մը արծաթէ և սղնձէ դրամներու: V. Langlois էջ 27-32 կ'ընծայէ զլիսաւորները, որոնք աջին վրայ կը կրեն Տիգրանայ թագազարդ զուխը, իսկ ձախին վրայ հետևեալ արձանագրութիւնները ունին. Βασιλέως Τιγράνου արքայիև Տիգրանայ, և կամ Βασιλέως βασιλέων Τιγράνου արքայիև արքայից Տիգրանայ: Պատկերները կը ներկայացնեն իր զանազան յաղթանակները, մասնաւորապէս Անտիոքայ մէջ կոխուածները բազմութիւն են, (տես մեր թիւ 1): Դամասկոսի իր դրամներն արդէն յիշեցինք (տես վերը էջ 35): Իսկ թուականով դրամները խիստ քիչ են. մէկ չորեքդրամեան մը կայ Լոնարայի Բրիտանական թանգարանին մէջ յամէն 242 = 70, իսկ երկու չորեքդրամեաններ ևս Բարիզու Ազգային թանգարանին մէջ, յամէն 241 = 71 և 243 = 69. հմմտ. A. Petrowicz, Arsacidenmünzen էջ 191: Այս դրամներու վրայի թուականներէն կը հետևի, որ այն ժամանակ Հայոց դիւանին մէջ սելևկեան թուական կը գործածուէր:

Տիգրանին թագի ցանկացող բոլոր որդիները անհետացեր էին անոր կենդանութեան ժամանակ, և զահը մնացած էր հանդարտագոյն և զրականապէս շատ կիրթ որդւոյն ԱՐՏԱՒԱԶԴԱՅ ԲԷ (55-34, † 30 ն. Ք.)¹: Տիգրանայ արքունեաց մէջ ոչ ինչ խնայուեցաւ պատանւոյն դաստիարակութեան համար, և յոյն գիտնականները անոր դաստիարակներն և փափագելի հիւրերն էին²: Ան միշտ աշակերտ մը

1. Գահակալութեան տարին անով կ'որոշուի, որ 54ին երբ Արասոս Ասորիք եկաւ, նա կը թագաւորէր. իր հօր մահը դրինք 55ին: Այս երկու թուականներն ալ Աիկերոնի վկայութիւններով կը հաստատուին:

2. Կը թուի թէ Արտաւազդ ժամանակ մը գահակից եղած է հօրը: Այս բանիս վրայ ես հետեւեալ կերպով կը մտածեմ: Տիգրանակերտի պատերազմէն վերջ (69ին) Տիգրան իր որդիներէն մէկուն զլուխը դրաւ թագաւորական խոյրը (Մեմոն 57. Պլուտ. Լուկ. 29): Ասիկայ էր Արտաւազդ, Տիգրանայ երիցագոյն որդին, Կղէոպատրայի հետ ամուսնութենէն առաջ ունեցած կնոջմէ մը ծնած: Կղէոպատրա ջանաց փոխանակ Արտաւազդայ իր որդին Տիգրան կրտսերը յառաջ մղել, իսկ Միհրդատ՝ երիտասարդը կը զրգոէր ընդդէմ հօրը (Դիոն 36, 50), որպէս զի իր թողը Տիգրան՝ Հայոց թագը իր անձին համար ապահովէ: Այդ ժամանակ անտարակոյս վէճ մը կար կրտսեր Տիգրանայ և Արտաւազդայ մէջ, այնպէս որ Պոմպէոս հարկ տեսաւ մասնաւոր կերպով պարտք դնել ծերունի Տիգրանայ վրայ, որ Տիգրանը իրեն յաջորդ նշանակէ (Ապպ. Միհր. 105) փոխանակ ուրիշի մը, որ թերևս իր անդրանկութեան իրաւանց վրայ կը պընդէր: Նաև կրտսեր Տիգրանայ գերութենէն վերջ Արտաւազդ մնաց գահակից: Իրմէն մնացած են երկու արծաթ դրամներ, իր Մերորդ իշխանութեան տարիէն: Առաջինը նկարագրուած է ի Mém. de la société d'archéol.

չմնաց, այլ ինքն ալ արտադրութիւններ
ըրաւ և գրեց պատմական, թատերական
և ուրիշ գրական գործեր, որոնք դեռ երկ-
րորդ դարուն պահուած էին¹. ասոնք մեզի
կը ցուցնեն թէ, այդ ժամանակ Հայոց
բարձր դասակարգերուն մէջ գրական ճա-
շակ մը կար, զոր նաև Արտաշատու և
Տիգրանակերտի մէջ կատարուած թատե-
րախաղութիւնները կը հաստատեն²:

et num. 3 (1849) էջ 179. աջակողմ, երիտասարդ թա-
գաւորին անտօրուս գլուխը հնգածայր թագով մը, թագին
կտի եզերքէն ծոծրակակալը դէպի ուտերը երկնցած.
իսկ ձախ, Βασιλέως βασιλέων Ἀρταύασ արքայիև ար-
քայից Արտաշատայ, մարդ մը եռաձի կառք մը կը բշէ
Յաղթութիւն ի ձեռին, ձիերէն վերև $Z = 7$, անոնց
առջև երեք հորիզոնական զծեր, զորս P մը կը կարէ
(նշանակ Միհր աստուծոյն). հմմտ. Gardthausen II
152. Երկրորդ դրամը առանձնականի մը քովն է և ունի
քառաձի կառք մը և թագաւորին անունը ամբողջ Ἀρ-
ταύασδου: Նաև Langlois էջ 33 կը յիշէ դրամ մը, որ
աջի վրայ Տիգրանայ և Արտաշատայ – սա առանց մօ-
րուքի – խոյրակիր գլուխները կը կրէ. ձախ Βασιλέως
Τιγράνου: Արտաշատայ միւս դրամներն տես անդ էջ
34, որոնք աջակողմ թագաւորին գլուխը, իսկ ձախ Βα-
σιλέως βασιλέων Ἀρταύασδου ունին: (Տես մեր թիւ
2):

1. Պլուտ Կրասոս 33:

2. Պլուտ. Լուկ. 29, Կրասոս 33: « Ընդհանուր կը
տեսնուի որ հայ ազնուականութիւնը նուազ ընդդիմու-
թիւն կ'ընէ քան պարթևականը, ընդունելու համար, բա-
րեացակամութեամբ և յաջողութեան յուսով, արեւմտեան
քաղաքակրթութիւնը. ասոր թող իբր ապացոյց ծառայեն
ոչ միայն Արտաշատայ դասական կրթութիւնը, այլ նաև
քրիստոնէութեան մուտքը, որ այնքան շուտ կատարուած
է ի Հայս», Abruzzese էջ 12:

Բայց դրացի երկու հզօր ժողովուրդներուն զինուց շոինդը ստիպեց Արտաւազդը գրական ասպարէզէն պատերազմի դաշտը մտնելու:

Քանի մը տարիէ ի վեր Հայաստանը, իր դրացի աշխարհներուն նոր կերպարանափոխութեամբը, բոլորովին նոր դիրք մ'առած էր, որ մինչև իր անկումը տեւեց կամ անոր պատճառն եղաւ: Այսինքն, քանի որ Պոնտոսի մէջ թագաւորութիւն մը կար, քանի որ Սելևկեանները Ասորւոց և մասամբ նաև Միջագետքի մէջ Պարթևաց երկրակալութեան արգելք մ'էին, և քանի որ յառաջակողմեան Ասիոյ զանազան կողմերը ինքնագլուխ փոքրիկ թագաւորներ կ'իշխէին, Հայաստան միշտ զօրաւոր էր և կրնար անկախ քաղաքականութեան մը հետևիլ: Բայց հիմայ, Արտաւազդայ զահ ելած ժամանակ, հանգամանքները հիմնապէս փոխուած էին, քաղաքական նոր աշխարհագրութիւն մը ձևացած էր: Հայաստան իր շուրջը կը տեսնէր միայն երկու մեծ պետութիւններ, Հռովմայեցիները և Պարթևները:

Առանց ներքին էական փոփոխութիւններ կրած ըլլալու, Հայաստանը կը տեսնէր որ գրեթէ յանկարծ տկար և փոքր է. միւս կողմանէ սակայն կրնանք ապա-

հով ըլլալ, որ Տիգրան զայն իր որդւոյն
 գէթ այնչափ զօրաւոր և բարեկազմ վի-
 ճակի մէջ յանձնեց, ինչպէս ինքն ընդու-
 նած էր իր նախորդներէն: Հիմայ Հայաս-
 տան երկու հսկաներու մէջ փոքր տղու
 մը կը նմանի: Իր քաղաքականութիւնը
 կամ Հռովմէն և կամ Տիգրոնէն կախուած
 է, և երբեմն երկուքէն միանգամայն: Հա-
 յաստան ստէպ կշիռքի լծակին դերը կը
 խաղայ երկու պետութեանց մէջ, և իր
 հակումն այս կամ այն կողմ՝ պատերազ-
 մներու մէջ յաճախ վճռական է: Հայոց
 իշխողը նոյն իսկ ամենէն հզօր թագաւորն
 է բոլոր յառաջակողմեան Ասիոյ թագա-
 ւորաց մէջ¹, բայց ան միայնակ չկրնար
 մրցիլ ո՛չ Պարթևաց և ոչ Հռովմայեցւոց
 հետ:

Ինչպէս դիտեցինք, Հայոց այս դիրքը
 աւելի իրենց դրացիներուն կերպարանա-
 փոխութենէն առաջ եկաւ քան ներքին
 պատճառներէ: Այնուհետև նա ստիպուած
 է կամ մէկուն կամ միւսին կողմը բռնել.
 այս բանն աւելի կը դժուարացնէր իր գործը
 և վտանգներ կը ստեղծէր: Տէրութիւնը եր-
 կու սուրի մէջ դրուած է, եթէ մէկուն կողմը
 բռնէ, միւսը իրեն թշնամի կ'ընէ, և յա-

1. Պլուտ. Անտ. 37:

ճախ իր բարեկամէն անպաշտպան կը մատնուի թշնամւոյն ձեռքը:

Չարագոյն բան մ'է նաև այն, որ Հայաստան օտարի շահերուն և օտարի տենչերուն համար երկար և դժուարին պատերազմներու մէջ մտնել ստիպուած է, և ստէպ նոյն իսկ անոնց մեծագոյն բեռը ինքը կրել. մէկ խօսքով, Հայաստան պէտք էր ինքզինքը զոհել օտարի համար և ձրի ծառայութիւն մատուցանել: Մինչեւ այս ժամանակ Հայաստան կրցած էր յաջողութեամբ պաշտպանել ինքզինքը Պարսթևաց դէմ¹ և անձնաս պահել աշխարհը և իր պատիւը: Իսկ հիմայ պէտք էր նա Հռովմայեցի իշխանակալաց փառասիրութեան գործիք ըլլալ, մինչ իր անձկութեան վայրկեաններուն մէջ ընդհանրապէս անոնցմէ կը լքուի: Ասոնց վրայ կ'աւելնայ նաև այն ողբալի դրութիւնը, որով Հռովմայեցի զօրավարները իրենց վատութիւնը կամ անկարողութիւնը ծածկելու համար, ամէն յանցանք Հայոց թագաւորին գլուխը կը բեռցնեն, և երբեմն նաև բարեկամական գրկախառնութեան ձեւին տակ անոր կեանքին կը դաւաճանեն: Արտաւազդ թագաւորը կրնայ իբրև փայլուն օրինակ մը ծառայել:

1. Ստրաբոն 16, 1, 19:

Նա սկզբան բարեկամ էր Հոովմայեցւոց և նաև ընտանեկան կապեր հաստատած էր Գաղատիոյ Գիողարոս թագաւորին արքունեաց հետ, որ շատ հոովմէասէր արքունիք մ'էր, տալով իր դուստրը անոր որդւոյն¹: Արտաւազդ պատճառներ ալ ունէր Հոովմայեցւոց կողմը բռնելու. վասն զի իր հօր և Պոմպէոսի մէջ կնքուած դաշինքը զինքը կը ստիպէին ատոր: Բայց անկից աւելի կը մղէր զինքը Հոովմայեցւոց բազկին մէջ՝ իր Պարթևաց դէմ ունեցած ատելութիւնը, որովհետև ասոնք տակաւին գոհ չէին Հայաստանէն: Յիրաւի Հայաստան խոնարհած էր Հոովմայեցւոց ձեռքով, բայց դեռ բոլորովին տեղի տուած չէր Պարթևաց պահանջներուն առջեւ: Անոր համար Արտաւազդ հեշտ աչքով միայն տեսաւ կրասոսի արշաւանքը, որ յետ հոովմէական պետութեան Պոմպէոսի, կեսարու և իր մէջ բաժանուելուն, ՏՃին Ասորիք եկաւ: Կրասոս կ'ուզէր զինուորական համբաւ ունենալ, ինչպէս որ զայն ունէին իր երկու իշխանակիցները, նշանաւոր հանդիսանալով իբր առաջին անգամ կոռուդ Պարթևաց դէմ:

1. Կիկերոն առ Ատտ. 5, 21, 2:

Արտաւազդ իբրև դաշնակից անոր քով եկաւ Ասորիք, 6000 հեծեալներէ կազմուած անձնապահ գունդով մը, և անոր լաւ խորհուրդներ տուաւ առաջիկայ արշաւանքին համար: Այսինքն ան առաջարկեց Կրասոսի, հոովմէական բանակը Հայաստանէն անցընել, ուր ինքը, բաց ի խոստացած 10,000 հեծեալ և 30,000 հետևակ օգնական գունդերէն, անձամբ պիտի առաջնորդէր անոնց իր անձնապահ գնդովն: Հոն ի Հայս կարելի էր բանակը դիւրաւ պարենաւորել ուտելեաց առատութեան պատճառաւ, և լեզէոնները լեռնային երկրին մէջ անվտանգ պահել պարթևական հեծելագնդի կատաղի յարձակումէն, որ իրենց գլխաւոր ոյժը կը կազմէր: Կրասոս շնորհակալութեամբ ընդունեցաւ թագաւորին պատրաստականութիւնը և օգնական գունդերու համար ըրած խոստումը, բայց իր յատուկ ծրագիրը շարունակել լաւագոյն համարեց. վասն զի ինքն արդէն Միջագետքի մէջ քանի մը աննշան յաջողութիւններ ունեցած էր և հոս հոն գունդեր թողած էր: Ասոր վրայ Արտաւազդ մեկնեցաւ իր աշխարհը¹, խոստացած գունդերը պատրաստելու համար:

1. ՊԼուտ. Կրասոս 19:

Կրասոս անցաւ (53) Եփրատը և մտաւ
 Միջագետքի անապատներուն մէջ: Պար-
 թէները, որ սաստիկ բարկացած էին ա-
 նիրաւ արշաւանքին վրայ, բովանդակ ձը-
 մեռը մեծ պատրաստութեամբ անցուցած
 էին, իսկ գարնան երկուքի բաժնելով ի-
 րենց ուժերը սկսան առաջ քալել: Մէկ
 բանակը, որուն Որոտ (57-37 ն. Ք.)
 թագաւորը անձամբ կ'առաջնորդէր, յար-
 ձակեցաւ Հայաստան, զոր կամ անպաշտ-
 պան կը կարծէին և կամ կ'ուզէին անոր
 հեծելագունդերը արգիլել որ Հռովմայեցի-
 ներուն հետ չմիանան: Երկրորդ բանակը
 Սուրենայի առաջնորդութեամբ, որ Պար-
 թեաց տէրութեան մէջ թագաւորէն վերջը
 երկրորդ պատիւն ունէր, քալեց Հռովմա-
 յեցւոց դէմ: Սուրենա զասոնք արաբ իշ-
 խաններու ձեռքով խաբելով հրապուրանօք
 անապատի միայնութեան մէջ ձգեց: Կրա-
 սոս շատ ուշ անդրադարձաւ որ խաբուած
 էր: Այս պահուս իրեն քով հասան Ար-
 տաւազդի պատգամաւորներ և ըսին թէ,
 իրենց թագաւորը Որոտէն յարձակում
 կրելով դժուարին պատերազմի բռնուած է
 իր երկիրը պաշտպանելու համար, հետե-
 ւաբար չի կրնար խոստացած օգնական գրն-
 դերը դրկել: Պատգամաւորները կրկնեցին
 մէկ անգամ ևս թագաւորին առաջարկը,

Թէ կրասոս թող ջանար կարելի եղածին չափ Հայաստանի մօտենալ և հոն միացած ուժերով Որոտի յաղթէին. եթէ այս կարելի չըլլար, այն ատեն փորձէր լեռնային կողմերու մէջ կենալ և զգուշանալ այնպիսի չուէ և բանակետողներէ, ուր այրուծիու յարձակման կրնար ենթարկուիլ: Բայց այս խօսքերուս վրայ կրասոս սաստիկ բարկանալով և ոչ իսկ արժանի համարեց թագաւորին գրաւոր պատասխան մը տալ, այլ ըսաւ միայն, թէ հիմայ ինքը Հայոցմով զբաղելու ժամանակ չունի, վերջը պիտի գայ Արտաւազդը դատելու իր մատնութեան համար¹:

Եռապետին այս ձախ վարումը ուրիշ բան չէր նշանակեր, եթէ ոչ կարևոր դաշնակից մը իրմէ ուժացնել և թշնամեաց հետ միացնել: Անոր համար անհիմաստ գործ մ'էր, երբ վերջը Հոովմայեցիք դեռ հայկական օգնութեան կը սպասէին իրենց ճգնաժամին մէջ²: Անմիջապէս այս դէպքերէս վերջ Արտաւազդ հաշտութիւն ըրաւ Պարթևաց թագաւորին հետ, և դաշինքը կնքուեցաւ հարսանիքով մը, յորում Արտաւազդայ քոյր մը ամուսնացաւ Որոտի

1. ՊԼՈՒՄ. կրասոս 22. Դիոն 40, 16. հմմտ. Ferrero II 133-4:

2. ՊԼՈՒՄ. կրասոս 29:

Թագաժառանգ որդւոյն Բակուրի հետ: Այս առթիւ մեծ հանդէսներ և խնջոյքներ կատարուեցան և ոչ սակաւ յունական թատրերգութիւններ ներկայացուեցան:

Այս միջոցին Սուրենա Հոովմայեցիները պարտած էր թառանու մօտ և անոնցմէ իբր 30,000 հոգի մահով և գերութեամբ փճացուցած էր: Ան կրասոսի որդւոյն գլուխը հօրը առջեւ նետած էր, իսկ բուն կրասոսի գլուխն ալ իր թագաւորին դրկեց ի Հայս, որ ճիշդ այն ժամանակ հասաւ, երբ թատրոնին մէջ թագաւորաց առջև Եւրիպիդէսի Գիոնիսեանները կը ներկայացուէր: Գլուխը ցնծութեան ահագին աղաղակներով ընդունուեցաւ: կրասոսը համարեցան իբրեւ որսի մէջ ինկած կենդանի մը և դասական ողբերգութիւնը վերջացաւ իրականով մը¹:

Հոովմայեցիք այս մէկ անյաջող արշաւանքով, որուն շարժառիթն եղած էր փառասիրութիւն և ընչաքաղցութիւն, կորսընցուցին իրենց պատերազմական ուժէն մեծ մաս մը, և կարևոր դաշնակից մը. ընդհակառակն Պարթևաց անունը թէ արևելեան ժողովուրդներուն և թէ՛ իրենց լեգէոններուն առջև բարձրացաւ: Մենք

1. Կիկերոն առ ընտանիս 15, 3. Պլուտ. կրասոս 33:

չենք կրնար սակայն հաստատել թէ, Արտաւազդ Հոովմայեցւոց հանդէպ թշնամական դիրք մը բռնած ըլլայ. ան իբրև անկախ թագաւոր մը Պարթևաց հետ մասնական դաշնադրութիւն մ'ըրաւ, և մենք իր ապագայ ընթացքէն յայտնի կը տեսնենք ջանք մը չէզոք մնալու:

Կրասոսի պարտութենէն վերջ Պարթևները փորձեցին իրենց արևմտեան սահմանը Ասորւոց վրայ ընդարձակել: Թագաժառանգ իշխան Բակուրի անուանական առաջնորդութեամբ, պարթևական բանակներ ողողեցին և աւարի առին Ասորիքը: Յամին 51 լուր մը տարածուեցաւ հոովմէական երկիրներուն մէջ, թէ մինչ Բակուր Ասորիք և Պաղեստին կը յարձկէր, իր աներն Արտաւազդ ալ Կապադովկիա պիտի յարձկէր¹: Կիկերոն, որ այն ժամանակ իբրև փոխպրետոր Կիլիկիոյ՝ պէտք էր իր գաւառը և Կապադովկիոյ Արիոբարզան թագաւորը պաշտպանել, հոովմէական զինուորաց զլուխ անցած տեսնուեցաւ (Կապադովկիոյ) սահմանին վրայ, որպէս զի եթէ յանկարծ Հայոց կողմէ յարձակում մ'ըլլայ, զայն ետ մղէ: Բայց Կիկերոնի այս ձեռնարկը սոսկ կանխահոգութիւն

1. Կիկերոն առ ընտ. 15, 3:

մ'էր, դիպուածական յարձակումի մը առջեւ անպատրաստ չգտնուելու համար : Վասն զի ինքն իսկ կիկերոն չէր գիտեր թէ Արտաւազդ արդեօք Հռովմայեցւոց հանդէպ թշնամոյ դիտաւորութիւններ ունէր թէ բարեկամի¹ : Թագաւորին բռնած ճիշդ այս դիրքը մենք չէզոք կը կոչենք, վասն զի չենք տեսներ որ ան մէկուն դէմ պատերազմ մղած կամ մէկ պետութեան կողմը բռնած ըլլայ :

Նոյն իսկ Անտոնիոս չհամարձակեցաւ սկզբան թագաւորին այս չէզոքութիւնը վրդովել : Վասն զի Արևելքի եռապետը Յ7ին Ն. Ք. իր ճարտար տեղակալը Պ. կանիդիոս կրասոսը կաւկասի կողմերը զրկած էր. սա նուաճեց Հայոց շրջակայ ժողովուրդները, իսկ Աղուաններն ու Վրացիները զէնքով ստիպեց եռապետին իշխանութիւնը ճանչնալու² : Այս եղանակով կանիդիոս հաստատուն հիմեր պատրաստեց եռապետին յետագայ պատերազմին, որ կը մտածէր հիւսիսէն արշաւել Պարթևաց պետութեան վրայ :

Հակառակ Հայոց այս խնայուելուն, Ար-

1. կիկերոն առ ընտ. 15, 2, 2:

2. Ստրաբոն 11, 3, 5. Դիոն 49, 24. Պլուտ. Անտ. 34, զուգակշիռ Դեմետրի և Անտ. 1. հմմտ. Gardthausen I 244:

տաւազդայ վիճակը շատ վատթարացաւ. վասն զի ասով ան կորսնցուց իր հիւսիսային և բնական դաշնակիցները և հոովմէական երկիրներէ ձեացած ցանցի մը մէջ առնուեցաւ. ան հիմայ կղզիացած էր, բաց ի Պարթևաց կողմէն : Կանիդիոսի կաւկասեան ժողովուրդներուն դէմ ըրած արշաւանքը «մի միակ Հայաստանի մէջ ազատ գործել կարենալու, և եթէ կարելի է, նոյն իսկ անոր ձեռնտուութիւնը ստանալու համար էր»¹ :

Բայց Արտաւազդ երբեք չթողուց այն գաղափարը, թէ ինքն անկախ թագաւոր մ'է և կրնայ չէզոք մնալ : Երբ յաջորդ տարին 36ին Անտոնիոս գրեթէ 100,000 հոգիէ կազմուած² բանակով մը Պարթևաց և Մարաց դէմ կը քալէր³, անոր բոլոր դաշնակիցներուն մէջ Արտաւազդ ամենէն զօրաւորը կը համարուէր : Ան Անտոնիոսը իր պատերազմի ծրագրին մէջ հաստատած էր, — վասն զի Հայը թըշ-

1. Schiller I 115.

2. Gardthausen I 292. II 150.

3. Անտոնիոս դեռ այս արշաւանքէն առաջ Հայաստանը, Մարաստանը և Պարթևաստանը իբր պատերազմի աւար բաժանած էր իր Կղէոպատրայէն ունեցած որդւոց մէջ, և այս պաճուճապատանքները կը կրէին յիշեալ երկիրներու տիտղոսը և տարազը, Պլուտ. Անտ. 54. Դիոն 49, 41 հմմտ. Mommsen, Res gestae d. Aug. էջ 118.

նամական վերաբերութեանց մէջ էր իր անուանակից Մարաց Արտաւազդ թագաւորին հետ, — և անոր խոստացած էր 6000 հեծեալ և 7000 հետեւակ իբր օգնական: Բայց այն վայրկենին, յորում թագաւորը ճամբայ ինկած էր որպէս զի իրեն գունդերով Հոովմայեցւոց հետ միանայ, Անտոնիոս աններելի սխալ մը գործեց:

Այսինքն՝ երբ իր բանակով արդէն եղեսական և հայկական հողը անցած էր, լսեց որ՝ կ'ըսուէր թէ Մարաց թագաւորը բացակայ է և գացած է ի Պարթևս անոնց հետ դաշինք մը կնքելու համար: Ասոր վրայ ձախորդ որոշողութիւն մ'ըրաւ Անտոնիոս. Ոպպիոս Ստատիանոս զօրավարին քով թողուց իր պատերազմի մեքենաներուն և ուրիշ պաշարներուն մեծ մասը և անոր հրաման տուաւ որ իր ետեւէն կամաց կամաց գայ: Իսկ ինքն արշաւասոյր ընթացքով և քիչ օթևաններով դիմեց դէպի Փրատա կամ Գազակա¹ (հայ. Գանձակ?), որ Մարաց մայրաքաղաքն էր Ատրպատականի մէջ կանգնուած, որպէս զի զայն յանկարծակիի բերէ: Բայց բոլորովին հակառակը պատահեցաւ: Հրա-

1. Arrian Ի FHG III 587.

հատ Դ (37-12) և Մարաց Արտաւազդը յանկարծ աղիւր տանող լեզէոններուն վրայ յարձակեցան իրենց այրուծիով, գրեթէ 10,000 զինուոր սպաննեցին, Ստատիանոս ինկաւ և շատեր գերի բռնուեցան, մեքենաները այրուեցան: Աւարը հարուստ էր:

Այս դժբաղդուլեան լուրը կայծակի երազուլեամբ տարածուեցաւ: Հոովմայեցիները, որոնց աչքին առջև կրասոսի աղէտը տակաւին կենդանի կը ցոլար, զարհուրեցան. Արտաւազդ ետ դարձաւ ի Հայս և պատերազմէն հեռի կեցաւ. «անիկայ կրնար, ինչպէս ոմանք կ'ըսեն, Հոովմայեցւոց օգնուլեան հասնիլ, բայց ոչ հասաւ և ոչ ալ Անտոնիոսին քով եկաւ, այլ իր աշխարհը քաշուեցաւ»¹: Պլուտարք այս դէպքիս մէջ Արտաւազդայ կողմանէ դանդաղիլ մը չգիտեր, հետեւաբար զայն հոս չի պախարակեր. անիկայ թագաւորը կը դնէ այս ժամանակ Մարաց մէջ, աւելի Անտոնիոսի մօտ քան Ստատիանոսի, և պարզապէս կ'ըսէ թէ ան իր երկիրը դարձաւ²:

Անտոնիոսի արշաւանքին մնացած մա-

1. Դիոն 49, 25:

2. Պլուտ Անտ. 50:

սը, Փրաատայի պաշարումը, լաւագոյն
 ելք մը չունեցան: Ան բռնադատուեցաւ
 ամօթալի նահանջ մը սկսիլ, յարատեւ
 պարթեական նետերու կարկտի մը տակ:
 Թէև իր զինուորական տաղանդը ցոյց
 տուաւ հոս, բայց ստիպուեցաւ իր զօ-
 րաց մէկ երրորդ մասը դաշտին վրայ ձգել:
 Մնացածովը, որ ոչ նուազ վնասուած էր,
 հասաւ ի Հայս: Անտոնիոս շողոքորթեց
 Արտաւազը և անոր օգնութիւնը խնդրեց
 իր զօրաց համար: Եթէ Արտաւազը Հոով-
 մայեցւոց թշնամի եղած ըլլար և կամ
 Պարթեաց բարեկամ, նա կարող էր իր
 սահմանները պաշտպանել ջախջախուած
 բանակի մը դէմ և կամ նոյն իսկ Հոով-
 մայեցւոց վրայ յարձկիլ¹: Փոխանակ ասոր
 Արտաւազը ընդունեցաւ կորստեան մօտ
 բանակը և չխնայեց ոչ դրամ և ոչ ու-
 տեստ զայն խնամելու համար: Անտոնիոս
 յետ իր բանակին ամենէն անհրաժեշտ հան-
 զիստը տալու և խնամքը տանելու, ձմե-
 ռուան կիսուն փութաց իր բանակով Հայոց
 ճիւղապատ լեռներէն Ասորիք անցնիլ, ուր
 Սիդոնի մէջ գտաւ իր Եգիպտացի սիրու-
 հին: Ամկից յաղթութեան աւետիք տանող

1. Այս տատանումը և ջանք մը երկու կողմերու ևս
 հաճոյ ըլլալու, յատուկ է Արտաւազդայ և յետագայ
 հայ թագաւորաց, ինչպէս նաև ամէն փոքր տէրութեանց:

հրեշտակներ Հոովմ դրկելէն վերջ, ինքն
գնաց Աղեքսանդրիա, իր դատարկապորտ
և մեղկ կեանքը վերստին սկսելու համար¹ :

Այսպէս Հոովմայեցիները չարաչար յաղ-
թուած էին. որոնք էր յանցանքը: Անշուշտ
սպարապետին. « Բայց Հոովմայեցիները
փնտռեցին մատնիչ մը ինչպէս միշտ, և
դուրս հանեցին թէ Հայոց Արտաւազդը,
զոր առ առաւելն կրնային մեղադրել թէ
իրենց համար զոհողութիւն ընելու քիչ
փափագ ցոյց տուաւ, Անտոնիոսը նախ
բովանդակ ձեռնարկին հրապուրած ըլլայ²,
յետոյ դիտմամբ Ստատիանոսի օգնութեան
եկած չըլլայ. ամբաստանութիւն մը ոչ
այնքան անմիտ՝ ինչպէս առաջինը (որ է
կրասոսինը), բայց նոյնքան քիչ ապա-
ցուցանելի»³ :

Արդեօք Արտաւազդ այս ձեռնթափու-
թեան համար Պարթևաց հետ գաղտնի բա-

1. Պլուտ. Աևտ. 49, 50. Փլորոս 4, 10: Դիոն 49, 31
կ'աւանդէ թէ բանակը ի Հայս ձմեռած ըլլայ, որ աղ-
բիւրներու մեծամասնութեան համաձայն չէ: Հաւանա-
կանաբար Անտոնիոս միայն ծանր վիրաւորեալները հոն
թողուց, հմմտ. Schiller I 117. Gardthausen I 303:

2. «Հայուն կողմանէ մատնութեան մը և ոչ իսկ հետ-
քը կայ», Gardthausen I 294: Այս կարծիքէն է նաև
Mommsen, Röm. Gesch. V 364: «Պատերազմի ծրա-
զրին պատասխանատուն ոչ թէ Արտաւազդն, այլ Ան-
տոնիոս է», անդ էջ 367. հմմտ. նաև ծանօթութիւնը:

3. Gutschmid, Gesch. Jrans 101.

նակցած էր: Այդ շատ քիչ հաւանական է. բայց ամէն պարագայի մէջ ան չէր ուզեր իր փնասովը Հոովմայեցւոց հաճոյքին համար Պարթեաց հետ թշնամանալ, որոնց հետ դեռ քիչ առաջ խաղաղութիւն կնքած և խնամութիւններ հաստատած էր: Հոովմայեցւոց առաջին ձախողութիւնը անիթ մը եղաւ իրեն ետ քաշուելու և չէզոք դիրք մը բռնելու: Որովհետև այդ մէկ դէպքէն գուշակեց Արտաւազդ բովանդակ պատերազմին ելքը, և այդ իրաւամբ: Անիկայ կը մտածէր նաև որ, հոովմէական լեզէոններու ջնջումէն վերջ ամենէն աւելի իր երկիրն ենթակայ պիտի ըլլար Պարթեաց յարձակումներուն, և Հոովմայեցիներուն շատ հոգը պիտի չըլլար զայն պաշտպանելու, — ինչպէս որ քիչ ժամանակ վերջ ճիշդ այդ բանը պատահեցաւ: Նաեւ Հոկտաւիան Արտաւազդը գաղտնի կը գրգռէր Անտոնիոսի դէմ¹:

Եթէ մենք չենք կրնար Արտաւազդայ վարումը բոլորովին արդարացնել, ենթադրելով զայն միշտ իբրև դաշնակից թագաւոր մը, սակայն միւս կողմանէ պէտք

1. Դիոն 49, 41:

չէ Պլուտարքոսի ամբաստանութիւնները¹
 շատ լրջօրէն առնուլ. վասն զի ան հոս²
 Հայոց այրուծին չափազանց վեր կը բար-
 ձրացնէ, այնչափ որ արշաւանքին յաջո-
 դութիւնը անոր գործակցութենէն կախում
 ունէր՝ կ'ըսէ. մինչ ուրիշ տեղ³, երբ պա-
 րագաները ուրիշ կերպ կը պահանջեն,
 կը նախատէ զանոնք չարաչար: Այսպիսի
 ծայրայեղ վկայութեանց հանդէպ պատմի-
 չը շփոթած կը վարանի⁴: Անտարակոյս

1. Անտոնիոսի արշաւանքին և Հայաստանի հետ վե-
 րաբերութեանց զլխաւոր և սկզբնական աղբիւրն եղած
 է Կ. Գեւորտի պատմութիւն մը, որ դժբաղդարար կոր-
 սուած է հիմայ: Ստրաբոն 11, 13, 3 և Պլուտարքոս
 Անտ. 59, որոնք իբր զլխաւոր աղբիւր կը ծառայեն
 այժմ, Գեւորտէն քաղած են, (տես Wissowa առ PW
 Dellius; Gardthausen II 151, 156): Ուրեմն ամէն
 պատասխանատուութիւն կ'իյնայ Գեւորտի վրայ, որ
 պատանեկութեան միջոց Անտոնիոսի սիրական մ'եղած
 էր, յետոյ անոր զէնքի ընկեր եղաւ և անոր քով բարձր
 դիրքեր զբաւեց: Արդեօք նա աւելի պատուաւոր կերպով
 գրած է քան ապրած: Ինչ որ Գեւորտս «կ'աւանդէ,
 խիստ ողորմելի փորձ մ'է յաղթուած զօրավարը արդա-
 րացնելու», Mommsen Röm. Gesch. V 367:

2. Պլուտ. Անտ. 50:

3. Պլուտ. Կրասոս 18, Լոշկ. 28 և այլն:

4. Գլուխ 37ի մէջ Պլուտարք Արտաւազդայ միայն
 7000 հետևակ և 6000 հեծեալ տուաւ, իսկ հոս զլուխ
 50ին մէջ անոր կու տայ 16,000 հեծեալ: Հակասութիւն-
 ներ կը վիտան Պլուտարքոսի քով:

պատերազմին անյաջողութեան գլխաւոր պատճառներն էին թերի պատրաստութիւն մը, ուշ սկսիլը, Ստատիանոսի բաժանում մը, պարենի և ըմպելիքի պակասութիւն, որ արդէն Փրատայի առջև սկսաւ, բայց ամէն բանէ աւելի թշնամեաց նետերը: Արտաւազդայ քաշուելովն Հռովմայեցւոց վտանգը և կորուստները զգալի կերպով բազմացան իրենց նահանջին ժամանակ, «բայց Ստատիանոսի արկածին և Փրատայի պաշարման ճախողելուն պատճառ Հայը չէ»¹:

Աղեքսանդրիոյ մէջ պալատական շողոքորթները Անտոնիոսի շուրջը առած էին և, ինչպէս որ շատ հասկանալի է, ամէնքը «մատնիչը» կը դատապարտէին: Անտոնիոս յետ նոյն տարին (35 Ն. Ք.) կղէոպատրայի քով անցնելու և պարթևական երկրորդ պատերազմի մը համար պատրաստութիւններ տեսնելու, որոշեց նաև Հայոց թագաւորը պատժել²: Նախ նենգութիւն բանեցուց: Չայն իբրեւ բարեկամ

1. Mommsen, Röm. Gesch. V 367-8.

2. Անտոնիոս նաև կապագովկիոյ Արիարաթ թագաւորը մատնիչ համարեց և գլխատել տուաւ, Mommsen Röm. Gesch. V 368: Նմանապէս Եմեսիոյ թագաւորը Յամբլիքոս Անտոնիոսի արեան ծարաւին զոհ եղաւ. Դիոն 50, 13:

Աղեքսանդրիա հրաւիրեց, որպէս զի առանց նեղութեան ձերբակալէ: Բայց Արտաւազդը, որ չէր վատահեր Անտոնիոսին վրայ, յանձն չառաւ առաջարկը¹: Նմանապէս այն բարուրանքը, թէ կը փափագէր իր Աղեքսանդր որդին անոր դստեր հետ ամուսնացնել, բաւական չեղաւ Արտաւազդը համոզելու անձնական տեսակցութեան մը:

Ասոր վրայ Անտոնիոս 34ի գարնան յանկարծ մեծ բանակով մը տեսնուեցաւ Փոքր Հայոց Նիկոպոլիս քաղաքին մէջ, իբր թէ Պարթևաց դէմ կ'ուզէր երթալ և Արտաւազդը հրաւիրեց կ. Դելլիոսի ձեռքով, որ իր սիրելին և պատմիչն էր, որպէսզի խորհրդակցին պատերազմին վերայ²: Երբ այս առաջարկն ալ ընդունելի չեղաւ, Անտոնիոս Արտաշատի վրայ սկսաւ քալել և Արտաւազդը ստիպեց իր ճամբարը գալու, — մաս մը ճարտար միջնորդներու ձեռքով, մաս մը իր բոլորովին բարեկամական նամակներով, բայց

1. Դիոն 49, 33:

2. Ապպիան, պտրզմ. քաղաքական 5, 145. Դիոն 49, 39. Վելլէիոս 2, 82. հմմտ. Gardthausen I 334. II 165: Այս արշաւանքի մէջ էր բանակով մը Լ. Մունատիոս, որ այս առթիւ imperator iterum անուանուեցաւ (ըստ Borghesi, Գործք II 85, առ Dessau, Prosopogr. II N. 534), CIL X 6087. հմմտ. Dessau անդ:

զլխաւորապէս իր բանակին մօտակայու
թեամբ և Մարաց Արտաւազդ թագաւորին
զէնքի սպանալիքներով, որ Պարթևները
թողած Անտոնիոսի կողմն անցած էր:

Այսպէս զօրավարը ձերբակալեց, բա-
րեկամոտքեան երևոյրով խաբերով, ինչպէս
կ'ըսէ Տակիտոս, նախ Արտաւազդայ ան-
ձը, յետոյ աւազակաբար անոր երկիրը
աւարի առաւ: Արտաշէս, որ թագաւորին
անդրանիկն էր և ինքը միայն կրցեր էր
թշնամւոյն ճիրաններուն մէջ չինկնալ, իս-
կոյն թագաւոր հռչակուեցաւ Հայերէն¹:
Ան իբր թագաւոր փորձ մ'ըրաւ իր զի-
նուորներով յարձակիլ այդ գայլին վրայ,
որ բարեկամի կերպարանքին տակ իր
տունը կ'աւերէր: Բայց թշնամւոյն ուժի
առաւելութենէն յաղթուելով փախաւ Պար-
թևաց թագաւորին քով, և ստիպեց զայն
որ իր հօրը վրէժը հանեն միասին: Հրա-
հատ Դ չմերժեց երիտասարդ արքային
առաջարկը:

Անտոնիոս, յետ բանակ մը թողլու ի
Հայս, ոսկի շղթաներով կապած Աղեք-
սանդրիա տարաւ Արտաւազդը, անոր կինը

1. Յովսէպոս Հնախ. 15, 4, 3 նաև Արտաշէսի համար
զերի բռնուեցաւ կ'ըսէ, բայց Աղեքսանդրիայէն փախած
ըլլայ: Սակայն Դիոնի աւանդութիւնը աւելի ճիշդ կը
թուի, հմմտ. Klebs, Prosopogr. I N. 961:

և որդիները և մեծ հարստութիւններ: Յամին 33 ան կրկին անգամ Երասխի ամփանց վրայ տեսնուեցաւ և կը մտածէր Մարաց թագաւորին հետ միասին յարձակում մը գործել Պարթևաց վրայ: Բայց ոչ ինչ կատարեցին՝ բաց ի թագաւորին աղջկան Յոտապէի և Անտոնիոսի որդւոյն Աղեքսանդրի հարսանեաց հանդիսէն: Հոովմայեցին Մարին նուէր ըրաւ, իբրև ցոյց մը իրենց բարեկամութեան, հայկական գաւառ¹ մը և յետոյ աննշան կերպով ետ դարձաւ իր Եգիպտացի սիրուհւոյն քով, որուն ընծայած էր այսպիսի քաջութեամբ բռնած գերիները²:

Աննման զոյգը հոն շատ չարչարեց արքայական գերիները, և Անտոնիոս անգամ մը զանոնք բերել տուաւ Կիմնազիոն կոչուած հասարակաց հանդիսավայրի մը մէջ, ուր ինքն և կղէոպատրա ոսկեղէն ակթոռներու վրայ նստած էին, թերեւս յաղթանակէն վերջ, որպէս զի անոնք հպատակութեան յարգանքներ մատուցանեն, և կղէոպատրան քագոռհեաց քագոռհի անուանեն³: Բայց «բարբարոս»ներէն ո՛չ

1. Հաւանականաբար Ստրաբոն 11, 13, 3ի մէջ յիշուած Սիմրակ գաւառն է:

2. Դիոն 49, 44:

3. Գործերը դրամներու վրայ ասպագայից պատմուե-


Արտաւազդ, ոչ իր կիներ և ոչ իր որդիքը
աղաչանքի բնաւ ձայն մ'անգամ չհանե-
ցին և ոչ իսկ ծնրադրութեամբ զանոնք
պատուեցին, թէև սպառնալիքով և ազա-

յան. *Cleopatrae reginae regum filiorum regum*,
Կղեոպատրայի քագոռհռոյ քագառոքաց, որդոց քագառո-
քաց. ձախ, *Antoni Armenia devicta*, Անտոնիոսի
Հայաստան նոռաճեալ, արծաթէ դրամ մը յամէն 35
կամ 34, Cohen I էջ 37, թիւ 1: *Antonius augur*
cos. des. iter. et tert. ձախ *IIIvir R. P. C. imp.*
tertium, հայկական արքունի թագ մը, նետ և աղեղ
խոնարհեալ, արծաթդրամ յամէն 36, Cohen I էջ 28,
թիւ 58. Eckhel VI 45 այս դրամը 35ին կամ 34ին
կը դնէ: Աղեքսանդրիական դրամ մը յաղթանակը կը
հոչակէ. Ἀρμενία, յաղթանակ և գերիներ. ձախակողմ,
գայլ և երկուորեակ, Head, *Historia num.* p. 720,
առ Gardthausen II 168:

Կը տեսնուի որ Անտոնիոսի զինուորները Հայոց եր-
կիրը, որուն հողը երկու տարի առաջ արտասուքով և
համբոյրներով կը թանային (ՊԼուտ. Անտ. 49), ան-
խնայ կերպով թալանած են: Անոնք չեն պատկառած նոյն
իսկ Անահտայ երևելի տաճարէն, Եկեղեաց մէջ, որուն
ոսկեղէն արձանը փշրած և մետաղը մէջերնին բաժնած
են, Պլինիոս 33, 82-83. հմմտ. Gardthausen I 355,
II 167: Մոմսըն ի *Hermes* հար. 18, էջ 173 և Schil-
ler I 116 տաճարին կողոպտումը 36ին կը դնեն. բայց
զժուար է որ Անտոնիոս այն ժամանակ այսպիսի ոճի-
րով մը ինքզինքը ատելի ըրած՝ ըլլայ Հայոց, որոց բա-
րեկամութեան պէտք ունէր. միանգամայն զինուորները
զժուարաւ այդ ժամանակ մինչև Եկեղեաց գաւառը գա-
ցած կրնան ըլլալ, վասն՝ զի այս գաւառը հիւսիս-ա-
րևմտեան կողմ գտնուելով իրենց ճամբուն վրայ չէր:

տուժեան խոստումներով սաստիկ բռնադատութիւն կը կրէին. անոնք Եգիպտոսէին իրեն սովորական անուամբը միայն կոչեցին:

Այս վսեմութիւնը պատճառ եղաւ աւելի դառն նեղութիւններու, որոնք տեւեցին մինչև Ակտիոնի պատերազմը¹: Երբ սիրոյ այս զոյգը հոն բոլորովին յաղթուելով Աղեքսանդրիա փախան, անոնք վրէժնին



Արտաւազդ Բ (թիւ 2)

անին Հայոց թագաւորէն. վասն զի Հռովմայ ժողովուրդը իրեն մեծ նախատինք համարած էր Արտաւազդայ խաբէութեամբ կատարուած ձերբակալութիւնը և Հոկտաւիան այդ գործը իբրև չորրորդ պատճառ դրած էր Կղէոպատրայի (Անտոնիոսի) դէմ հրատարակած պատերազմին²:

Արտաւազդայ գլուխը կտրուեցաւ (30

1. Դիոն 49, 39-40. հմմտ. Gardthausen I 336.

2. Դիոն 50, 1.

ն. Ք.) և զըրկուեցաւ անոր թշնամի Մաւրաց թագաւորին, որպէս զի նոր գունդեր զրկէ իրենց¹:

Այս կերպով անհետացաւ Հայոց պատմութեան ամենէն համակրելի անձնաւորութիւններէն մէկը, որ դժբաղդութիւնն ունեցաւ ամէնէն աւելի այլասերեալ Հռովմայեցւոյն հանդիպելու: Բաւական հատուցում մ'է արդեօք, երբ Հռովմայ մեծագոյն պատմիչը Տակիտոս Անտոնիոսի գործը ոճիր մը կը կոչէ:

Արտաւազդայ քաղաքական ղիտումները մասամբ դեռ միշտ մուծ կը մնան:

Այդ միջոցին ԱՐՏԱՇԷՍ Բ. (34-20 ն. Ք.)² պարթևական արքունեաց մէջ

1. Դիոն 51, 5. Սարաբոն 11, 14, 15. Վելլէիոս Պատերգուլոս 2, 82. Յովսէպոս Հնախ. 15, 5, 2-3. Տակիտոս Տար. 2, 3. Պլուտ. Անտ. 5. Որոզիոս 6, 19, 3-4. հմմտ. Gardthausen I 407.

2. Այս անուան ձևը Mon. Anc. Vի վրայ և Դիոն 49, 39. 40. 44; 51, 16ի մէջ է Artaxes, Ἄρταξης, որ ճիշդ մեր Արտաշէս ձևին կը համապատասխանէ: Ուրիշ հեղինակներ տարբեր ձև մը կը գործածեն, Artaxias, Ἄρταξίας. այսպէս Տակիտոս տար. 2, 3 և Յովսէպոս Հնախ. 15, 4, 3. (Վելլէիոս Պատերկուլոս 2, 94 պէտք է հոս նկատի առնուիլ, զի պարբերութիւնը անճիշդ է. իսկ Դիոն 54, 9 սոսկ սխալմամբ միայն Ἄρταβᾶξης գրուած է): Սկզբնական ձևը այս հին իրանեան թագաւորական անուան է Արտաշշաթրա, որ է «գերագոյն իշխանութիւն ստացող», հմմտ. Judeich առ

կրցեր էր ազդեցութիւն գործել թագաւորին վրայ և Հրահատ Դ վճռեց անմիջապէս գործի սկսիլ: Վասնզի Տիգրանի արքունիքը Արտաւազդը կրնար նկատել իբրև զոհ մը Պարթևաց դատին, և կը համարէր այլևս ժամանակը հասած ըլլալ, որ փոխանակ Հռովմայեցոց՝ Պարթեւները կարգադրէին Հայոց գործերը: Միև կողմանէ Մարաց թագաւորը թողլով Պարթևաց դաշնակցութիւնը Հռովմայեցոց կողմն անցած էր և Անտոնիոսը անոնց դէմ կը գրգռէր. նմանապէս անիկայ գործակցած էր Արտաւազդի գերի բռնուելուն և բարեկամական դիտաւորութիւն ունենալ չէր թուեր՝ Հռովմայեցի զօրք պահելով Մարաստանի մէջ:

Ուրեմն Հայը և Պարթևը շատ չուշացան Մարաց սահմանագլխուն վրայ երևնալու: Արտաւազդ կրցաւ սկզբան զանոնք ետ մղել, Մարաստանի և Հայաստանի մէջ

PW *Artaxerxes*, զոր նաև Սասանեանց հիմնադիրը Արտաշիր գործածեց և այն ձևով ալ գրած է: Նոյն անունան յետնագոյն ձևերն են Արտաշիր, Արտաշիր և Արդաշիր, հմմտ. Nöldeke առ PW. *Artaxerxes* 5: Հայոց պատմութեան մեր խօսելիք շրջանին մէջ չորս թագաւորներ կը կրեն այս անունը. առաջին և վերջինը, Զենոն-Արտաշէս և ներկայս: Միաձևութեան համար ես չորսին համար ևս Artaxias Արտաշէս ձևը կը գործածեմ:

գտնուած հռովմէական բանականերու օգնութեամբ. բայց երբ Անտոնիոս իր զօրքերը ետ կանչեց Ակտիոնի պատերազմին համար, և միասին տարած մարական գրնդերն ալ ետ չդարձուց, այն ատեն Արտաւազդ բոլորովին ջախջախուեցաւ և յաղթողաց ձեռքը գերի ինկաւ: Արտաշէս ուղղակի քալեց Հայաստան, ուր անհուն ցնծութեամբ ընդունուեցաւ: Ան ջարդեց Հայաստան գտնուող բոլոր Հռովմայեցիները և տիրացաւ իր հարց գահուն¹: Ազդու և խորագէտ մարդը այս կերպով ոչ միայն Հայաստանի մէջ միահեծան դարձաւ, այլ նաև իշխեց, գոնէ մինչեւ ժամանակ մը, Մարաց վրայ. «Արտաշէս արքայ Հայոց ինչպէս նաև Մարաց գէթ քանի մը տարիներ²»:

Այս կերպով Հայաստան մաքրուեցաւ

1. Դիոն 49, 44. 51, 16. Պլուտ. Անտ. 53. Զոնարաս 10, 27 (p. 389):

2. Mommsen, Res gestae d. Aug. էջ 112 և Röm. Gesch. V 369. Մոմսըն կը խօսի հիմնած Դիոն 49, 44 և Պլուտ. Անտ. 53ի վրայ: Քիչ մը վարը պիտի տեսնենք որ, նաև Արիորարզան և Արտաւազդ Գ երկու աշխարհներու վրայ միանգամայն տիրեցին, ըստ Mon. Ancyranumի: Նմանապէս Gardthausen I 825 հաւանական կը համարի թէ Արտաշէս մինչև 20 նաև Մարաց վրայ տիրած ըլլայ: Սոյն կարծիքն ունի և Klebs, Prosopogr. I 857:

Հոովմայեցիներէն , բայց Պարթեւներու
 օգնութեամբ միայն . վասնզի Արտաշես
 իր հօր յիշատակաւ մեզի (Հոովմայեց-
 ւոց) սխերիւմ բշեամի , Արշակունցի եւ
 րոշ գորոշքեամբ ինքզինքը եւ իր քաղառ-
 րոշքիւնը պաշտպանեց¹ : Օգոստոս կայսրը
 զգուշացաւ թէ ՅՕին , երբ անձամբ Ասո-
 րիք կը գտնուէր , եւ թէ յետոյ , Արտաշէսը
 զէնքի զօրութեամբ ստիպել հոովմէական
 գերիշխանութիւնը հանչնալու² . վասն զի
 Հայոց թագաւորին հետ թշնամանալու պա-
 րագային անհրաժեշտ պարթեւական պա-
 տերազմ մը պիտի ծագէր , բան մը՝ զոր
 Օգոստոս չէր ուզեր երկու պատճառով .
 նախ իր սկսած խաղաղական քաղաքա-
 կանութիւնը չվտանգելու , երկրորդ՝ պա-
 տերազմին անորոշ ելքին համար³ : Բայց
 Օգոստոս զիտցաւ թէ Հայաստանի եւ թէ
 Պարթեւաստանի մէջ հոովմէական կուսակ-
 ցութիւն մը ձևացնել , եւ որպէս զի Ար-
 տաշէսի վրայ աւելի մօտէն կարենայ հսկել ,
 անոր դրացի դրաւ Փոքր Հայոց գահին

1. Տակիտոս տար. 2, 3:

2. Gutschmid, Gesch. Ir. էջ 102 կըսէ թէ Ար-
 տաշէս 29ին հաշտութիւն ըրած ըլլայ , բայց Gardthau-
 sen II 250 այս կարծիքը բողբոզին անճիշդ կը գտնէ :
 Քրաւոր աւանդութիւնը վերջնայն իրաւունք տալ կը թուի :

3. Gardthausen I 464; 822-3:

վրայ Մարաց Արտաւազդ թագաւորը, որ
Արտաշէսին ձեռքը գերի ինկած էր յա-
ռաջագոյն և անոր հօր ալ թշնամին եղած
էր¹:

Ինչ որ կ'երևի, Արտաշէսը բաւականա-
ցած է միայն՝ Հռովմայեցիները յայտնա-
պէս գրգռող քայլ մը չառնել, և այն՝
վասն զի Պարթևաց մէջ ներքին շփոթու-
թիւնները անպակաս էին, ուր Տրդատ,
կայսեր օգնութեամբ Հրահատ Դ՛ ղէմ կը
կոռէր: Այլապէս նա միշտ թշնամի մնաց
Հռովմայեցւոց: Անոր համար ալ երբ ան
իր Աղեքսանդրիայէն Հռովմ փոխադրուած
եղբայրները Օգոստոսէն ետ խնդրեց,
կայսրը չուզեց զանոնք ետ դարձնել,
առարկելով թէ Արտաշէս շատ Հռովմա-
յեցիներ սպաննած էր Հայաստան: Բայց
ասիկայ սոսկ բարուրանք մ'էր. Օգոստոս
կ'ուզէր Հռովմայ մէջ ունենալ հայ և
պարթև թագապահանջներ, որպէս զի յար-
մար առիթը ներկայանալուն այդ երկիր-
ներու մէջ իր քաղաքագիտի խաղերը խա-
ղայ: Այս բանիս մէջ ինքն ճշմարիտ վար-
պետ մ'էր: Հայաստանի մէջ իր ճարտա-
րութեամբ ձեացած հռովմէական կուսակ-
ցութիւնը այնչափ զօրացաւ, որ կրցաւ

1. Դիոն 54, 9.

Արտաշէսի վրայ իր տժգոհութիւնը բարձրաձայն յայտնել և կայսերէն խնդրել անոր տեղ անոր եղբայրը ՏԻՓՐԱՆ Ք (Իբր 20-19 ն. Ք.):

Օգոստոս, որ այն ատեն Ասիա նահանգն էր, օգտուեցաւ առիթէն և վերջապէս որոշեց հռովմէական արժիւներու պատիւը պահել Արևելքի մէջ: Ան իր որդեգիր Տիբերիոսին տուաւ հզօր բանակ մը, որպէս զի Տիգրանը զէնքի զօրութեամբ Հայոց գահին վրայ դնէ, եթէ հարկ ըլլայ նոյն իսկ Պարթևաց դէմ պատերազմի մը վտանգով: Նաեւ Արքեղայոս, արքայ կապաղովկիոյ և Փոքր Հայոց, կայսերական երիտասարդ սպարապետին պէտք էր ձեռնտու ըլլալ իր ամէն միջոցներով¹:

Բայց զէնքի պէտք չեղաւ. արդէն Տիբերի ժամանումէն առաջ Արտաշէս սպանուած էր իրեններու ձեռքով, որոնք կը մտածէին թէ թագաւորին անձը մէջ տեղէն վերցնելով պատերազմէն կ'ազատին: Տիբերին ուրիշ բան չմնաց ընելիք եթէ ոչ Տիգրանը հանդիսաւոր կերպով պսակել (20): Ասոր վրայ Հռովմայ մէջ ի պատիւ Տիբերի շնորհակալութեան զոհեր և մեծ հանդէսներ կատարուեցան²:


1. Յովսեպոս Հնախ. 15, 4, 3.

2. Mon. Anc. V 27. Տակիտոս տար. 2, 3. Սուե.

Այս դէպքերը կրցան այսպէս հանդարտ
կատարուիլ, վասն զի Հրահատ Դ, բոլո-

սոն Օգոստոս 21 և Տիբեր 9. Յովսեպոս Հնախ. 15,
4, 3. Դիոն 54, 9. Որատիոս Թուղթք 2, 12. Հմմտ.
Մոմսըն Röm. Gesch. V 372. Այս գործերը դրամներ
բու վրայ յաւերժացան: Յետագայ դրամները, Cohen I
հատորի մէջ, բացի էջ 47 թիւ 46էն, ամենքն ալ աջա-
կողմն ունին կայսեր զւուխը և Augustus. Իսկ ձախա-
կողմերը, թիւ 46. Armenia capta, Հայաստան առ-
նռած, յաղթութեան աստուածուհին ցուլ զոհելով: Թիւ
7. Armenia capta, Սփինքս մը, (այս դրամը կը զբա-
նուի հատոր VII էջ 8): Թիւ 47-48. Armenia capta,
խոյր, պատկանդարան, աղեղն: Թիւ 49. Armenia re-
cepta Հայաստան վերստին առնռած, պատկեր նախոր-
դին հետ նոյն. Նաև այս դրամին պէտք է նոյն թուա-
կանը տալ ինչպէս միւս ամենուն, որ է 734 = 30 ն. Ք:
Թիւ 79. Caesar divi f. Armen. capt. imp. VIII,
Հայ զինուոր, աղեղն և նետ ձեռքին մէջ: Թիւ 80, նոյն
նախորդին հետ, բացի imp. VIIIIէն: Թիւ 81. Cae-
sar divi f. Armen. recep. imp. VII — այժմ ստու-
գուած, imp. VIII կարդալու է, Հմմտ. Gardthausen
II 251: — Թիւ 299, ալ L. Aquillius Florus IIIvir
(monetalis, յամի 20-19, Հմմտ. Rohden առ PW. A-
quillius 21), զւուխ Առաքինութեան. ձախ, Caesar di-
vi f. Arme. capta, Հայաստան ծունկի վրայ, ձեռքե-
րը կը կարկանէ: Թիւ 300, նոյն, միայն Հայաստան
կանգուն է և նիզակ ու վահան կը բռնէ: Թիւ 364 ալ,
Turpilianus IIIvir Feron(alis), ձախ ինչպէս թիւ
299: Հմմտ. Mommsen Res g. d. Aug. էջ 77 (ա-
ռաջին տպ. 1865): Մոմսըն էջ 112 Տիգրան Պի. կը վե-
րագրէ Langlois էջ 37ի մէջ յիշուած դրամը, Βασι-
λέως μεγάλου Τιγράνου φιλέλληγος, Թառորիկ մեծի
Տիգրանայ յռեւասիրի, Թագակիր զւուխ Թագաւորին:
Նոյնը կ'ընէ նաև Gardthausen II 473:

րովին իր կնոջ Թէա Մուզայի, — որ ի տալացի գերի մ'էր Օգոստոսէ իրեն նուէր տրուած, — ազդեցութեան տակ, Հռովմայեցւոց հանդէպ զիջող քաղաքականութիւն մը բռնած էր, և նոյն իսկ կրասոսէն և Անտոնիոսէն առնուած հռովմէական դրօշները կայսեր ետ դարձնել խոստացած էր, զորս այժմ Տիբեր հանդիսաւոր կերպով ընդունելով Հռովմ տարաւ: Բայց իր որդին Հրահատակէս Ե (.. 2 ն. Գ. — 2



Տիգրան Գ (Թիւ 3)

կամ 4 յ. Գ.), յետ իր հայրը սպաննելու, բուն կերպով դէմ ելաւ Հռովմայեցւոց: Հայաստանի գործոց համար պարթևական միջամտութիւն մը վճռուեցաւ: Հոն Տիգրան Գի թագաւորութիւնը երկար տևած չէր, վասն զի ան շուտ մեռաւ:

Հակառակ կուսակցութիւնը, որուն գլուխ անցած կը տեսնուի իր անուանակից որդին, ջանաց կառավարութիւնը ձեռքը ձգել: Իր հօր մահէն յետոյ ՏԻԳՐԱՆ Գ.

(19 ն. Ք. - 1 յ. Ք.), վերջին թագաւոր այս հարստութեան, Պարթևաց զօրութեամբ հայրենի գահը ելաւ և ԵՐԱՏՈՅԻ հետ, որ իր քոյրը և հարսն էր, կառավարեցին երկիրը¹: Այսպիսի փոփոխութիւն մը, որ անմիջապէս Տիբերի հանդիսական և շառաչաւոր արշաւանքին յաջորդեց - որուն առթիւ Օգոստոս կը գրէր թէ Հայաստանը կրնայի նահանգի վերածել, cum possem facere provinciam, - բնականապէս Հռովմայեցւոց գոռոզութիւնը խիստ խոր կերպով վիրաւորած պէտք է ըլլայ: Բայց կայսրը առ այժմ չէր կրնար պարթեւ-հայկական պատերազմ մը բանալ:

Նախ շատ տարիներ վերջ, (իբր յառաջ քան 6 յ. Ք.), նա թագապահանջ մը դրկեց Արտաւազդ անուամբ, զոր գիտնականներէն ոմանք իրաւամբ Արտաւազդ ԲԷ երրորդ որդին կը համարին: Չասի-

1. Տակիրոսու տար. 2, 3: Գրամ առ Langlois էջ 39, տախտակ III 5. աջ Βασιλεύς βασιλέων Τιγράνης, խոյրակիր գլուխ. ձախ Ἐρατώ βασιλέως Τιγράνου ἄδελφή, Երատոյ արքայի Տիգրանայ քոյր, իր գլուխը առանց թագի: Նոյն դրամը ուրիշ գրով. աջ, Βασιλεύς μέγας νέος Τιγράνης, արքայ մեծ կրտսերն Տիգրան. ձախ նոյն նախորդին հետ: Cabinet de Franceի գոհարի մը վրայ կայ գլուխ մը թագուհւոյ մը, հայկական թագով. Langlois էջ 39 տախտակ 6, գայն կը նոյնացնէ Երատոյի հետ, որուն հերագարդը զարմանալի նոյնութիւն մը ցոյց կու տայ գոհարի պատկերիւնին հետ:

կայ, որ աւելի հոովմէական քան հայկական կթութիւն ունէր, Տիգրան Գ և Պարթևները հալածեցին և անոր ընկերացող հոովմէական զնդերը կոտորեցին, non sine nostra clade deiectus¹. ատոր համար է որ Օգոստոս Արտաւազդայ անունը չտար, երբ Անկիւրիոյ արձանագրութեան (Monumentum Ancyranum) մէջ կը յիշէ իրմէ դրուած Հայոց թագաւորներու անունները²:

Այսքան վատթար վիճակի մէջ կը գրտնուէին Հոովմայեցւոց գործերը Հայաստանի մէջ, ուր Պարթևք ամենազօր էին: Օգոստոս ինքն այժմ ծերացած էր, իսկ Տիգրեր, որուն նա յանձնել ուզեց երկրորդ արշաւանք մը ընդդէմ Հայոց, յանձն չառաւ զայն անձնական խնդիրներու համար և քաշուեցաւ Հռոմոս կղզին: Միւս կողմանէ կայսրը չէր ուզէր սովորական Հոովմայեցի մը օժտել գերագոյն իշխանութիւններով: Ասպէսով խորամանկ քաղաքագէտը Հրահատակի հետ դատարկ թղթակցութիւններով տարիներ անցուց, մինչև որ իր որդեգիրը Փայիոս կեսար չափա-


1. Տակիտոս տար. 2, 4:

2. Mon. Anc. V 27. Տակ. տար. 2, 4. հմմտ. Mommsen Res g. d. Aug. 113 և Röm. Gesch. V 373. Klebs, Prosopogr. I 956.

հաս եղաւ: Այդ ժամանակ, յ Ն. Ք., առնիկայ քսանմէկամեայ երիտասարդ իշխանին տուաւ արտաքոյ կարգի իշխանութիւններ և անոր ընկեր դրաւ փորձ մարդիկ, զորս թէեւ երիտասարդը ստիպուեցաւ յետոյ իր քովէն հեռացնել՝ դրամի համար գործած սոսկալի անպատուութեանց համար, և զայն խրկեց Արևելք: Գայիոս իր հրամանին տակ ունէր իր հօր խնամքով պատրաստուած աղէկ և մեծ բանակ մը. ասկէ զատ նաև քաղաքներ և թագաւորներ պէտք էին իրեն օգնել: Նա զարնան մեկնեցաւ Հռովմէն:

Այս լուրին և համաժամանակ տեղի ունեցած թագապահանջ Արտաւազդի մահուան վրայ, Տիգրան Օգոստոսին նամակ մը գրեց, որուն մէջ իր թագաւոր տիտղոսը զանց ըրած էր, ուրախութիւն յայտնելով Արտաւազդի մահուան վրայ իբր Հռովմայեցւոց թշնամւոյ մը, և խնդրեց իր հաստատութիւնը հայկական գահին վրայ: Օգոստոս գիտէր ամէն բան, այնուհանդերձ ընդունեցաւ Տիգրանայ նուէրները, — միշտ ակնածելով պարթեւ-հայկական պատերազմէ մը, — և գեղեցիկ յոյսեր դրաւ անոր առջև ու խորհուրդ տուաւ որ Գայիոսին դիմէ, իբր կարգադրիչի արևելեան

գործոց¹: Գայիոս Աթենքի վրայէն եգիպտոս եկած էր և յետ Արաքները նուաճելու Ասորիք նաւած էր, ուր յունուար 1ին յ. Ք. հիւպատոսութիւն առաւ:



Տիգրան Դ և Երատոյ (թիւ 4)

Բայց Տիգրան չվատահեցաւ fides Romana ի հռովմեակսն հաշատքի վրայ և չգնաց Գայիոսին մօտ. իսկ միւս կողմանէ արդէն Պարթևները տժգոհացուցեր էր իր Օգոստոսին դրկած պատգամաւորութեամբը: Հիմայ ինքը այնպիսի դիրքի մը մէջ էր որ, թէ Հռովմայեցիները և թէ Պարթեւք իրեն մէջտեղէն անհետանալը կը փափագէին: Իր մասին այլևս ուրիշ բան չենք գիտեր, բայց միայն, թէ ան պատերազմի մը մէջ ընդդէմ բարբարոս ժողովուրդներու, զորս անտարակոյս երկու մեծ պետութիւններէն մէկը իրեն դէմ յարու-

1. Հատակատր մը Գիոնի, տպ. Dindorfի հտր. V էջ 237.

ցած էր, ինկած է ինն յ. Ք.: Իսկ իր գահակից քոյրը Երատոյ անմիջապէս հրաժարեցաւ¹:

Տիգրան Գ^{ով} վերջացաւ Արտաշէսեան հարստութիւնը, որ գրեթէ 190 տարի տեւեց և Հայաստանի ընծայեց ջղուտ և կարող թագաւորներ²: Մեզի հասած աղբիւր-

1. Դիոն 55, 10a. Ովիտիոս ars amat. 195. Հմմտ. Abruzzese էջ 39. Gardthausen I 1136-7. Schürer, Gesch. des jüd. Volkes I 325.

2. Այն իրականութենէն, որով Արտաշէսեան հարստութեան վերջին թագաւորով դրամները կը դադրին և Արշակունիներէն ոչ մէկ դրամ ունինք, կը հանեմ յետագայ եզրակացութիւնը. Հայոց գահին վրայ նստող Արշակունիները իրաւունք չունէին դրամ կոխելու, հաւանականարար այն պատճառաւ որ ատիկայ առանձնաշնորհութիւն մ'էր Պարթևաց գահին վրայ նստող Արշակունիներու: Այս հետևութեամբ աւելի կը տկարանայ ենթադրութիւնը A. Petroviczի, Arsacidenmünzen էջ III-IV և 183-191: Այսինքն Պետրովիչ քանի մը պարթևական համարուած դրամներ, — որոնց որ թագաւորի պատկանիլը որոշ չէ, ուզեց վերագրել այն Արշակունի թագաւորներու, որոնք Խորենացւոյ համեմատ Տիգրան Բ էն առաջ Հայաստանի մէջ տիրած ըլլան: — Պետրովիչի սոյն գիրքը և Gutschmidի Geschichte Iransը համառօտելով Յ. Տաշեան Հանդես Ամսօրեայի սիւներուն մէջ, 1904 էջ 323ի մէջ խոստացաւ Պետրովիչի կարծիքը հայ ընթերցողներու ներկայացնել. դրժբաղդաբար այդ յօդուածներու շարքն ընդհատուած մնաց, և մենք չենք գիտեր թէ մեծարգոյ գիտնականը Պետրովիչէն տարբեր փաստեր պիտի բերէր արդեօք ապացուցութեան համար: —

Ինծի կը թուի թէ, Պետրովիչի ենթադրութիւնն ընդունելու համար տակաւին համոզիչ փաստեր կը պակասին: Նախ անորոշ դրամներ դեռ աւելի անորոշ թագաւորներու կը վերագրուին: Գարձեալ, եթէ յետագայ Արշակունիները իրաւունք չունէին դրամ կոխելու, ինծի

ներու սակաւութեան և միակողմանիութեան պատճառաւ, և այն դժուարին դիրքին համար՝ յորում գտնուեցան այս թագաւորներէն ոմանք, շատ դժուարին է ճիշդ դատաստան մ'ընել իրենց քաղաքագիտական կարողութեանց և գործոց մասին: Բայց ճարտար քաղաքագէտ մը ինչպէս Արտաշէս Ա. և քաջ զինուոր մը ինչպէս Տիգրան Բ. Հայոց արքայացանկին մէջ հազուագիւտ են:

Օգոստոսի ժամանակ ներկայ կը գրտնուինք նախերգանքի Հայոց թագին յաջորդութեան համար մեծ շփոթութիւններուն, որոնք յետոյ Ներոնի ժամանակ իրենց գազաթնակետը պիտի հասնին: Օգոստոս առ ժամս իր արարածները իբր օրինաւոր թագապահանջներ առաջ կը քշէ,


շատ յանդուգն կը տեսնուի Տիգրանէն առաջ Արշակունեաց տիրապետութիւն մը երեւակայել Հայաստանի վերայ և այդ Արշակունիներու գրամահատութեան իրաւունք վերագրել. և այն՝ թուականով դրամներ, ուր այդ ժամանակ և ոչ իսկ Պարթևաստանի Արշակունիները սովոր էին թուական գործածել իրենց գրամոց վրայ: Արշակունեաց կանուխ տիրապետութեան մը վստահելի վերկայութիւններ կը պակսին: Ընդհակառակն Սարաբոն 16, 1, 19 բոլորովին յստակ կերպով կ'ըսէ թէ Տիգրանէն առաջ Պարթևները — որ է Արշակունիները — երբէք չկրցան Հայաստանի տիրել, իսկ Տիգրան ինչպէս Պարթևները խոնարհեցուց արդէն ծանօթ է: Նմանապէս Յուստինոս 42, 2. 4 կը յիշէ այդ ժամանակուան մէջ հայ թագաւոր մը, որ Արշակունեաց դէմ կոռած է:

որոնցմէ բնականաբար գոհ չէին կրնար
մնալ Ազգայնականներու կուսակցութիւնը.



Երատոյի համարուած գոհար մը (թիւ 5)

արդեօք զո՛վ կ'ուզէին ասոնք յայտնի չէ:
Արդէն ինքնին կը հասկցուի որ Պարթև
ները Արշակունի մը կ'ուզէին դնել հոն:



Մ Ա Ս Ն Բ .

ՕՏԱՐԱԶԳԻ ԹԱԳԱԻՈՐՆԵՐ

Կ Ա Մ

ԱՆՑՄԱՆ ՇՐՋԱՆ

Արտաշէսի հարատուժեան վերջացած ժամանակ Հայաստանի մէջ քաղաքական երկու հոսանքներ ձևանալու վրայ էին, որոնք քիչ մը վերջ որոշ կերպարանք մ'առին, այսինքն Հոռովմէական և Պարթևական կուսակցութիւններ: Ազգը բռնադատուած էր իր մէկ կամ միւս դրացւոյն կողմը հակիլ:

Հայաստանի մէջ նոյն ժամանակ, ինչպէս նաև յետոյ, կ'ապրէր ժառանգական աւատական ազնուականութիւն մը, նախարարք, որ շատ նմանութիւններ ունէր ըզարուն մէջ Մերովինկեանց վերջին ժամանակներու մէջ յարեմուտս ձևացած աւատական ազնուականութեան հետ: Ամէն ոք աւելի կամ պակաս անկախ էր իր

կալուածին վրայ, զոր միշտ ընդարձակել
կը ջանար: Ամէն ոք կը ցանկար, նա-
խանձոտ իրարու վրայ, իր իրաւունքները
շատցնել և ազատաց շարքին մէջ իր դիր-
քը բարձրացնել: Այս մրցման մէջ դժուա-
րին չէր Հոովմայեցւոց՝ նախարարներէն ո-
մանց աւելի նպաստել, իրենց առջև բարձ-
րագոյն յոյսեր դնել և այս կերպով հոով-
մէական կուսակցութիւն մը ձևացնել երկ-
րին մէջ: Այս գործիս մէջ Օգոստոս պար-
զապէս զայն շարունակեց, ինչ որ ուրիշ-
ներ սկսած էին, ինչպէս ծանօթ է Լու-
կուլլոս բացի ուրիշներէն կորդուաց Զար-
բիենոս իշխանին, Պոմպէոս կրտսեր Տի-
գրանայ և անոր կուսակիցներուն նպաս-
տած էր: Նաև Օգոստոս օգտուեցաւ երկ-
րին այս ներքին վիճակէն, իրեն համար
գործը աւելի դիւրին եղաւ, վասն զի ՅՕին
ն. Ք. Արտաւազդ Բ՛ որդիները Աղեքսան-
դրիոյ գրաւմամբ իր ձեռքն ինկան, որոնց
կուսակիցներուն և ազգականներուն մի-
ջոցաւ կրնար նա հոովմէասէր հոսանք մը
ստեղծել ի Հայս: Այս բանս ամենայայտ-
նի կը տեսնենք Արտաշէս Բ՛ պատմու-
թեան մէջ. Օգոստոս սկսաւ զայն այն ա-
տեն հալածել, երբ Տիգրան Գ՛ կուսակից-
ները բաւական զօրացան և կրցան Հոով-
մէն խնդրել իրենց թեկնածուն: Նոր թա-

գաւորի հետ նաեւ նոր նախարարական տներ իշխանութեան կը հասնէին:

Սակայն կուսակցութեանց ձեւացումը պէտք չենք միայն Հոովմայեցւոց քաղաքականութեան և հայ ազնուականաց փառասիրութեան և շահասիրութեան վերագրել: Ուրիշ հանգամանքներ ալ փոքրիկ դեր մը չխաղացին, կ'ուզեմ ըսել քաղաքակրթական հոսանքներ: Սկզբանէ ի վեր գտնուեցան մարդիկ, թէ նախարարաց մէջ և թէ գահին վրայ, որոնք արեւմտեան քաղաքակրթութիւնը — որուն ներկայացուցիչներն էին Յոյնք և Հոովմայեցիք — պարսկականէն վեր դասեցին և հետեւաբար նուազ խորշում մը ունէին. Հոովմայեցւոց նկատմամբ կամ նոյն իսկ անկեղծ համակրութիւն մը, եթէ հոովմէական իշխանութեան հետ կարելի ըլլար ազգային ազատութիւնը հաշտեցնել: Արեւմտեան քաղաքակրթութեան ի Հայս գոյութիւնը անով կը հաստատուի, որ քրիստոնէութիւնը հոն շատ շուտ մուտք գտաւ: Չեմ ուզեր հոս խօսել այն նախարարական երիտասարդութեան վրայ, որ ուսման և կրթութեան համար հոովմէական երկիրներ կը դեգերէր և դէպի Հոովմայեցիսյարգանքի և համակրութեան զգացումներով տուն կը դառնար:

Այս նախարարութիւնը, որ բուն ազգը կը ներկայացնէր, վճռական ձայն մ'ունէր թագաւոր մը ընդունելու և մերժելու մէջ¹: Արտաշէս Բ^{էն} ի վեր ազնուակահարաց փոքրիկ թիւ մը միացաւ Հոովմայեցւոց հետ և Օգոստոս ու իր յաջորդները իբր քաջ քաղաքագէտներ օգտուեցան այս հանգամանքէն իրենց ծրագիրները Հայաստանի մէջ իրագործելու համար:

Ուստի մենք պիտի տեսնենք Հայոց պատմութեան բովանդակ այս շրջանին մէջ երկու կուսակցութիւններ, որոնք իրարու հետ կը կռուին. իրենց զօրութիւնը մեծապէս ազդեցութիւն կը կրէ երկու հզօր դրացիներուն ներքին վիճակէն: Սկիզբները ազգային կուսակցութիւն մը ամենէն աւելի զօրաւորն էր. սա Պարթևաց հետ նախանձոտ էր իսկ Հոովմայեցիները կ'ատէր. բայց երբ ազգային հարստութեան յիշատակը կամաց կամաց անհետացաւ, Հայերը հակեցան Պարթևաց կողմը, ինչպէս որ բնութիւնն ալ կը սովորեցնէր. վասն զի Հայերը... երկրիս դիրքով, բարքերոշ նմանոշքեամբ Պարթևաց աշևի մօտ և իսևանոշքիշևներով ակունց հետ կապուած էին² և հասարակաց շատ կետէր ունէին

1. Հմմտ. Տակիտ. Տար. 2, 56. 11, 9. 14, 26. Փաւստոս Դ 1:

2. Տակիտ. Տար. 13, 34:

իրենց արևելեան դրացիներուն հետ, և թէև Հայը ի հնուց ի վեր մարդկանց բնաւորութեամբ և աշխարհիւ դիրքով երկմիտ ժողովուրդ¹ մ'եղած է, այսուհանդերձ կազմուեցաւ Հայ-Պարթևական զօրաւոր կուսակցութիւն մը, որուն հանդէպ հռովմայական կուսակցութենն ընդհանրապէս շատ տկար էր մինչև 224: Բայց մինչև որ հայ ժողովուրդը որոշեց Արշակունիներու կողմը բռնել և մինչեւ որ ասոնք Հռովմայ հաւանութիւնը ձեռք բերին և հայկական գահը բարձրացան, երկայն տևեց և շատ նեղութիւններ ու կռիւներ արժեց: Նախ խառնակութիւններ, անիշխանութիւն և այլացեղ թագաւորներու իշխանութիւն տեղի ունեցան, ինչ որ անմիջապէս պիտի տեսնենք:

Տիգրան Դ՛ մահը վերջ մը տուած էր այն սպառնական թղթակցութեան, որ Հռովմայ և Պարթևաց մէջ տեղի ունեցաւ: Ասորիք գտնուող Գայիոսը, որ պատերազմի մեծ պատրաստութիւններ տեսած էր, Օգոստոսէն ընդունած հրահանգներու համեմատ չէր ուզեր զէնք գործածել. նոյնպէս Հրահատակէս քիչ տրամադիր էր Հռովմայեցւոց հետ պատերազմի մը,

1. Տակիտ. Տար. 2, 56:

իր պետութեան ներքին վրդովմանց պատճառով: Ուստի իբր մայիս ամսուն յ. Ք. 2 թուականին¹ երկու երիտասարդ պետեր Եփրատի կղզւոյ մը վրայ անձնական տեսակցութիւն մ'ունեցան, ուր Պարթևը Հայաստանը թողուց Գայիոսին, պայմանաւ որ իր եղբայրները, որոնք Պարթևաց թագին աւելի իրաւունք ունէին քան ինքը, ի Հռովմ իբրև պատանդ պահուին²:

Այս համաձայնութիւններէն վերջն էր որ Գայիոս մտաւ Հայաստան և ժողովրդեան՝ կամ աւելի ճիշդ՝ հռովմէական կուսակցութեան փափաքին համեմատ թագաւոր պսակեց ԱՐԻՈՒՅԱՐՁԱՆը (վերջ շին կամ սկիզբ Յին յ. Ք.)³: Այս անձը՝ մարմնոյ և մտքի բարձր առաւելութիւններով օժտուած՝ էր որդի Մարաց այն Արտաւազդ թագաւորին, որ թշնամին եղած էր մեր Արտաւազդ Բ^{ԻՆ} և գերի ինկած էր Արտաշէս Բ^{ԻՆ} ձեռքը: Արիոբարզան 30ին ն. Ք. իր հօր հետ միասին Հռովմ փախած էր⁴ և 20ին Օգոստոս զինքը թա-

1. Հմմտ. Gardthausen II 752.

2. Դիոն 59, 10a. վելլէիոս 2, 101:

3. Mommsen, Res gestae divi Aug. 143. Schürer, Geschichte des jüdischen Volkes I 325. Abruzzese էջ 41:

4. Հմմտ. Mommsen, Res g. d. Aug. 114. Thesaurus ling. lat. II 577, 678:

գաւոր դրաւ Մարաց . Պարթևաց և Մարաց ժողովուրդները իրենց ևոշիրակներու ձեռքով իրենց իշխանները ինձմէ քագաւոր ուզեցին և ընդունեցան... Մարեր Արիւրարգանը, Արտաւազդ քագաւորի որդին, Արիւրարգան քագաւորին քուռ¹ : Բայց Օգոստոս հիմայ, Յին յ. Ք. սկիզբները, անոր տուաւ նաև Հայոց թագը . Հայաստանը... Արիւրարգան քագաւորին, Մարաց Արտաւազդ քագաւորի որդուն, տուի կառավարելու համար² : Ուրեմն ան արդէն Մարաց թագաւոր էր երբ Հայոց վրայ պսակուեցաւ և շատ հաւանականաբար ինքն, ինչպէս նաև իր որդին Արտաւազդ, Հայաստանի հետ միանգամայն նաև Մարաց վրայ իշխեցին³ : Հայեր իրենց բնիկ հարստութեան սպառելէն յետոյ Մարը սիրով ընդունեցան, վասն զի Հայոց և Մարաց (Ատրպատականի) թագաւորական ընտանիքները խնամութիւններով իրարու հետ կապուած էին⁴ :


1. Monumentum Ancyranum VI 33.

2. Mon. Anc. V 27.

3. Mommsen, Res g. d. Aug. 114; 117. Gardthausen I 1140. Gutschmid, Gesch. Irans 116. Klebs, Prosopogr. I 855; 957.

4. Մարաբոն 11, 13, 1. Դիոն 36, 16. այս կը հաստատուի նաև անով որ, Արտաւազդ Բ Մարաց վրայ թագաւորեց : Սուետոն Օգոստոս 48:

Թագադրութենէն վերջ հարկ եղաւ որ Գայիոս զէնքով նուաճէ պարթևական կուսակցութիւնը : Ան Արտագերսի պաշարման ժամանակ — որ Արշարունեաց մէջ անառիկ բերդ մ'է, — մահացու կերպով վիրաւորեցաւ Ադոն կամ Ադոր (Ատոմ?) անուամբ հայ նախարարէ մը, բերդը առնուեցաւ, յանցաւորը պատժուեցաւ : Բայց կայսերազուն երիտասարդ իշխանն ալ չըկրրցաւ այլևս իտալիա տեսնել, վասնզի դարձին միջոց վէրքին հետևանքով Լիւկիոյ մէջ վախճանեցաւ (21 Փետր. 4 յ. Ք.)¹ :



Արտաւազդ Գ (?) և Օգոստոս (թիւ 6)

Արիոբարզան երկար չապրեցաւ² և իր որդին ԱՐՏԱԻԱԶԴ Գ. (3 — յառաջ քան

1. CIL IX 5290. Վեւէիոս 2, 102, հեղինակը այս արշաւանքին մէջ Գայիոսին ընկերացողներէն մէկն էր. Տակիտոս Տար. 1, 3. Փլորոս 4, 12. Գիոն 55, 10a:

2. Թերեւս արդէն 2ին կամ 3ին յ. Ք. մեռած է, Gardthausen II 474:

11 յ. Ք.), զոր Օգոստոս իբր յաջորդ
գահին վրայ դրաւ, Հայք սպաննութեամբ
հեռացուցին¹. վասնզի ազգային կուսակ-
ցութիւնը, որ դեռ միշտ զօրաւորագոյնն
էր, չէր ուզեր մարական գծին շարունա-
կութիւնը Հայաստանի մէջ. անոր ցեղը ը-
հանդուրժեցին²:

Ասոր վրայ Օգոստոս խրկեց ՏԻՓՐԱՆ
Ե (11 յ. Ք.) անուամբ մէկը, որ իբր թէ
Հայոց արքայական ցեղէն էր. Հայոց քա-
գաւորական ցեղէն սերեալ³:

1. 11էն առաջ. հմմտ. Abuzzese էջ 32. 20. Gardt-
hausen II 474. Mommsen Res g. d. A. 117. Մոմսըն
էջ 115 այս Արտաւազդայ կը վերագրէ դրամ մը, զոր
Gardner ի Num. Chron. հար. 12, ամ 1872 էջ 9,
տախտակ 1, թիւ 7 հրատարակած է. որ է Թեօժ Կաի-
սարօս εϋεργέτου, գլուխ Օգոստոսի, ձախ Βασιλέως
μελάγου Ἀρταυάσδου ապարօշով զարդարուած գլուխ
թագաւորին: Ուրիշներ, ինչպէս Head և Gardthausen
գոյն Արտաւազդ անուամբ ուրիշ թագաւորի կը վերա-
գրեն, (տես մեր թիւ 6):

2. Տակիտ Տար. 2, 4 stirpem eius (Արիորարգա-
նի) haud toleravere.

3. Monum. Ancyr. V 30: erat ex regio genere
Armeniorum oriundus. Gardthausen II 751 այս
Տիգրանը կը համարէ որդի մը Արտաշէս Բի, հակառակ
Մոմսընի, առանց փաստ բերելու: Ինծի կը թուի թէ
Մոմսըն իրաւունք ունի: Անցողակի դիտենք որ, Gardt-
hausen I 1139-40 և II 751 այս Տիգրանը նաև Ա-
րիորարգանէն և Արտաւազդ Գէն առաջ կը դնէ, որ ուղ-
ղապէս կը հակառակի Mon. Anc. V 27ին:

Տիգրան Եի հայկական ծագումը պէտք է ըստ Մոմ-
սընի, Res gestae d. Aug. էջ 116, հեռուեալ կերպով
մեկնել: Աղեքսանդր, որդի Հրէից թագաւոր Հերովդէս

Այդքան հեռաւոր սերում մը բնականապէս չէր կրնար ջերմ ազգայնականները գոհացնել. ինչպէս Օգոստոսէ դրուած բոլոր թագաւորները, նաև Տիգրան չկրցաւ հաստատուն կռուան մ'ունենալ Հայաստանի մէջ. կարճ ժամանակի մէջ ասիկայ ևս հալածեցին զահէն, որ յետոյ ՅՅին Հռովմայ մէջ Տիբերիոս կայսրէն սպանուեցաւ¹: Հայերը զահ հանեցին իրենց բնիկ հարստութենէն մնացած վերջին շառաւիղը, ծանօթ Ե Ր Ա Տ Ո Յ թագունին, Տիգրան Դ^ի քոյր և կիներ (14 յ. Ք.?):

Կնոջ մը իշխանութիւնը բնականապէս չէր համապատասխաներ որսասէր ազնուա-

Մեծին և Մարիամնէի, երկու որդի ունեցաւ իր Գլափիւրա կնոջմէն, որ դուստր մ'էր Կապադովկիոյ վերջին թագաւոր Արքեղայոսին: Այս որդիներէն մէկն էր Տիգրան (Ե), որ 11ին յ. Ք. Հայոց զահին վրայ նստաւ Օգոստոսի հրամանաւ (Mon. Anc. V 27) և ՅՅին ի Հռովմ սպանուեցաւ Տիբերիոսէն (Տակիտ Տար. 6, 40). Իսկ երկրորդն էր Աղեքսանդր: Աս վերջինս Տիգրան (Զ) անուամբ որդի մ'ունէր, զոր 60ին Ներոն Հայոց զահին վրայ դնել փորձեց (Տակիտ Տար. 14, 26): Հաւանականաբար առաջին Տիգրանին մեծ մայրը (որ է կին Արքեղայոսի) Հայոց արքունական տնէն էր, ինչպէս որ Յովսեպոս Հնախ. 17, 1, 1-2. 18, 5, 4. Հր. Պարզմ. 2, 11, 16 և Տիգրան անուններէն կարելի է գուշակել (հմմտ. Dessau, Prosopogr. III 149). Արտաշէսեան հարստութեան սպառած ժամանակ այս իշխանները Հռովմայ կողմէն Հայաստան դրկուեցան իբր օրինաւոր թագապահանջներ, ընդդէմ Արշակունի' որ է՝ Պարթև թեկնածուներու:

1. Տակիտ Տար. 6, 40:

կանաց ճաշակին: Ուստի զայն ալ շուտով վար առին և անորոշք ոչ յքեաչք և առեյի անտերոշնչք քան ազատ մնալով¹, ընդունեցան ՎՈՆՈՆ (16 յ. Ք.) Պարթևը, զոր անոր հակառակորդ Արտաւան Գ (16-40) կարճ ժամանակ առաջ գահէն հալածած էր: Արտաւան չէր կրնար հանդուրժել որ իր ախոյեանը դրացի տէրութեան մը գահին վրայ նստի, յարատև վտանգ մը իրեն: Ուստի սկսաւ սպառնալ Հայոց, որոնք առանձին չէին կրնար դիմադրել անոր, մանաւանդ որ Վասպուրական և Բագրևանդ գաւառները Արտաւանայ կողմը բռնած էին, իսկ Հոովմ չհամարձակեցաւ իր Պարթևաց գահին թեկնածուն և ոչ իսկ Հայաստանի մէջ պաշտպանել: Տիրերի հրամանաւ Ասորոց կուսակալն կրետիկոս Սիլանոս վոնոնը Անտիոք կանչեց և հոն պահեց զայն, թողլով սակայն կրել թագաւորի տիտղոսը և արքայական նշանները²:

Այս վերջին դէպքերու ժամանակ վախճանեցաւ Օգոստոս կայսրը (14 յ. Ք. Օգոստոս 19): Ցաւով միայն տեսած էր նա Տիգրան Ե՛ի հալածուիլը: Ընդ ամէնն Օ-

1. Տակիտ Տար. 2, 4.

2. Տակիտ Տար. 2, 4. 58. 68. Gutschmid, Gesch. Irans 119.

գոստոս հինգ թագաւոր զրկեց Հայաստան,
բայց ասոնցմէ ոչ մէկը կրցաւ հռովմէա-
կան ազդեցութիւնը հաստատել հոն: Չենք
ալ գիտեր թէ արդեօք ասոնցմէ մէկը կըր-
ցաւ տարիէ մը աւելի թագաւորել: Օգոս-
տոսի ծրագիրն էր Հայաստանը խաղաղ
միջոցներով նուաճել և կամ քաղաքագի-
տական խաղերով հռովմէական աւատա-
կան տէրութեան մը վերածել: Ասոր ի-
րագործման համար երեք նպաստաւոր պա-
րագայներ կը ներկայանային իրեն. անրնդ-
հատ ներքին շփոթութիւններ Պարթևաց
պետութեան մէջ, աւատական կազմակեր-
պութիւն Հայաստանի, և Արտաշէսեան հա-
րրստութեան սպառումը: Եթէ Օգոստոս
Հայաստանի շատ չդպաւ, զայս ոչ այն-
քան իրեն կը պարտինք որքան իր և Պար-
թևաց մէջ տիրող նախանձոտութեան:
Պարթևք Հայաստանը պաշտպանեցին ա-
ղեղ և նետ ի ձեռին, սպառնալով միշտ:
Բայց ստէպ Մեծ թագաւորներու իշխա-
նութիւնը իրենց բնիկ երկրին մէջ ապա-
հով չէր, հետևաբար չէին կրնար միշտ
միևնոյն ուշադրութիւնը դարձնել Հայոց
գործերուն: Ճիշդ այսպիսի վայրկեաննե-
րէն գիտէր Օգոստոս ճարտար կերպով օգ-
տուիլ:

Վոնոնի հեռացումէն վերջ անիշխանութիւն կը տիրէր Հայաստանի մէջ: Արևելքի գործերը կարգի դնելու համար Տիրերիոս կայսրը Գերմանիկոսը խրկեց հոն, 18ին յ. Ք: Կայսերական իշխանի մը և միանգամայն նշանաւոր զօրավարի մը ներկայութիւնը յԱրևելս Արտաւանը զուսպ բռնեց, որ Հայաստանի մասին պահանջներ կ'ընէր: Գերմանիկոս Հայաստան մտաւ քիչ լեզէոններով, — վասնզի Ասորոց լեզէոնները Պիսոն չխրկեց, — և տեսաւ որ Հայոց փափագները գլխաւորապէս օտար իշխանի մը վրայ կը կեդրոնանային, որ տղայութենէն ի վեր հայկական բարքեր և Հայոց սովորութիւնները իրեն իւրացուցած էր, և որսական զուարճութեանց ու խնջոյքներու մէջ ոչ մէկ Հայէն վար կը մնար:

Ասիկայ էր Չենոն, որդի Պոնտոսի Պուլեմոն թագաւորին, թոռ մը Անտոնիոս եռապետին և շատ հեռաւոր ազգական մը Գերմանիկոսի և Տիրեր կայսեր¹: Ուստի


1. Տես ի Ephem. Epigr. I 270 արձանագրութիւն մը և անոր մեկնութիւնը Մոմսընէն: Groebe առ PW Antonius 30 և 112. Klebs, Prosopogr. I 962. (Gelzer ի Rhein. Museum հար. 27 էջ 463 կը շփոթէ Փիլիթոդորիսի մայրը Գերմանիկոսի մօր հետ): Անտոնիոս եռապետը Անտոնիայի հետ ամուսնութենէն ունեցաւ Անտոնիա դուստր մը, սա ամուսնացաւ Փիլիթոդո-

Գերմանիկոս նախարարաց հաւանութեամբ զասիկայ թագաւոր պսակեց Արտաշատու մէջ, և ներկայ ժողովուրդը ողջունեց նոր արքայն ազգային սիրելի անուամբ մը, ԱՐՏԱՇԷՍ Գ (18-34 յ. Ք.) կոչելով զայն: Գերմանիկոս Պարթևաց հետ համաձայնութեան մը եկաւ, որուն համեմատ Արտաւան պիտի հրաժարէր Հայաստանէն, բայց Հռովմայեցիք ալ իր պետութեան ներքին գործերուն պիտի չխառնուէին և վոնոնը Ասորիքէն պիտի հեռա-

րոս անուամբ հարուստ արևելցիի մը հետ. ասոնք ծնան Փիլիթողորիս անուամբ աղջիկ մը, որ Պոնտոսի Պոլեմոն թագաւորին հետ ամուսնացաւ. այս ամուսնութեան պտուղն էր Զենոն.

ահաւասիկ իրեն ազգաբանութիւնը

Մ. Անտոնիոս եռապետ



ցնէին: Սա քիչ մը վերջ փորձեց Անտիոքէն Կիլիկիա փախչիլ և ճամբան հռովմայեցի զինուորէ մը սպանուեցաւ¹:



Գերմանիկոս Արտաշէս Գը կը պսակէ (թիւ 7)

Հայաստան կատարուած գործերու համար ծերակոյտը վճռեց որ Գերմանիկոս հանդիսաւոր մուտք մ'ընէ ի Հռովմ, իսկ ինքն Գերմանիկոս Հայաստանի մէջ դրամ կոխել տուաւ, որոնք Արտաշէսի պսակումը կը հռչակեն²:

Կը տեսնուի որ Արտաշէս Գ՛ ժամանակ խաղաղութիւն տիրած էր ի Հայս, որ այս շփոթ շրջանի մէջ հազուա-

1. Տակիտ Տար. 2, 56-58. Ստրաբոն 12, 3, 29. Սուետոն Կալիգուշա 1. Յովսեփոս Հնախ. 18, 2, 4. Mommsen Röm. Gesch. V 376.

2. Տակիտոս Տար. 2, 64. Cohen I էջ 138 թիւ 1 Germanicus Caesar Ti. Aug. f. իր գլուխը. Չախ Germanicus Artaxias Գերմանիկոս թագ կը դնէ Արտաշէսի գլխուն. արժաթ դրամ յամէն 18 յ. Ք.: (տես մեր թիւ 7):

գիւտ բան մ'է: Բայց անոր մահուանէն վերջ Արտաւան իր մեծ որդին ԱՐՇԱԿ Ա. (Իբր 34 յ. Ք.) դրաւ հոն¹, յուսալով Պարթևաց երկրորդական ճիւղի մը համար ապահովել Հայոց թագը:

Տիբերիոս թերևս լռելեայն թողուր կատարուածը. բայց Արտաւան հռովմէական մեծվայելչութիւնը վիրաւորեց ուրիշ գործերով, զորս Տիբեր չէր կրնար իրեն թոյլ տալ. այսինքն նա սկսաւ պահանջները շատցնել և ուզեց Կիւրոսի պետութիւնը վերականգնել: Ճիշտ նոյն ժամանակները Պարթևաստանէն ծածուկ պատգամաւորութիւն մը Հռովմ եկած էր և փոխանակ Արտաւանայ ուրիշ թագաւոր մը կը խնդրէր կայսրէն: Տիբեր Տրդատ անուամբ Արշակունի մը Արևելք խրկեց իբր ախոյեան Արտաւանայ և Ասորոց կուսակալ Լ. Վիտելիոսին հրաման տուաւ Տրդատին պաշտպան կենալ և Եփրատայ ափանց վրայ Միջագետքը գրաւել սպառնալ:

Դեռ ասոնք չկատարուած կայսրը միանգամայն հրամայեց ՄԻ ՀՐԴԱՏԱՅ (35-51 ընդհատութեամբ), որ վրաց Փարսման թագաւորին եղբայրն էր, տիրանալ Հայոց

1. Տակիտ տար. 6, 31. Սուետոն Տիբեր 41. Դիոն 58, 26:

գահին¹: Վրացիք Արշակայ սպասաւորները կաշառելով զայն սպաննել տուին, և Միհրդատ որ շրջակայ փոքր թագաւորներէն և գլխաւորապէս իր եղբօրմէն ահագին օգնութիւն գտած էր, գրաւեց Արտաշատը (35): Արտաւան մեծ բանակներ տուաւ իր որդւոյն Որոտայ, որ երթայ իր եղբօր վրէժը առնէ և Հայոց թագին տիրանայ: Վրացիք Աղուանները շահած էին և Փարսման կասպից դռները բանալով Սարմատները ի Հայս խուժել տուած էր: Որոտ սկզբան չուզեց պատերազմ տալ, բայց Փարսման նախատինքներով գրգռեց Պարթևները և պատերազմ որոշուեցաւ: Պարթևք հեծեալ միայն ունէին, մինչ Վրացիք բացի հեծեալներէն և լեռնոտ վայրերու մէջ կռուելու վարժութեանէն, նաև զօրաւոր հետևակազնդեր ունէին. կռիւին մէջ հետևակ Սարմատները յանդրգնաբար մօտէն սրով պատերազմելով մեծ վնասներ հասուցին Պարթևաց և Փարսման Որոտին պատահելով յարձակեցաւ անոր վրայ, և վասնզի աւելի քաջայանդուզն էր՝ վիրաւորեց Որոտը. Պարթևք կարծելով որ իրենց արքայորդին սպանուած

1. Տակիտ Տար. 6, 32. Դիոն 58, 26. Պետրոս Պատրիկիոս ի FHG IV 184:

է քաշուեցան պատերազմէն, յաղթուածիւնը թողլով վրաց¹ :

Այս լուրին վրայ Արտաւան փութաց (36) իր պետութեան բոլոր ուժերովը . վասնզի դուրսը Արշակունեաց պատիւը իսկ ներսը իրեն վարկը վտանգի մէջ էին : Առաջին բաղխումը նպաստաւոր էր վրաց, տեղեաց հմտութեան պատճառաւ . բայց դեռ հեռի էին յաղթող ըլլալէ : Պէտք էր անգամ մ'ալ զէնքերու բաղդը փորձել :

Բայց ճիշդ այդ ժամանակին է որ Տրդատ հասած էր Պարթևաց սահմանները և իր կուսակիցներէն թագաւոր հռչակուած . միւս կողմանէ վիտելիոս սպառնաց լեզէոններով պատերազմ բանալ Միջագետքի մէջ : Արտաւան ստիպուեցաւ թողուլ Հայաստանը և չկրցաւ և ոչ իսկ իր աթոռը դառնալ, այլ փախստեամբ դիմեց ի Սկիւթս : Բայց շուտով պարթև ազգասէրներու քով ոգին արթնցաւ . Տրդատը լեզէոններ մինչև Եփրատ բերած էին², ուրեմն ան գործիք մը պիտի ըլլար կայսեր . այս մտածութիւնը իրենց ազգային գոռոզութիւնը կը վիրաւորէր : Ուստի անմիջա-

1. Տակիտ Տար. 6, 33-35. Gutschmid, Gesch. Irans 120-21.

2. Տակիտ Տար. 6, 36-37.

պէս Արտաւանը ետ կանչեցին և քաջ ար-
սորեալը Տրդատը հալածեց մինչեւ Ասո-
րիք:

Հաւանականաբար միևնոյն ժամանակն
(36) է, որ ան իր որդւոց վրէժը առաւ
ի Հայս, հալածելով Միհրդատը, որ իր
գլուխը զարդարած էր հայկական խոյրով,
և հոն վերստին հաստատելով Պարթևաց
ազդեցութիւնը¹: Միհրդատ ի Հռովմ շրդ-
թայի զարնուեցաւ Կալիգուլայի հրամա-
նաւ, բայց մեզի ծանօթ չեն այս պատ-
ժին պատճառները²:

Արտաւան մեռաւ 40ին վերջերը, բայց
իր Գոտարզ և Վարդան որդւոց մէջ գա-
հակալութեան կռիւները երկար տևեցին,
այնպէս որ Պարթևները անկարող էին ի-
րենց արտաքին շահերը պաշտպանելու:
Փարսման Վրաց թագաւորը, անդադար
Հռովմ կ'իմացնէր այս ներքին երկպա-
ռակութիւնները, և վերջապէս կղողիոս
կայսրը Միհրդատը լուծեց շղթայներէն և
կրկին անգամ Հայաստան դրկեց (42)³:
Վրացի գնդերով դաշտային տեղեր, իսկ

1. Ասիկայ կը հետևի Տակիր Տար. 11, 8-9էն:

2. Տակիր Տար. 11, 8-9. Գիոն 60, 8. Սենեկա De
tranquillitate animi 11. Սուետոն Կալիգոնչա 14.
Պլինիոս 6, 5, 3:

3. Տակիրոս Տար. 11, 8. Գիոն 60, 8. Mommsen
RG V 379-80. Gaheis առ PW Claudius 256. Ո-

Հոովմայեցի լեզէոնականներով բերդերը նուաճուեցան. վասնզի Հայերը այլևս դիմադրութիւն չըրին, երբ Դիմոնաքս պարթեւ զօրավարը ճակատի մը մէջ յաղթուեցաւ: Իսկ Կողիս արքայ Փոքր Հայոց, զոր նախարարներէն մէկ մասը թագաւոր ընտրել կ'ուզէր, Կղաւղիոսի նամակով մը ստիպուեցաւ հեռու կենալ:

Այս կերպով աշխարհը անձնատուր եղաւ Միհրդատայ, որ սկսաւ աւելի անգութ վարուիլ քան առաջ¹: Հայաստան Գառնի բերդին մէջ մնաց Հոովմայեցի գունդ մը ի պաշտպանութիւն թագաւորին: Այսուհանդերձ Վարդան, որ Գոտարզը յաղթած էր, փորձեց Հայաստանը կրկին գրաւել. բայց Վիբիոս Մարտոս, կուսակալ Ասորուոց (42-44), սպառնաց հոովմէական միջամտութիւն ընել և Վարդան, որու աշխարհին ներքին գործերը դեռ

մանք, ինչպէս Dessau, Prosopogr. II 457 Միհրդատայ դարձը 47ին կը դնեն, վասն զի Տակիտոս 11, 8 զայն այդ տարուան մէջ կը պատմէ: Սակայն Տակիտոս հոն նախորդ տարիներու պատմութիւնը կ'ընէ. վասն զի ըստ Տակիտեայ 11, 9-10 Վարդան Միհրդատայ կը սպառնայ, բայց Վարդան արդէն 45ին վախճանած է նոյն իսկ ըստ Prosopogr. III 175ին. Gutschmid, Gesch. Ir. 127:

1. Տակիտ Տար. 11, 9:

բողոքովին կարգի մտած չէին, չհամար-
ձակեցաւ զէնքով պատասխանել¹ :

Միհրդատ Հռովմայեցւոց պաշտպանու-
թեամբ ազատած էր Պարթևաց սպառնա-
լիքէն և ինքզինքը ապահով կը կարծէր.
Բայց 51ին յանկարծ քաղաքական այն-
պիսի փոթորիկ մը փրթաւ, որ զինքը կո-
րուստեան վիհը նետեց: Իր եղբայրը Փա-
րսաման յանդուզն և փառասէր որդի մ'ու-
նէր Հ Ռ Ա Դ Ա Մ Ի Ջ Դ (51 - 53) անուամբ,
որ վրաց թագին կը ցանկար: Նենգամիտ
Փարսմանը վախցաւ երիտասարդին դիտա-
ւորութիւններէն և Հայոց աշխարհը ցուց-
նելով ըսաւ անոր. Հայաստանը ես տուի
Միհրդատայ, հալածելով անկից Պարթև-
ները, զնա՛ և դու տիրէ՛ անոր: Հռադամիզդ
նախ հայ նախարարներէն շատերը իրեն
կողմ շահեցաւ, յետոյ հօրմէն ընդունած
բանակով մը Միհրդատայ վրայ քալեց,
որ ստիպուեցաւ Քառնի² բերդը Հռովմա-
յեցի զօրաց քով ապաստանիլ, որոց զօ-
րավարն էր կելիոս Պոլլիոն, և հոն պա-
շարեց զայն: Հռովմայեցիք նախ բողոքե-

1. Տակիտ Տար. 11, 10. Gutschmid, Gesch. I-
rans 126:

2. Հիւբշման, Հին Հայոց տեղւոյ անունները էջ 252:
Այսօրուան Երեւանու արևելակողմ, Ազատ գետին վը-
րայ տեղ մը:

ցին, բայց Պուլլիոն շուտով յաղթուեցաւ
 Հռադամիզդի կաշառքին բազմութենէն և
 կայսրմէ դրուած թագաւորը մատնեց յա-
 փրշտակիչին ձեռքը, իբր թէ խաղաղու-
 թեան դաշինք պիտի դնեն: Հռադամիզդ
 նախ գրկախառնուեցաւ անոր հետ, յետոյ
 երգուաւ որ ոչ սրով ոչ թոյնով պիտի
 սպաննէր զայն: Դաշինքը երգմամբ կնքելու
 համար մերձակայ անտառ մը տարաւ Միհր-
 դատը, աստուածոց սեղանի մը մօտերը,
 և վասնզի սովորութիւն էր որ երգումը
 նեւու համար թագաւորը աջ ձեռաց ճկոյթ
 մատերը իրարու կը կապէին և հոն ժո-
 դովուած արիւնէն կաթիլներ հանելով կը
 խառնէին և կը խմէին, ուստի թելը կա-
 պող մարդը յանկարծ գետին ինկաւ և
 Միհրդատի ոտքերէն բռնելով զայն գե-
 տին փռեց, անկեալին ոտքը կապեցին և
 քարշեցին, բայց Հռադամիզդ իր խօսքը
 պահելու համար զայն սրով չսպաննեց,
 այլ ծանր և շատ շորեր դիզելով անոր
 վրայ՝ խղղեց: Նոյն վախճանը ունեցան
 Միհրդատայ կինը, որ քոյր մ'էր Հռադա-
 միզդայ, և անոր որդիքը: Հայ ամբոխը
 անկարեկիր դիտեց Միհրդատայ մահը և
 նախատինքներով միայն ծածկեց անոր ե-
 րեսը՝ իբր անգութ բռնաւորի մը¹:

1. Տակիտ Տար. 12, 44-47.

Ասորւոց կուսակալն Ումիտիոս կուսադրատոս և իր խորհրդականները հաճութեամբ լսեցին կատարուածները. վասնզի բարբարոսաց շփոթութիւնները կը դիւրացունէին Հռովմայեցւոց գործը: Բայց որպէս զի կարծել չտան թէ ոճիր մը կը հաստատեն, հրաման դրկեցին Փարսմանայ որ իր որդւովը ելնէ Հայաստանէն¹:

Բայց այդ միջոցին Յուլիոս Պելիկնոս, կառավարիչ կապադովկիոյ և կայսեր սիրելի անձ մը, բանակով մը մտաւ ի Հայս, զայն վերստին հռովմէական ընելու համար: Սակայն նա Հայերէն յարձակում կրեց և իր զօրքէն ալ թողուելով ապաւինեցաւ Հռադամիզդի քով: Ասոր ընծայներէն կաշառուելով յորդորեց զայն որ իր ներկայութեան թագ և արքունի նշաններ առնու: Այս լուրերուն վրայ կղաւղիոս կայսրը Հայաստան դրկեց Ասորւոց նոր կուսակալն Հելուետիոս Պրիսկոսը, որ գործերը կարգի բերէ և երկիրը անդորրացնէ:

Հայաստանի մէջ կը տեսնուի որ պարթևական կուսակցութիւնը Հռովմայ և անկէ պաշտպանուած ատելի վրացւոյն դէմ պատերազմը սկսած էր: Պրիսկոս քիչ մը վերջ կայսրէն հրաման ընդունեցաւ Հա-

1. Տակիտ Տար. 12, 48:

յաստանէն դուրս ելնել, վասն զի Պարթեւաց թագաւորին սպառնալիքները և Պարթևական պատերազմի մը լուրը Հռովմ հասած էր (51 յ. Ք.)¹:

1. Տակիտ Տար. 12, 49:

ՄԱՍՆ Գ.

ՊԱՐԹԵՒ ԹԱԳԱԻՈՐՆԵՐ

Կ Ա Մ

ԱՐՇԱԿՈՒՆԵԱՅ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

Հայոց թագին համար ծագած վերջին շփոթութեանց ժամանակ՝ պարթև արքունեաց մէջ մեծ և հազուագիւտ դէպք մը տեղի կ'ունենար. այսինքն վաղարշ Ս. (51-77)¹ իր երկու եղբարց Բակուրայ և Տրդատայ հաւանութեամբ առանց կռուի Արշակունեաց զահր կը բարձրանար: Այս հաւանութենը սակայն արդիւնք էր փոխադարձ զիջողութեան մը. երկու եղբայրներէն մէկը Մարաց իսկ միւսը Հայոց թագը պէտք էին կրել: Այս որոշողութեան անմիջապէս յաջորդեց գործը: Կորովի և պողովատիկ կամքով վաղարշը իր թագաւորութեան երկրորդ տարին հզօր բա-

1. Հմմտ. Mommsen RG V 380.

նակով մը Բակուրը Մարաց իսկ ՏՐԴԱՏԸ
(իրականին 52էն, պաշտօնապէս 66-75...)
Հայոց գահին վրայ դրաւ : Վասնզի ան
համարեցաւ թէ այլևս ժամանակը հասած
էր Արշակունեաց երկրորդական
ճիւղ մը հիմնել Հայաստանի
մէջ¹ :

Անտոնիոսի ոճիրէն ի վեր Պարթևները
բաւական առիթ ունէին իրենց ազդեցու-
թիւնը տարածելու Հայաստանի վրայ :

1. Պարսկաստանի մէջ Աքեմենեանց անկումէն վերջ
զօրացաւ Պարթև ցեղը և անոնց առաջին թագաւորը Ար-
շակ նոր հարստութիւն մը հիմնեց, որ Արշակունի
կոչուեցաւ : Պարսկաստանի իշխողները ձգտում մ'ունէին
Հայոց աշխարհը պարսկային նահանգ մ'ընելու : Աքե-
մենեաններէն Գարեհ Վշտասպեայ նախ Հայոց անկա-
խութիւնը ջնջեց (իբր 518 ն. Ք.) : Արշակունիներէն ա-
ռաջին թագաւորները փորձեցին Արտաշէս Աի կանգնած
հայկական թագաւորութիւնը կործանել, բայց Տիգրան
Բի և անոր նախորդներու կատաղի դիմադրութեան և
յետոյ Հռովմայեցիներու արգելքին հանդիպելով, և տա-
կաւին այդ հին ժամանակներ այնչափ զօրաւոր չլլալով՝
ստիպուեցան Հայոց անկախութիւնը յարգել, բայց վեր-
ջը հոն իրենցմէ Արշակունի մը դնելով : Սասանեան-
ները առաջին նպաստաւոր առիթին Հայաստանը Պարսից
մարզ մ'ըրին : Իրերը այսպէս ըլլալով ինծի միամտու-
թիւն կը թուի հաւատալը, — մանաւանդ որ բացի Խո-
րենացիէն պատմական ուրիշ որ և է վկայութիւն կը
պակսի և պէտք էր բնականապէս պակսիլ, — թէ Հա-
յաստանի մէջ շփոթութիւն տիրած և օրինաւոր թագա-
ւորութիւն մը չեղած հին ժամանակի մը մէջ՝ Պարսից
Արշակ Աը շատ հայասէր գտնուած ըլլայ, և Հայերը
ազատելով ու անոնց թագաւորութիւն մը շնորհելով՝ իր
Վաղարշակ կոչուած եղբայրը անոնց վրայ թագաւոր
կարգած ըլլայ :

Մինչև այդ ժամանակ Հայաստան անոնց մրցակից ախոյեան եղած էր: Արտաշէս Բ պարագայներէ բռնադատուած՝ Պարթևաց հետ զիջող և բարեկամական քաղաքականութիւն մը սկսաւ, զոր իր յաջորդները շարունակեցին, բացի անոնցմէ որոնք իրենց թագը Հռովմայ կը պարտէին: Այս կերպով միայն կարող եղան Արտաշէսեան հարստութեան վերջին թագաւորները իրենց իրաւունքները պաշտպանել ընդդէմ Հռովմայ: Ինչպէս արդէն դիտեցինք, հայ ժողովուրդը շատ մը հասարակաց կէտեր ունէր բարուց և կրօնից մէջ Պարթևաց հետ, և մասնաւորապէս նախարարական մասը կապուած էր անոնց հետ խնամութիւններով. ուստի Հայք օրէ օր աւելի կը մօտենային Արշակունիներու և անոնց մէջ կը տեսնէին իրենց բնական պաշտպանները ընդդէմ Արևմտեայց: Վասնզի Արևմուտքը սոսկ նուաստացուցիչ քաղաքականութիւն մը բռնած էր Հայոց հանդէպ, անոր համար ևս քիչ համակրելի էր ժողովրդեան:

Թէեւ ի սկզբան Հայերը քիչ մը նախանձոտ էին Պարթևաց, բայց ընդհանրապէս հաւան էին անոնց Հայաստան մրտնելուն: Ազգային կուսակցութիւնը, որ զօրաւորագոյնն էր, տակաւ առ տակաւ փո-

խուեցաւ հայ-պարթևական կուսակցու-
թեան մը: Այս բանս կը տեսնենք մենք
կոիւներու բովանդակ ընթացքին մէջ, ո-
րոնք 16էն մինչև 62 տեւցին: Հայերը
կը հալածեն Հռովմայեցին և Վրացին բայց
ոչ երբէք Արշակունի մը. անոնք կը պա-
տերազմին Պարթևաց շարքերուն մէջ: Ար-
շակունեաց հանդէպ համակրութեան այս
զգացումը երթալով կը զօրանայ հայ ժո-
ղովրդին մէջ: Արտաւանայ և Վարդանայ
ժամանակ, որոնք Հայաստանը գրեթէ տասը
տարի պարթևական ազդեցութեան տակ
պահեցին, այս համակրութիւնը տակաւին
նուազ է, բայց Վաղարշ Ա՛ ժամանակ ա-
նիկայ արդէն խոր արմատ ձգած է ժո-
ղովրդեան սրտին մէջ: Կորբուղոն իր ար-
շաւանքին ատեն, 58-59, Հայաստանի
ամէն կողմ Արշակունեաց կուսակիցներու
կը հանդիպի. Հռադամիզդ և Տիգրան Զ
կը հալածուին ի նպաստ Արշակունւոյ
մը¹: Հրանդէայի մօտ Հայք և Պարթևք
միասին կը պաշարեն լեզէոնները:

Այս իրականութեանց հանդէպ, որոնք
բաւական յստակ կերպով կը ցուցնեն ժո-
ղովրդեան միտումը դէպի Պարթևաց կող-

1. Տակիտոս տար. 14,26 ոչ հաճոշքեամբ ընդոշ-
նոշեցաշ, ունակց քով Արշակունեաց սերբ դեռ տեշեշուն
համար:

մը, պէտք է Տակիտոսի Հայոց անորոշու-
թեան և տարտամութեան մասին ըրած
բացատրութիւնները աւելի մեղմ իմաստով
մը հասկնալ¹: Միւս կողմանէ սակայն
պայծառ կը տեսնուի, որ հայ ժողովուր-
դը, վարժուած իր բազմազան հզօրագոյններու
ձեռքով որոշուած տեսնելու, քիչ վատա-
հութիւն ունի իր յատուկ ուժերուն վրայ:
Սոյն նուազ ինքնավատահութիւնը ամե-
նէն աւելի կը նշմարուի այս կռիւններու
մէջ, ուր Հայուն անպատերազմասէր և
խաղաղ նկարագիրը իր բոլոր ընդարձա-
կութեամբը երևան կու գայ: Հայը արդէն
ընդհանուր քիչ հասկցած է իր լեռները
ազատութեան միջնաբերդեր ընել:

Սակայն միայն ժողովրդեան նկարա-
գիրը չէ, այլ նաև Հայաստանի աշխար-
հագրական դիրքը պատճառ մ'էր, որ եր-
կու մեծ պետութիւններ անոր տիրելու
համար ընդերկար կռուեցան: Երկուքէն
ոչ մէկը կրնար թոյլ տալ իր դրացւոյն
այդ երկրին բացարձակ տէր դառնալ:
Վասնզի Հայաստանի տիրողին համար դը-
ժուարին գործ մը չէր ասկից, իբրև ա-
նառիկ միջնաբերդէ մը, Միջագետքը և
Իրանը, կամ Ասորիքը և Փոքր Ասիան

1. Տակիտ տար. 12,50. 13,34. 14,23:

գրաւել: Բայց բնակչաց մասնաւոր հակու-
մը դէպի Արշակունեաց կողմը՝ Հայոց գա-
հը անդառնալի կերպով ապահովեց այս
վերջիններուս: Այսուհանդերձ Հայաստան
աշխարհը երբէք Պարթևաց չեղաւ: Հոովմ
այդ ոչ մէկ պարագայի մէջ կրնար թոյլ
տալ:

Արդ երբ Հայերը այսքան նպաստաւոր
տրամադրութիւններ ցոյց կու տային Ար-
շակունեաց հանդէպ, Պարթևական բանակ-
ներ բուռն կերպով մտան Հայաստան (52),
և Հռադամիզդ առանց դիմադրութիւն իսկ
փորձելու քաշուեցաւ անկից: Արտաշատ
և Տիգրանակերտ բացին իրենց դռները
քաջաց առջև: Բայց խիստ ձմեռ մը, պա-
րենի պակասութիւն և անոնց հետեանքով
ծագած հիւանդութիւն մը ստիպեցին Վա-
ղարշը իր բանակներով քաշուիլ իր աշ-
խարհը: Յաջորդ տարուան (53) գարնան
Հռադամիզդ, որուն անտարակոյս կ'օգ-
նէին կաւկասեան վարձկան զինուորներ,
կրկին գրաւեց Հայաստանը, ուր Տրդատ
առանց գունդերու մնացած էր: Բայց Հա-
յերը, թեև ծառայութեան վարժուած, չկըր-
ցան հանդուրժել անոր գործած անգը-
թութիւններուն և պաշարեցին զայն իր
արքունի դղեակին մէջ: Վայրագ երիտա-
սարդը և իր կինն Չենոբիա իրենց փրկու-

Թիւնը տեսան միայն ձիերու երագութեան մէջ և փախստեամբ ազատեցան . բայց ճամբան Չենոբիա յոգնելով և միանգամայն գերութեան նախատինքէն վախնալով խնդրեց ամուսինէն որ զինքը պատուաւոր մահով մը ազատէ : Հռադամիզդ սրովը վիրաւորեց իր թագուհին և զայն Երասխի հոսանքներուն տուաւ . բայց աւիքները զայն ամուսնը նետեցին և հովիւները կիսամեռ կինը գտնելով Արտաշատ բերին , ուր Տրդատ զայն դշխոյավայել կերպով խնամեց և պահեց¹ :

54 տարւոյն վերջերը Հոովմ լուր հասաւ թէ Պարթեւք դարձեալ գրաւեր են Հայաստանը : Ներոն (54-68), որ այդ ժամանակ տակաւին եօթնևտասնամեայ պատանի մ'էր, դեռ նոր կայսերական ծիրանին ընդունած էր : Այս լուրէն առաջանոր քով հասած էին հայկական պատգամաւորներ, որոնք անշուշտ Վրացւոյն հեռացուիլը կը խնդրէին, որուն իշխանութիւնը Հայոց անհանդուրժելի էր² : Հռա-

1. Տակիտ տար. 12, 50-51. հմմտ. Gutschmid, Gesch. Irans 129: Կղաւղիոսի ատեն երկու պատուիրակութիւններ կը յիշուին միեւնոյն ժամանակի մը մէջ, մէկը Հայոց միւսը Պարթեւաց, որոնք թատերական ներկայացման մը միջոց ծերակուտականներու հետ կը նստէին (Սուեատոն Կղազդիոս 25): Հաւանականաբար երկուքն ալ Վրացւոյն հեռացուիլը կը խնդրէին :

2. Տակիտ տար. 13, 5. Կասսիոս Դիոն 61, 3:

դամիզդ իր փախուստէն վերջ դարձեալ
Հայաստան մտած էր և հիմայ (54 ին)
դարձեալ բռնադատուած էր զայն Պար-
թեաց թողուլ և հեռանալ¹ :

Ներոն վճռեց ազդու կերպով բայց նպա-
տակի մը տանող ճամբով առաջ երթալ :
Այդ ժամանակ իրեն քով կային իբրև ի-
րեն խորհրդական կամ նախարարներ եր-
կու մեծ մարդիկ, Բիւրոս և Սենեկա :
Հռովմայ կայսերական արքունիքը սա ցա-
ւալի փորձառութիւնն ըրած էր, որ հա-
կառակ Հայաստանի մէջ իրենց ըրած ար-
շաւանքներու ընդհանրապէս յաղթական
վերջանալուն, հռովմէական իշխանութիւնը
հոն երբէք հաստատապէս արմատ ձգած
կամ տևական եղած չէր : Հազիւ թէ հռով-
մէական լեզէոնները հոնկից կը հեռանա-
յին, կը նուազէր նաև հռովմէական ազ-
դեցութիւնը : Նմանապէս շատ շահաւոր
չէր յարատև լեզէոններ պահել հոն, և սա-
կայն առանց այս ազդու միջոցին՝ վտանգ
կար որ Հայաստան Արշակունիներու ձեռ-
քը իյնար : Երկու մեծ պետութեանց մէջ
տևական խաղաղութիւն մը հաստատելու
համար պէտք էր նախ հայկական խնդիրը
լուծել :

1. Տակիտ տար. 13,6:

Կայսերական քաղաքագէտները գտան լուծում մը, որ ներկայ պարագայներու մէջ լաւագոյնն ըլլալ կը թուի: Այսինքն, պահելով Հայոց ազգային ինքնավարութիւնը պէտք էր երկու պետութեանց Հայոց վրայ ազդեցութեան սահմանը բաժնել և որոշել, և այն՝ հետևեալ կերպով. Պարթևաց թագաւորը պէտք էր ընտրել իր արքունիքէն Արշակունի իշխան մը Հայոց գահին համար, բայց այդ իշխանը պէտք էր Հայոց թագը կայսեր ձեռքէն ընդունել իբր հռովմէական աւատ մը:

Սակայն մինչև որ այս սկզբունքը Պարթևներէն ընդունուեցաւ, որոնք Հայոց թագաւորին թէ դնողը և թէ հաստատողը կ'ուզէին ըլլալ, Հռովմ բռնադատուեցաւ իր արծիւները շատ անգամներ Եփրատայ և Երասխի ափանց վրայ ցուցնել, ինչպէս որ հիմայ պիտի տեսնենք:

Հայաստանի երկրորդ գրաւման լուրին վրայ Ներոն հրամայեց 24,000 լեզէոնականներէ ձեացած բանակ մը կազմել, որ դեռ շատ ստուարացաւ օգնականներու գրնդերով: Այս բանակին պաշտօնը պիտի ըլլար կայսերական աւատը, Հայաստանը, ազատել և վերստին հռովմէական ընել: Արշաւանքին առաջնորդութիւնը բաժնուեցաւ Ումիտիոս Կուադրատոսի, որ կուսա-

կալ էր Ասորուոց (51-60), և կն. Դոմե-
տիոս կորբոսողոնի մէջ, որ կապաղով-
կիոյ և Գաղատիոյ կուսակալն էր: Միան-
գամայն հրաման ղրկուեցաւ Ազրիպպաս
Պաղեստինու և Անտիոքոս կոմագինեցւոց
Թագաւորներուն որ, մինչ լեզէոնները Հա-
յաստան կը յարձկին՝ իրենք ալ Պարթևաց
պետութեան մէջ արշաւանք գործեն: Այս
բանակներուն կոնակը պատսպարելու և
անոնց պարենաւորումը ապահովելու հա-
մար Ներոն Փոքր Հայքը տուաւ Արիստո-
բուղայ, որ էր որդի Քաղկիդեայ Հերով-
դէս Թագաւորին, և Ծոփքը Սոյեմոսին, որ
Եմեսիոյ Թագաւորաց ցեղէն իշխան մ'էր,
երկուքն ալ Թագաւոր անուանելով:

Սակայն պարթև և հռովմայեցի բանակ-
ները ձեռք ձեռքի չեկան. վասնզի վա-
ղարշ երկու հռովմայեցի սպարապետներու
առաջարկին հետևելով կակղցաւ, և քանի
մը արշակունի իշխաններ, որոնց փառա-
սիրութենէն ինքը կը վախնար, պատանդ
ղրկեց Հռովմ. իսկ ինքն խաղաղութեամբ
հեռացաւ իւ աշխարհը, մեծագոյն պա-
տրաստութիւններու համար ժամանակ շա-
հելու դիտմամբ (55)¹:

1. Տակիտ տար. 13,5-9. Դիոն 62,19. Յովսէպոս
Հնախ. 20,5, Հր. պտրզմ. 7,27.

Բայց այս խաղաղութիւնը պէտք չէ շատ լուրջ ըմբռնել: Յիրաւի Վաղարշ և Հռովմայեցիք քաշուեցան Հայաստանէն, բայց Տրդատ մնաց հոն, նա թագաւոր էր հոն և Հայք կը փափաքէին զինքը¹: Յայտնի կեղծիքով մը երկու պետութիւններն ալ Տրդատայ գործը Պարթևաց գործէն կը զատէին:

Յաջորդ տարւոյն (56) սկիզբները երկու տէրութիւններու մէջ յարաբերութիւնները սաստիկ լարուած վիճակի մը մէջ էին: Կորբուղոն չէր ուզէր թոյլ տալ որ Տրդատ առանց կայսեր հաւանութեան Հայոց զահը նստի, իսկ Վաղարշ կայսերական հաւանութիւն մը չէր ուզէր ճանչնալ և միտքը դրած էր ամէն գնով իր եղբայրը պաշտպանել: Սակայն Հռովմայեցին 56-57ի ժամանակը զինամար և զինուորական հրահանգներով անցուցած էր և 58ի զարնան առ նուազն 30,000 հոգիէ ձևացած բարեկազմ բանակով մը հիւսիսակողմէն

1. Այս կը հետևի Տակիտոսի տար. 13,34. 37. 39 և 15,6 զլուխներէն: Թէ այս համաձայնութիւնը պարզ ձևականութիւն մ'էր և ատով ոչ Պարթևը բան մը կորսընցուց և ոչ Հռովմայեցին բան մը շահեցաւ, կը տեսնուի Տակիտոսի տար. 13,37-41 և 14,23-26 զլուխներէն, ուր Կորբուղոն յամին 58-59 ամէն կողմ Պարթևաց կուսակիցներու հանդիպեցաւ և ոչ մէկ քաղաք հռովմէական էր:

մտաւ Հայաստան և դիմեց դէպի Կարնոյ
բարձրաւանդակը ¹ :

Տրդատ բողոքեց իրեն և իր եղբօր ա-
նուամբ. բայց Կորբուղոն, որ շատ լաւ
գիտէր թէ Վաղարշ այդ ժամանակ Վրկա-
նաց ապստամբութեամբ մը զբաղած էր,
իրեն առաջարկեց Հայաստանի թագը կայ-
սրէն խնդրել: Երբ այս առաջարկը մեր-
ժուեցաւ, Կորբուղոն յառաջ քալեց, առաւ
քանի մը բերդեր, աւերեց դժբաղդ երկրէն
բաւական մաս մը: Աւերման գործին մէջ
իր դաշնակիցները մեծագոյն դեր մը կը
խաղային, գլխաւորապէս Մոսկեանք և
Վրացիները, որոնց Փարսման թագաւորը,
յետ Հռադամիզը իբր դաւաճան մը սպան-
նելու, ամէն ջանք կը թափէր իր ոճիր-
ները մոռցնելու և դարձեալ Հռովմայեց-
ւոց սիրելի ըլլալու համար: Կորբուղոն
ձմեռը հաւանականաբար Հայաստանի մէջ
այսօրուան Կարսի մօտերը անցուց, և ԾԳի
գարնան դիմեց Արտաշատու վրայ ²: Ճամ-
բան Տրդատայ հետ փոքրիկ բաղխումներ
ունեցան, բայց Պարթևին բանակը միայն
այրուծիէ կազմուած ըլլալով չէր ուզեր
լեզէոնականներու հետ ճակատ առ ճակատ

1. Egli, Feldzüge in Armenien von 41-63, էջ
321. Mommsen RG V 385:

2. Egli տեղ էջ 323-4:

կոուիլ և վերջապէս թողուց Հայոց սահմանները և անյայտացաւ: Հռովմայեցիք մօտեցան Հայոց մայրաքաղաքին, որ Տըրդատէն լքուած յօժարակամ իր դռները բացաւ անոնց առջև: Բայց Կորբուղոն հոսինքզինքը ցուցուց իբրև ճշմարիտ ընկեր մը Լ. Մուամիոսին. ան Հռովմայ «դաշնակցաց» հին մայրաքաղաքը, որ կամաւոր կերպով իր դռները բացած և զինքը բարեկամաբար ընդունած էր, կրակի ճարակ տուաւ, խնայելով միայն մարդկանց կեանքին: Այս հրկիզելու որոշողութեան մէջ քաղաքական նպատակներու հետ նաև ունայնութիւն և թեթևամտութիւն պակաս չէին: Կործանման գլխաւոր պատճառը այն էր, որ Արտաշատ շատ ընդարձակ էր և ինքն բաւականաչափ զօրք չունէր թէ՛ քաղաքը պաշտպանելու և թէ՛ Տըրդատը հաւաքելու համար¹:

Արտաշատէն դիմեց Տիգրանակերտի վրայ և աշնան մօտերը, հաւանականաբար Պայազիտի, Մուշի և Պիթլիսի վրայէն, հասաւ այս դարձեալ ծաղկող մեծ քաղա-

1. Տակիտ տար. 13,34-41: Այս յաղթութեան վրայ Ներոն Armeniacus Հայկական տիտղոսը առաւ. միակ արձաթեայ դրամը տես Eckhel VI 263. Cohen I թիւ 2: Ուրեմն Armeniacus բացատրութիւնը նախ Ներոն կը գործածէ և ոչ թէ Վերոս, ինչպէս որ Rohden առ PW Armeniacus կը համարի:

քը¹ : Ճամբան շատ նեղութիւններ կրեց պարենի պակասութենէն և բնակչաց թըշնամութենէն, զորս ինքը զէնքով նուաճել ջանաց : Նմանապէս Տիգրանակերտ յօժարակամ բացաւ իր դռները (59) և ոսկեղէն պսակ մը ընդառաջ դրկեց Կորբուղոնի² : Բայց Հոովմայեցիք ամէն տեղ բարեկամաբար չընդունուեցան . Լեզերդա ամրոցին մէջ հայ երիտասարդութիւնը դիւցազնական դիմադրութիւն մ'ըրաւ Հոովմայեցւոց : Բայց քանի որ Վաղարշ Վրկանաց պատերազմով խաբանուած էր իր ուժերը աս կողմ դարձնելու, հայ – պարթևական կուսակցութեան դիւցազնութիւնները շատ չէին զօրէր³ :

Հակառակ Կորբուղոնի հռչակեալ մեծագործութեանց, ինչ որ Տակիտոսի նկարագրութենէն կը տեսնուի, ՏԻՓՐԱՆ Զ⁴ (իբր 60–61), զոր Ներոն Հայոց թագաւոր պսակած և դրկած էր, սիրով չընդունուեցաւ Հայերէն . վասնզի տակաւին շատեր Արշակունիները կը գերադասէին :

1. Egli Feldzüge in Armenien von 41–53 էջ 324:

2. Փրոնտինոս 2, 9, 5 հակառակը կը հաստատէ երբ կ'ըսէ. Հայերը կը կարծոշեին յամառաբար պաշարման դիմադրել:

3. Տակիտ տար. 14,23–25. Դիոն 62, 20:

4. Հմմտ. էջ 144 ծան. 3:

Կորբուղոն Տիգրանակերտի մէջ թագաւորին պաշտպանութեան համար թողուց հազար լեզէոնականներ, երեք գունդ օգնականաց զօրքերէն և երկու գումարտակ հեծեալներ, և յետ բոլոր շրջակայ թագաւորաց հրաման ղրկելու որ կրցածնին չափ Տիգրանայ օգնեն, եկաւ Անտիոք, ուր Ումիտիոս Կուադրատոս վախճանած էր, և Ասորուոց կուսակալութիւնը ստանձնեց¹ :

Թեթևամիտ և ստրկութեան վարժած Տիգրանը միանգամայն նաև անխոհեմ էր. ան հայկական սահմաններէն դուրս ելնելով սկսաւ աւազակային ասպատակութիւններ ընել դրացի Ադիաբենաց աշխարհը, որ մինչև նոյն ժամանակ Պարթեւաց աւատական երկիր մ'էր : Արշակունւոյ մը Հայաստանէն հալածուիլը, այլասերած Հրէի մը այս նախաստական վարումը, և ասոնցմէ աւելի Տրդատայ խօսուն լռութիւնը, սաստիկ կը վիրաւորէին պարթև մեծամեծներու և Արշակունի իշխանազուններու գոռոզութիւնը և կը զայրացնէին անոնց սիրտը դառն տժգոհութեամբ : Վաղարշ այլևս ազատ էր վրկանաց պատերազմէն. ան աւազանւոյ ժողովի մը մէջ Տրդատը հանդիսաւոր կերպով Հայոց թա-

1. Տակիտ տար. 14,26 :

գաւոր պսակեց և որոշուեցաւ որ առանց զոհողութեանց մեծութենէն ընկրկելու պէտք էր Տրդատը ամէն գնով այդ երկրին գահին վրայ վերստին դնել:

Նորապսակ թագաւորը Հայաստան տանելու գործը Մոնէզ զօրավարին յանձնուեցաւ. Վաղարշ ինքն անձամբ հոովմէական նահանգները պիտի արշաւէր: Մոնէզ ջանաց իր գալստեան համբաւէն առաջ հասնիլ Հայաստան. ան 61ի սկիզբները պաշարեց Տիգրանակերտը, ուր Հոովմայեցիք և անոնց պաշտպանեալ թագաւորը պատսպարուած էին: Կորբուղոն հոն դրկած էր երկու նոր լեգէոններ և ինքն ալ պատրաստուեցաւ Եփրատայ ափերը պաշտպանելու:

Ճիշդ չենք գիտեր թէ Տիգրանակերտի պաշարման միջոց ինչ անցաւ: Եթէ Տակիտոսի (որ է Կորբուղոնի) պատմածին նայինք, Պարթևք քաղաք պաշարելու արուեստին մէջ շատ ճարտար չըլլալով, գործը անյաջող եղաւ. Տիգրան հոն բաւական պաշար և զօրք ունէր, մինչդեռ Վաղարշ, որ այդ ժամանակ Մծբնայ մօտերը կը գտնուէր, իր հեծելագնդին համար ճարակի մեծ նեղութիւն կը կրէր, որովհետև մարախի անսովոր բազմութիւն մը խոտերը փճացուցած էր. Կորբուղոն

պատգամաւորի ձեռքով բողոքեց Վաղարշու
 շու և ըսաւ թէ, եթէ Պարթևք Հռովմա-
 յեցւոց բարեկամ և դաշնակից թագաւոր
 մը և հռովմէական լեզէոնները պաշարել
 շարունակեն, ինքն ալ պարթևական եր-
 կրի վրայ բանակ պիտի զարնէ: Վաղարշ
 պատասխան տուաւ, թէ ինքն պատգամա-
 ւորներ պիտի ղրկէր կայսեր՝ Հայաստանը
 Տրդատայ համար խնդրելու և խաղաղու-
 թիւնը հաստատելու համար: Միանգամայն
 հրաման ղրկեց Մոնէզի որ թողու պաշա-
 րումը և ինքը իր բանակներով հեռացաւ¹:

Բայց հոս Տակիտոս վայրկեան մը կ'ընդ-
 հատէ իր գլխաւոր աղբիւրը, որ են Կորբ-
 օւղոնի Յիշատակարանները, և թոյլ կու-
 տայ որ ականարկ մը նետենք բուն իրա-
 կանութեան վրայ: Շատերը, կ'ըսէ ան,
 այս գործերը մեծապէս կը գովէին, հա-
 մարելով զանոնք իբր արդիւնք մը թա-
 գաւորի երկիւղին և Կորբուղոնի սպառ-
 նալիքներուն, իսկ կային ուրիշներ, որոնք
 տարբեր կերպով կը մեկնէին: Այս վեր-
 ջիններս կ'ըսէին թէ, Կորբուղոն թագա-
 ւորին հետ ծածուկ համաձայնութիւն ը-
 րած է, այնպէս որ Վաղարշու հեռացած
 ժամանակ նաև Տիգրան Հայաստանէն ել-

1. Տակիտ տար. 15, 1-5. Յովսէպոս Հնախ. 20,4:

նէր. ապա թէ ոչ ինչո՞ւ համար հռոմ-
մէական բանակը Տիգրանակեր-
տէն հեռացած է. ինչո՞ւ համար խաղա-
ղութեան միջոց զայն կը թողունք, զոր
զէնքով պաշտպանած էինք. միթէ լաւա-
գո՞յն է կապաղովկիոյ մէջ ողորմելի խղիկ-
ներուն տակ ձմեռել քան գրաւուած երկրի
մը մայրաքաղաքին մէջ¹ :

Ինչպէս որ յայտնի կը տեսնուի, միայն
Վաղարշը չէ որ իր Պարթևներով կը թո-
ղու Հայաստանը, այլ նաև Հռովմայեցիք
իրենց պաշտպանեալ Տիգրանով, զոր հա-
ւանականաբար Հայերը լեգէոնաց մեկնե-
լէն անմիջապէս վերջ հալածեցին: Տակի-
տոսի բացատրութիւնը, *formidine regis
et Corbulonis minis*, քաղաւորիև վա-
խով և կորբուզոնի սպառնալիքներով, կա-
րելի է ճիշդ հակառակ դերերով հասկնալ² :
Վասնզի կորբուզոն չէր ուզեր Վաղարշու
հետ պատերազմիլ և իր մինչև այդ ժա-
մանակ վաստկած զինուորական համբաւը
վտանգի մէջ դնել: Այդ պատճառաւ ան
Հայաստանի պաշտպանութեան համար
կայսրէն մասնաւոր զօրավար մը խնդրած

1. Տակիտ տար. 15,6. 8:

2. Տես Յաշեղոշած, Դ. կորբուզոնի գրուածք իբր
աղբիւր իր գործոց:

էր¹, որ նոյն տարւոյն (61) վերջերը երեք լեգէոններու² գլուխ անցած հասաւ Կապադովկիա: Այս զօրավարն էր Կեսեն, նիոս Պետոս, որուն պիտի հնազանդէին նաև Պոնտացւոց Գաղատացւոց և Կապադովկացւոց օգնական զնդերը: Կորբուղոն ուրիշ երեք լեգէոններով³ Ասորիք մնաց, Եփրատի կողմը հսկելու համար:

Վաղարշու ղրկած պատգամաւորները դատարկ ձեռքերով ետ դարձած էին Հոովմէն և Պարթևք անմիջապէս գրաւեցին Հայաստանը, ուր հաւանականաբար Տըրդատ արդէն կը թագաւորէր: Պետոս 61ի աշնան մտաւ Հայաստան Տիգրանակերտը ետ առնելու դիտմամբ, և քանի մը ասպատակութիւններ և աւարառութիւններ ընելէն վերջ Կապադովկիա դարձաւ ձմեռելու համար: Բնականապէս Հայաստան միշտ Պարթևներէ գրաւուած էր, բայց Պետոս մեծազորով նամակ մը գրեց կայսեր, իբր թէ պատերազմը վերջացածի պէս է⁴:

1. Տակիտ տար. 15,6:

2. Չորրորդ, երկօտասաներորդ և հնգերորդ. այս վերջինս առաջ Մեգիա կը գտնուէր Պղաւտիոս Սիլանոսի հրամանին տակ, հմմտ. CIL 14 թիւ 3608, և յետոյ այդ զօրավարէն Հայաստան արշաւանքի ղրկուեցաւ, հմմտ. Տակիտ տար. 15,6, Rohden, Prosopogr. III 363:

3. Երրորդ, վեցերորդ, տասներորդ:

4. Տակիտ տար. 15,8:

Հետևեալ տարւոյն (62) գարնան լսուեցաւ պարթևական ահեղ բանակի մը հասնիլը, ինքնին Վաղարշու առաջնորդութեամբ: Սա վայրկեան մը թողուց Ասորիքը, (թերևս Կորբուղոնի հետ ըրած գաղտնի համաձայնութեան մը հետևանքով, որով Կորբուղոն կրնար խոստացած ըլլալ կարելի եղածին չափ Հայաստանէն հեռի կենալ), և եկաւ Հայաստան, որուն արևմտեան սահմանին վրայ Պետոսի բանակը կեցած էր: Պետոս 3000 լեզէոնականներ Տաւրոսի վրայ, իր Պաննոնիացի հեծեալները դաշտին մէկ կողմը, և ուրիշ պահապան զնդեր ուրիշ տեղեր զետեղած էր Պարթևաց անցքը արգիլելու համար. իսկ ինքն բուն բանակը զարկած էր Հրանդէա (Հրանդական?) կոչուած ամուր տեղ մը Արածանիի եզերքին վրայ: Բայց Վաղարշու զօրքերը անդիմադրելի հեղեղի մը պէս իրենց հոսանքին տակ կոխելով ջնջեցին՝ անցքերը խափանող Հոովմայեցիները, և յառաջ վազեցին: Մահէն ազատող քանի մը սարսափահար փախստականներ հասած էին Պետոսի բանակը և զօրաց առջև թափառորին բուն զօրութիւնը և անոր զնդերուն բազմութիւնը պատմելով զամէնքը վախով և սարսափով լեցուցած էին: Վաղարշ հասաւ և պաշարեց հոովմէական ճամբարը Հրանդէայի մէջ:

Պետոս, որ քիչ մ'առաջ կը սպառնար Հայոց վրայ հարկ և Հռովմայեցւոց օրէնքները դնել, այժմ ամենէն աւելի վհատածն էր: Ինքը և իր բանակը շուտով արուժիւն և յոյսը կորսնցուցին և սկսան կորբուզունէն օգնութիւն խնդրել, որ միշտ դանդաղեցաւ զայն բերելու: Պետոսի ուրիշ համբայ չմնաց բայց եթէ Պարթևաց հետ բանակցիլ: Առաջին նամակին կարճ պատասխանեց Վաղարշ, թէ ինքն իր Բակուր և Տրդատ եղբայրներուն կը սպասէր, այդ տեղը և այդ ժամանակը ընտրած էին Հայաստանի վրայ խորհելու համար. իսկ աստուածք Արշակունիներու փառքին արժանի համարեցին՝ նաև Հռովմայեցւոց լեզէոններուն մասին վճռել: Պետոս յետոյ պատգամաւորներու ձեռքով թագաւորին հետ խօսակցիլ ուզեց և սա իր ասպահապետ Վասակը զրկեց, որ Պետոսի խօսակցութեանց պատասխանեց թէ, Հռովմայեցւոց Հայաստան գրաւելը և զայն նուէր ընելը սոսկ երևոյթ մ'էր, զօրութեամբ անոր տիրողները Պարթևներն եղած էին:

Բայց Վաղարշ գործնական և լուրջ քաղաքագէտ մ'էր. ան խնդիրը ծայրայեղութեան չտարաւ, իր նպատակներէն էր Պարթևաց ուժը ցուցնել և Հռովմայեցւոց խոնարհիլը տեսնել: Այդ երկու կէտերն ալ

այժմ կատարուած էին: Ուստի երկրորդ օր երբ Պետոս կրկին անգամ խաղաղութեան պայմաններ խնդրեց՝ թագաւորը չմերժեց խնդիրքը, և Ադիաբէնի Մոնոբազ թագաւորը իբրև վկայ կարգելով կնքուեցաւ հետևեալ դաշինքը: Վաղարշ թոյլ պիտի տար որ լեգէոնները պաշարումէ ազատուին, բայց ո՛չ մէկ Հռովմայեցի զօրք պիտի չմնար Հայոց սահմանները և հռովմէական ամրոցները և բանակին պարենը Պարթևաց պիտի յանձնուէին, որոց աւանդումէն վերջ Վաղարշ պատգամաւորներ պիտի դրկէր Ներոնի¹:

Ասոր յաջորդեց լեգէոնաց մեկնումը, որ աւելի փախուստի մը կը նմանէր: Թագաւորին պատուիրելովը Պետոս Արածանիի վրայ կամուրջ մը շինել տուած էր Պարթևաց համար, և Հայերը զինուորաց ձեռքէն ետ յափշտակեցին այն ամէն ինչ, զորս ասոնք բնակչութիւնը կողոպտելով առած էին: Նոյն իսկ զրոյց տարածուեցաւ թէ, լեգէոնները լծոյ տակէն անցած ըլլան²: Կորբուղոն, որ Ասորիքէն ճամբայ ելնելով Կոմագինէի և Կապադովկիոյ վրայէն Հայաստան կը դիմէր, Եփրատայ մօտ

1. Տակիտ տար. 15,7-14. Դիոն 62, 20-21:

2. Տակիտ տար, 15,15. Սուետոն Ներոն 39:

պատահեցաւ Պետոսի զօրաց: Երկու բանակներու հանդիպումը սրտաշարժ էր: Պետոսի առաջարկ մը, թէ բովանդակ միացեալ ուժերով դարձեալ Հայաստան մտնեն, Կորբուզոն բացարձակ կերպով մերժեց: Յետոյ Պետոս գնաց Կապադովկիա՝ ձմերելու համար, իսկ Կորբուզոն դարձաւ իր նահանգը¹: Վաղարշի խնդրանքին վրայ Կորբուզոն Եփրատայ ափանց մօտ զետեղած հռովմէական զնդերը վերցուց: Այնուհետև Վաղարշ հեռացաւ պատերազմի ասպարէզէն: Թէ Կորբուզոնի պահանջին վրայ յաղթական Պարթևները Հայաստանը թողած ըլլան և Հայք առանց դատաւորի մնացած ըլլան, *Armenii sine arbitro relictis*, ինծի շատ անհաւանական կը թուի: Բնականաբար վերջը վերջը Վաղարշ պէտք էր իր բնիկ աշխարհը դառնալ, բայց Տըրդատ Հայաստան մնաց իր Պարթևներով²:

Պետոսի յաղթութեան համար Հռովմայ մէջ յաղթական կամարներ կանգնուեցան և հանդէսներ կատարուեցան!

63ի գարնան Պարթևաց պատգամաւորները հասան Հռովմ և Տըրդատայ Հայոց գահին վրայ հաստատուիլը խնդրեցին:

1. Տակիտ տար. 15,15-17:

2. Տակիտ տար. 15,17. Դիոն 62,22:

Բայց Ներոն տեսաւ որ իր սպարապետին տուած տեղեկութիւնը և պատգամաւորներուն ըսածները բոլորովին իրարմէ տարբեր են: Ան ատեն Ներոն դառնալով այն հարիւրապետին, որ պատգամաւորաց ընկերացած էր, հարցուց թէ Հայաստանի մէջ իրաց վիճակը ի՞նչ է. Բոլոր Հռովմայեցիները անկից դուրս ելան, պատասխանեց հարիւրապետը: Ասոր վրայ կայսրը հասկցաւ թէ Պարթևաց ըրածը սոսկ հեղնութիւն մ'էր. անոնք կը խնդրէին բան մը զոր արդէն զէնքի զօրութեամբ առած էին: Պատգամաւորները ետ դարձուեցան առանց անոնց խնդրաքը կատարելու, վասնզի այդպիսի հանգամանքներու մէջ աւատ մը տալ ծաղրական պիտի ըլլար և պարտութեան մը հաւասար պիտի նկատուէր: Այնու հանդերձ Ներոն անոնց ընծայներ տուաւ, հասկցնելու համար որ ինքն թշնամութիւն չուզեր և կը փափագի Հայոց թագը տալ Տրդատայ, բայց միայն Հռովմայ մէջ: Ուստի հռովմէական պատիւը պահելու համար պատերազմը կրկին հրատարակուեցաւ¹:

Կորբուղոնի յանձնուեցաւ վերին հրամանատարութիւնը, իրեն տրուեցան արտա-

1. Տակիտ տար. 15,24-25. Գիոն 62,22:

քոյ կարգի իշխանութիւններ ինչպէս երբեմն Պոմպէոսի: Իրեն պէտք էին հնազանդիւ շորրորդապետներ, թագաւորներ, վերակացուներ, գործակալներ և այն ամէնը, որոնց հռովմէական պետութիւնը կրնար հրամայել Արևելքի մէջ: Կորբուզոն իր ձեռքին տակ ունէր երրորդ, հինգերորդ, վեցերորդ, հնգետասաներորդ լեգէոնները և ուրիշ կանոնաւոր զնդեր: Այս բովանդակ զօրութիւնը հաւաքուեցաւ Մելիտինէ (Մալաթիա) և անկից անցաւ Եփրատը: Բայց շուտով պատգամաւոր հասաւ Տրդատայ և Վաղարշու կողմէն, զորս Կորբուզոն ծածուկ կերպով համոզած էր որպէսզի Տրդատ յանձն առնու Հռովմ ճամբորդել, և առաջարկեց անձնական տեսակցութիւն մը Տրդատի և Կորբուզոնի: Պարթևը տեսութեան տեղ որոշեց Հրանդէա, զոր Հռովմայեցին յանձն առաւ: Կորբուզոն պատուոյ անուան տակ Տրդատայ բանակը դրկեց իր փեսան և Հռովմայեցի ասպետ մը, զորս թագաւորը իբր պատանդ կրնար նկատել, և յետոյ երկու կողմէն քսան ձիաւորներով միայն եկան Հրանդէա, ուր Տրդատ իր հաւանութիւնը տուաւ ճամբորդութեան: Քանի մը օր վերջ երկու բանակներ միասին ժողովեցան և մէջտեղ կանգնուեցաւ բարձր պատուան-

դան մը, որուն վրայ դրուած էր Ներոնի պատկերը. Տրդատ մօտեցաւ անոր, նախ զոհեր կատարեց, յետոյ իր թագը դրաւ պատկերին առջև, զայն Հռովմայ մէջ կայսեր ձեռքէն ընդունելու համար: Ամենուն սիրտը յուզուած էր¹:

Այս համաձայնութենէն վերջ Տրդատ իր դուստրը պատանդ թողուց և հեռացաւ, ուղևորութեան պատրաստութիւններ տեսնելու համար: Նա այցելեց իր մայրը և եղբայրները, որոցմէ Վաղարշ մասնաւոր թղթով մը Կորբուղոնի յանձնարարեց որ Տրդատ որ և է նուաստութիւն մը չկրէ, այլ անոր այնքան պատիւ տրուի Հռովմայ մէջ որքան հիւպատոսներու²:

Տարևոր պատրաստութենէ յետոյ Տրդատ ճամբայ ինկաւ, (հաւանականաբար 65ին)³: Ան ցամաքով գնաց Հռովմ. իրեն

1. Տակիտ տար. 15,26-30. Դիոն 62,23. Թեմիստիոս ճառ 15, էջ 210A: Կը տեսնուի որ մինչև թագաւորին մեկնիլը լեզէոն մը մնաց այսօրուան Խարբերդի մօտերը: Վասնզի Խարբերդի հարաւ-արևելքը, Կեսիբիկ գիւղին մէջ, գտնուեցաւ կրկին օրինակ արձանագրութիւն մը, զոր Երրորդ Գաղղիական լեզէոնը գրած է Ներոնի մետասաներորդ տրիբունութեան տարին, որ է 64ին, հմմտ. CIL 3, թիւ 6741-2. Բազմապեպ 1907 թիւ 3, էջ 115. Klebs, Prosopogr. I 1255:

2. Տակիտ տար. 15,31:

3. Թերևս այս ճամբորդութեան հետ վերաբերութիւն մ'ունի 65ին կոխուած Ներոնի դրամ մը, ուր կայսրը ծովու և ցամաքի վրայ տիրող խաղաղութիւնը և Յա-

հետ միասին կը ճամբորդէին 3000 պարթև հեծեալներ իբր անձնապահաց գունդ, իրեն և վաղարշու և Բակրոյ որդիները, բազմաթիւ մոզեր¹ և բազմաթիւ բարձրաստիճան Հռովմայեցիներ : Նաև իր կինը միասին էր, ձի մը հեծած և ոսկի սաղաւարտով մը գլուխը ծածկած, փոխանակ քողի՝ ըստ հայրենի սովորութեան : Եփրատէն սկսեալ իրենց ճամբորդութիւնը տեսակ մը յաղթանակ էր. քաղաքներ շքեղապէս զարդարուած կը հիւրընկալէին զիրենք և ժողովուրդք ցնծութեամբ և հանդէսներով կ'ընդունէին : Իտալիոյ մէջ կառքերով ճամբորդեցին, զորս կայսրը իրենց համար մասնաւոր կերպով զրկած էր : Ներոն, որ այդ ժամանակ Նէապոլիս (այժմեան Նաբոլի) կը գտնուէր, հանդիսաւոր կերպով ընդունեցաւ զիրենք և կարգէ դուրս շոայլ հանդէսներ և խաղեր տուաւ իր հիւրերուն ի պատիւ :

Քիչ վերջ Ներոն և Տրդատ ճամբայինկան դէպի Հռովմ : Բոլոր քաղաքը Հռովմէն դուրս ելած էր զիրենք տեսնելու և

նոսի տաճարին դռները գոցելը կ'իմացնէ. *Nero Caesar Aug. Imp. Tr. Pot. XII P. P. Quibus Pace P. R. terra marique parva Janum clausit*, Cohen I թիւ 168 :

1. Պլինիոս Բն. պատմ. 30, 6, 1 :

ընդունելու համար: Անթիւ լոյսերով և դրասանգներով զարդարուած էր յաւիտենական քաղաքը: Հոովմայ գլխաւոր հրապարակին՝ Փորումի մէջ՝ անհուն բազմութեան մը ներկայութեամբ և նոյն իսկ արևելեան շոալութիւնը գերազանցող փառաւորութեամբ, Ներոն բարձր բեմի մը վրայ հանդիսաւոր կերպով կապեց Տըրքատայ գլխուն Հայոց թագը¹:

Ասով Պարթեաց և Հայոց հետ խաղաղութիւնը կնքուած էր (66 յ. Ք.)²:

Երիտասարդ արևելցին, որ արդէն շատ վայելուչ և համակրելի անձ մ'էր, Հոովմայ մէջ շատ սիրուեցաւ. մանաւանդ կայսրը սաստիկ կապուած էր իրեն. ան ոչինչ կը խնայէր Տըրքատայ հաճոյք ընելու համար: Ծերակոյտի վճռով թատերա-

1. Դիոն 63,1-3. Տակիտ տար. 16,23-24. Սուետոն Ներոն 13. հմտ. N. Dolens և A. Khatchi, Histoire des anciens Arméniens էջ 182-3 գեղեցիկ բայց քիչ ճիշդ գրութիւնը:

2. Այս տարի (66) կոխուած անթիւ բազմութիւն մը Ներոնի դրամներուն կը տօնեն այս խաղաղութիւնը: *Imp. Nero Claud. Caesar Aug. Germ. P. M. Tr. P. XIII P. P.* իր դափնիով պսակուած գլուխը. ձախ *Pace P. R. terra mariq. parta Janum clausit*, Յանոսի փակուած տաճարը, Cohen I թիւ 159. ճիշդ միւսնոյնը, թիւ 160. գրեթէ միւսնոյնն են, թիւ 163-167. իսկ թիւ 178 ունի *Pace P. R. ubique parta Janum clausit*. նման գրութիւններով են նաև թիւ 170-77. 179-189:

կան խաղեր կատարուեցան և այն օր թատրոնը այնչափ շռայլօրէն ոսկիով ծեփուած և զարդարուած էր, որ ժողովուրդը զայն Ոսկեղէն օր անուանեց: Ներոն որ արդէն Տրդատայ բովանդակ ճամբորդութիւնը պետութեան գանձէն վճարած էր, դարձեալ ահագին գումարներ նուէր ըրաւ անոր Արտաշատը վերստին կանգնելու համար¹. դրամի հետ միասին կայսրը ղրկեց Հռովմայեցի ճարտարապետներ և արուեստաւորներ և քաղաքը շուտով կանգնուելով Ներոնիա կոչուեցաւ, գէթ ժամանակ մը²: կայսեր փափաքին համեմատ կը տեսնուի որ Տրդատ մոզուց կրօնքէն զաղտնիքներ սովրեցուցած է անոր³:

Տրդատ հարստանալով ապահով թագով մը և Ներոնի նման կայսեր մը բարեկամութեամբ դարձաւ իր թագաւորութիւնը, ճանապարհորդելով այս անգամ փոքրիկ կտոր մը ծովով, (Պրինտիզիոնէն մինչև

1. Իւրաքանչիւր օրը հռովմէական գանձուն կ'արժէր 800,000 սեստերս, որ է գրեթէ 200,000 ֆրանք. և որովհետև երթ ու դարձը տեկց ինն ամիս, բովանդակ ճամբորդութիւնը նստած է 200 միլիոն սեստերսի: Դիոն 63, 7ի համեմատ Արտաշատու վերաշինութեան համար տրուած դրամն է 200 միլիոն սեստերս, իսկ ըստ Սուետոն Նեքոն 30ի սոսկ 100 միլիոն. հմմտ. Sievers, Studien 118:

2. Սուետոն Նեքոն 30. Դիոն 63,6:

3. Պլինիոս Բն. պտմ. 30,6,1. 33,16,1:

Դիրաքիոն, այսօրուան Դուրացցոյ), զոր առաջ կրօնական պատճառներով զգուշացեր էր ընելէ: Ան զմայլեցաւ յունական քաղաքներու մեծութեան և գեղեցկութեան առջև¹:

Մինչև հոս տեղ կը հասցնեն զմեզ Տակիտոսի և Դիոնի նկարագրութիւնները, այն է կորբուղոնի Յիշատակարանները: Տրդատայ բուն թագաւորութեան գործոց մասին գրեթէ բնաւ տեղեկութիւն չունինք: Ասչափ ստոյգ է, որ թէ՛ Պարթևները և թէ՛ Հայերը Հռովմայ հետ երկար ժամանակ խաղաղ ապրեցան: Ներոն կայսրը կարգէ դուրս համակրութիւն մը կը վայլէր այդ երկու ժողովուրդներու քով, այնչափ որ անոր մահուանէն վերջ Պարթևները պաշտօնապէս Հռովմայ ծերակուտէն խնդրեցին որ Ներոնի յիշատակը յարգուի: Եւ սուտ Ներոն մը, որ ինքզինքը արևելքի մէջ կայսր հռչակեց, շատ նեցուկ գտաւ Պարթևներէն²:

Նաև վեսպասիանու ժամանակ լաւ էին յարաբերութիւնները: Վերջնոյս և Վիտելիոսի մէջ ծագած գահակալութեան կռիւններուն մէջ Հայք և Պարթևք վեսպասիա-

1. Դիոն 63,7:

2. Զոնարաս 11,18 p. 578C. հմմտ. Mommsen RG V 394. Gutschmid, Gesch. Ir. 138:

նու կողմը բռնեցին¹ : Յամի 75ին Ալանները, Վրկանաց մեղսակցութեամբ, ապատակութիւն մ'ըրին Հայաստան և Մարաստան : Բակուրին կանանոցը աւազակներու ձեռքն ինկաւ, զոր ստիպուեցաւ հարիւր տաղանդով փրկանաւորել : Իսկ Տրդատ անոնց հետ կռուի մը մէջ թիչ մնաց որ ողջ բարբարոսաց ձեռքը իյնար, եթէ իր անձնական քաջութիւնը չփրկէր զինքը վտանգէն. վասնզի Ալան մը հեռուէն պարան մը նետեց անոր վրայ և զայն որոգայթի մէջ բռնելու վրայ էր, երբ Տրդատ իր սրովը իսկոյն պարանը կտրեց և քաջուեցաւ : Սկզբան օգնութիւն ինդրուեցաւ Հոովմայեցիներէն Ալանաց դէմ, բայց յետոյ անոր պէտք չեղաւ, վասնզի բարբարոսները միայն աւարով բեռնաւորուած հեռացան իրենց աշխարհը² :

1. Տակիտոս, Պատմութիւն 2, 81-82 :

2. Յովսէպոս Հր. պարզմ. 7, 7. Գիտն 66, 15. Սուետոն Գովեստիան 2, հմմտ. Gutschmid, Gesch. Irans 132-135 : Տրդատայ սոյն զիւցազնութիւնը նաև Խորենացի Բ, 85 (Յովսէպոսէն տոնելով?) մանրամասն կը պատմէ, բայց վասնզի ինքն այս Տրդատ Աը չի ճանչնար, անոր համար սուրբ Տրդատայ Գի անուամբ կը պատմէ : Գիտն 63, 3 կ'աւանդէ որ, Տրդատ Ա. Հոովմ կրկիսական խաղի մը միջոց մէկ հարուածով երկու ցուլ միասին ճեղքած և սպանած ըլլայ. միևնոյնը կը պատմէ նաև Խորենացին Բ 79, բայց Տրդատ Գի անուամբ : Քիչ մը վարը պիտի տեսնենք որ հայ մատենագիրները, անշուշտ ժողովրդական աւանդութենէ տոնելով, Տրդատայ Հոովմ ճամբորդութիւնը պիտի պատմեն, բայց նոյնպէս Տրդատ Գի վերագրելով զայն :

Այս դէպքերու առթիւ վաղարշ վեսպասիանու յիշեցուց կաւկասեան ժողովուրդներու դէմ այն խոշոր արշաւանքը, որուն համար Ներոն իր վերջին տարիներուն մէջ արդէն պատրաստութիւններ ըսկրած էր տեսնել և իր մահը միայն արգելք եղած էր, և առաջարկեց որ վեսպասիան զայն գործադրէ: Վասնզի այս ժողովուրդները, Ալանք և ուրիշներ, յարատև անհանգիստ կ'ընէին թէ՛ Պարթևաց և թէ՛ Հռովմայեցւոց գաւառները: Բայց վեսպասիան չընդունեցաւ այս շատ հեռատէս առաջարկը, և ոչ ալ իր որդիներէն մէկը իբր զօրավար ղրկեց, որոցմէ Գոմեսիան՝ արքայները համոզած էր որ զինքը կանչեն: Սակայն Հարմոզիկայի մէջ, որ այսօրուան Թիֆլիսէն քիչ մը հիւսիս կը գտնուի, հռովմէական զնդերուներկայութիւնը ենթադրել կու տայ, թէ այդ բարբարոս ժողովուրդներու աւարառութեանց սանձ մը դրուած է¹:

1. Սուետոն Գոմես. 2. CIL 5 թիւ 6988. Պլինիոս 6,15,6. հմմտ. Mommsen RG V 394-96: Մոմսըն Հարմոզիկայի գունդը յիշած միջոց կը համարի թէ, այս ժամանակ նաև Հայաստան զինուորապէս Հռովմայեցիներէ զրաւուած էր: Բայց Մոմսընի այս ենթադրութեան որ և է փաստ կը պակսի. յիշուած Ստատիոսի Silvae I 4, 78-79 տողերը կարելի է շատ լաւ նաև կորբուղոնի ժամանակին համար հասկնալ, ինչպէս որ հասկցած

Այս կերպով Հայաստան անդորրացաւ Տրդատայ թագաւորելովն, որ հիմնադիրն եղաւ Արշակունեաց հարստութեան ի Հայս, և երկիրը ապագային մէջ ազատ մնաց այն աղետաբեր կռիւներէն, որոնք սովոր են գահակալութեան խնդիրներուն ընկերել: Տրդատայ հետ միասին նաև պարթևական ընտանիքներ եկան ի Հայս:

Այս առթիւ կ'ուզէի կարծիք մը յայտնել: Այսինքն, Դ և Ե դարերու մէջ նշանաւոր հանդիսացող Մամիկոնեան նախարարական ընտանիքը, որոց տանուտէրը Հայոց ժառանգական սպարապետն էր և որոց արիական ծագումն ունենալը բաւականաչափ ապացուցուած է¹, այս ժամանակ Հայաստան եկած ըլլայ: Ազգային աւանդութիւնը Տրդատայ ժամանակ կը դնէ Մամիկոնեանց Հայաստան գալուստը. Տրդատն է որ անոնց կալուած և բնակութեան տեղեր կու տայ²: Այս ընտանեաց

է Dessau, Prosopogr. III 167: — Յամի 72 կամ 73ին կոխուած դրամ մը կ'ըսէ, *Imp. Vespasian. Aug. tr. p. p. p. cos. III*, ձախ *Pax August.* Վեսպասիան կանգուն կեցած կը կանգնէ Հայաստանը, որ ծնրադիր և աշտարակաւոր գլխով ներկայացուած է, Cohen I թիւ 147:

1. Ն. Անդրիկեան, Բիւզանդի Մամիկոնեանները, էջ 10 և յաջորդները:

2. Խորեն. Բ 81. 84: Խորենացի սուրբ Տրդատէն զատ ուրիշ Տրդատ չճանչնալով, Տրդատներու անուամբ

մէջ գործածական անուններէն էին Վարդան, Վասակ, Վարդ, Համագասպ և Արտաւազդ: Տրդատայ բանակին մէջ կար Վասակ սպարապետ հեծեոց (Պարթևաց)¹, որ կորբուղոնի դէմ կռուեցաւ և զոր Վարդ 62ին իբր բարձրաստիճան և կարող մէկը Պետոսին զրկեց Հոովմայեցիները անձնատրութեան յորդորելու համար. կը համարիմ թէ այս Վասակ սպարապետը վերաբերութիւն մ'ունի Մամիկոնեաններու հետ: Պարթև Արշակունեաց ճիւղ մը Հայաստանի մէջ հաստատուած միջոց, կրնար շատ բնական կերպով նաև Պարթևաց սպարապետներու ընտանիքէն ճիւղ մը միասին Հայաստան գալ, որպէս զի հայկական բանակը Արշակունիներուն հաւատարիմ ձեռքերու մէջ գտնուէր: Եւ ո՞վ եղաւ Հայաստանի մէջ Արշակունիներուն այնպէս անձնանուէր ինչպէս Մամիկոնեանները: Մամիկոնեաններու առաջին հետքը ի Հայս կը գտնենք 259ին, ուր Արտաւազդ մը խոսրով Ա. սպանութեան յաջորդող շփոթութեանց միջոց երկրին զէկը իր ձեռքն ունի, ճիշդ այնպէս ինչ-

բոլոր լսածները միայն անոր կը վերագրէ: Թէ խորհնացին Տրդատ Ա.ի գործերէն մաս մը Տրդատ Գ.ի անուամբ պատմած է հմմտ. էջ 190 ծան. 2:

1. Տակիտ տար. 15,14:

պէս Դ և Ե դարերու Մամիկոնեանները¹ :

Տրդատի անմիջական յաջորդի մասին շատ պայծառ վկայութիւններ չունինք : Կ'ուզեմ փորձել ՍԱՆԱՏՐՈՒԿ (75էն 110ի մէջ) թագաւորը այս ժամանակիս մէջ դնել, որ Հայոց արքայներու ցանկին մէջ ընդհանրապէս վեր ու վար կը փոխադրուի :

Այս անձի մասին առաջին տեղեկութիւնը կը գտնենք Արիանոսի քով. «Սանատրուկ, արքայ Հայոց, չափակցեալ մարմին մ'ունէր և մտքով մեծ էր ամէն բանի մէջ, մանաւանդ պատերազմական գործոց մէջ : Նա եղաւ հաւատարիմ պահապան արդարութեան և իր կենցաղավարութեան մէջ ոչ մէկ լաւ Յոյնէ կամ Հռովմայեցիէ վար կը մնար² » :

Յետոյ, Կասսիոս Դիոնի հատակտորի մը մէջ կը կարդանք. «Երբ Վաշարշ, որդի

1. Հմմտ. Vita Valer. 3, Փաւստոս Գ 11. Անդրիկեան էջ 13-14: J. Marquart, Eransahr էջ 178 ծան. 4 կը համարի թէ Տիգրան Բէն ի վեր Հայաստանի ժառանգական սպարապետները Արծրունիք էին և ոչ թէ Մամիկոնեանները :

2. Սուրիզասի քով Σανατρούκης. Marquart, Untersuchungen zur Gesch. Erans էջ 221 բնաւ չտարակուսիր թէ այս կտորս Սուրիզաս Արիանոսի Παρδικά գրքէն փոխ առած ըլլայ : Արիան կ'ապրէր Ադրիանու (117-138) և Պիոսի ժամանակ :

Սանատրկոյ, Սևերոսի բանակին դէմ ճակատած էր և խառնուրդն սկսելէն առաջ զինադադար խնդրած և ընդունած էր, (կայսր Ադրիանոս) անոր խրկեց պատգամաւորներ և Հայաստանի մէկ մասը շնորհեց անոր խաղաղութեան համար¹ »:

Քիչ մը վերջ պիտի տեսնենք որ հոս յիշատակուած Վաղարշը 116-140/3 ժամանակ Հայոց թագաւորն է: Ուրեմն իր հայր Սանատրուկը պէտք ենք փնտռել Տրդատ Ա^Ի (66-75...) և Աշխադարայ (110) մէջ: Յիշուած Սևերոս զօրավարի անձը որոշել բաւական դժուար է, վասնզի Տրայիանոսի և Ադրիանոս ժամանակ շատ զօրավարներ կը յիշուին այս անուամբ²: Ամէն պարագայի մէջ նա այն զօրավարներէն մէկն է, որոնք վտանգաւոր պաշտօնն ունեցան Տրայիանոս մահէն յետոյ

1. Ասիկայ Դիոն Կասսիոսի Ուրսինեան 77երորդ հատակտորն է, որ տպագրութեանց մէջ գիրք 75,9ի մէջ կը դասաւորուի: Ս. Ph. Boissevain առաջինը եղաւ որ ճանչցաւ և *Hermes* թերթի հտր. 25 էլ 329ի մէջ համոզիչ կերպով ապացուցուց, որ այս հատակտորը ոչ թէ Սեպտիմ Սևեր (193-211) կայսեր ժամանակին կը վերաբերի, ինչպէս մինչև այս վերջերս ընդհանուր կերպով ընդունուած էր, այլ 115էն 135ի մէջ: Իւր ապացուցութիւնները հաստատութիւն գտան Marquartէն *Untersuchungen* էլ 218:

2. Հաւանականաբար Լ. Կատիլիոս Սևերոսն է, զոր Ադրիան 117ին Ասորոց տեղակալ կարգեց, *Vita Hadr.* 5. հմմտ. Klebs *Prosopogr.* I 463:

ամենուրեք ծագող ապստամբութեան հըրդեհը մարելու:

Սոյն արտաքին վկայութիւնները կը վաւերացուին բնիկ հայկական աւանդութեամբ և փոխադարձաբար իրենք ալ կ'ամբողջանան: Այս վստահելի աւանդութիւնները մինչև հիմայ քիչ նկատի առնուեցան և անոր համար գիտնականներէն շատեր Սանատրուկը մինչև երրորդ դար վար իջեցուցին:

Հայ մատենագրութեան իբրև առաջին յուշարձանները կազմող երկու գրուածոց մէջ, Բիւզանդի Հայոց պատմութեան և Թադէոս առաքելոյ ու սուրբ Սանդուխտի վկայաբանութեան մէջ¹, որոնք չորրորդ դարուն վերջերը գրուած են, կը յիշուի Հայոց թագաւոր մը Սանատրուկ անուամբ իբր սպանող Առաքելոյն, որ է առաջին դարու վերջերը կամ երկրորդին սկիզբները²: Ուրեմն ազգային աւանդութիւնը կը ճանչնայ Սանատրուկ թագաւոր մը այն ժամանակի մէջ, յորում զայն կը դնեն

1. Երկու գրութիւններն ալ տես ի Յաշեղոշած, Գ. Հայոց պատմիչները:

2. Փաւստոս Գ. 1: Սոփերք հայկականք Ը, վկայաբանութիւն Թադէոսի առաքելոյն և Սանդխտոյ կուսին, էջ 13: Առաջին վկայաբանութեան պարզ աւանդութիւնը երկրորդին մէջ և իոր. Բ. 34ին մէջ այլափոխուած է:

արտաքին մատենագիրներու քննադատու-
թեամբ ճշդուած և հաստատուած տեղե-
կութիւնները :

Սանատրուկ ըստ Փաւստոսի շինած է
Մծուրք քաղաքը¹, որ այսօրուան Գարա-
սուի Մուրատի հետ խառնուած կէտին
վրայ կանգնուած էր. «Սանատրկոյ քա-
ղաքը զինուորական տեսակէտով շատ կա-
րևոր դիրք մ'ունէր, վասնզի ան կը տի-
րէր ճանապարհներուն վրայ, որոնք կը
կապէին Եփրատը (Բալուի և Չիատա-
թարբերդի վրայէն դէպի Մելիտինէ), Ե-
փրատայ և Երասխի ափանց երկիրը (Խը-
նուսի վրայէն դէպի Հասանգալա և կա-
րին-Էրզրում), և երկու զլիսաւոր քաղաք-
ներն Տիգրանակերտը (Տաւրոսի վրայէն և
Νυμφίος – Պաթմանսուի հովտէն) և Արտա-
շատը (Մանազկերտի և Գարա-քիլիսայի
վրայէն դէպի Բագաւան-իւչքիլիսա կամ
Տիատին-Արմաւիր)² » :

Երբ յամի 369ին Շապուհ Բ Հայաս-
տան յարձակեցաւ և հոն մինչև արևմտեան
նահանգներու մէջ աւերումներ գործեց, իր
զօրքերը շատ մը բերդեր գրաւեցին, որոց
մէջ էր նաև Անի ամրոցը Գարանաղեաց

1. Փաւստոս Գ 14: Գէորգ Կիպրացւոյ քով էջ 49 և
183-4 κλίμα Μουζουρῶν (հրարկ. Գեւորի):

2. Marquart, Untersuchungen էջ 237:

գաւառին մէջ, ուր Արշակունիներու դամբանները կային. հոն ամէն ինչ քանդուեցաւ, «բայց միայն զգերեզման շիրմին Սանատրկոյ արքային ոչ կարացին բանալ վասն անհեղեղ սկայագործ հաստաշինած ճարտարագործ արարածոցն¹» :

Ուրեմն իր շինութիւնները լիովին կ'արդարացնեն Արիանէն իրեն տրուած գովեստները: Իր գովարանուած պատերազմական արուեստին վրայ դժբաղդարար խիստ քիչ բան միայն գիտենք: Այսուհանդերձ հետաքրքրական է դիտել, որ Եղեաիոյ թագաւորաց շարքին մէջ 91-109 տարիներուն մէջ ընդհատութիւն մը կը մտնէ: Գուտշմիտ այդ դատարկը կը լրացնէ Սանատրուկի անունով²: Նաև հայկական աղբիւրները Սանատրկոյ կը վերագրեն Եղեաիոյ գրաւում մը³:

Ընդհանուր խօսելով, Սանատրուկի մէջ կը նշմարուի խելացի և բաջ թագաւորի մը պատկերը: Ան շինեց Մծուրք բաղաքը, ինչպէս որ իր նախորդը Տրդատ Ա. — հաւանականաբար իր հայրը — Արտաշատը շինած էր և իր որդին վաղարշ

1. Փաւստոս Գ 24:

2. Gutschmid, Untersuchungen über die Geschichte des Königreichs Osroene, էջ 27, 48-49:

3. Խորեն. Բ 35:

Նոր-քաղաք կամ Վաղարշապատը պիտի շինէր: Կարելի է թէ Եղեսիոյ գրաւումը կատարուեցաւ ժառանգութեան խնդրի մը պատճառաւ, զոր ունէր Սանատրուկ Աբգարներու տան հետ. բնականապէս նա իր ճարտարութեամբը իրեն շահած էր բարեացակամութիւնը արքայից արքային և կայսերաց, որոնց մէջ այդ ժամանակ միայն խաղաղասէր անձինքներ իրարու կը յաջորդէին:

Ներոն կայսեր և Վաղարշու մահէն յետոյ երկու մեծ պետութիւնները կը հետևէին քաղաքականութեան մը, որ քիչ պատերազմական էր: Թէպէտ և Վեսպասիան կարևոր փոփոխութիւններ ըրաւ Արևելքի սահմանապահ գնդերու և վարչութեանց եղանակին մէջ, բայց Պարթևները սոսկ անվրդով աչքով մը դիտեցին այդ փոփոխութիւնները: Խաղաղութիւնը տևեց մինչև Տրայիանոս: Սա սկսաւ վերանորոգման և աշխարհակալական քաղաքականութիւն մը, ընդհատելով Յուլեան և Փլաւեան կայսերաց խաղաղասիրական դրութիւնը: Յամի 114ին վերջերը թողուց նա Հռովմը և մեկնեցաւ դէպի Արևելք Հայոց և Պարթևաց դէմ կռուելու համար, պատրուակ¹ բռնելով իբր թէ առաջիննե-

1. Rawlinson, The sixth monarchy 299-302.

րուն թագաւորը թագը իրմէ առած չէր
այլ Պարթևաց խոսրով Բէն : Տրայիանու
յարաբերութիւնը նմանապէս խոսրովի նա-
խորդին Բակուր Բ՛ (77-110) հետ ալ
շատ լաւ եղած չէր, որովհետև սա բա-
նակցութեան մէջ եղած էր Գալերու Գե-
կերալ թագաւորին հետ¹ :

Պարթևաց Բակուր Բ թագաւորը Սա-
նատրկոյ մահէն վերջ իր հարազատ որդին
Ա. Շ Խ Ա. Դ Ա. Բ Ը (— 110ին ժամանակները)
Հայոց գահուն վրայ դրած էր, և ինչ որ
կը տեսնուի Աշխադար առանց դժուարու-
թեան ճանչցուած էր Հռովմէն : Բայց խոս-
րով Բ (110-131) զայն ատուէն վար
առաւ և տեղը դրաւ անոր Պ Ա. Բ Թ Ա. Մ Ա.
Ս Ի Բ (110-115) եղբայրը : Թէ Աշխադա-
րի յանցանքն ինչ էր որոշ չենք գիտեր.
Խոսրով կայսեր գանգատեցաւ միայն, որ
անիկայ ոչ Հռովմայեցիները և ոչ ալ Պար-
թևները գոհացնող ընթացք մը բռնած ըլ-
լայ² :

1. Սուրիաս *ἐπίκλημα*. ՊԼինիոս Կրտսեր, *Թուղթ առ Տրայիան*, 74:

2. Արիանոսի Պարթևականքէն երկու հատակաորներ
մնացած են Սուրիասայ Բառազրքին մէջ, *ἀμφίλογον* և
γγῶσις, (նոյնը ի FHG III 589, 16): Առաջինը կտոր
մ'է կայսեր առջև ի նպաստ Աշխադարայ եղած խո-
սակցութեան մը, իսկ երկրորդը քիչ մը ստորև պիտի
տեսնենք:

Բայց բուն Հոովմայեցոց զգացումը վիրաւորող կէտը Պարթամասիրի անհրաման Հայաստան դրուիլն էր, և Պարթամասիր ևս իր կողմանէ Հոովմայ հաճութիւնը չէր խնդրած: Այս բանս Պարթևաց կողմանէ ուղղակի գրգռութիւն մը համարուեցաւ յաւիտենական քաղաքին մէջ և կայսրը, որուն տակաւին կը պակսէին յաղթանակներ և պատերազմական տիտղոսներ, վճռեց պարթևական մեծ արշաւանք մը սկսիլ, և իր այս որոշողութիւնը ընդհանուր հաւանութիւն գտաւ ծերակուտէն, որ հոովմէական զէնքերու ժխորը լսել կը փափագէր:

Տրայիանու զաւստեան լուրն առնելով խոսրով՝ փութաց պատգամաւորութիւն մը խրկել անոր: Պատգամաւորք կայսրը գրտան Աթէնք, և բացի խաղաղութենէն նաև Հայոց թագը խնդրեցին Պարթամասիրի համար:

Տրայիան, որ ո՛չ Օգոստոսի և ոչ Ներոնի խաղաղական դիտաւորութիւններն ունէր, մերժեց թագաւորին առաջարկը¹: Այս մերժման վրայ Պարթևք Ասորիքի մէջ սկսան թշնամութիւնները, և տակաւին կայսեր բացակայութեան ժամանակ ինչ

1. Դիոն 68, 17. Փրոնտոյ առ Վերոս, էջ 321:

ինչ յաջողութիւններ ունեցան և նոյն իսկ Սամոսատին տիրացան¹ :

Այդ միջոցին կայսրը Անտիոք հասած էր, ուսկից Սամոսատի և Սատալայի վրայէն բարձրացաւ Եփրատն ի վեր և հասաւ Հայոց Եղեգիա քաղաքը, ուր առանց դիմադրութեան ընդունուեցաւ: Պարթամասիր, որ արդէն կայսեր հետ թղթակցութեան մէջ էր, հոս յօժարակամ ներկայացաւ անոր՝ բարձրաստիճան հռովմայեցի պաշտօնեայներու միջնորդութեամբ, և Տրայիանու առջև դրաւ իր թագը, յուսով որ զայն անկից ետ պիտի ընդունի, ինչպէս Տրդատ Ներոնէն² : Բայց կայսրը ուրիշ դիտաւորութիւններ ունէր. ան ետ չդարձուց թագը Պարթամասիրին, այլ յայտարարեց թէ Հայաստանը այլևս հռովմէական նահանգ մ'է: Հռովմայեցի զօրականը, որ այս գործողութիւնները անարիւն յաղթութիւն մը համարեց, բարձրաձայն աղաղակով Տրայիանը իմպերատոր կոչեց³. (վասնզի կայսրները իւրա-

1. Փրոնտոյ էջ 318. Գիոն 68, 19. հմմտ. Mommsen RG V 399:

2. Այս տեսարանը բացի դրամներու վրայ պատկերացնելէն նաև Կոստանդիանոսի յաղթական կամարին վրայ, (որ Տրայիանոսի խորացանդակէ մը առնուած է), ներկայացուած է և կարելի է զայն տեսնել մինչև այսօր, հմմտ. Visconti, Iconogr. gr. II 269:

3. Յամի 115ին կոխուած երկու դրամներու ձախա-

քանչիւր յաղթութեան վրայ այս տիտղոսը կ'ընդունէին և կայսր մը կրնար երիցս, հնգիցս, տասնիցս և աւելի անգամներ իմպերատոր կոչուիլ):

Բայց գոռոզ Արշակունին չծածկեց իր զայրոյթը կայսեր դէմ և ըսաւ թէ, ոչ իբրև պարտութիւն մը կրելով և կամ գերի բռնուած ըլլալով ներկայացայ քու առջևդ այլ իմ ազատ կամքովս, համարելով թէ ոչ մէկ անարգանք պիտի չկրեմ, այլ թագ պիտի ընդունիմ քու ձեռքէդ, ինչպէս Տըրդատ Ներոնէն¹: Տրայիան սակայն հրամայեց Պարթամասիրին իսկոյն հռովմէական ճամբարէն և հայկական հողէն դուրս ելնել. և որպէսզի ան ոչ մէկ փորձ ընէ ապստամբութեան՝ հռովմէական հեծելազնդի մը հրամայեց անոր ընկերել մինչև պարթևական սահմանագլուխը: Այսպիսի նախատինքներով թշնամանուած Արշակունին փորձեց բռնի կերպով ազատիլ այդ հռովմայեցի ոստիկաններու ձեռքէն, բայց յաղթուեցաւ և կայսեր հրամանով սպա-

կողմին վրայ նկարուած է այս տեսարանը սուր հեզնութիւն մը բովանդակող արձանագրութեամբ մը. *Rex Parthus S. C.* Արքայ սարքեշ, կայսրը բեմի մը վրայ նստած, Պարթամասիր հռլանի գլխով անոր առջև կեցած բազուկները կ'երկնցնէ աղաչաւորի դիրքով. զօրականք զինուորական նշաններով, տես Cohen II թիւ 376 և 209, նոյն Eckhel VI 437:

1. Այս խօսքերը կ'ականարկեն քիչ առաջ կատարուած Սամոսատի գրաւումը:

նուեցաւ (115 ամառ)¹: Սակայն քիչ ատենէն պսակազարդ Արշակունիի արիւնէն պիտի ելնէր կրակ մը, որ պիտի այրէր Տրայիանու բովանդակ շինածը: Հայերուն որոնք կ'ուզէին իրենց թագաւորին հետ միասին երթալ՝ Տրայիան հրամայեց Հայաստան մնալ, ըսելով որ իրենք այլևս Հռովմայեցւոց հպատակներն են²:

Միևնոյն տարին (115) կայսրը նուաճեց Հայաստանը, բաց ի հիւսիսային մասերէն, և զայն վերածեց նահանգի մը: Արմենիա նահանգին վրայ առաջին և միանգամայն վերջին օգոստեան տեղակալ փո-

1. Rawlinson, The sixth mon. 304-5 յենլով ժամանակակից Փրոնտոյի (Princ. hist. 349) և Արիանու (ի FHG III 589, 16) վկայութեանց վրայ, սակարծիքը կը յայտնէ թէ, Տրայիան արդէն առաջուց որոշած ըլլայ սպաննել Պարթամասիրը իբրև վտանգաւոր իշխան մը. անոր նախ ազատ արձակուիլը և յետոյ բռնուիլը սոսկ արտաքին երևոյթի համար կատարուած ըլլայ: Եւ վասնզի այս սպանութիւնը մեծ յուզում մը բերաւ հասարակաց կարծիքին մէջ, ոմանք ուզեցին յանցանքը Աշխադարայ վրայ ձգել, բայց Տրայիան բացորոշակի յայտարարած ըլլայ թէ, այդ գործը Աշխադարին չէ այլ իրեն: — Այս լաւագոյն մեկնութիւնը կը թուի Արիանի հատակտորին. (Սուրիզասի բով ՎՄԾՍԵ): Mommsen RG V 397 ծան. 3 տարբեր մեկնութիւն մը կու տայ:

2. Գիոն 68, 18-20. Փրոնտոյ առ Վերոս 321. Եւտրոպիոս 8, 2: հմմտ. Gutschmid, Gesch. Irans 141-2: Տրայիանու արշաւանքի ժամանակագրութեան մէջ Մոմսընը գերադասեցի քան Գուաշմիտը, իր էջ 398ի ծան. 1ի պատճառաւ:

խանակ պրետորի (legatus Augusti propraetore) զրուեցաւ բարձրաստիճան անձ մը, Գ. Ատիլիոս Յուլիանոս Կղաւղիոս Ռուփինոս անուամբ¹ :

Դարձեալ նոյն տարուան մէջ Կայսրը մտաւ Կորդուք, որուն Մանիսարէս իշխանը կամ թագաւորը Հայաստանէն և Միջագետքէն հողեր գրաւած էր: Ասկէ դիմեց Միջագետք, ուր կարևորագոյն քաղաքներ ինչպէս Եղեսիա և Մծբին գրեթէ առանց ընդդիմութեան հպատակեցան իրեն: Չմեռը Անտիոք մնալով, ուր սոսկալի երկրաշարժ մը անթիւ փնասներ ըրաւ, գարնան անցաւ Տիգրիսը և գնաց ընդդէմ Ադիաբենաց, որոնք միայն իր բովանդակ արշաւանքին մէջ քիչ մը ընդդիմութիւն ըրին. բայց Ադիաբենցիք յաղթուեցան և իրենց երկիրը հռովմէական նահանգի վերածուեցաւ Ասսիրիա անուամբ, ինչպէս նաև կանխագոյն նահանգի վերածուած էր Եփրատի և Տիգրիսի մէջ տարածուող Միջագետքը Մեզոպոտամիա անուամբ² : Յետոյ Տիգրիսն ի

1. CIL X 8291 և Մոմսընի լուսաբանութիւնները: Rohden առ PW *Atilius* 40. Marquart, *Römische Staatsverwaltung* I 434-35 (1881). Klebs *Prosopogr.* I 1081:

2. Յամի 116էն դրամ մը Cohenի քով II թիւ 318, Չախ *Armenia et Mesopotamia in potestatem P. R. redactae S. C.* Հայաստան և Միջագետք Հռով-

վար քալելով դիմեց դէպի Բաբելոնիա, տիրեց Սելևկիային և կրցաւ Տիգրոնի արքունի դղեակը առնուլ ու հասաւ պարսկային ծոցը:

Ինչպէս որ յայտնի կը տեսնուի, կայսրը լուրջ թշնամի մը չունի դիմացը. նա զրեթէ չպատերազմիր այլ կը քալէ միայն: Պարթևները ներքին երկպառակութեամբ այնպէս քայքայուած էին, որ ոչ մէկ կուսակցութիւն յաջողեցաւ պետութեան ուժերը ժողովել և թշնամուոյն դէմ դնել: Բուն արքայից արքայն խոսրով հիւսիսային Հայաստան փախած էր:

Այսուհանդերձ կը տեսնուի որ պետութեան և Արշակունի հարստութեան կործանման սպառնացող մեծ վտանգը բռնադատած էր արքունի իշխանազունները, մէջերնին համաձայնութեան մը գալու: Ասոնք սկսան այժմ վրէժի պատերազմ մը Հռովմայեցւոց դէմ: Մինչդեռ Տրայիան Եփրատի գետաբերանը հասած Հնդկաստանի ափունքները կ'երազէր, իր ետևէն երեք նոր նահանգներու մէջ ծագեցաւ զարհուրելի ապստամբութիւն մը. Արևելցոց բնու-

մեակրան ժողովրդան իշխանաշքեան եկրարկեալք, Տրայիան կանգնած նիզակ և սուր ի ձեռին և ոտքը դրած է Հայաստանի վրայ, որ ազգային տարազով նստած է Եփրատի և Տիգրիսի մէջ:

թիւնը և մուկեռանդութիւնը չէր կրնար երկար հանդուրժել Արևմտեայց ճիշդ օրէնքներուն: Ամէն կողմ հռովմէական պահապան գնդերը կամ ջարդուեցան և կամ վոնտուեցան: Ապստամբութեան երկու գըլխաւոր բոյներն էին Միջագետք և Հայաստան:

Միջագետքի մէջ Միհրդատ Զ, Խոսրով Բ՛ եղբայր մը, առաջնորդ եղաւ ապստամբողական շարժման և կրկին գրաւեց երկիրը, բայց կոմագինէ գացած միջոց ձիէն իյնալով մեռաւ: Ամբոխի առաջնորդ անցաւ իր որդին Սանատրուկ: Իսկ Հայաստանի մէջ Վաղարշ անցաւ ապստամբութեան գլուխը: Արդէն տեսանք որ Խոսրով Բ Հայաստանի հիւսիսային կողմերը կը դեգերէր, ան իր որդւոյն Պարթամասպատի առաջնորդութեան տակ օգնութեան բանակ մը խրկեց Սանատրուկոյ, և միացած ուժերով ամէն տեղ յաջողութեամբ կռուեցան: Մաքսիմոս զօրավարը, զոր Տրայիան Բաբելոնիայէն խրկեց, բոլորովին յաղթուեցաւ¹: Երկրորդ տեղակալը, Լուզիոս կուլիտոս, կրցաւ նենգութեամբ Պարթամասպատը Սանատրուկէն բաժնել, առաջնոյն խոստանալով Պարթևաց գահը: Սա-

1. Դիոն 68, 30:

նատրկի բանակը բուրոսովին ջախջախուեցաւ Լուզիոսի և Պարթամասպատի բանակներէն, Մծբին կրկին գրաւուեցաւ, Եդեսիա աւերուեցաւ և միւս քաղաքները ետ առնուեցան:

Ապստամբութիւնը նուաճուած կը տեսնուէր: Բայց ինքնին կայսրը չէր համոզուած իր նոր աշխարհակալութեանց ամբողջութեան մասին: Աճապարանքով Պարթամասպատը Պարթևաց թագաւոր պսակեց¹ Տիգրոնի մէջ, և փութաց բովանդակ պետութեան սահմաններուն վրայ տարածուած ապստամբողական շարժումը խղղելու: Իր դարձին ատեն նեղութիւններ կրեց անապատէն և թշնամի բնակչութենէն: Անապատի մէջ կանգնուած Հատրա քաղաքը առնելու համար իր ըրած անյաջող փորձը ծանր պարտութեամբ մը վերջացաւ: Այդ միջոցին Խոսրով Հայաստանէն Պարթևաց երկիրը մտած էր, ուր իր անհաւատարիմ որդին և Հռովմայ պաշտպանեալը չկարենալով ազգային կուսակցութեան դէմ դնել, հալածուեցաւ: Հռովմայեցիք Պարթամասպատին փոխարինութիւն

1. Յամի 116էն դրամ առ Cohen II թիւ 375, *2^{us} Rex Parthis datus.*

մ'ընելու համար զինքը յետոյ Եդեսիոյ
թագաւոր դրին¹ :

Տրայիան 117 օգոստոս 7ին վախճա-
նեցաւ Կիլիկիոյ մէջ, երբ Իտալիա կը
դառնար: Անիկայ դառն ցաւով մը տեսաւ
իր վերջի վայրկեաններուն մէջ իր բո-
վանդակ ձեռնարկին անյաջողութիւնը և
ատոր գործած ազդեցութիւնը ուրիշ նա-
հանգներու վրայ, ինչպէս Պաղեստինի և
Եգիպտոսի: Մահուան անկողնին վրայ
անդրադարձաւ, թէ այս արշաւանքին մէջ
աւելի իր ընկերակիցներն եղած էին ու-
նայնամտութիւն և զինուորական շահա-
տակութեանց տղայական տենչ մը, քան
պետական մարդու մը խոհականութիւնը² :

Վերջին դէպքերու ժամանակ Հայաս-
տանի մասին քիչ կը խօսուի. և այս շատ
բնական է: Վասնզի Հռովմայեցիք իրենց
բովանդակ ուշադրութիւնը դարձուցած էին
Ասորոց մօտ գտնուող երկիրներու վրայ,

1. J. Vaillant, Arsacidarum imperium I 325
և Գաթրըճեան Բ 174 Պարթամասպատը Հայոց թագա-
ւոր կը դնեն, որմէ նաև կարծեցեալ Աքիմենիդէս թա-
գաւորը սերած ըլլայ: Իրենց կոչումները միայն Պար-
թամասիրի կը վերաբերին: Նաև Rawlinson The
sixth mon. 316 Պարթամասպատը սխալ կերպով Հա-
յաստան կը դնէ փոխանակ Եդեսիա դնելու: Պարթա-
մասպատ Հայոց թագաւոր եղած չէ:

2. Դիոն 68, 30-33. Gutschmid Gesch. Irans 143-
5. Schiller I 556-62.

որոնք արդէն հռովմէական լուծին վարժած էին. Հայաստան հեռի կը գտնուէր և անոր վերջնական նուաճումը կը պահանջէր մեծագոյն զինուորական ուժեր, որքան Հռովմայեցիք այս ընդհանուր ապստամբութեան վայրկենին չէին կրնար տրամադրել: Ինչպէս որ արդէն տեսանք, Հայաստան հռովմէական նահանգ եղաւ տարի մը, 115ի ամառէն 116ի ամառը: Թէ արդեօք այս կարճ ժամանակի միջոց նահանգի մը պահանջուած կարգադրութիւնները մուտք գտան ի Հայս, շատ տարակուսական է: Առանց մնայուն լեզէոններու անկարելի էր այս երկիրը պահել. այս էր Պոմպէոսի համոզումը, այսպէս կը մտածէր Օգոստոս, այս կարծիքն ունէին ուրիշ պետական մեծ անձնաւորութիւններ. այս բանս տեսանք Կորբուղոնի արշաւանքին ատեն, ինչպէս նաև կը տեսնենք այժմ Տրայիանու ժամանակ¹: Անոր համար շատ հաւանական է որ ապստամբութեան առաջին կոչը Հայաստանէն հնչեց, ուր Արշակունին Վ.Ա.Ղ.Ա.Ր.Շ (116-140/3) արքայից արքայի մերձաւորութենէն օգ-

1. «Լուկուլլոսի և Անտոնիոսի ժամանակէն սկսեալ Հռովմ գիտէր չափով մը, թէ Հայաստան որքան շատ դժուարութիւններ և որքան քիչ շահ կ'ընծայէր», Nöldeke ի ZDMG հար. 39 էջ 349:

տուելով զէնքի դիմեց և ազատութիւն հրո-
չակեց: Ասով մեզի հասկանալի կ'ըլլայ,
ինչո՛ւ Միջագետքի ապստամբները դէպի
Կոմագինէ կը դիմեն, վասնզի հոն ոչ միայն
հիւսիսակողմէն ապահով կռնակ մը կ'ու-
նենային, այլ նաև օգնութիւն կրնային
յուսալ, ինչպէս որ յիրաւի Պարթամաս-
պատ իրենց բերաւ:

Բայց երբ պարթև Սանատրկին բանակը
Չախշախուեցաւ, Մծբին ու Եղեսիա կրկին
առնուեցան և ապստամբած աշխարհներու
վերստին նուաճումը անկարելի չէր թուէր,
Տրայիան իր կենաց վերջի ամիսներուն
մէջ Հայոց դէմ ղրկեց իր Սևերոս ա-
նուամբ տեղակալը: Այդ ժամանակամի-
ջոցին Տրայիան կը մեռնէր: Իր յաջորդն
Ադրիանոս, որ Տրայիանու ծրագրին
գործադրութիւնը անկարելի կը համարէր,
Հայոց քոյր տոշառ որ քազառոր ոչևևևան,
մինչ Տրայիանոս ժամանակ տեղակալ ոչևև-
ցած էին¹: Հայոց թագաւորին Հռովմէն
ճանչցուիլը կը պատմուի նաև Կասսիոս
Դիոնի քիչ մը խանգարուած կամ դժուա-
րահասկնալի կտորի մը մէջ. «Երբ վա-
ղարչ, որդի Սանատրկոյ, Սևերոսի բա-
նակին դէմ ճակատած էր և խառնուրդն

1. Vita Hadr. 21.

սկսելէն առաջ զինադադար խնդրած և ընդունած էր, (կայսր Ադրիան) անոր զրկեց պատգամաւորներ և Հայաստանի մէկ մասը շնորհեց անոր՝ խաղաղութեան համար¹ »:

Ուրեմն Ադրիան աւելի բանաւոր համարեց իր նախորդին գրաւած աշխարհներէն հրաժարիլ. Եփրատէն և Տիգրիսէն անդի երկիրները բողոքց, ինչպէս կ'ըսէր, կատունի օրինակին հետևելով, որ Մակեդոնացիները ազատ հռչակեց որովհետև պահել կարելի չէր²: Յետոյ, Ադրիանոս շառ համարեց Տրայիանոս անբոյժ առնուած նահանգները բողոքը բան թէ բանակով պահել³: Ադրիան նաև Արևելք ճամբորդութեան միջոց ջանաց բարեկամաբար շահիլ բոլոր թագաւորները, տեղական իշխանները, բայց յատկապէս Պարթևաց թագաւորը, որուն հետ խաղաղութիւն ունենալ անկարելի էր, եթէ Արշակունի մը նստած չըլլար Հայաստանի գահուն վրայ⁴:

1. Գիտն 75, 9. Այս տեղ «զրկեց» բայի անունբային Marquart Untersuch. էջ 218 Տրայիանը կը դնէ, որ կարելի է. բայց ես կը համարիմ թէ Ադրիանոսն է, յենլով Vita Hadr. 21ի վրայ, և միանգամայն վասնզի Ադրիանոս նախ ճանչցաւ այդ աշխարհներու ազատութիւնը, զոր մեր կտորը կ'ենթադրէ:

2. Vita Hadr. 5. հմմտ. Schiller I 606:

3. Փրոնտոյ Principia historia էջ 317. Օգոստինոս De civ. Dei IV 29:

4. Յամի 117էն կան շատ մը դրամներ, որոնք ընդ-

Երկիրը անդորրութիւն վայելեց Վաղարշի ատեն մինչև Ադրիանու կայսրութեան վերջերը, յորում Ալանաց յափշտակիչ և աւարառու ամբոխներ, վրաց Փարսման թագաւորի մեղսակցութեամբ, որ իրենց առջև բացած էր կաւկասի դռները, յարձկեցան Մարաստան—Ատրպատականի վրայ և աւերեցին. յետոյ Հայաստանի վրայէն դիմեցին դէպի կապադովկիա: Բայց մասամբ Հայոց Վաղարշու ընծայներով, մասամբ կապադովկիոյ կուսակալ Փլաւիոս Արիանոսի զինուորական պատրաստութիւններէն բռնադատուելով ետ քաշուեցան: Վաղարշ Անտոնինոս Պիոս (138-161) կայսեր գանգատներ ըրաւ Փարսմանի վրայ. բայց սա անձամբ Հռովմերթալով կրցաւ կայսրը բուրրովին իրեն կողմը շահիլ և նոյն իսկ նոր երկիրներ ստանալ անկէ¹:

հանրապէս հետևեալ արձանագրութիւնն ունին, *Quaer. Concordia, Dacico Parthico p. m. tr. p. cos. p. p. տես Cohen II* թիւ 670. 671. 698. 776-8. 899: թիւ 544 ունի. *Exercitus parthicus* և թիւ 624 *Adventui Aug. Parthiae* առանց տարեթիւի:

1. Դիոն 69, 15. Խորեն. Բ 65. Յովհաննէս Լիւդացի 3. 53. *Չոնարաս* 12, 24. հմմտ. Gutschmid *Gesch. Irans* 147. Boissevain ի *Hermes* հտր. 25 էջ 332: Դիոնի այս Ուրսինեան թիւ 55 հատակտորը Անտոնինոս Պիոսի ժամանակ կը դնեն Mommsen *RG V* 404 ծան. 4, Marquart *Untersuch.* էջ 222-3, Boissevain Դիոնի հրատարակութեան մէջ III 235 ծան.:

Անտարակոյս այս Վաղարշն է որ հիմնարկեց Նոր-քաղաք կամ Վաղարշապատը. ինքը չէր ուզէր շինութեանց մէջ իր հօրմէն և պապէն վար մնալ¹:

Աղբիանու ժամանակ Վաղարշ շարունակեց խաղաղ կերպով իշխել, բայց Պիոսը անհաշտ էր իրեն դէմ. և այս բանիս մէջ թերևս վրացւոյն մատը կար: Կայսրը վար առաւ Վաղարշը գահէն՝ մեզի անձանօթ պատճառներով, և անոր տեղ ղրկեց 140էն 143ի մէջ ուրիշ թագաւոր մը², ամենահաւանականաբար ՍՈՅԵՄՈՍը, որ Եմեսիոյ (այժմ Հոմս) արքունիքէն իշխան մ'էր, և մօր կողմանէ Արշակունի մը իսկ հօր կողմանէ Աքիմենեան (այսինքն կապագովկիական) արիւն ունենալ կը թուի³:

1. Խորեն. Բ 65. Փարպեցի էջ 541. Սուրիաս Մάρτιոս (Դիոնէն): Դիոնի այս կտորին վրայ հիմնուելով Մոմսըն RG V 407 կը համարի թէ Պրիսկոս հիմնարկած և շինած ըլլայ այս քաղաքը: Բայց Դիոնի խոսքին մէջ այս բանը չկայ: Կարելի է թէ հռովմայեցի գիտնորներ ևս աշխատած ըլլան շինութեան. բայց զինուորաց թիւը շատ աննշան ըլլալու է, վասնզի 185ին հոն սոսկ vexillariiiներ կային: Դիտելու է որ քաղաքը հռովմէական անուն մը չկրեր, այլ Հայոց թագաւորին:

2. Այս թուականով Պիոս բազմաթիւ դրամներ ունի. Cohen II թիւ 348-49. 407 Չախ Victoria Augusti, թիւ 350 Virtus Aug. թիւ 685 Marti ultoris. յամի 139էն է թիւ 701 Parthia cos. II. S. C.

3. Eckhel VII 15. Cohen II թիւ 758 և տախտակ 13, Antoninus Aug. Pius p. p. tr. cos. III, Չախ Rex Armeniis datus S. C. Պիոս կը պսակէ

Այս բանիս վրայ արքայից արքայն վաղարշ Բ սպառնաց իր անուանակից Հայոց թագաւորը՝ որ անտարակոյս իրեն դիմած էր՝ զէնքի գօրութեամբ գահին վրայ հաստատել: Սակայն կայսրը Պարթևաց քաղաքորը սոսկ նամակներով ետ կեցոչց Հայաստանը գրաւելէն¹: Արշակունիներու քաղաքականութիւնը այս ընթացքէն բնականապէս գոհ չէր կրնար մնալ և վաղարշ

թագաւորին զլուխը, որ ոչ հայկական այլ հռովմէական տարագ կը կրէ, թերևս անոր համար որ նա, Սոյեմ, ծերակուտական մը եղած էր Հռովմ, ինչպէս որ Յամբլիկոս կը պատմէ առ Փոտայ Bibl. 94: Հմմտ. Marquart Untersuchungen էջ 222. սրամիտ զիտնականին հետազօտութեանց լաւ արդիւնքներն սիրով ընդունած միջոցս, չեմ կրնար համակարծիք ըլլալ իրեն, երբ ան մեր Սոյեմը կը նոյնացնէ (էջ 222-3) 54ին Ներոնէն Մոփաց թագաւոր դրուած Սոյեմին հետ: Վասնզի եթէ մենք 54ին Սոյեմը 15 տարեկան ենթադրենք, 164ին ան 125 տարեկան եղած կ'ըլլայ: Մեր Սոյեմը Prosopogr. IIIի մէջ թիւ 346 է, իսկ Մոփաց թագաւոր Սոյեմը թիւ 345 է: Թիւ 344 և 345ի Սոյեմները մերինին նախնիքն են, վասնզի Սոյեմ քաղաքոր եր քաղաքոր հայրերեն ծնած, ըստ Յամբլիկոսի: — Ոմանք, ինչպէս J. Vaillant, Arsacidarum imp. I 325, Գաթրբճիան Բ 174, Գարագաշեան Բ 259 Սոյեմի ցեղական անունէն (որ է իբր Աքիմենեան ցեղէ) Հայոց թագաւոր մը ստեղծեցին Աքիմենիդէս անուամբ: Բնականաբար սխալը յառաջ եկած է յունարէն բնագիրը անուշադիր կարդալով պակասաւոր հասկնալէն: Թէ կապաղովկիոյ թագաւորները, որոնց հետ Սոյեմ խնամի ըլլալ կը թուի, Աքիմենեաններէ սերած էին, տես Դիողոր Սիկ. հատակտորք XXXI 19 (առ Փոտայ): Իսկ Եմեսիոյ հարստութեան մասին տես Marquart, Römische Saatsverw. I 403-404:

1. Vita Ant. Pii 9.

Գ (149-191) սկսաւ ազգու կերպով շար-
 ժիլ: Հռովմայեցոց հետ բաղխում մը ան-
 հրաժեշտ կը թուէր. բայց 155ին երկու
 պետութեանց գլուխներուն անձնական տե-
 սակցութիւն մը Ասորոց մէջ՝ վայրկեան
 մը յետաձգեց պատերազմի վտանգը¹: Այ-
 սուհանդերձ Պիոսի վերջի տարիներուն մէջ
 Արևելքի միջնուրտը սկսաւ միթագնիլ, և
 եթէ դէպքերու ընթացքին նայինք կարելի
 է հետևցնել թէ, պարթևական զնդեր սահ-
 մանագլխի երկիրները արդէն անապահով
 դարձուցած էին, այնպէս որ Պիոս ստի-
 պուեցաւ Լ. Ներատիոս Պրոկլոսը Ասորիք
 դրկել²: Պարթևաց բուն պատերազմի գո-
 չիւնը Հռովմայ մէջ լսուեցաւ Մարկոս
 Աւրեղիոսի (161-180) և անոր կայ-
 սերակից Լուկիոս Վերոսի (161-169)
 առջի տարիները: Մծբինը և Եդեսիան
 գրաւեցին Պարթևք և Ասորիքի քաղաք-
 ները վաղարշ շուտ նուաճեց: Ատիտիոս
 կոռնելիանոս կուսակալը իր մեղկացած
 լեզէոններով թողուց այնքան հին Սիրիա
 նահանգը և փախաւ: Իսկ Հայաստանէն
 Սոյեմը արդէն շատոնց վռնտուած և անոր

1. Արիստիդէս Or. sacr. I էջ 454 (հրատրկ. Din-
 dorf). Gutschmid Gesch. Irans 147. Marquart
 Untersuch. 224.

2. CIL IX 2457.

տեղը դրուած էր ԲԱԿՈՒՐ (160-163).
Կապագովկիոյ տեղակալը Սևերիանոս փու-
թացած էր հոն Հռովմայեցւոց պաշտպա-
նեալին օգնութեան հասնիլ, բայց Պար-
թևաց զօրավարը Խոսրով զայն Եփրատայ
վրայ Եղեգիա քաղաքին մէջ պաշարեց.
Սևերիանոս գնդերը պարթևական նետերու
զոհ եղան, իսկ ինքն զօրավարը իր սու-
րին վրայ իյնալով մեռաւ¹:

Ուրեմն Արևելք միայն զէնքի շաշիւնով
ողջունած էր նոր կայսրները: Քաղաքնե-
րու անկումը, մէկ նահանգապետին փա-
խուստը միւսին սպաննութիւնը իր լեգէոն-
ներով՝ անտարակոյս խոր տպաւորութիւն
մը գործեցին Հռովմայ մէջ: Ծերակոյտի
և Աւրեղիոսի հաւանութեամբ պատերազ-
մին վերին հրամանատարութիւնը յանձ-
նուեցաւ (161) Վերոս կայսեր: Պատե-
րազմը պաշտօնապէս կը կոչուէր հայկա-
կան և պարթևական պատերազմ: Վերոս
162ին հասաւ Ասորիք և կռիւին բուն ա-
ռաջնորդութիւնը յանձնեց իր զօրավարնե-
րուն ձեռքը, իսկ ինքն մնաց Անտիոքայ
մօտ Դափնիքի մէջ, որ պատերազմական

1. Դիոն 71, 2. Vita Marc. Aur. 8. Փրոնտոյ
Princ. hist. 318. 321. Լուկիանոս Յաղագս պատմա-
գրոչքեան 18. 19. 21. 25, 26, Աղեքսանդր 17. Կուա-
դրատոս ի FHG III 660. հմմտ. Schiller I 639.

գործողութիւնները վարելու գլխաւոր կե-
դրոն պիտի ըլլար:

Առանց երկմտութեան է թէ այս պա-
տերազմին մէջ, որ չորս տարի տևեց, վե-
րոսի ամենէն կարող զօրավարն էր Աւի-
տիոս Կասսիոս, զոր Պարթևաց Վաղարշու
դէմ դրկեց: Վաղարշ Ասորիքի մէջ Եւ-
րոպոս քաղաքին մօտ արիւնալից ճակատ
մը տուաւ, ուր Պարթևք յաղթուեցան:
Այս յաղթութիւնը քաջալեր տուաւ Հռով-
մայեցւոց, որոնց կայսրը պատերազմ ըս-
կըսելէն առաջ՝ վախնալով իր լեզէոնաց
զինուորական անհրահանգութենէն՝ խա-
ղաղութեան առաջարկներ ըրած էր, և
Վաղարշ այդ առաջարկները մերժած էր¹:
Կասսիոս մտաւ Միջագետք և Մծբինի ու
Եղեսիոյ առումէն յետոյ անցաւ Բաբելո-
նիա: Սելևկիա յունական քաղաքը, որ
յօժարակամ անձնատուր եղած էր, չնչին
պատճառանքներով աւարի և հրդեհի տըր-
ուեցաւ: Տիգրոնի մէջ արքունի դղեակը
գետնի հաւասարցուեցաւ: Պարթևք իրենց
երկրին խորերը քաշուած էին, ինչպէս որ
այսպիսի դէպքերու միջոց սովոր էին ընել:
Բայց նաև Կասսիոս շուտով բռնադատուե-

1. Փրոնտոյ առ Վերոս 167. Principia historia 318.
Նազարիոս paneg, Constantino 24 (Paneg. lat. X).
Mommsen RG V 407.

ցաւ Ասորիք դառնալ, վասնզի Պարթևաստանի և հռովմէական բանակին մէջ ճարակուող ախտ մը շատ կեանքեր կը յափըշտակէր ¹ :

Մինչդեռ կասսիոս Ասորիքի, Միջագետքի և Բաբելոնիոյ մէջ կը գործէր, վերոս երկրորդ բանակ մ'ալ Հայաստան ղրկած էր նոյնքան քաջ զօրավար Մ. Ստատիոս Պրիսկոսի և Մարտիոս վերոսի առաջնորդութեամբ : Առաջինը որ արդէն նախորդ տարին պատերազմած էր, յամի 162ին Արտաշատը առաւ, որուն համար վերոս կայսրը Հայկական կոչուեցաւ, ինչպէս որ յետոյ կասսիոսի յաղթութիւններով Պարթևական կոչուեցաւ ² :

1. Դիոն 71, 2. Vita Marc. Aur. 8, Verus 7, Avid. Cass. 6. Լուկիանոս Յդ. պատմագրութեան 20. 24. 28. CIL III 1457. հմմտ. Gutschmid Gesch. Ir. 148-9. Schiller I 640-3:

2. վերոսի և Մարկոս Արեղիոսի Armeniacus տիտղոսով կոխած դրամներու մեծ բազմութենէն ես քանի մը հատը միայն կը յիշեմ, ժամանակագրական կարգով: Յամէն 162, Ալ L. Verus Aug. Armeniacus, Չախ Armen. tr. p. IIII imp. II. S. C. Cohen III թիւ 111. նոյն թուականէն են 112. 154: Յամին 163էն են թիւք 46-46. 237: Յամի 164էն են թիւք. 169-171, և ոսկեդրամքն թիւք 39-40, որոնք Չախին վրայ ունին Rex Armen. dat. tr. p. IIII. imp. II cos. II և կը ներկայացնեն Սոյեմի պսակումը: վերոս Parthicus maximus տիտղոսը կ'առնէ 165ին, տես թիւ 64-67: Յամի 166էն մէկ դրամի մը վրայ միայն, թիւ 195, Medicus տիտղոսն առած է. Ալ L. Verus. Aug. Arm. Parth. Max. Medic, Չախ tr. p. VI. imp. III. cos.

Պրիսկոս քիչ վերջը մեռնելով հայկական պատերազմը յանձնուեցաւ միայն Մարտիրոս վերոսի: Սա հայկական պատերազմը վերջացնելով անցաւ Մարաստան-Ատրրպատական, և հոն իր քաջութեամբ իրեն համար վաստկեցաւ դափնիներ, իսկ կայսերաց համար Մարական տիտղոսը: 163 տարւոյն վերջերը նաև Հայաստանի վերստին նո՛ւաճումը ամբողջացած էր: Պարթևները դուրս հալածուած էին երկրէն, իսկ Հայերը խրատուած¹:

Ո՞վ պիտի բարձրանար գահը այժմ:

Երեք թագապահանջներ կամ մանաւանդ երեք հին թագաւորներ կային, նախ վաղարշ, զոր թերևս Հայք ամենէն աւելի կը փափագէին. երկրորդ Սոյեմ, զոր Հռովմայեցիք դրած իսկ Հայք ու Պարթևք հալածած էին, երրորդ Բակուր, զոր Պարթևք Սոյեմի տեղ դրած էին և որուն

II. S. C. — Միևնոյն տիտղոսները կ'առնու նաև Մարկոս, բայց քիչ մը ուշ. այսպէս Armeniacus դրամոց վրայ կը տեսնուի յամի 163ին, տես Cohen II թիւ 745-6. Parthicus maximus 166ին, տես թիւ 143-4. 288-9. 727-30. իսկ իւր միակ դրամը Medicus տիտղոսով է նմանապէս 166էն, թիւ 731:

1. Vita Marc. Aur. 9. Verus 7. հմմտ. Gutschmid Gesch. Irans 148-8. Schiller I 640-3: Բացայայտ վկայութիւն մը չունինք թէ Պրիսկոս Արտաշատը կործանած ըլլայ. այսուհանդերձ մայրաքաղաքին վաղարշապատ փոխադրուիլը լաւ նշան մը է:

դէմ Հոովմայեցիք մասնաւոր հակառակու-
թիւն մը չունէին, վասնզի ան ջանացած
էր թէ՛ Պարթևները և թէ՛ Հոովմայեցիները
գոհ թողուլ: Կայսրներու որոշողութիւնը
սակայն ինկաւ ՍՈՅԵՄ Ի (նախ 140/3-
160, յետոյ 164-185...) վրայ: Բայց
այս որոշողութիւնը Հոովմայ մէջ քննա-
դատութենէ զերծ մնացած չտեսնուիր, քե
Հայոց քաղաքաշինչիւնք մակառանց Սոյեմի
քան Վաղարշապատը և. կամ, քե Բա-
կոչը քաղե գրկած է: Միքե այսպիսի խօս-
քերով չէ՞ որ կը մեկնարակէին¹:

Մարտիոս վերոս իրեն ստորակարգեալ
Թուղիդիտէս զօրավարին յանձնեց, որ
Սոյեմը վերստին² Հայաստան տանի:

1. Փրոնտոյ առ վերոս 179. հմմտ. Vita Veri 7:

2. Մասնաւոր կերպով կը շեշտենք այս բանը, վասնզի
Սոյեմի առաջին թագաւորութիւնը ասկից կախում ունի:
Մեզի պահուած դրամէ մը (տես էջ 214 ծան. 3) յայտնի
է, որ 140էն 143ի մէջ Պրոս կայսրը՝ Հայոց թագաւոր
մը տուաւ: Այս տրուած թագաւորը ես Սոյեմը կը հա-
մարիմ. նախ, վասնզի Յամբլիկոս առ Փոտայ 94 կ'ըսէ
անոր նկատմամբ թէ βασιλεύς πάλιν τῆς μεγάλης
Ἀρμενίας վերստին քաղաքաշինչիւնք մեծաց: Երկրորդ,
Գրոնի Սուրիասայ Μάρτιος քով պահուած հատակաորը
καταγαγεῖν բանը կը գործածէ, որ ընդհանրապէս վերն-
տելոց կամ արտերելոց դարձին համար կը գործածուի:
Երրորդ, երբ կայսրները զինքը կ'ընտրեն այնպիսի պա-
րագայի մը մէջ, յորում Բակուր արդէն թագաւոր և Սո-
յեմէն աւելի զուտ Արշակունի մ'էր և միանգամայն
Հոովմայ թշնամի մը չէր, այնչափ որ յետոյ կայսերա-
կան gens Aureliaի մէջ ընդունուեցաւ, կը ցուցնէ թէ
Սոյեմը Հայոց գահուն վրայ դնելով կայսերը ուզեցին

Թուկիդիտէս, ինչպէս նաև իր գլխաւորը, շատ բան քաղցրութեամբ և ժողովրդեան հետ զգուշաւոր վարմունքով միայն կրցաւ ընել, և հակառակ քանի մը նախարարներու դիմադրութեան, թագաւորը տարաւ Հռովմայեցիներէ գրաւուած Նոր-քաղաքը կամ Վաղարշապատ, որ այնուհետև երկրին մայրաքաղաքը պիտի ըլլար¹: Պատերազմէն վերջը Վերոս կայսրը, որ անձնապէս ոչինչ ըրած էր քան գլխաւոր սպարապետի անուն կրելը, Հռովմ դարձաւ և երկու կայսրներ շքեղ յաղթանակ մը կատարեցին: Պարթևները խոնարհած էին, Հայաստան դարձեալ Հռովմայ ազդեցութեան տակ բերուած էր. Բակուր

յառաջագոյն կրուած նախատինքի մը փոխարինել: Գարձեալ, դրամին վրայ Սոյեմի կրած հռովմէական տարազը կը համաձայնի իր ծերակուտական աստիճանին հետ, և միանգամայն Պիոսի և Վերոսի դրամներու վրայ դէմքի նոյնութիւնն ևս մեր ըսածը հաստատել կը թուի, հմմտ. Cohen II տախտակ 13 թիւ 758 և III տախտակ 3 թիւ 169:

1. Սուրիդաս Μάρτιος. այս կոչումը Սուրիդաս Գիոնէն առած է, որ գիրք 71ի սկիզբներուն կը վերաբերի (հրտկ. Dindorf, հտր. IV էջ 171): Հռովմայեցւոց կատարի թշնամիներէն մէկն էր Տրդատ անուամբ նախարար մը, որ Հենիոքներու թագաւորն սպանեց, որոնք Հռովմայեցւոց միացած Հայոց դէմ կը կռուէին, և Մարտիոս Վերոսին սպաննալիքներ ըրաւ, երբ սա զինքը սպանութեան և սպստամբողական գործոց համար պատժել կ'ուզէր: Վերջը Մ. Աւրեղիոս զայն Բրիտանիա աքսորեց, Գիոն 71, 14:

Թագաւորը Վերոսի հետ միասին հռովմեկաւ, ուր իր Միհրդատ եղբօր հետ միասին կայսերական ընտանեաց (*gens*) մէջ ընդունուեցան: Տապանաքարի արձանագրութիւնը զոր Բակուր իր եղբօր գերեզմանին վրայ դրաւ, մնացած է մինչև այսօր¹:

Սոյեմի թէ՛ գործոց և թէ՛ մահուան վրայ բնաւ տեղեկութիւն չունինք. հռովմէական արձանագրութենէ մը, որ Վաղարշապատ (Էջմիածին) գտնուած է, սաչափը յայտնի կ'ըլլայ թէ մինչև 192 Հայոց մայրաքաղաքին մէջ հռովմէական փոքրիկ գունտ (*vexillatio*) մը կար²:

1. Corpus inscr. graec. 6559, «Աստուածոց Սանդարամետականաց: Աւրելիոս Բակուր, արքայ Մեծ Հայոց, ստացայ այս դամբանը իմ ամենաքաղցր եղբօրս Աւրելիոսի Միհրդատայ համար, որ ինձի հետ ապրեցաւ յիսունևվեց տարի ու երկու ամիս»:

2. CIL III 6052, նոյնը Բազմավեպ 1906 յուլիսի թիւին մէջ ինձմէ թարգմանուած և լուսարանուած: Արձանագրութիւնը Կոմոզոսի չորրորդ հիւպատոսութեան և եօթներորդ անգամ ինկերատոր տիտղոսը առած ժամանակէն է, որ է 185 տարիէն. սակայն այն պարագայն, որ Կոմոզոսի անունը քերուած է արձանագրութեան վրայէն, կը ցուցնէ թէ դեռ 192ին, որ է Կոմոզոսի մահուան տարին, տակաւին հռովմայեցի գունդ կար ի Հայս: Վասնզի սովորութիւն էր, որ ծերակոյտը զէջ կայսրնեբու մահէն վերջ, ընդհանրապէս անոնց անունը քերելու տար հասարակաց արձանագրութեանց վրայէն: Մերինէն զատ շատ քարերու վրայ ևս Կոմոզոսի անունը քերուած է: — Աթենագորասի ճառի մը վերնագրին մէջ (հրակ. Gallandi II 3) Կոմոզոս 175ին իր հօր Մ. Աւրելիոսի հետ *Armeniacus* կ'անուանուի:

Ըսել է թէ 1645ն ի վեր հոն շատ բան փոխուած չէր, ինչ որ արդէն խաղաղութեան խանգարման մասին խօսք չըլլալէն ևս կը հաստատուի:

Կը տեսնուի որ Սոյեմի մեռնելովը նաև պահապան գունդը Հայաստանէն քաշուած է: Արդէն 193ին Հայոց գահուն վրայ դարձեալ Արշակունի մը նստած էր, և երբ Նիգեր Պարթևներէն, Աղիաբենցիներէն և Հայերէն օգնութիւն խնդրեց ընդդէմ Սեպտիմիոս Սևերոսի, երկու առաջինները խոստացան անոր, իսկ Հայոց թագաւորը, որ Սևերոսի հետ ծածուկ բանակցութեանց մէջ ըլլալ կը թուի, յայտարարեց թէ ինքն չէզոք պիտի մնայ, և եթէ Սևեր իր վրայ յարձկի, պիտի գիտնայ ինքզինքը պաշտպանել: Քիչ յետոյ Նիգեր յաղթուեցաւ Կիւզիկէի մօտ և իր բանակին կտորները ցրուեցան Ասիա, Գաղատիա, հայկական լեռանց և Տաւրոսի կիրճերուն մէջ¹:

Երբ Սևեր Արևելքի և Արևմուտքի մէջ ջախջախեց իր հակառակորդները, դիմեց դէպի արևելեան սահմանագլուխը՝ Եփրատ: Հայոց թագաւորը նուէրներ և պատանդներ դրկեց անոր ընդառաջ և խաղաղութեան դաշինք մը խնդրեց, զոր կայսրը շնոր-

1. Հերոդիան 3, 1-2:

հեց (շուրջ 198ին) ¹ : Սևեր յաղթանակաւ լմնցուց իր պարթևական արշաւանքը, բացի անապատներու մէջ շինուած Հատրաքաղաքէն, որու պարիսպներուն առջև բուլոր հոովմէական զէնքերը խոնարհեցան ² :

Մեզի աւանդուած չէ անունը Հայոց թագաւորին, որ խոհեմամիտ Արշակունի մը եղած ըլլալ կը թուի ³ :

Սևերի որդին և յաջորդը Անտոնինոս կարակալլա (211-217) կը ցանկար իր հօր զինուորական փառքն ստանալ, առանց սակայն անոր կարողութիւններն ունենալու : Ուստի մեկնեցաւ զէպի Արեւելք, արշաւանք մ'ընելու համար : Իր նպատակը կը թուի թէ Տրայիանու ծրա-

1. Հերոտիան 3, 9:

2. Իր դրամներն *Parthicus, Arabicus, Adiabenicus* տիտղոսներով յամէն 195 տես Cohen III թիւ 232. 537:

3. Հաւանականաբար նա խոսրով կը կոչուէր. վասնզի կը կարծուի թէ նա Եզիպտոս զացած ըլլայ և Թեբէի արձանագրութիւն մը իրեն կը վերաբերի, Χοσρόης Ἀρμένιος ἰδών ἐθαύμασα խոսրով Հայ տեսնելով զարմացայ, Corp. inser. graec. 4821, հմմտ. Gutschmid ի ZDMG հար. 31 էջ 49: Երկրորդ, Խորենացի Բ 75 կը յիշատակէ կարակալլայի ժամանակ Հայոց թագաւոր մը խոսրով անուամբ, հայր Տրդատայ, և կ'ըսէ թէ ան չէզոք կեցաւ կայսեր և Պարթևաց Վաղարշի մէջ տեղի ունեցած պատերազմին մէջ: Խորենացի իր այս տեղեկութիւնը մեքենաբար օրինակած է Փիրմիլիանոսի կեսարիոյ եպիսկոպոսի (իբր 230) գրած վկայաբանութենէ մը. վասնզի Խորենացի կ'աւանդէ զայն, բայց չհաւատար անոր:

գրին գործադրութիւնը և իբր զինուորաց հարստացումն էր: Ան 215ի ապրիլին մեկնելով Նիկոմիդիայէն, ուր Հայոց և Պարթևաց ղէմ մեծ պատրաստութիւններ տեսած էր, քալեց ղէպի արևելեան սահմանագլուխը, պատճառելով թէ Պարթևաց թագաւորը հռովմէական բանակէն փախչող երկու փախստեայները իրեն ետ չէր դարձուցած: Այս փախստականներն էին Կիլիկեցի Անտիոքոս մը, որ շնական փիւսոփայ մ'էր և հռովմէական բանակին մէջ բարձրաստիճան և ազդեցիկ անձինքներէն մին. իսկ երկրորդը Տրդատ անուամբ Արշակունի իշխանագուն մը¹: Երբ Վաղարշ Ե (209–222) տեսաւ որ կայսրը լրջօրէն պատերազմի կու գայ, Անտիոքայ մէջ անոր յանձնեց երկու փախստեայները²: Այս կերպով այս տարի պատերազմի վտանգը հեռացուեցաւ, և կայսրը իր ժա-

1. Տրդատայ անձնաւորութիւնը շատ յստակ չէ. ան կրնայ Վաղարշ Եի անանուն եղբայրն ըլլալ, որ 199ին Սևերի բանակին մէջն էր, Գիոն 75, 9. հմմտ. Gutschmid Gesch. Ir. 154: Ան կրնայ նաև այն Տրդատն ըլլալ, որ հաւանականաբար արդէն 216ին հայկական ապստամբութեան առաջնորդն էր և 217ին սկիզբները Մակրինէն իբր Հայոց թագաւոր ճանչցուեցաւ, Գիոն 78, 27. հմմտ. Մոմսըն RG V 418–9: Կրնայ նաև ըլլալ, որ երկու պարագայներու մէջ յիշուածն միևնոյն Տրդատն է. և այսինձի հաւանագոյն կը տեսնուի:

2. Գիոն 77, 21. Gutschmid Gesch. Irans 154:

մանակն անցուց մասամբ Ասորուոց և մասամբ Աղեքսանդրիոյ մէջ, ուր իր սոսկալի արիւնհեղութիւններովը նշանաւոր հանդիսացաւ: Անտիոք եղաւ իր ձմերոցի տեղը, ուր 216ին սկիզբները Եղեսիոյ Աբգար թագաւորը բարեկամաբար քովը կանչելէն վերջը գերի բռնեց, անոր երկիրը դիւրաւ գրաւելու համար:

Միւսնոյն տարւոյ մայիսին ժամանակները նաև Հայոց թագաւորը հրաւէր և սիրալիր նամակներ ընդունեցաւ կայսրէն, և միանգամայն խոստում, թէ ինքն՝ թագաւորը իր որդիներուն հետ պիտի հաշտեցնէ, որոնց հետ սա վէճի մէջ էր: Խաբեբայ կայսրը միւսնոյն կերպով վարուեցաւ Հայոց թագաւորին, անոր կնոջ և որդւոց հետ, ինչպէս վարուած էր Աբգարու հետ: Բայց Հայերը զէնքի վազեցին: Կայսեր զօրավարը Թէոկրիտոս, որ կարակալլայէն բանակով մը Հայոց վրայ զրկուած էր, չարաչար յաղթուեցաւ և մեծ վնասներով քաշուեցաւ հայկական սահմաններէն¹:

Այս ժամանակս կայսրը ինքնին ասպատակութիւն մ'ըրաւ Մարաստան, և առանց մեծ յաջողութեան աւարով միայն

1. Դիոն 77, 12. 18-19. 21. Զոնարաս 12, 12:

դարձաւ, յետ Արշակունիներու, գերեզմանները Արբելայի մէջ աւերելու: Կարելի է թէ այս արշաւանքին առեւն նաև Հայաստանի ինչ ինչ կողմերը ասպատակ սփռած ըլլայ, իբրև վրէժխնդրութիւն մը Թէոկրիտոսի պարտութեան. վասնզի վերջը խօսք կ'ըլլայ Հայաստանէն առնուած աւարի ետև դարձուելուն¹: Պարթևաց ղէմ այս արշաւանքին իբր պատճառանք բռնած էր կայսրը Արտաւան Ե՛ (215-224) ժխտողական պատասխան մը, որով սա չէր ուզած իր դուստրը Կարակալլային կին տալ:

Պարթևները մինչև հիմայ լրջօրէն պատերազմի չէին պատրաստուած. այժմ կատաղաբար սկսան պատրաստութիւններ տեսնել, որպէս զի գարնան Հռովմայեցոց պատասխանեն: Բայց 217 ապրիլ 8ին Կարակալլա սպանդուեցաւ² և իր յաջորդը Մակրինոս, որ այժմ իր դիմացը տնկուած կը տեսնէր թշնամի հզօր բանակ մը, փորձեց խաղաղութիւն ձեռք ձգել գերիները

1. Գիոն 78, 27.

2. Տես իր *Victoria patrhuca* վերնագրով դրամները յամէն 217, Eckhel VII 218. Cohen III թիւ 354. 356-7. VII 23-4. Նա *Armeniacus* կը կոչուի ի CIL VIII 10236, զոր Rohden կ'ուզէ *Germanicus* սրբագրել, առ *PW Armeniacus*.

ես դարձնելով¹ : Սակայն Արտաւան պահանջեց որ Հոովմայեցիք դուրս ելնեն Միջագետքէն, ինչ որ Մակրին մերժեց : Վէճը պէտք էր լուծուիլ զէնքով, երկու արիւնահեղ պատերազմներ տեղի ունեցան, երկուքին մէջ ալ Պարթևք յաղթական ելան : Մակրին ստիպուեցաւ Միջագետքը Պարթևաց թողուլ և հաշտութիւնը 50 միլիոն դենարով գնել² : Այս բանս արգելք մը չեղաւ ծերակուտին Մակրինոսի Պարթևական տիտղոսը տալ, և ոչ ալ կայրը ամչցաւ իր դրամներուն վրայ իր պարթևական յաղթուորիներ հռչակելու³ :

Այս դաշնադրութեան մէջ Հայոց դերը հետևեալն եղաւ : ՏՐԴԱՏ Բ (Իբր 217-222), որ արդէն Հայաստանի մէջ գահը զրաւած էր, Մակրինոսէն իրեն ղրկուած թագը և միանգամայն իր մայրը ետ պիտի ընդունէր, զոր կարակալլա մետասան ամիս գերի պահած էր⁴ : Յետոյ, աւարը՝

1. Կարելի է թէ այս առթին ազատած ըլլայ կարակալլային յանձնուած Տրդատը (Գիոն 77, 21) որ, եթէ միևնոյն անձն է, անմիջապէս Հայոց գահը ելաւ :

2. Զոնարաս 12, 13 :

3. Այսպիսի են ոսկի և արծաթ դրամները յամէն 218, Cohen II թիւ 60-61 :

4. Կարակալլայի ժամանակ կատարուած դիպաց ժամանակագրութեան իբր մեկնակէտ առի «մետասան ամիս» բացատրութիւնը, Գիոն 78, 27. հմմտ. Rohden առ PW Aurelius 46 : Այս պատճառաւ է որ չէի կրնար հետևիլ Մոմսընի RG V 418 ըրած յարմարացումներուն :

զոր Հռովմայեցիք Հայերէն առած էին՝ ետ պիտի դարձուէր և միանգամայն բոլոր երկիրները, զորս իր հայրը Կապադոկիոյ մէջ ստացած էր, իրեն պիտի տրուէին: Նմանապէս տարեկան այն դրամը, զոր Հռովմայեցիք իրեն հօր կը վճարէին, կը յուսար Տրդատ այսուհետև ևս ընդունիլ¹:

1. Կասսիոս Գիոն 78, 27. Vita Macr. 12, շատ վստահելի է: Vita Diadum. N. 8: — Գիոնի վերջին երկու տեղեկութիւններէն, երկիրներու (τὰ χωρία) և դրամական հատուցման մասին, առաջինը հաւանականաբար կը վերաբերի Հայոց թագաւորներու այն առանձնական ստացուածքներուն, որոնց յետոյ նաև Արշակ Բի ժամանակ կը հանդիպինք (տես վարը): Իսկ երկրորդը կը վերաբերի անշուշտ դրամական այն նպաստին, զոր Հայոց թագաւորները կը ստանային Հռովմայեցիներէն Կաւկասի անցքերու պաշտպանութեան ծախսը հոգալու համար (տես այդ անցքերը էջ 235): Քանի որ Հայաստան, Վրաստան և Աղուանք Հռովմայ ազդեցութեան տակ ինկած էին, Հռովմայեցւոց պարտքն էր Կաւկասի անցքերուն հսկել, որպէսզի բարբարոսներ հռովմէական երկիրները չապականեն:

Յամի 75ի Աւանաց արշաւանքէն անմիջապէս յետոյ Թիֆլիսի մօտ Հարմոզիկայի մէջ հռովմէական գունդ կը գտնենք, (CIL V 6988), որոյ գլխաւոր նպատակն էր անտարակոյս անցքերը պահել: Բայց անցքերը գլխաւորաբար տեղացի զինուորներ կը պահպանէին, որոնց Հռովմ կը վճարէր. մասնաւորապէս Տէրպէնտի անցքին Հայք կը հսկէին: Տէրպէնտը Հայոց Վաղարշի (116-140/3) ատեն Հայոց ձեռքն էր (հմմտ. Գիոն 69, 15. Խորեն. Բ 65): Տրդատ Բ կը յուսար նպաստները ինքն ալ ընդունիլ, զոր իր հայրը Հռովմէն ընդունած էր: Խոսքով Ա հոն յաղթեց բարբարոսներու և սիւն մը կանգնեց յունարէն արձանագրութեամբ, ցուցնելու համար թէ Հռովմայեցւոց զերիշխանութեան տակն է (Խորեն. Բ 65): Միևնոյն թագաւորը երկու դռներն ալ բացաւ Հոնաց առջև, Սասանեանց երկիրները աւերել տալու համար

Արտաւանու և Մակրինոսի մէջ կատարուած դաշնադրութենէն յետոյ, որ վերջինն եղաւ Հոովմայ և Պարթևաց մէջ, մեծամեծ փոփոխութիւններ տեղի ունեցան Իրանի մէջ: Մեղկացած և թագի համար անվերջանալի կռիւներով տկարացած Արշակունիներու տեղ անցաւ Սասանեաններու կորովի հարստութիւնը, որուն հիմնադիրը Արտաշիր (224-241 կամ սկիզբ 242ին)¹ իշխան մ'էր Պարսիկ նահանգէն:

Այս ազդու և հզօր Պարսիկը, որ իր բնիկ գաւառին մէջ գրեթէ անկախ իշխած էր, զինուորական ահագին ոյժ ժողովեց իր շուրջը և արշաւելով կարգաւ գրաւեց Կրման, Շօշաստան և Մեսենէ աշխարհները և ասով արքայից արքային ուշադրութիւնն իր վրայ դարձուց: Սոսկալի ընդհարումներ տեղի ունեցան Արտաւանու և Արտաշրի մէջ. երրորդ և վերջին պա-

(Ագաթանգ. 30): Դ դարուն մէջ Տէրպէնտը անցաւ Պարսից ձեռքը, որոնք զայն դեռ ամրացուցին. այդ ժամանակէն ի վեր Պարսիկը սկսան Հոովմայեցիներէն պահանջել դրամական նպաստը, զոր հաւանականաբար Յովիան իրենց խոստացած էր. դրամի չվճարումը մշտնջենական առիթ մ'էր պատերազմի երկու տէրութեանց մէջ (Յովհ. Լիւդացի 3, 52):

1. Սասանեան թագաւորաց տարեթիւերը կու տամ Նէօլտէքէի (Aufsätze zur persischen Geschichte) նորագոյն քննութիւններով ճշգրտած տեղեկութեանց համեմատ, ինչպէս որ Պարթևացը տուած իմ Գուտշմիտի (Geschichte Irans) համեմատ:

տերազմին մէջ Արտաւան ինքնին ինկաւ
և իրեն հետ դադրեցաւ Արշակունեաց գըլ-
խաւոր ճիւղը Պարսկաստանի մէջ: Այս
կտրուոր դէպքին թուականը անորոշ է. ու-
մանք զայն 224ին իսկ այլև 227ին մէջ
կը դնեն¹:

Այդ ժամանակ Հայաստանի մէջ կը թա-
գաւորէր ԽՈՍՐՈՎ Ա. (իբր 222-250),
որ Տրդատ Բին յաջորդած էր: Արդեօք
Խոսրով հարազատ եղբայր մ'էր Արտա-
ւանու, չենք գիտեր. բայց իբր թագակիր
Արշակունի մը անիկայ ապահովապէս մեր-
ձաւոր ազգական մ'էր սպանելոյն²: Այս
պատճառաւ է որ Խոսրով իրենց ընտա-
նեաց սպառնացող վտանգը տեսնելով փու-
թաց Արտաւանու օգնութեան հասնիլ, բայց
ճամբան անոր մահը լսելով տխրած ետ
դարձաւ Հայաստան³, ուր իրեն քով ժո-
ղովեցան Արշակունի ընտանեաց անդամ-

1. Nöldeke, Geschichte der Perser und Araber
էջ 409-411, և Aufsätze էջ 89 հաւանականագոյն կը
համարի 224 տարիլ 28. տես նաև իր յօդուածը առ PW
Artaxerxes 5: Մոմսըն RG V 419 կ'ընդունի 224,
իսկ Gutschmid, Gesch. Irans էջ 162 կ'ընդունի 227ը:

2. Ագաթանգ. 30, Խորեն. Բ 71, հմմտ. Փաւստոս Գ
2. 3: Միայն Ագաթանգեղի յունարէն թարգմանութիւնը
(հրարկ. de Lagarde, Göttingen 1887 էջ 8) Խոսրովը
եղբայր կը դնէ Արտաւանու, և անշուշտ այդ պատճա-
ռաւ է որ Պրոկոպիոս Aedif. III 1 զայն [Արշակը]
եղբայր կ'անուանէ Պարթեաց թագաւորին:

3. Ագաթանգ. 30, Խորեն. Բ 71:

ներ, Արտաւանայ որդիքը և անոր կուսակիցները¹ :

Արտաշիր ուզեց Արտաւանայ վրայ տարած յաղթութեան անմիջապէս երկրորդ տարին յարձակում գործել անոր ամենէն զօրաւոր և մերձաւոր կուսակցին՝ Հայոց թագաւորին վրայ² : Բայց Խոսրով դատարկ կեցած չէր. անիկայ պատկառելի ուժեր հաւաքած էր իր շուրջը : Բոլոր Արշակունիներու կոչ դրկած էր, որ գան և ամէնքը միասին հասարակաց թշնամւոյն դէմ կռուին. սակայն անոնց մեծամասնութիւնը լաւ համարեց Սասանի որդւոյն հպատակիլ, քան Արշակունի հարստութեան օգտին համարվտանգի ենթարկուիլ³ : Միայն Արտաւանու որդիները, բնականաբար իրենց հաւատարիմ մնացած գնդերով և կուսակիցներով, և Մարեր (Ատրպատականցիք) միացան Խոսրովի հետ⁴ :

Հայկական աղբիւրները, որոնք ինչ ինչ անճշդութեանց հետ նաև շատ մը ճիշդ և

1. Դիոն 80,3. Խորեն. Բ 37 «սիրելեօք յարեցելովք». Groebe առ PW Aurelius 221.

2. Այս ժամանակիս արտաքին աղբիւրներու մասին տես Յաշեղոսած Ե, կենսագիրք կայսերաց կամ Scriptores Historiae Augustae.

3. Ագաթանգ. 32, Խորեն. Բ 72. Nöldeke, Gesch. der Araber und Perser.

4. Կասսիոս Դիոն 80,3.

կարևոր բաներ կը բովանդակեն, կը խօսին գլխաւորապէս երկու ընդհարումներու մասին¹, որոնցմէ առաջինը արտաքին մատենագիրներէ ևս վկայուած է: Այս պատերազմներու ասպարէզը միշտ Ասորեստանն (այսինքն Աղիաբէն) է և շատ հաւանականաբար նաև Ատրպատական (Փոքր-Մարք), որուն բնակիչները մասն կը կազմէին Խոսրովի բանակին, ինչպէս որ կասուիոս Գիոն կ'աւանդէ: Վրէժխնդրութեան հոգևով լեցուած հայկական բանակը կը կարծէր շատ աւելի յառաջ քալել, անոր համար իրենց պատերազմի ծրագրին մէջ դրած էին «ասպատակ դնել ի կողմանս Պարսից, արշաւել ի կողմանս Ասորեստանի, մինչև ի դրունս Տիսբոնի²»:

Առաջին պատերազմին մէջ Խոսրովայ հետ էին, բացի Արտաւանու որդիներէն և Մարերէն, նաև «հիւսիսային ազգ»եր, այսինքն կաւկաս լեռան շուրջը գտնուող ժողովուրդներ, հարաւակողմէն Վրացիք և Աղուանք, հիւսիսակողմէն Հոնք, որոնց Խոսրով պարսկական զաւառներու վրայ

1. Ագաթանգեղոս, որ դեռ միշտ մուխ է, մինչև էջ 32 կը խօսի պատրաստութեանց վրայ, էջ 33-34 կը խօսի առաջին ընդհարման վրայ (հմմտ. Խոր. Բ 73), իսկ էջ 34-35 երկրորդ ընդհարման վրայ (հմմտ. Խոր. Բ 72):

2. Ագաթանգեղոս 31:

խուժել տուաւ՝ բանալով կաւկասի երկու նշանաւոր անցքերը, Դուռն Ալանաց և Իւրոյպահակ¹ : Այս վերջին ժողովուրդները կարելի է իրենց ուրիշ ընդհանուր անուամբ Մազքուժք կամ Մասսագետք² կոչել, որոնք տակաւին Դ դարու մէջ Արշակունի թագաւորներ ունէին և անոնք մեր թագաւորաց ազգական կը նկատուէին, ինչպէս որ ծանօթ է³ : Կը տեսնուի որ Խոսրով զանոնք վարձած չէր, այլ իրենց յօժարութեամբ անոր օգնութեան եկած էին⁴ : Միւս կողմանէ այս ժողովուրդները դեռ մինչև 260 Պարսից ազդեցութեան տակ չէին⁵ :

1. Ազաթանգ. 30, Խորեն. Բ. 73: Gutschmid ի ZDMG հտր. 31 էջ 47-48 ոչ մէկ դժուարութիւն չտեսներ կաւկասեան ժողովուրդներու օգնութեան գալուն մէջ: — Յիշեալ անցքերէն Ալանաց Դուռն է այսօրուան Տարիէլ անցքը, Թիֆլիսի և Վլաթիկաւկասի մէջ, զոր հիւնները ստէպ անճշդօրէն Դուռն կասալից Phylae Caspiae կը կոչեն: Իւրոյպահակը, զոր Պրիսկոս ի FHG IV 105 Դουροειπαάχ կ'անուանէ, է այսօրուան Տէրպէնար, կասալից ծովուն վրայ. հայ հեղինակները զայն կ'անուանեն նաև Դուռն Ճորայ, կասալից, Հոնաց, Աղուանից: Վերջը Պարսիկք զայն կրկին ամբացուցին և ինչպէս Յովհաննէս Լիւդացին Յ. 53 կ'ըսէ, զայն իրենց լեզուով Βιραπαράχ անուանեցին, որ Ազաթանգեղի Իւրոյպահակին հետ նոյն է, հմմտ. Marquart, Eransahr էջ 106:

2. Ազաթանգեղոս էջ 30 և 31ի մէջ անոնց անունները կը համրէ. հմմտ. Դիոն 69,15. Զոնարաս 12,24. Փաւստոս Գ 7. Ամմիանոս 25,5,17:

3. Փաւստոս Գ 6:

4. Ազաթանգեղ 31:

5. Vita Valer. 4.

Արտաշիւր Հայոց թագաւորին պատրաստութիւնները տեսնելով քալեց անոր վրայ (225 ?). բայց խոսրով պատերազմի մէջ յաղթեց անոր բանակներուն և զայն փախցուց և մեծ աւարով ետ դարձաւ Վաղարշապատ¹ : Այս առաջին պատերազմին մէջ Հռովմայեցիներ չեն յիշուիր. բայց խոսրով անտարակոյս անոնց օգնութեան դիմած էր : Եւ ճիշդ յաջորդ տարին երկրորդ պատերազմին համար կայսեր հրամանաւ «հասանեն նմա (խոսրովու) յօգնականութիւն յԵգիպտոսէ և յանապատէն մինչև ի ծովեզերսն Պոնտոսի²» : Յիրաւի այժմ անապատէն Հայերու օգնութեան եկան Սարակինոսք կամ Արաբք³, որոնք հռովմէական հովանաւորութեան տակն էին : Դարձեալ, պիտի տեսնենք որ Հայաստանի մէջ հռովմայեցի զնդեր կային, զորս յետոյ Պարսիկք հալածեցին հոն-

1. Դիոն 80,3. Զոնարաս 12,15. Ագաթանգեղ 33. Փարպեցի 51. Խորեն. Բ 72. Gutschmid, Gesch. Irans 163. Nöldeke առ PW Artaxerxes 5. Groebe առ PW Aurelius 229. Niese, Römische Gesch. 348, չորրորդ հրակ. : Tabari, Gesch. der Araber und Perser էջ 15 թէ՛ Հայաստանը և թէ՛ կրկին Մարաստանները գրաւել կու տայ Արտաշիւր, բայց Նէօլտէքէ (անդ, ծան. 2 և Aufsätzeի մէջ) թապարիին ըսածը իրաւամբ կը մերժէ իբր անճիշդ :

2. Խորեն. Բ 72 :

3. Ագաթանգ. 35 :

կից¹ : Ռւրեմն Խոսրով Հոովմայեցւոց և իր նախկին դաշնակիցներու ձեռնտուութեամբ երկրորդ յաղթութիւն մ'ալ տարաւ Ասորեստանի մէջ Պարսից վրայ և տասը տարի չդադրեցաւ յարձակումներով աւերել և աւարի առնուլ իր թշնամեաց երկիրը² :

Սակայն մինչև 230 Արտաշիւր այնքան զօրացաւ որ, Հոովմայեցիք այդ տարուան մէջ յարձակման մը կը սպասէին Սասանեանի կողմէն : Պարսիկ հեծելագնդեր գրաւեցին Միջագետքը և արդէն կը թափանէին Ասորւոց և Կապադովկիոյ կողմերը : Սևերոս Աղեքսանդր կայսրը (222-235) Արևելք փութաց, ուր հոովմէական շահեր և հոովմէական պատիւը մեծ վտանգի մէջ էին : Յամի 232ի գարնան բաժնեց իր բանակը, ինչպէս կը տեսնուի, երեք թևերու. ձախ թևը պէտք էր բարեկամ Հայաստանէն անցնելով Մարաստանի մէջ թշնամւոյն վրայ յարձկիլ³, աջը Միջագետքէն պէտք էր դիմել դէպի Եփրատի ու Տիգրիսի գետաբերանը, իսկ միջինը՝

1. Ագաթանգ. 42.

2. Ագաթանգ. 42. Խորեն. Բ 72: Այս պատերազմը կրնայ իբր արձագանք մ'ըլլաւ իր Սևերոս Աղեքսանդր կայսեր արշաւանքի մասնակցութեան :

3. Հերոդիան 6,5,1:

որուն կայսրը ինքնին կը հրամայէր՝ դիմեց դէպի Պալմիրա:

Թէ արդեօք Հռովմայեցիները որոշիչ յաղթութիւն մը տարին, յայտնի չէ, վասն զի հոս մեր աղբիւրները շատ պակասաւոր են և անվստահելի: Հաւանականագոյնը սակայն այն կը թուի որ, Հռովմայեցիք ձախ և միջին թևերու մէջ տեղի չտուին թշնամեաց առջև, իսկ աջ թևը ջնջուեցաւ հարաւային կողմ: Ոչ խաղաղութեան մը դաշինքի վրայ և ոչ համաձայնութեան մը վրայ խօսք կ'ըլլուի. ուրեմն պատերազմը կրնայ անորոշ ելք մը ունեցած ըլլալ: Պարսիկները բոլորովին կը լռեն, իսկ Հռովմայ մէջ կայսեր յաղթութիւնը և դարձը մեծահանդէս կը տօնուի և նոյն իսկ դրամներու վրայ կը հռչակուի¹: Հռովմ գէթ սաչափ կրցած էր ընել որ, Պարսիկը իր անյազ պահանջներուն չափ մը դրաւ և իր յառաջխաղացումը պահ մը դադրեցուց: Միջագետք հռովմէական մնաց²:

Ինչպէս որ կը նշմարուի արդէն Հայաստան կարևոր դեր մը խաղաց այս ար-

1. Eckhel VII 275.

2. Տես Դիոն 80,4. Զոնարաս 12,15. Հերոդիան 6, 4-6: Սինկելլոս p. 357. հմմտ. Gibbon, The decline and fall of the roman empire I 339-40. Mommsen RG V 420-1. Nöldeke առ PW Artaxerxes 5. Groebe առ PW Aurelius 221. Schiller I 778-81.

շաւանքին մէջ: Ան Պարսից ազդեցութեան տակ չէ և կ'ընծայէ ապահով յենարան մը հռովմէական լեզէոններուն, որոնք անկից կը մտնեն Մարաստան, և հայկական բանակներու օգնութեամբ կարող կ'ըլլան ամենէն աւելի պահել հռովմէական արծիւներու պատիւը: Այս արգելք չեղաւ սակայն որ հայկական ձմեռը բաւական վնասներ չպատճառէ նաև ձախ թևին՝ դարձին ժամանակ¹: Դաշնակից Հայաստանի մէջ Հռովմայեցւոց յաջողութեան կը վկայէ նաև կայսեր կենսագիրը, նաև Հայաստանի մէջ Յռնիոս Պարևատոսի ձեռքով գործերը յաջողութեամբ կատարուեցան²: Աղեքսանդր կայսրը դարձաւ Հռովմ (233 ամառ) որպէս զի հիւսիսային սահմանները պաշտպանէ Գերմաններու դէմ: Այս պատերազմին համար ան բերաւ նաև հայ աղեղնաձիգ գնդեր, որոնք նախ 238ին՝ Մաքսիմիանոսի ժամանակ՝ թշնամւոյ դէմ տարուեցան: Սկերոս Աղեքսանդրի ժամանակ Հայք դաշնակից և բարեկամ էին Հռովմայ և շատ հաւանական է թէ կայսրը յիշեալ աղեղնաւորաց փոխարէն հռովմէա-

1. Հերոդիան 6,2-6. Զոնարաս 12,15:

2. Vita Sev. Alex. 58,1: Acta sunt res feliciter... et in Armenia per Junium Palmatum.

կան լեգէոնականներ թողած էր խոսրովի քով ¹ :

Մաքսիմինոս կայսեր ժամանակ Պարսիկները գրաւեցին Մծբին, Խառան, Միջագետք և նաև այս կողմանէ մօտեցան Հայաստանի սահմաններուն ² :

Երբ Գորդիանոս Գ^Է ժամանակ Հռովմայեցւոց պետութիւնը ազատեցաւ իր ներքին ճգնաժամէն, երիտասարդ կայսրը խոշոր բանակի մը գլուխ անցած դիմեց (242) Պարսից դէմ: Կայսեր բանակին գլխաւոր և իրական առաջնորդն էր Փուրիոս Տիմեսիթէոս, սպարապետ պրետորական գնդին և Գորդիանու աներ: Կարճատենուան մէջ կորսուած քաղաքներն Մրծբին և Խառան ետ առնուեցան, Շապուհ Ա. (մարտ 242-272 կամ 273) յաղթուեցաւ և Հռովմայեցիք յաղթական արշաւանք մը սկսան դէպ ի Տիգրոն: Դժբաղդաբար մեռաւ Տիմեսիթէոս և իր պաշտօնին յաջորդող Փիլիպպոս սպաննել տուաւ պատանի կայսրը և ինքզինքը կայսր հռչակեց ³ : Փիլիպպոս (244-249) ստի-

1. Հերոդիան 7,2,1: Vita Sev. Alex. 61,8.

2. Սինկելլոս p. 361D. Զոնարաս 12, 18. հմմտ. Mommsen RG V 421.

3. Ամմիան 23,5,17. Vita Gord. 26. Սինկելլոս p. 361D. Զոսիմոս 1,18. Զոնարաս 12,18. Կասսիոզոր ժամանակագր. 642, ամ 244. Յովհաննէս Անտիոքացի ի FHG IV 579.

պուեցաւ իր զօրաց կամքին հպատակիլ
 և պատերազմը կէս թողլով մեկնիլ դէպ ի
 իտալիա: Այսպիսի վատ բանակի մը հան-
 դէպ պարտուած թշնամին արիութիւն
 ստացաւ և քիչ ատենէն այնքան յանդուզն
 դարձաւ որ, կայսրը ազատ կերպով ետ
 քաշուելու համար բռնադատուեցաւ հաշ-
 տութիւնը ծանր գնով գնել: Ան Միջա-
 գետքը և Հայաստանը Պարսից յանձնեց¹:

Այսպէս հաւատարիմ Հայաստանը յա-
 մի 244ին Հռովմայեցիներէ մատնուեցաւ:
 Բայց այս անարգ դաշինքը² իտալիոյ մէջ
 այնպիսի տժգոհութիւն մը յառաջ բերաւ,
 որ անոր գործադրութիւնը թշնամւոյ սու-
 ըին թողուեցաւ:

Այս ժամանակի և 250ի մէջ փնտռելու
 է Խոսրովի մահը³: Ի նպաստ այս կար-

1. Զոնարաս 12,19. Եւագրիոս 5,7. Զոսիմոս 1,19.
 3,32. Սինկելլոս p. 361D. 362D: Միայն Զոնարասն
 է որ կ'ըսէ թէ Փիլիպպոս ետ առած ըլլայ տուած եր-
 կիրները. Mommsen RG V 422 և Nöldeke, Auf-
 sätze 93 Զոնարայի աւանդութեան մէջ իրաւամբ սոսկ
 յապաղում մը կը նշմարեն դաշանց գործադրութեան:
 Schiller I 800-1 կը համարի թէ Հռովմայեցիք խոս-
 տացած ըլլան ուղղակի չմիջամտել Հայաստանի գործե-
 րուն:

2. Արժաթեայ քանի մը խեղճ դրամներ յամէն 244
 իրենց ձախին վրայ ունին Pax fundata cum Persis,
 Խաղաղոչքիւն հաստատեալ ընդ Պարսս, Eckhel VII
 321. Cohen IV թիւ 45-46:

3. Marquart, Beiträge zur Gesch. und Sage

ծիքին կը խօսի գլխաւորապէս այն հանգամանքը, որ եթէ Խոսրովի մահը 250էն առաջ դնենք¹ այն ատեն բռնադատուած ենք Տրդատ Գ՛ի անսովոր երկայն կեանք մը վերագրել, վասնզի Տրդատ Գ՛ի մահը անշուշտ 335էն առաջ չէ: 250ին ժամանակները Հայաստան արևելքէն և հարավէն սահմանակից դարձած էր պարսկական երկիրներու և բաց էր անոնց թէ յարձակումներուն և թէ նենգութիւններուն առջև: Իր եղբարց կամ մերձաւոր ազգականաց մատնութեամբ Խոսրով թագաւորը զոհ գնաց դաշոյնի հարուածի մը և մարդասպանը Անակ Պարթև, որուն Շապուհ մեծամեծ խոստումներ ըրած էր, իր դակիցներով բռնուելով Արտաշատու մօտ Տաբերական կամուրջէն վար գահավէժ ըլլալով սպանուեցաւ²:

von Eran, ի ZDMG հար. 49 էջ 652 կ'ըսէ թէ Խոսրովի մահը պէտք է 252էն անմիջապէս առաջ տեղի ունեցած դնել:

1. Ագաթանգեղոսի էջ 35 «ամս տասն» բացատրութիւնը օգոյ մէջ կախուած խօսք մ'է. վասնզի չենք գիտեր թէ ե՛րբ կը սկսին անոնք և ե՛րբ կը վերջանան. Gutschmid ի ZDMG հար. 31 էջ 48 այդ տարիները կը դնէ 228-237, բայց այսպէս դնելու համար որ և է դրական պատճառ կը պակսի: Տաշեան, Ագաթանգեղ էջ 100-1 կ'առաջարկէ զանոնք 238-248 դնել, որ ինձ աւելի շիտակ կը թուի:

2. Ագաթանգեղ 39. Փարպեցի 5:

Տ Ր Դ Ա Տ Գ (իբր 287-336)՝ տակաւին մատաղ մանկիկ մը՝ յաջորդ նշանակուեցաւ իր հօր, խնամակալութեան մը տակ: Քանի մը տարի վերջ¹, իբր 252ին Քաղղոս կայսեր ատեն, Հայաստան հասաւ պարսիկ բանակ մը և թագաւորին պաշտպանութեան համար հոն գտնուող հռովմայեցի զօրքերը հալածելով տիրացաւ երկրին: Այդ ժամանակ ստիպուեցաւ Տրդատ իր «հայրասպան հօրեղբարց»² ձեռքէն հռովմէական երկիր փախչիլ, ի դուռն կայսեր³:

1. Հմմտ. Gutschmid ի ZDMG հտր. 31 էջ 50. Տաշեան էջ 103:

2. Եղիշէ էջ 123: Եղիշէ իր այս էջին մէջ թերևս Ազաթանգեղէն ազդուած է:

3. Ազաթանգեղոս 42. հեղինակը երկրին գրաւուելուն տարին որոշ չգրուցեր, հմմտ. Տաշեան 105: Իսկ Զոնարաս 12,21 կ'ըսէ, «Ասոր (Քաղղոս կայսեր) ժամանակ Պարսիկներ դարձեալ սկսան շարժիլ և գրաւեցին Հայաստանը, որուն Տրդատ թագաւորը փախաւ, իսկ իւր որդիքը դէպ ի Պարսս դիմեցին»: Այս վկայութեան առաջին մասը շատ լաւ կը յարմարի հայկական աւանդութեան հետ, որ հոս բաւական վստահելի է. իսկ վերջին մասին մէջ յայտնապէս պատմական սխալ մը կայ, վասն զի Տրդատ չէր կրնար այդ ժամանակ տղաքներ ունեցած ըլլալ: Գուտշմիտ ի ZDMG հտր. 31 էջ 49 փորձեց յունարէն բնագրին Παίδων որդիք բառին տեղ Πολίτων քաղաքացիք դնել: Բայց Մարքուարտի ZDMG հտր. 49 էջ 652 առաջարկութիւնը աւելի յաջողագոյն է, որ կ'ուզէ փոխանակ որդիք բառին Πατρώων հօրեղբարք կարդալ: Տես Mommsen RG V 430. Nöldeke Aufsätze 93, և հմմտ. Tournèbizeի էջ 430 և 802 հետաքրքրական դիտողութիւնները:

Արտաքին դէպքերը քիչ ազդեցութիւն չգործեցին Հայաստանի մէջ կատարուող այս գործերուն վրայ: Ճիշդ միևնոյն ժամանակ, երբ Պարսիկք Հայաստան յարձրկած էին, Սկիւթացի ժողովուրդներ Մէտիդեան (Ածովու) ծովէն թափուեցան Պոնտոսի, կապաղովկիոյ և ընդհանուր Փոքր Ասիոյ վրայ, և իրենցմէ խմբեր տեսնուեցան Փասիսի մօտ կամ հայկական Բասեն գաւառին մէջ¹: Կարելի չէ՞ այս գործիս մէջ Շապուհ Ա՛ մատը նշմարել²: Հայաստան ամէն կողմէն կղզիացած և տազնապի մէջ էր, և Տիգրոսի նենգաւոր քաղաքագիտին կ'ընծայէր ամենէն աւելի նպաստաւոր պայմանները՝ իր շատոնց ցանկացած այս աւարին առանց մեծ ընդդիմութեան տէր դառնալու: Հռովմայեցիները այդ ժամանակ անկարող էին իրենք զիրենք իսկ պաշտպանելու:

Մինչ պատանին Տրդատ ստիպուած էր օտար երկիրներու մէջ թափառիլ, իր հարց երկիրը գրեթէ կէս դար շատ զանազան քաղղեր ունեցաւ:

1. Զոսիմոս 1,28. 32:

2. Բաւական է յիշել, թէ ինչպէս երբեմն Բակուր Բ (իբր 77-110) Դակաց Դեկերալ թագաւորին հետ Հռովմայեցւոց դէմ գաղտնի առնչութեանց մէջ մտած էր, Պլինիոս Թուղթ առ Տրայիան 74:

Երբ 259 կամ 260ին վաղերիանոս կայսրը Պարսից ձեռքը գերի ինկաւ և մեծամեծ քաղաքներ, ինչպէս Անտիոք, Տարսոն, Կեսարիա Կապադովկացոց գրաւուեցան և աւարի առնուեցան, Պալմիրայի իշխանն Ողենատոս մեծ վնասներ հասուց Պարսից, երբ ասոնք անհուն աւարով լըցուած՝ Եփրատը կ'անցնէին: Այսու հանդերձ Շապուհի յաջողութիւնները այնքան մեծ էին, որ իրմէ հովանաւորեալ և դրացի իշխաններ իրեն շնորհաւորութիւններ ըրին: Այս առթիւ իրեն գրեց նաև Հայոց ԱՐՏԱԻԱԶԴը, զոր վաղերիան կայսեր քիչ վստահելի կենսագիրը կը յիշէ և թագաւոր կը կոչէ¹: Դժուար է թէ այդ անձը թագաւոր մը եղած ըլլայ, թերևս գործակալ կամ հրամանատար մ'էր և թերևս նոյն է Մամիկոնեան այն Արտաւազդին հետ, որ ճիշդ այդ ժամանակները կ'ապրէր և քիչ առաջ փոքրիկ Տրդատը փախցնելով փրկած էր²: Սպարապետութեան պաշտօնը ժառանգական էր Մամի-

1. Vita Valer. 3.

2. Փաւստոս Գ 4. 7. 11: Այս նոյնութիւնը նախ Ն. Անդրիկեան իր Բիւզանդի Մամիկոնեանները էջ 13-16 գործին մէջ համոզիչ կերպով ապացուցուց և իրաւամբ Խորենացոյ Բ 76 ըսածը մերժեց, որուն համեմատ Տրդատը փախցնող Արտաւազդը Մանդակունի մը եղած ըլլայ:

կոնեան ընտանեաց մէջ և թագաւոր չեղած ժամանակ և նոյնպիսի փտանգաւոր վայրկեաններու մէջ իրենք կ'առաջնորդէին երկրին, և պաշտպան կը կանգնէին Արշակունիներու դատին, որոց ամենէն աւելի հաւատարիմ և ամենէն քաջ նեցուկներն եղան¹ :

Պալմիրայի Ողենատոս իշխանը, որուն Գաղղիենոս կայսրը յանձնեց արևելքի կորսուած նահանգներու հոգատարութիւնը, և որ ժառանգական իշխանի մը պարզ տիտղոսին տակ հռովմայեցի կայսեր մը զօրութիւնն ունէր, երթալով աւելի զօրացաւ և զանազան անգամներ յաղթեց Պարսից, երկու անգամ պաշարեց անոնց մայրաքաղաքը, և ամէն կողմ վերահաստա-

1. Այդ ժամանակի Հայաստանին վիճակը դեռ միշտ քիչ մը մութ կը մնայ. արդեօք թագաւոր մը կ'իշխէր հոն թէ պարսիկ սատրապ մը: Ինծի հաւանագոյն կը թուի որ Արտաւազդ, — ինչպէս յետոյ 380ի ատենները Մանուէլ և 450-51ին Վարդան և ապա Վահան Մամիկոնեանները, իրեն յաջորդներ միևնոյն պաշտօնի և միևնոյն ընտանեաց մէջ — վարչութեան ղէկը իր ձեռքն ունէր, բնականապէս առանց բոլորովին ազատ ըլլալու Պարսից ազդեցութենէն: Վասնզի դժուար է որ Հայաստանի պէս երկիր մը, որ տակաւին կարող էր դիմադրութիւն ընել, Պարսիկ սատրապէ մը կառավարուէր: Ոմանք կը համարին թէ այդ Արտաւազդը Խոսրովը սպաննողներէն մէկը եղած ըլլայ. բայց ինծի կը թուի որ Պարսիկները այնչափ անխոհեմ չէին, որ մարդասպան մը ղնէին երկրի մը գահուն վրայ, զոր կ'ուզէին շահիլ:

տեց հռովմէական պետութեան նախկին սահմանները: Մծբինը և Խառանը ետ առաւ (264) և Եղեսիա օգնութիւն ընդունեցաւ իրմէ ընդդէմ Պարսից: Շատ հաւանական է թէ այդ ատեն նաև Հայաստան « հռովմէական » հովանաւորութեան տակ անցաւ¹, կամ լաւ ևս, աստիճան մը անկախ դիրք մը ստացաւ, վասնզի հոն Պարսիկները ատուած էին²:

Այս վիճակի մէջ կը գտնենք Հայերը անմիջապէս ասոնց յաջորդող պատերազմներու մէջ: Եթէ կայսերաց կենսագիրներուն հաւատք ընծայենք, Հայերը միայն Չենոբիայի ազդեցութեամբ է որ հռովմէական իշխանութեան տակ հանդարտ մնացին³: Եւ եթէ այն «բարբարոս»ներու

1. Mommsen RG V 435. 437. Nöldeke Aufsätze 94.

2. Աւիշան, Այրարատ էջ 374 և Սարգիսեան, Ազատականգեղոս և իւր բազմադարեան գաղտնիքը էջ 34 այս ժամանակուանս մէջ Հայաստանի գէթ մէկ մասին թագաւոր եղած կ'ըսեն Վաբալաթ, Չենոբիայի որդին: Երկու գիտնականները որ և է աղբիւր մը չեն նշանակեր և այս ժամանակի ծանօթ աղբիւրներու մէջ այդպիսի տեղեկութիւն մը գոյութիւն չունի. հաւանականաբար այս տեղեկութիւնը Աւիշան առած է Eckhel VII 494էն, ուր Էքհելը զանազան գիտնականներու կարծիքներ յառաջ կը բերէ Վաբալաթի դրամի մը անընթեռնի արձանագրութեան մը մասին. ի մէջ այլոց կը յիշէ նաև Կոլտիոսի կարծիքը, որ ուզեր է զայն Հայկական կարգաւ: Բայց Էքհելը ինքնին այս ընթերցումը բոլորովին անճիշտ և անհաւանական կը գտնէ:

3. Vita trig. tyr. 30,7 (Չենոբիա):

մէջ, որոնք Չենորիայի հետ միասին Եգիպտոս արշաւեցին, Հայերը յականէ անուանէ յիշուած չենք գտներ¹, սակայն 272ին, երբ Աւրեղիան կայսրը Պալմիրան պաշարած էր, Հայք ապահովապէս թագուհւոյն կողմն էին: Վասն զի սա երբ ամէն կողմէն պաշարուած էր Աւրեղիանու զօրքէն, իր տազնապի վայրկենին մէջ աներկիւղութիւն ցուցնելու համար կը գրէր կայսեր. Մեզի չի պակսիր Պարսից օգնութիւնը, որոշն արդէն կը սպասենք, մեզի հետ են Սարակիսոսք, մեզի հետ Հայք²: Բայց Աւրեղիան Պարսից գնդերը շուտով ցրուեց, իսկ Հայոց և Սարակիսոսաց հեծեալներն իր կողմը շահեցաւ³: Երբ Պալմիրա անուեցաւ և թագուհին գերի բռնուեցաւ, Աւրեղիան համաձայնութեան մը եկաւ Հայոց և Պարսից հետ⁴:

Պարսից հետ պատերազմ մը տեղի չունեցաւ, վասնզի Պարսիկք իրենց ներքին գործերով զբաղած էին, և երկու պետութիւններ ևս կը փափագէին միայն խաղա-

1. *Չոսիմոս* 1,44:

2. *Vita Aurel.* 27,4.

3. *Vita Aurel.* 28,2. *հմմտ.* *Groag առ PW Domitius* 36.

4. *Vita Aurel.* 28,4. Տաշեան էջ 117 իրաւունք չունի երբ այս կտորը տարբեր կը հասկնայ և Հայերը գերի կ'ընէ:

դասիրական վերաբերութիւններ ունենալ իրարու հետ ¹: Միջագետք դարձեալ հռովմէական ազդեցութեան տակ մտաւ ²: Հայաստան հաւանականաբար պարսկական ազդեցութեան շրջանակին մէջ մնաց, առանց որ այդ ազդեցութիւնը շատ մեծ ըլլար — նման վիճակի մը մէջ, ինչպէս յաճախ Օգոստինոսի ժամանակ, — և Աւրեղիան Պարսից և Հայոց հետ իբր անկախ և իբր ոչ-հռովմայեցի ժողովուրդներ վարուեցաւ ³: Ոչ յաղթանակի մէջ տարուող և ոչ ալ յաղթանակի հանդիսին ներկայ գտնուող ժողովուրդներու մէջ Հայոց անունը կը յիշատակուի, որ անով կարելի է մեկնուիլ, թէ Հռովմ զանոնք իբր իրեն հովանաւորեալները կը նկատէր, թէև իրականին մէջ այնպէս չէին: Այսուհանդերձ Հայոց դիրքը դեռ բաւական անորոշ կը մնայ ⁴: Նոյնպէս Աւրեղիանու ո՛չ Սատաւայի մէջ գտնուած պակասաւոր արձանագրութիւնը ⁵ և ո՛չ ալ իր բոլորո-

1. Vita Aurel. 29. 33,4. հմմտ. Groag վերը:

2. Զոսիմոս 1,60,1. հմմտ. Groag վերը (ընդդէմ Մոմսենի RG V 442):

3. Vita Aurel. 28,4. հմմտ. Mommsen RG V 442 ծանօթութիւն:

4. Հմմտ. Vita Aurel. 33,4. Groag առ PW Domitius 36.

5. CIL III 14184³.

վին անվատահելի Հայկական¹ տիտղոսը
խնդրոյն վրայ նոր լոյս մը կը սփռեն:

Այս շրջանիս յաջորդող պատերազմները, որոնք Պարսից և Հռովմայեցոց մէջ տեղի ունեցան, կը ցուցնեն թէ Միջագետքի և Հայաստանի մէջ մեծամեծ փոփոխութիւններ կատարուած ըլլալու են, Աւրեղիանոսի մահէն (275) անմիջապէս առաջ: Վասնզի Աւրեղիան կը մեռնի Պարսից դէմ քալած միջոց². Պրորոս անոնց հետ նախ խաղաղութիւն կը կնքէ, յետոյ նմանապէս անոնց դէմ քալած միջոց կը սպանուի (282)³: Դարձեալ, կարոս իր կեանքը կը կորսնցնէ Տիգրիսի ափանց վրայ (283)⁴: Նմանապէս այս ժամանակիս համար ամենէն աւելի վատահելի պատմիչն Զոսիմոս կ'աւանդէ, թէ 273-4 Միջագետք հռովմէական էր, իսկ 576ին նոյն պատմիչի համեմատ բովանդակ հռովմէական Արևելքը կը բաղկանար միայն Ասորիքէ, Փիւնիկէէ, Պաղեստինէ և Եգիպտոսէ. ընդհակառակն Միջագետքի և Հայաստանի վրայ և ոչ իսկ կը խօսուի⁵: Ինչպէս որ

1. Vita Aurel. 30,5.

2. Vita Aurel. 35,4.

3. Vita Prob. 17,4. 20,1.

4. Սինկելլոս p. 386D. Զոնարաս 12,3:

5. Զոսիմոս 1,60. 64:

253ին Շապուհ Ա Միջագետքը և Հայաստանը առաջին անգամ գրաւած միջոց Սկիւթացիներ ևս աւազակային յարձակում գործեցին Փոքր Ասիոյ վրայ, նոյն երևոյթը կը կրկնուի նաև 275-6ին, երբ Պարսիկներ երկրորդ անգամ տիրեցին յիշեալ երկու աշխարհներուն, և Սկիւթացոց վոհմակներ դարձեալ աւերելով կը թափառէին Պոնտոսէն մինչև Կապադովկիա և Կիլիկիա¹: Պէտք է այս երևոյթները սոսկ դիպուած համարել:

Հոովմայեցոց կողմանէ այդ աշխարհները ետ առնելու համար եղած բոլոր փորձերու մէջ ամենէն լուրջը Կարոսինն էր: Նա երբ Հայոց վերջին սարերը հաւած էր և Պարսից դաշտերը իր աչքին առջև տարածուած տեսաւ², ետ դարձուց պարսկական հրեշտակուծիւն մը, զոր վրամ Բ (իբր 277-294) իրեն խըրկած էր, և գրաւեց Միջագետքը ու հասաւ մինչև Տիգրոն: Բայց դժբաղդաբար կայսրը Տիգրիսի ափանց վրայ մեռնելով՝ արշաւանքը կէս մնաց³:

Իր երևելի յաջորդն Դիոկլետիոս

1. Զոսիմոս 1,63. Զոնարաս 12,28.

2. Սինեզիոս, De regno c. 18 p. 17.

3. Vita Cari 8,1. Սինկելլոս p. 386D. Զոնարաս 12,30 հմմտ. Մոմսըն RG V 442-3. Schiller I 883.

ն ուս (284-305) շատ քիչ տրամադիր էր
Կարոսի արշաւանքին արդիւնքները Պարսից
մատնելու, ինչպէս Փիլիպպոս՝ Գորդիոսինը
ըրած էր վատաբար:

Դէպքերը հետևեալ ընթացքը առած կը
թուին, ըստ վատահելի տեղեկութեան կայսերաց
ճառախօսներուն կամ լատին ներքողագրերու:
Կարոսի մահէն յետոյ Հռովմայեցիք չուզեցին
պատերազմը շարունակել, այլ դարձան
Բիւզանդիոն, յետ Միջագետքի մէջ հռովմէական
գնդեր ձգելու և յետ Տրդատը՝ որ իրենց մեծ
ճառայութիւններ մատուցած էր՝ հռովմէական
գրնդերով Հայաստան ուղարկելու, ուր անիկայ
դեռ Պարսիկներ գտաւ և իսկոյն հաւածեց
անկից¹:

1. Հմմտ. Ագաթանգ. 48-49. Խորեն. Բ 82. Schiller II 141 կ'ըսէ, «Գիողլետիան պարագայները ըմբռնեց
առանց տկարութեան և առանց զգացումէ տարուած ըլլալու,
և վճռեց անոնցմէ օգտուիլ, փրկելու համար քսան
եօթը տարիներէ ի վեր Հայաստանի մէջ վատ վիճակի
մէջ գտնուող հռովմէական շահերը: Խոսրովի սպանութենէն
յետոյ անոր որդին Տրդատ հռովմէական արքունիքը
փախած էր և հոն զանազան կայսրներու ժամանակ
և շատ մը կռիւներու մէջ պատերազմի նշանաւոր դիւցազն
մը դարձեր էր: Անիկայ բարձրաստիճան սպայներու
հետ շատ մտերիմ վերաբերութեան մը մէջ ապրած էր,
և թերևս այս պարագայն զինքը Գիողլետիանու մասնաւոր
ուշադրութեան արժանի ըրած է: Ի սկզբան Գիողլետիան
զայն յայտնի չպաշտպանեց, այլ սոսկ թողուց որ ան իր
երկիրը մտնէ և իր ձեռքով հոն գահը գրաւէ:
Եթէ այս գրաւումը յաջողէր, Տրդատ արդէն»

Թէև կարոսի պատերազմին եւբը Հոովմայեցւոց նպաստաւոր եղած էր, այսու հանդերձ օրինաւոր դաշինք մը չկնքուեցաւ երկու պետութեանց մէջ, — ուրեմն Պարսիկք պաշտօնապէս իրենց իրաւունքէն չհրաժարեցան յիշեալ երկու աշխարհներու վրայ. — ասոր հակառակ Պարսից կողմանէ Հոովմայեցւոց վրայ յարձակում մ'ալ տեղի չունեցաւ, ինչպէս ՉԿԿին Փիլիպպոս կայսեր վրայ եղած էր: Յարձակման մը համար այժմ Պարսիկները շատ տկար էին. վասնզի, ինչպէս որ ստէպ կը հանդիպի պարտութիւններէն վերջ, Պարսիկներ տժգոհ էին Վռամէն, և իր եղբայրը Որմիզդ կրցաւ իր կուսակիցներէն դուրս նաև կաւկասային ժողովուրդները իր կողմը շահիլ և անխնայ կերպով կռուիլ իր եղբօր դէմ¹:

Ինքնին Հոովմայեցիներէ օգնութիւն պիտի խնդրէր: Եկեղեցականք, նախարարներ և ժողովուրդը ընդունեցան զինքը իբր ազատիչ մը օտարի իշխանութենէն, որ իր ձեռքը մխած էր նոյն իսկ կրօնքի մէջ, որ սրբազնագոյն բանն է արևելցոց համար »:

1. Եւմենիոս Paneg. genethl. Maximiani 17 (pan. lat. III). Լատին ներբողականներու, Panegyrici latini, հաւաքածոյն կը բովանդակէ 12 կտոր ճառեր: 2-9 կտորները Եւմենիոսին են, թէև հրատարակութեանց մէջ անոնցմէ ոմանք Մամերտինոսի և անանուններու արուած են. այս խնդրոյս մասին տես Օ. Seeckի գեղեցիկ յօդուածը առ PW Eumenius. Մեզի համար կարևոր եզոզ կտորներէն թիւ IIը է յամէն 289 ապրիլ 21. թիւ III 290ի աշունէն, թիւ V 297ի ամառէն, թիւ XII 289ի յունիսէն:

Սակայն Վռամ կրցաւ վերջապէս իր հակառակորդը ընկճել և կը մտածէր Միջագետքը և Հայաստանը կրկին արաւելով իր համբաւը վերականգնել: Բայց Դիոկլետիան զինուած բազկով շատ անգամներ ինքզինքը ցուցուց Ասորիքի մէջ և հաւածեց Սարակինոսներու խմբերը, որոնք հռովմէական երկիրը անհանգիստ կ'ընէին¹: Իր ներկայութեամբ և իր զէնքերուն ուժովը կայսրը այնպէս սարսափեցուց տակաւին միշտ ներքին շփոթութիւններով զբաղած Վռամը, որ սա բարեկամութեան ակունքը ստանալու համար ամէն բանի մէջ տեղիք տուաւ²: Այս առթիւ տեղի ունեցաւ եթէ ոչ հանդիսաւոր դաշինք մը՝ գէթ համաձայնութիւն մը, որուն համեմատ թագաւորը իրականապէս ճանչցաւ, թէ մինչև Տիգրիս տարածուող երկիրները հռովմէական են³: Այսպէս յաջողեցաւ Դիոկլետիան, որ այնքան նուրբ քաղաքագէտ էր որքան քաջ զօրավար մը, իր քա-

1. Եւմենիոս, paneg. genethl. Max. 5 (pan. lat. III).

2. Եւմենիոս, paneg. Max. 10 (pan. lat. II).

3. Schiller II 142 ծան. 1 ուշադիր կ'ընէ որ, *Parthis quippe ultra Tigrin redacto բացատրութիւնը առ Եւմեն. paneg. Constantio 3* (pan. lat. V) հասկնալու է այն հայկական երկիրներու համար, որոնք Տիգրիսի ձախ եզերքին վրայ կը գտնուէին:

դաքագիտութեամբ ձեռք ձգել այն, զոր ուրիշներ հազիւ երկար ու կորստաբեր պատերազմներով պիտի կարենային¹: Թագաւորը փութաց այս բարեկամութիւնը ճոխ նուէրներու առաքմամբ ամրացնել²:

Այս դէպքերու թուականները բոլորովին որոշ չեն, բայց ապահովապէս Դիոկլետիանու առաջին տարիներու մէջ կ'իյնան³:

1. *Vobis* (Դիոկլետ. և Մաքսիմիան) *Rhenus et Nilus et cum gemino Tigris Euphrate*, Եւմեն. paneg. genethl. Max. 6. *Etiam illa quae armorum vestrorum terrore facta sunt velut armis gesta praetereo... Parthumque vobis munerum miraculis blandientem*, Եւմենիոս անդ 5: *Itidem opimam illam fertilemque Syriam velut amplexu suo tegebat Euphrates, antequam Diocletiano sponte se dederent regna Persarum*, Եւմենիոս paneg. Max. 7. *Hoc eodem modo rex ille Persarum numquam se ante dignatus hominem confiteri, fratri, tuo* (Դիոկլետիանոսի) *supplicat totumque, si ingredi ille dignetur, regnum suum pandit*, Եւմենիոս անդ 10: Հայաստանի և Միջագետքի այս տեսն Հռովմայեցոց ձեռք անցնիլը անկից ևս յայտ է, որ Պետրոս Պատրիկիոս, որ 297ին դաշինքը շատ ճիշտ ու մանրամասն կ'աւանդէ ի FHG IV 180, բոլորովին կը լռէ այդ երկու աշխարհներու 297ին Հռովմայեցոց անցնելու մասին, վասնզի անոնք արդէն հռովմէական էին, և Ներսէս 296ին գրաւեց *Armeniam romano iuri obnoxiam*, հմմտ. Ամմիան 23,5,11. Մոմսըն RG V 443:

2. Բացի վերոյիշեալ կոչումներէն տես նաև Եւմենիոս paneg. Max. 9. 10, paneg. Const. 10.

3. Mommsen, *Zeitfolge* էջ 423 աւելի մէտ է այս դէպքերը 286ին մէջ դնելու, տես առ Schiller II 141 ծան. 4: Seeck առ PW *Eumenius* խաղաղութեան դաշինքը կը դնէ 288ին:

Այս բաներս կը հաստատուին նաև հայկական տեղեկութիւններով: Այսինքն Աւրեղիանոսէն մինչև Դիոկլետիան Հռովմայեցւոց և Պարսից վերաբերութեանց մէջ չտեսանք շրջան մը, յորում հռովմէական զէնքը և հռովմէական իրաւունքը պարսկականին յաղթէր: Ընդհակառակն, Հռովմայեցիները տենչ մ'ունին կրուած նախատինքի մը վրէժն առնելու: Ոմանք ուզեցին Պրոբոսի 279ի գործերուն մեծագոյն նշանակութիւն մը տալ¹, բայց գործերը ինքնին փոքր են. Պրոբոսի միակ արդիւնքը անոր մէջ ըլլալ կը թուի, որ կրցաւ արևելքի status quoն պահել²: Ուրեմն կը մնայ միայն կարոսի յաղթական արշաւանքը, որուն արդիւնքը Դիոկլետիան կարգադրեց, հռովմէական ընելով Հայաստանը և Միջագետքը: Ըիշդ այս ժամանակիս մէջ կը դնէ հայկական պատմագրութիւնը Տրդատայ պսակումը Դիոկլետիանոսէն և

1. Gutschmid ի ZDMG հար. 31 էջ 50-51. Տաշեան 118-9. ասոնք նոյն իսկ 'կ'ըսեն թէ Տրդատ այդ ժամանակ Հայոց գահին տիրացած ըլլայ: Թէ ասոնք Սինեզիոսի վկայութիւնը De regno c. 18 p. 17 Պրոբոսի վերազրեւու իրաւունք չունին, տես Մոմսըն RG V 442 ծան.:

2. Vita Probi 17,4. 18,1. հմմտ Henze առ PW Aurelius 194. Dannhäuser, Untersuchungen zur Gesch. des Kaisers Probus, Diss. Iena 1909 էջ 68-69.

իր հայրենական գահը դառնալը. «Ման-
րախուզիւ քննեալ, գտաք զթագաւորելն
Տրդատայ յերրորդ ամի Դիոկլետիանոսի
(որ է 287), և գալ այսր հանդերձ մեծաւ
զօրու՝» : Եթէ այս տեղեկութիւնը բաղդա-
տենք կայսերաց ճառախօսներու ըսածին
հետ՝ կը գտնենք համաձայնութիւն : 286ին
և 288ին ժամանակները Դիոկլետիանու և
Վռամ Բ՛ մէջ հողի խնդիրները կարգա-
դրուեցան, և Տրդատ, որ մինչև այդ ա-
տեն Պարսից կողմանէ դիմադրութիւն գտած
էր, երկու կողմերէ ևս պաշտօնապէս իբր
օրինաւոր թագաւոր Հայոց՝ և Հռովմա-
յեցւոց հովանաւորեալ մը ճանչցուեցաւ :

Տրդատ իր երիտասարդութիւնը հռով-
մէական հողի վրայ անցուց², և հետևա-
բար շատ բնական է որ ան մասնակցե-
ցաւ այն բոլոր մեծ ու փոքր արշաւանք-
ներուն, զորս այդ ժամանակները Հռով-
մայեցիք Պարսից դէմ ըրին : Շատ կարելի
է, որ ան 287էն առաջ արդէն շատ ան-
գամներ Հայոց գահին տիրացած և Պար-
սիկներէն հալածուած ըլլայ : Պատմութիւնը
կրնայ ընդունիլ այս բոլորը, բայց չկրնար

1. Խորեն. Բ 82. հմմտ. Ագաթանգ. 48-49. ուրեմն
զրեթէ ճիշդ այն ժամանակուան մէջ, յորում Մոմսըն և
Սէէք զայն կը դնեն :

2. Եղեշէ էջ 123. Ագաթանգ. 42. Խորեն. Բ 89.

ապացուցնել մանրամասնութիւնները: Տըր-
դատի դաստիարակութիւնը խնամքով կա-
տարուած և կէս մը հռովմէական էր: Իւր
մարմնոյ ոյժը և քաջութիւնը մասնաւոր
կերպով կը գովուին: Թերևս իր յունական
դաստիարակութեան կը պարտինք, որ ան
զիտցաւ քրիստոնէութիւնը կանխէն գնա-
հատել և իր ժողովրդեան մէջ տարածել:
Ներսէհի (իբր 293–303) անձին մէջ
փառասէր թագաւոր մը արքայից արքայ-
ներու գահը բարձրացած էր: Ինչպէս ա-
մէն կայսր, նոյնպէս ամէն շահ կը փա-
փագէր Նփրատայ սահմանազուխը ճշդել:
Ինչպէս որ մենք իբրև ենթադրութիւն մը
ըսինք՝ Վռամ Բ՛ հետ հանդիսաւոր դա-
շինք մը դրուած չէր. հետևաբար անոր
յաջորդները Միջագետքը և Հայաստանը
տակաւին պարսկական երկիր կրնային
նկատել: Ներսէհ Հայաստանի մէջ քանի
մը նախարարներ իրեն շահած էր և այժմ
(296) առանց շատ նկատումներ ընելու
զրաւեց Հայաստանը, որ հռովմէական հո-
վանաւորեալ երկիր մ'էր¹: Դիոկլետիան,
որ այդ երկիրը իր քաղաքագիտութեամբ

1. Ամմիան 23,5,11 կ'ըսէ. «Ներսէս նախ հռովմէա-
կան իրաւունքի տակ գանուող Հայաստանը զրաւած էր»:
Narseus primus Armeniam romano iuri obnoxiam
occuparat.

հոովմէական ըրած էր և որուն թագաւորը
ինքն անձամբ պսակած էր, վայրկեան
մ'անգամ չտատամսեցաւ զինուած թշնամ-
ւոյն դէմ զինուած ելնելու: Ան Գանուբի
ափերէն ետ կանչեց Գաղերիոս Մաքսի-
միանոս կեսարը, ուր սա Քարպերու դէմ
պատերազմը նոր վերջացուցած էր, և
զայն լեզէոններով դրկեց Պարսից դէմ:
Անորոշ ընդհարումէ մը վերջ Պարսիկք
հասան մինչև Խառանու մօտերը, և այս
քաղաքին ու Նիկեփորիումի միջև տեղի ու-
նեցաւ զլխաւոր պատերազմը, յորում Գա-
ղեր յաղթուեցաւ պարսկական այրուծիու
թափէն, որ անհամեմատ աւելի բազմա-
թիւ էր քան իրենը:

Գիոկլեստիան շատ նուաստացուցիչ ըն-
դունելութիւն մը ըրաւ յաղթուած կեսա-
րին, թողլով որ ան հետիոտն իր կառքին
ետեէն քալէ բաւական երկայն տեղ¹:

Ներսէհ կարծեց այժմ որ Հայաստան
և Միջագետք վերջնականապէս իրեն ե-
ղան: Սակայն այսպէս չէին մտածեր կայ-
սրրները: Ասոնք մեծ զօրաժողով մ'ըրին
և Լիւրիկիոյ, Մեսիոյ և Գոթաց կողմերէն
հզօր բանակներ ժողովեցին: Այս անգամ

1. Ամմիան 14,11,10. Վիկտոր Caes. 39, 33-34.
Եւարոպիոս 9,22-25: Եորտանէս 20. 21. Որոզիոս 7,
25,9:

մէկդի թողուցին Միջագետքի հարթաստանները, ուր թշնամւոյ հեծելագնդերը շատ աւելի յաջողակութեամբ կրնային կոուիլ: Մինչդեռ մէկ բանակով մը Գիոկլետիան Միջագետքի կողմը պատրաստ կը կենար, ուրիշ բանակով մը Գաղերիան գնաց թշնամւոյն պատահելու Հայաստանի մէջ, ուր Տրդատ իր տեղերու ծանօթութեամբ և ուրիշ առաւելութիւններով՝ զոր կրնար բարեկամ երկիր մը ընծայել, մեծապէս ձեռնտու եղաւ իրեն: Ներսէհի բանակը բոլորովին ջախջախուեցաւ Հայաստանի մէջ (297). իր կանանոցը, իր որդիքը և իր նախարարներէն մեծ բազմութիւն մը յաղթողին ձեռքը ինկան, որ դեռ ուրիշ ամբաւ աւարով իր կայսերակցին քովը եկաւ: Այս անգամ Գիոկլետիան փառահեղ ընդունելութիւն մ'ըրաւ Գաղերիոսին Մծբնայ մէջ¹:

Այս սոսկալի պարտութեան վրայ արքայից արքայն նուիրակներ ղրկեց կայսերաց և արքայական գերիները ետ ուզեց ու խաղաղութիւն խնդրեց առանց պայմանի: Այժմ կայսրները կարող էին պե-

1. Յուլիանոս շատ Ա. կոստանդիոսի վրայ, 18. Արեւիկոս Վիկտոր Caes. 39,33-35. Զոնարաս 12,31. Եւտրոպ 9,27. հմմտ. Mommsen RG V 444. Schiller II 143.

տուժեան արևելեան սահմանները դեռ շատ
 աւելի յառաջ տանիլ, բայց իրենք բանա-
 ւոր և հռովմէական շահերուն աւելի օգ-
 տակար համարեցին սահմանները աւելի
 զօրացնել և աւելի ճշդել քան ընդարձա-
 կել. և մասամբ ի վնաս Հայաստանի.
 վասնզի որոշուեցաւ որ, հայկական Մոփք,
 Անգեղ տուն, Աղձնիք, Կորդուք գաւառ-
 ները և միջագետեան Մաւղէք (որ է Բե-
 զարդէ, այսօր Ճէզիրէ իպն Օմար) գաւառը
 աւելի անձուկ հպատակութեան մը մէջ
 մտնեն Հռովմայ, — զրեթէ իբր պետու-
 թեան երկիր կամ կալուած — և անոնք
 յանձնուին տեղական բնիկ իշխաններու,
 իբրև սահմանապահներու: Այսուհանդերձ
 շարունակուեցան այս երկիրները իբրև Հա-
 յոց թագաւորութեան պատկանող երկիր
 նկատուիլ և անոնց նախարարները բոլո-
 րովին անկախ չէին Հայոց թագաւորէն¹:
 Այս երկիրները կը կառավարուէին իբր
 հռովմէական սատրապուլթիւն-
 ներ և կը կոչուէին՝ թէև ոչ բոլորովին
 ուղիղ կերպով՝ Անդրտիգրիսեան գառառներ,

1. Ասիկայ կը հետևի Ագաթանգեղոսէն 596. 650,
 Փաւստոսէն Դ 23. 24, Ե 16-19, Եղիշէն 204, որոնց
 վկայութիւնը այս կէտիս մէջ վճռական է: Այս նախա-
 րարաց Հայոց թագաւորէն կախում ունենալը շարունա-
 կուեցաւ նաև Յովիանու Յ63ի դաշինքէն վերջ:

Regiones Transtigritanae¹, Ասով Տիգրիսը, Կորդուքէն սկսեալ դէպ ի վար², սահման եղաւ երկու պետութեանց³: Հայոց փոխարինութիւն մ'ընելու համար անոնց երկրին արևելեան սահմանը յառաջ տարուեցաւ մինչև Չինթա ամրոցը Մարաստանի (Ատրպատականի) մէջ: Այս ընդարձակումն դէպի Ատրպատական, որուն բնակչութիւնը անտարակոյս մեծ մասով հայ էր, թերևս կը համապատասխանէր Հայոց իդներուն: Անշուշտ այս մարական գրաւման համար է, որ Օգոստոսները և Կեսարները ոչ միայն Հայկական, Պարսկական, Ադիաբենական տիրոջոսներն առին, այլ նաև Մարական⁴:

1. Ամմիան 21,6,7. Güterbock էջ 6. Mommsen RG V 445. Schiller II 144.

2. Հիւբշման, Հին Հայոց տեղւոյ անունները էջ 31 ծան. 3:

3. Պետրոս Պատրիկիոս ի FHG IV 180. Ամմիան 17,5,6. 25,7,9. հմտ. Հիւբշման անդ. Mommsen RG V 444-5. Gibbon II 153-5. Nöldeke Aufsätze 97.

4. Յամի 301ին հրատարակուած De pretiis rerum հրովարտակին մէջ Դիոկլետիան, Մ. Աւր. Մաքսիմիան, Կոստանդիոս, Գաղ. Վաղ. Մաքսիմիան իրենք զիրենք կը կոչեն *Persici maximi* (գոր Մ. Մաքսիմիան չունի), *Medici maximi*, *Adiabeni maximi*, CIL III 826, Suppl. էջ 1928. Չինուորական վկայականի մը մէջ (Դիոկլետիան և) Մ. Մաքսիմիան Օգոստոսները *Armeniacci II*, իսկ Կոստանդիոս և Գ. Մաքսիմիան Կեսարները *Armeniacci maximi* կը կոչուին, CIL X 1113. հոն տեղ ծանօթութեանց մէջ Մոմսըն կ'ըսէ թէ չեմ զիտեր ի'նչ մեկնութիւն տալ յիշեալ թուականնե-

Այս խաղաղութիւնը և դաշինքը, որ պատմութեան մէջ ամենաերեւելիներէն մէկն է, տեղեց քառասուն տարի: Այս դաշինքով Տրդատ, որ յիշեալ կռիւներու մէջ շատ նշանաւոր դեր մը խաղացած էր, — մանաւանդ 297ին կարևոր ծառայութիւններ մատոյց հռովմէական բանակին ի Հայս — վերջնականապէս իր հայրենի գահին վրայ հաստատուեցաւ: Ան մինչև իր մահը կառավարեց երկիրը, Պարսից կողմանէ առանց անհանգստութիւն մը կրելու:

Տրդատ հազիւ թէ ազատած էր Պարսիկներէն, ահաւասիկ այս անգամ Հռովմայեցիները սկսան իր խաղաղութիւնը վրդովել: Քանի մը տարի առաջ մեծ դէպք մը տեղի ունեցած էր Հայաստանի մէջ. այսինքն Տրդատ թագաւորը իր ժողովրդովը միասին ի քրիստոնէութիւն՝ դարձած էր (300ին ժամանակները) սուրբ Գրիգոր Լուսաւորչի՝ Հայոց Առաքելոյն՝

բուն: *Armeniacus maximus*ը կը կրկնուի յամի 302 և 305ին, հրովարտակի ուրիշ երկու օրինակութեանց վրայ, CIL III 587 և X 1113. Ինչպէս նաև Գ. Մաքսիմիանու 311 ապրիլ 30ի հրովարտակին մէջ, որով քրիստոնէից թոյլտուութիւններ կու տար. Եւսեբ. Պատմ. Եկեղ. 8,17:

1. Սոգոմենոս 2,8,1. Տրդատայ անունը առաջին անգամ այս հեղինակին քով յիշուած կը գտնենք:

քարոզութեամբ¹ : Քրիստոնէութիւնը առաջին անգամ Հայաստանի մէջ տէրութեան կրօնք եղաւ : Հայք այնքան յարած էին այս նոր կրօնքին գերազանց սկրզբունքներուն, որ չվախցան զայն զէնքով պաշտպանել հալածիչներու դէմ :

Մաքսիմիանոս Դայա (308-313), որուն Գաղեր 305ին Եգիպտոսի և Ասորիքի կառավարութիւնը յանձնած էր զայն կեսար անուանելով, երեք տարի վերջ ինքզինքը Օգոստոս հռչակեց և իբր անկարգ պորտաբոյծ մը և միանգամայն անգութ հալածիչ մը քրիստոնէից՝ նշանաւոր հանդիսացաւ : Քրիստոնէութեան դէմ իր ատելութիւնը ուզեց նաև Հայաստանի մէջ գործադրել, որ Հռովմայեցւոց դաշնակից և բարեկամ երկիր մ'էր : Բայց անպատեւրագմասէր հայ ժողովուրդը, առաջնորդութեամբ իր արիասիրտ և զինուորապէս քաջակիրթ թագաւորին, զէնքի վազեց, — առաջին դէպք յորում քրիստոնեայք բռնութեան դէմ բռնութիւն կը գործածեն,

1. Հայոց Եկեղեցւոյն վրայ ընդհանուր կերպով տես Ագաթանգեղոս, Խորենացի Բ 80-92. նորերէն Գաթըրճեան Բ 464-80. Gutschmid ի ZDMG հար. 31 էջ 1-60. Gelzer, Die Anfänge der arm. Kirche, ի Berichte der kgl. Sächsischen Gesellschaft der Wiss. 4 մայիս 1895. S. Weber, Die katholische Kirche in Armenien, Freiburg in Br. 1903. Tournebize, Hist. politique et religieuse de l'Arménie.

— և դիւցազնարար պաշտպանեց (Իբր 311) իր կրօնքը, և նոյն իսկ յաղթուած իւն մը տարաւ կայսեր վրայ¹, թէև ասոր սպարապետը վերինոս ալ քիչ փնաս չհասուց Հայոց²: Այս պատերազմով զբաղած՝ Մաքսիմինոս չկրցաւ իր բանակները միացնել Մաքսենտիոսինին հետ, ընդդէմ կոստանդիանոսի և Լիկինիոսի: Անտարակոյս այս պարտութեան պատճառաւ է որ Մաքսիմին չկրցաւ իր 313ին գրած հրովարտակին մէջ ինքզինք Հայկական կոչել, ինչպէս որ Գերմանական և Սարմատական կոչած է³:

1. Եւսեբիոս Պատմ. Եկեղ. 9,8. Duchesne, Hist. ancienne de l'Église II էջ 32 ծան. 2 կարծիք կը յայտնէ, թէ քրիստոնէութեան Հայոց թագաւորութեան մէջ կանուխ մտնելովը, նաև Անդրաթիսեան կոչուած սատրապութիւններն ալ քրիստոնեայ դարձած էին. և Եւսեբիոսի յիշեալ վկայութիւնը այս սատրապութեանց համար հասկնալու է: Տիւշէնի այս կարծիքը ինձ շատ ընդունելի չտեսնուիր. վասնզի Եւսեբի բնագրին մէջ «դաշնակից» և «բարեկամ» բացատրութիւնները կը գործածուին, որոնք այդ ժամանակին մէջ աւելի անկախ թագաւորութեան մը համար՝ ինչպէս էր Հայաստանը՝ պէտք են գործածուած ըլլալ, քան սատրապութեանց համար, որոնք հոովմէական պետութեան երկիր կը նկատուէին և մասամբ ևս Հայոց թագաւորներէն կախում ունէին, հմմտ. էջ 261:

2. Սիմմաքոս epist. I, 2,7:

Virtutem Verine, tuam plus mirar in armis,
Roos dux Armenios cum caede domares.

Հմմտ. Seeck Untergang der antiken Welt, I 148 և առ PW *Daia*.

1. Հմմտ. Եւսեբիոս Պատմ. Եկեղ. 9,10: Տաշեան էջ 145:

Քրիստոնէութեան մուտքովը հայ ժողովրդեան բազմը մշտնջենապէս փոխուեցաւ: Ան դարձաւ այնուհետև դէպ ի Արևմուտք, ու թէ՛ իր քաղաքական նեցուկը և թէ իր մտաւորական սնունդը փնտռեց Եւրոպիոյ կողմը: Հայուն համար այլևս Տիգրոն նիստն էր ասիական բռնաւորութեան, թշնամի մը՝ միշտ պատրաստ իր ազգային անկախութիւնը և իր քրիստոնէական կրօնքը ջնջելու: Զօրաւոր հակումը դէպի Արևմուտք և խորշումն Պարսիկներէն՝ յառաջ կու գային գլխաւորապէս երկու պատճառներէ, որոնք արքունիքի և եկեղեցւոյ հետ կապ ունէին: Առաջինն է, ինչպէս որ արդէն տեսանք, Արշակունեաց բարձումն ի Պարսկաստան և Հայոց թագաւորներուն բնական ատելութիւնը յափրշտակիչներու դէմ, երկրորդ և կարևորագոյնն է ազդեցիկ կղերի մը կազմուիլը, որ անձուկ կապերով միացած էր Արևմուտքի հետ:

Քրիստոնէական կրօնքի ազդեցութեան տակ, ըստ ազգային աւանդութեան, առաջին քրիստոնեայ թագաւորը դաշինք մը կնքեց առաջին քրիստոնեայ կայսեր՝ Կոստանդիանոսի հետ: Աւանդութիւնը Տրդատին և Լուսաւորչին նոյն իսկ Հռովմ ճամբորդել կուտայ, որ բնականապէս սոսկ

զրոյց մը պէտք է նկատուի, եթէ անոր մէջ Տրդատ Ա՛ չուզմ ճամբորդութեան արձագանքը չենք ուզեր տեսնել:

Որչափ անստոյգ է ճանապարհորդութիւնը դէպի Հռովմ, նոյնքան վաւեր է դաշինքը Տրդատայ և Կոստանդիանոսի մէջ. սակայն այս դէպքիս ժամանակի մասին կարծիքները շատ կը տարբերին: Կարևորագոյն¹ կարծիքը զայն կը դնէ Յ12ին, իբր բնական հետեանք մը Մաքսիմին Դայայի հետ թշնամութեանց: Բայց այդ թուականը քիչ հաւանական կը տեսնուի, եթէ մենք հռովմէական պետութեան այդ ժամանակի դիրքը մեր մտքին առջև ներկայացնենք: Վասնզի Յ12ին մինչև հոկտեմբեր ամիսը Կոստանդիան տենդոտ պատրաստութեամբ անցուց ընդդէմ Մաքսենտիոսի, և նախ նոյն ամսուն 29ին յաղթական մտաւ ի Հռովմ: Ուրեմն մինչև այդ թուական Կոստանդիանոս տակաւին Հռովմայ և ամբողջ Արևմուտքի տէրը չէր, այլ գլխաւորապէս իր իշխանութիւնը հե-

1. Գաթրըճեան Բ 479. Տաշեան 146: Իսկ Gelzer, Die Anfänge der arm. Kirche էջ 168-9 թէ՛ ճամբորդութիւնը և թէ՛ դաշինքը Յ15ին և ի Սարդիկէ կը դնէ. Գեղցեր իր այս հաստատութեան իբր աղբիւր կը նշանակէ Codex Theodosianus XI 1. բայց այդ կոչումը կը վերաբերի Արշակ Բի (350-367) ժամանակին, ինչպէս որ քիչ մը վարը պիտի տեսնենք:

ուսուր Բրիտանիոյ մէջ ամփոփուած ըլլալով, Տրդատ անշուշտ աւելորդ պիտի համարէր անպտուղ դաշինք մը: Միլանու հրովարտակէն վերջ, Յ13ի փետրուարին, ինքը և Լիկինիոս բաժնեցին պետութիւնը. Կոստանդիանոս առաւ բոլոր Արևմուտքը, իսկ Լիկինիոս պիտի իշխէր արևելեան գաւառներու վրայ, մինչդեռ միւսոյն ժամանակ Մաքսիմին Դայա իբր Օգոստոս պիտի տիրէր Ասորիքի, Եգիպտոսի և Փոքր Ասիոյ վրայ: Ուրեմն բովանդակ Արևելքը իր սահմանակից ժողովուրդներով Լիկինիոսի և Մաքսիմին Դայայի իշխանութեան տակ էր, այնպէս որ Յ11ին Մաքսիմին Դայա կրցաւ Հայաստանի գործոց մէջ խառնուիլ իբր իր հովանաւորեալ երկրի մը:

Այս հանգամանքներու մէջ Տրդատ, որ իրաւամբ իբր խելացի անձ շատ գովուած է, շատ անքաղաքագիտօրէն գործած պիտի ըլլար, եթէ անտէս ընելով Արևելեան երկու կայսրները, որոնցմէ մանաւանդ Մաքսիմինի հետ ամէն վայրկեան գործ ունէր, իրեն դաշնակից ընտրէր հեռուն Արևմուտքի մէջ նստող Կոստանդիանոսը, միւս երկու կայսրներու նախանձորդը և միւսոյն ժամանակ տակաւին ոչ բոլորովին քրիստոնեայն: Տրդատ ապահովապէս այս բանս

ըրած չէ և դժուարաւ ալ կրնար ընել. վասնզի երեք կայսրները սոսկալի նախանձ ունէին իրարու դէմ: Նոյն իսկ Միլանու համաձայնութենէն վերջ Մաքսիմին շարունակեց Արևելքի մէջ քրիստոնեայները հալածել¹: Երկու արևելեան կայսրները դժուարաւ պիտի ներէին Տրդատայ, եթէ ան պաշտօնապէս առաւելութիւն մը տար Կոստանդիանոսի քան իրենց, և դաշինք կնքէր անոր հետ: Հայոց համար այդ ժամանակ հռովմէական պետութեան կեդրոնն էր Անտիոք և Նիկոմիդիա²:

Ինծի շատ աւելի բնական և հաւանական կը տեսնուի, որ այս դաշինքը 324ին և այն՝ Արևելք կնքուած ըլլայ³, երբ Կոս-

1. Եւսեբիոս Պատմ. Եկեղ. 8,12,10. 14,13. Լակտանտիոս 36,6:

2. *Armeniacus* տիտղոսը, որ իրեն կը տրուի 318 կամ 319ին գրուած արձանագրութեան մը վրայ, CIL VIII 8412, շատ բան մը չըսեր մեզի: Այս և հոն յիշուած տիտղոսներէն դեռ ոմանք իր հօրմէն մնացած ժառանգութիւն մ'են իրեն:

3. Գաթրըճեան Բ 479 և կերպով մը նաև Տաշեան 146-7 հակամէտ են ընդունելու, թէ 312ի նոյեմբերին կամ դեկտեմբերին Կոստանդիանոս Հայերը ընդունած ըլլայ ի Հռովմ: Այս կարծեաց ի հաստատութիւն կը բերեն Եւսեբիոսի Վարք Կոստանդիանու Ա 43 կտորը, ուր ըսուած է թէ Կոստանդիանոս «օտարական»ներու մարդասէր և բարերար վարում մը ցոյց տուած է. այս «օտարական»ները Հայերը եղած ըլլան: Սակայն մեր բոլոր բարի կամքովն իսկ կարելի չէ Եւսեբի այս կտորը Հայոց համար հասկնալ. վասնզի հոն խօսքը «օտարական»ներու վրայ չէ, այլ Հռովմ քաղաքին մէջ և ան.

տանդին Լիկինիոսի վրայ տարած յաղթութեամբ բովանդակ Արևելքի և Արևմուտքի միակ տէրը դարձաւ, և կրցաւ ինքզինքը իբրև ճշմարիտ պաշտպան բոլոր քրիստոնէից հռչակել: Բոլոր ազգեր ուրախակցութիւններ ըրին կայսեր, և նաև քրիստոնեայ Հայաստանը մասնակցեցաւ այդ ընդհանուր խանդավառութեան Արևելքի այս նոր իշխողին համար, կրնքելով դաշնադրութիւն մը կամ մանաւանդ հինը նորոգելով: Այս դաշինքով մէկ կողմը ինքզինքը կը պարտաւորէր Հայաստանը ընդդէմ Պարսից պաշտպանել, իսկ միւսը կը խոստանար իր աւատական վերաբերութեանց մէջ հաւատարիմ մնալ Հռովմայ¹:

Այս դաշինքը Տրդատայ վերջին գործնեղաւ Հռովմայ հետ: Իր թագաւորութեան ժամանակ Հայաստան խաղաղութիւն վայելեց և զարգացաւ: Երջանկութեան օրեր վայելեց երկիրը իր իշխանութեան ատեն և միայն իր մահուամբ ընդհատուեցան անոնք: Իր մահուան թուականը ստոյգ չէ. հաւանականաբար կոստանդիանոսի վերջին տարիներու մէջ կ'իյնայ, 336էն 338ի մէջ:

Կից դուրս գտնուող աղբատներու վրայ, որոց կոստանդիան մարդասիրութիւն և առատաձեռնութիւն ցոյց տուած է: Եւսերի յոյն բնագիրը յստակ է:

1. Փաւստոս Գ. 21. Խորեն. Գ. 5. Եղիշէ էջ 124:

Ճիշտ այդ ժամանակ մեծամեծ փոփոխութիւններ տեղի ունեցան և երկար շփոթութիւններ ծագեցան Պարսից և Հռովմայեցւոց տէրութեան մէջ, հետևաբար նաև Հայաստանի մէջ: Շ ա պ ու հ Բ (310-379), Սասանեան թագաւորներու մէջ ամենէն աւելի ջղուտ, տոկուն, փառասէր և ընդհանուր մեծագործներէն մէկը, իր երկարատև իշխանութեան միջոց ուզեց փառաւոր վերջ մը դնել այն խոնարհութեան, որուն ենթարկած էր զիրենք հռովմէական կայսրութիւնը: Ուստի մտածեց ոչ միայն Անդրտիգրիսեան կոչուած գաւառները գրաւել, այլ նաև Միջագետքը և Հայաստանը Հռովմայեցիներէն ետ առնուլ: Այդ նպատակաւ 336ին ատենները, հակառակ Գիոկլեստիանոսի և Գաղերիոսի հետ կնքուած դաշինքին, մտաւ Միջագետք և աւերումներ գործեց: Ծերունին կոստանդիանոս իսկոյն սկսաւ պատերազմի պատրաստութիւններ տեսնել, և միևնոյն ժամանակ իր սիրական և տաղանդաւոր որդին կոստանդիոսը (324ին կեսար, 337ին Օգոստոս, 353-361 միահեծան) Արևելք դրկեց¹: Սակայն այդ պատրաստութեանց

1. Ռուփոս Փետոս 26. Եւսեր վարք կոստ. Գ 56. Յուլիան Ճառ Ա. 13B. Եւարոսպ 10,8,2:

միջոց Պոլիս հասաւ պարսկական հրեշտակութիւն մը եղածը կերպով մը արդարացնելու համար. բայց կայսրը միայն խուսափող պատասխան մը տուաւ¹: Յաջորդող երկու տարիներու մէջ Պարսիկք հանդարտ մնացին²:

Այս մեծ պատրաստութեանց մէջ հիւանդ ինկաւ Կոստանդիանոս. իր որդին Կոստանդիոս վազեց Արևելքէն բայց արդէն վախճանած գտաւ հայրը (22 մայիս 337)³: Մինչև որ Կոստանդիանոսի երեք որդիները պետութիւնը մէջերնին բաժնեցին և իրարու հետ խաղաղութիւն կնքեցին, Պարսիկները յառաջադիմութիւններ ըրին Հայաստանի մէջ: Հոս քաջ թագաւորն Տրդատ մեռած էր և անոր տեղ յաջորդած էր որդին ԽՈՍՐՈՎ (Իբր 337-342)⁴: Սա ընդհանուր բարի թագաւոր մ'էր, բայց ոչ հօրը կորովը և ոչ ալ անոր զինուորական տաղանդն ունէր: Հին հեթանոսական կրօնքը դեռ միշտ հետևող-

1. Եւսեբ. Վարք Կոստ. Գ 57. Ռուփոս Փետոս 26. Լիբանիոս Ճառ Գ 296:

2. Լիբանիոս Ճառ Գ 297. Seeck առ PW Constantius 4. Սէէքի այս յօդուածը առ հասարակ Կոստանդիոսի ժամանակին համար կարևոր գրութիւն մ'է, որմէ մենք ալ օգտուած ենք:

3. Յուլիանոս Ճառ Ա 160. Զոնարաս 13,4 p. 10C.

4. Փաւստոս Գ 3. Խորեն. Գ 6:

ներ ունէր Հայաստան, և շատեր չէին կրնար նոր քահանայական դասուն ստացած ահագին ազդեցութեան հանդուրժել: Շապուհ իր կողմը ձգեց տժգոհ և փառասէր նախարարներէն շատերը¹, և երբ ՅՅՏին դարձեալ Միջագետք յարձակում գործեց և Մծբինը 63 օր ապարդիւն կերպով պաշարեց², իր բանակներով Հայաստանի սահմաններուն մերձ գտնուիլը այնչափ ազդեց հոն, որ Հայաստանի մէջ պարսկական կուսակցութիւնը զօրացաւ և խոսրով թագաւորը, որ ուզեց Հռովմայեցւոց հաւատարիմ մնալ, ստիպուեցաւ իր կուսակիցներով հռովմէական երկիր փախչիլ: Ապստամբ Հայերը, անշուշտ Շապուհոյ դրդամբ կամ անոր հաճոյք ընելու համար, հինաբար աւարառութիւններ ըրին մերձակայ հռովմէական երկիրներու մէջ³:

Այս կողմ ասոնք կատարուած միջոց կոստանդիանոսի որդիք վերջացուցին պետութեան բաժանման գործը⁴: Արևելք Ե-

1. Հմմտ. Փաւստոս Գ 4. Խորեն. Գ 4:

2. Ռուփոս Փեստոս 27. Լիբանիոս Ճառ Գ 297. Փիրմիկոս Մատերնոս De errore prof. religionum 29,3. Հերոնիմոս Chron. 2354. Mommsen, Chron. min. I 236.

3. Յուլիան Ճառ Ա 18D, 20BD.

4. Աննիբաղիանոս սպանուեցաւ զինուորական ապստամբութեան մը մէջ: Կոստանդիանոս անոր Հայաստանի

գիպտոսով միասին ինկած էր Կոստանդիոսի: Սա 338ին իր եղբայրներու հետ Պաննոնիոյ մէջ տեսակցութիւն ծ'ընելէն վերջ մեկնեցաւ, և Կապադովկիոյ վրայէն անցնելով հոկտեմբերին հասաւ Ասորիք. հոն Արաբներու հետ բարեկամութիւն հաստատեց, և զանոնք Պարսից երկիրը ապատակութիւններ ընելու գործածեց:

Կայսրը սկզբան հանդիպեցաւ զանազան տեսակ դժուարութիւններու, ինչպէս պակասութիւն դրամոյ, զօրքի, և անհրահանգութիւն իր զինուորաց: Այսուհանդերձ կրցաւ քիչ ժամանակուան մէջ բարեկազմ բանակ մը ձևացնել և 339ի զարնան անձամբ մտաւ Հայաստան¹, ուր պարսկական կուսակցութիւնը նուաճեց և անոր զլխաւորները, որոնք պատճառ եղած էին թագաւորի փախստեան, փոխանակ խստիւ պատժելու հռովմէական երկիր փոխադրեց²: Նա կրկին հաստատեց Խոսրովը և հռովմէական կուսակցութիւնը իրենց իշխանութեան մէջ, և նուէրներով ու պա-

կամ Պոնտոսի մէջ իշխանութիւն մը տուած էր, որ տակաւին բոլորովին յատակ չէ. Anonymus Vales. 6,35. Վիկտոր epit. 41,20. Եւարոպիոս 10,6,2.

1. Յուլիան ճառ Ա. 19A:

2. Յուլիան ճառ Ա. 20D σοῦ μὲν τοὺς αἰτίας τῆς φυγῆς... παρ' ἡμᾶς ἐξαγαγόντος, ἦτοι φախստեան պատճառները մեր քով բերիր:

տիւներով վարձատրեց անոնց հաւատարմութիւնը¹ : Կայսրը Հայաստանէն անցաւ Պարսից սահմանը, և հոն թշնամւոյ չհանդիպելով դարձաւ Անտիոք² :

Հայաստան ընդհանուր հանդարտ և ծաղկման վիճակի մէջ էր Խոսրովի ատեն, որ հետեւանք մ'է իր հօր ժամանակ տիրող երկար խաղաղութեան : Այս անդորրութեան միջոց երկիրը այնչափ կազդուրուած էր, որ թագաւորին սպարապետը վաչէ Մամիկոնեան և անոր նիզակակիցները Բագարատ Բագրատունի, Մեհունդակ և Գարեգին Ռշտունիք, վահան Ամատունի և վարազ Կամինեան մեծ յաղթութիւն մը տարին Մազքթաց անթիւ վոհմակներուն վրայ, և յաջողութեամբ կռուեցան Պարսիկ գունդերու դէմ³ : Եթէ Մազքթաց և Պարսից յարձակումներուն պատճառը Խոսրովայ անկեղծ հաւատարմութիւնն էր դէպի կայսր, նոյնպէս յաջողութեանց մէջ կըրնանք նոյն հաւատարմութեան վարձատրութիւն մը նշմարել⁴ . վասնզի Կոստանդինոս այդ ժամանակ Ասորիք էր և ապահովապէս առանց օգնականութեան թողու-

1. Յուլիան ճառ Ա. 21A. հմմտ. Խորեն. Գ. 5,6,8:

2. Լիբանիոս ճառ Գ. 298:

3. Փաւստոս Գ. 7,8:

4. Խորեն. Գ. 9-10:

ցած չէ իր հովանաւորեալը, մանաւանդ որ կ'ըսուի թէ վաչէ Հռովմայեցւոց քովէն դառնալէն վերջ յարձկած է տարիէ մը աւելի երկիրը թալլող թշնամիներու վրայ:

Խոսրովի որդին և յաջորդը ՏԻՐԱՆ (իբր 342 – 350) իր բարձր պաշտօնին մարդը չէր, մանաւանդ այնպիսի ժամանակի մը մէջ, ուր Շապուհ Բ՛ պէս մարդ մը, մեծամեծ պահանջներով և բուռն զօրութեամբ, Պարսից գահին վրայ նստած էր: Յիրաւի Տիրան իր թագը կոստանդիոսէն ընդունած էր¹, բայց Հռովմայեցւոց գործերուն Միջագետքի մէջ կամաց կամաց վատթարիլը և իր անխորհուրդ վարմունքովը Հայաստանի մէջ իրեն դէմ ստեղծած տեգոհութիւնը շատ նպաստեցին, որ անհակի հզօրագունին՝ որ է Պարսից թագաւորին կողմը, առանց բոլորովին թողլու կայսրը, որ բարեկամ էր Հայոց²: Ուրեմն Տիրան թողուց իր հօր և պապուն սկսած և յաջողութեամբ պսակուած ուղղութիւնը, որ կը կայանար անկեղծ բարեկամ մնալ Հռովմայեցւոց, և ինքզինքը նետեց այնպիսի երկմիտ քաղաքականու-

1. Խորեն. Գ 10-11:

2. Փաւստոս Գ 20. Խորեն. Գ 11:

Թեան մը մէջ, որ, թէև իր վտանգաւոր դիրքին համար ըմբռնելի է, բայց երկու ախոյեան պետութիւններէն ոչ մէկը և ոչ միւսը կրնար գոհ ընել, և միանգամայն թէ՛ իրեն և թէ՛ իր երկրին համար աղետաւոր պիտի ըլլար:

Կոստանդիոս կայսրը 338էն մինչև 350 Ասորիք մնաց, սակաւ ընդհատութիւն միայն ընելով, ուսկից գրեթէ ամէն տարի Պարսից դէմ արշաւանք մը կ'ընէր: Պարսիկները գրեթէ ամէն գարնան յարձակում մը կ'ընէին հռովմէական երկիրներու մէջ և աւերումներ կը գործէին, մասնաւորապէս Միջագետքի մէջ¹: Երբ ամառը ասոնք քաշուած կ'ըլլային՝ իրենց կը հետևէր կայսրը և ինքն ալ իր կողմանէ կ'աւերէր Պարսից երկիրները, առանց թշնամոյն հանդիպելու: Յամի 346ին Շապուհ երկրորդ անգամ պաշարեց Մծբինը, որ երեք ամիս տևեց, բայց հաւանաբար կայսրն է որ անոր օգնութեան հասաւ և ազատեց²: Յաջորդ տարին զինադադար մ'ըրին երկու պետութիւնները, և այդ շրջանին իւրաքանչիւրը կարելի եղած ա-

1. Ամմիան 18,6,3. 19,2,8. 19,9,9. Լիբանիոս Ճառ Ա. 591:

2. Աթանաս, ընդդէմ Արիանոսաց 51. Հերոնիմոս Chron. 2362. Ռուփոս Փետտոս 27:

մէն միջոցները ի գործ դրաւ դրացի ժողովուրդները և թագաւորները իր կողմը շահելու. իր նպատակին հասնելու համար նոյն իսկ բռնութիւն գործածեց և նուէրներով և ուրիշ միջոցներով ժողովուրդները գնել փորձեց¹: Այժմ հարկ էր որ նաև Տիրան իր երկմիտ վիճակէն դուրս ելնէր. և մենք անմիջապէս պիտի տեսնենք որ ան և իր ժողովուրդը կայսեր կողմը բռնեցին, որուն մէջ բնականապէս անուրանալի է եկեղեցական դասին ազդեցութիւնը, որ նպատաւոր էր քրիստոնեայ կայսեր և կ'ուզէր Կոստանդիանոսի հետ կնքուած դաշանց հաւատարիմ մնալ: Սինգարայի պատերազմին (348), որ բոլոր ընդհարումներէն ամենէն նշանաւորն է, Կոստանդիոս անձամբ ներկայ էր. սկզբան յաղթեցին լեգէոնները, բայց իրենց չափազանց յանդգնութիւնը նախկին յաղթութիւնը պարտութեան մը փոխեց²:

Յամի 350ին Արևմուտքի մէջ Մագնենտիոս սպաննելով Կոստաս կայսրը՝ անոր ծիրանիով իր ուսերը զարդարած էր: Կոստանդիոս ուրեմն քալեց մարդասպանին և յափշտակչին դէմ, իրեն հետ տանելով

1. Լիբանիոս Ճառ Գ 307:

2. Լիբանիոս Ճառ Ա, 592. Գ 310, 312. Յուլիանոս Ճառ Ա, 240:

Արևելքի բանակէն բաւական մեծ մաս մը¹: Իրեն հետ գացին հայկական այրուձիու ստուար գնդեր իբրև քաջ աղեղնաձիգեր, զորս Տիրան իբրև դաշնակից ստիպուած էր տալ կայսեր, բայց Շապուհ յետոյ զայն իրեն պիտի չներէր: Կոստանդինոս Մուրսայի քով փառաւոր յաղթութիւն մը տարաւ Մագնենտիոսի վրայ, յորում Հայոց հեծեալ աղեղնաձիգերը շատ նշանաւոր և գրեթէ վճռական դեր մը խաղացին²:

Շապուհ լաւ գիտէր կայսեր հեռանալը, Արևմուտքի շփոթութիւնները և Միջագետքի ու Հայաստանի գնդերուն անօսրացումը: Ուստի վճռեց նոյն տարուան մէջ (350) գլխաւոր յարձակում մը գործել, և անշուշտ միանգամայն նաև Հայոց թագաւորը պատժել: Անիկայ աւերեց Միջագետքի և Արևելից³ քաղաքներ, առաւ շատ մը բերդեր և եկաւ երրորդ անգամ պաշարեց Մծբինը: Լուկիլլիանոս զօրավարի առաջնորդութեամբ քաղաքը դիւցազնաբար պաշտպանուեցաւ և Շապուհ ստիպուեցաւ, յետ չորս ամիս զուր տեղ

1. Ամմիանոս 18,5,2:

2. Զոսիմոս 2,51. 52. հմմտ. Յուլիան Ճառ Ա. 36D, Բ 57CD. 60A:

3. Զոսիմոս 2,43:

աշխատելու, վերցնել պաշարումը և տուն
դառնալ, ուր Մազքթաց յարձակում մը
զինքը կը կոչէր¹ :

Շատ հաւանական է որ Շապուհ Մծբինի
այս պաշարման միջոց, յորում ոչ միայն
անհուն բանակներ ժողոված էր այլ նաև
կիներ և տղաքներ հռովմէական հողի վրայ
փոխադրած էր՝ զայն պարսկական ընելու
համար, պատժեց նաև Հայոց թագաւորը,
անկէ վրէժ առնելով կայսեր ցոյց տուած
հաւատարմութեան և խրկած զինուորական
օգնութեան: Այնպիսի վայրկենի մը մէջ,
յորում Հռովմայեցիք ինքնին տազնապի
մէջ էին Պարսից յարձակման պատճա-
ռաւ, Շապուհ այնքան ճնշում բանեցուց
որ Հայոց թագաւորն իր ընտանիքով
իբր բարեկամ անոր քով երթալ ստի-
պուեցաւ, ճիշդ այնպէս ինչպէս երբեմն
Արտաւազդ Անտոնիոսին: Շապուհ անգուժ
վարուեցաւ անոր հետ և զրկեց զայն ա-
չաց քաղցր լոյսէն: Նենգաւոր Պարսիկը
դիւրաւ կրցաւ այս բաներս ընել, վասնզի
Տիրան իր թեթևամտութեամբը իրմէ ու-
ժացուցած էր իր քաջ զօրավարները² :

1. Ամմիան 25,8,13-14. Զոնարաս 7,14-15. Յու-
ւիանոս Ճառ Ա. 28D:

2. Փաւստոս Գ. 12.20. Խորեն. Գ. 10.12:

Թագաւորին գերի բռնուիլը և Պարսկին յարձակումներն ու նենգութիւնները, որոց գործադրիչն էր հզօր զօրավարն Ներսէս¹, ցնցեցին թէ՛ հայ նախարարները և թէ՛ Հռովմայեցիները, որոնց իշխանութիւնը Միջագետքի և Հայաստանի մէջ մեծ մասամբ Հայոց Թագաւորին բարի կամքէն կախում ունէր:

Ըստ Փաւստոսի, որ դէպքերուն շատ մօտ կ'ապրէր, Հայերը իսկոյն Հռովմայեցւոց օգնութեան դիմեցին²: Այդ ժամանակ Արևելքի լեգէոններուն վերին հրամանատարն էր քաջ և Ամմիանէն յոյժ գովուած Ուրսիկինոս³: Հայոց և Հռովմայեցւոց միացած ուժերը արգիլեցին Ներսէսի յառաջադիմութիւնները և նոյն իսկ

1. Հմմտ. Ամմիան 24,6,12. Զոսիմոսի Գ 25ի մէջ յիշուած Անարէոս անունը Ներսէս կարգաւոր է ըստ Sieversի Studien էջ 255: Փաւստոս Գ 21. Խորեն. Գ 10: Կը տեսնուի որ Ներսէսը Թագաւորական ընտանեաց անդամ մ'է և արևմտեան գաւառի մը վրայ կառավարիչ կարգուած էր: Խորենացի Գ 10 զայն եղբայր կը կոչէ Շապուհի, իսկ Փաւստոս Գ. 24, Գ 1 զայն պարզապէս Թագաւոր Պարսից կ'անուանէ: Եւ յիրաւի Պարսից մէջ քաղաշոր տիրողոսն ունէին գաւառներու այն կառավարիչները, որոնք կամ արքունի ընտանեաց անդամ մ'էին և կամ գաւառի մը մէջ իրենք ժառանգաբար կը տիրէին, հմմտ. Nöldeke, Gesch. der Araber und Perser 49 ծան. 2. 450 և Marquart, Eransahr էջ 172:

2. Փաւստոս Գ 21:

3. Ամմիան 18,6,2:

յաղթութիւն մ'ալ տարին անով վրայ: Այս գործէն վերջ համաձայնութեան մը եկան երկու հակառակ կողմերը, այսինքն Շապուհ Հայոց թագաւոր պսակեց Տիրանայ որդին ԱՐՇԱԿ Բ^Ը (350 – 367) և արքայական գերիները նուէրներով ետ դարձուց, յետ Արշակայ դուստր մը և նախարարականներ իբր պատանդ առնելու: Այնուհետև խաղաղութիւն էր Պարսից և Արշակայ մէջ, որ երկու պետութեանց համաձայնութեամբ հայրենի գահը ելած էր¹, և կրցաւ յաջորդող տարիներու մէջ իր ժողովրդեան բարօրութեամբ և զարգացմամբ զբաղիլ²:

Եւ յիրաւի այս տարիէն սկսեալ ճշմարիտ խաղաղութիւն մը կը տիրէր երեք ժողովուրդներու մէջ: Վասնզի Մծբինի պաշարման ի դերև ելնելէն և Ներսէսի անյաջողութենէն զատ՝ Շապուհի դիրքը նաև անով վատթարացած էր, որ պատերազմասէր բարբարոս ժողովուրդներ, որոց զօրութիւնը և անոնցմէ սպառնացող

1. Փաւստոս Գ 21. Դ 1. 2: Արշակայ դուստրը և ազնուական Հայեր միկնոյն տարին (350) Պարսկաստան հասան իբր պատանդ. Bolland. Acta sanctorum 22 Apr. հար. 3 էջ 21. 26: Նոյնը, Մ. Ազգերեան, Լիակատար Վարք Սրբոց հար. Ը էջ 192 և 221 (Ակեփսիմա):

2. Փաւստոս Դ 2:

վտանգին մեծութիւնը ինքը միայն գիտէր, իր պետութեան արևելեան սահմաններուն վրայ յարձկած էին: Ահաւասիկ այս պատճառաւ է որ ան Հայոց և Հռովմայեցւոց հետ համաձայնութեան մը եկաւ ետ քաշուած ժամանակ: Շապուհ յետ խաղաղութիւն շնորհելու մէկուն և թագաւոր մը պսակելու միւսին՝ հեռացաւ իր երկիրը, և հոն ուրիշ ժողովուրդներու հետ բաւականաչափ զբաղանք ունէր¹, այնպէս որ եօթը տարուան ընթացքին մէջ (350-357) չենք լսեր խաղաղութեան լուրջ ընդհատում մը, զոր անշուշտ Ամմիան պիտի պատմէր եթէ տեղի ունեցած ըլլար:

Թագաւորին այս կերպով ուրիշ կողմ մը զբաղած ըլլալը և հետևաբար Եփրատայ և Տիգրիսի սահմանները աւելի հանդարտ թողուլը՝ թոյլ տուին կայսեր որ երկար ժամանակ (350-359) Արևմուտք մնայ:

Արշակ թագաւորը բաւական ժամանակ մը բարեկամական վերաբերութիւններ ունեցաւ Շապուհ հետ, և նոյն իսկ աննպաստ կը ցուցնէր ինքզինքը Հռովմայեցւոց: Բայց յամի 355ին յանկարծ ընդհատեց այս

1. Ամմիան 15,13,4:

վերաբերութիւնները¹, երբ տեսաւ որ Պարսից արքունիքին մէջ դարաններ կը լարուին իրեն դէմ², և ամուր կերպով բարեկամացաւ Հռովմայեցոց հետ: Կայսրը զայն բռնորովին շահելու համար անոր կին տուաւ իր վախճանած եղբոր Կոստաս կայսեր խօսեցեալը Ուլիմպիան, որ դուստր էր պրետորականաց նախկին սպարապետ Աբլաբիոսին³:

Ճիշդ ՅՏԾին կը սկսին պարսիկ զօրավարներ Հայաստանը և Միջագետքը անհանգիստ ընել⁴: Բայց Հռովմայեցոց Արևելից սպարապետը Մուզոնիանոս՝ բանակցութեան մէջ մտաւ Պարսից արևմտեան գլխաւոր զօրավար Դենշապհոյ (Տամպշապուհ) հետ, և խաղաղութիւն խնդրեց անկէ: Պարսիկ զօրավարը խնդիրը այնպէս մը ներկայացուց իր թագաւորին, իբր թէ կայսրը Արևմուտքի մէջ ծանր պատերազմ-

1. Այս թուականը կը հետևի Փաւստոսի Դ 21 գլխին, ուր կըսուի թէ Արշակ Պարսից թագաւորը թողուց Յովիանու ՅԵՅի դաշինքէն ութ տարի առաջ:

2. Փաւստոս Դ 20:

3. Ամմիան 20,11,3. Փաւստոս Դ 17: Այս ամուսնութեան ժամանակը անով կը ստուգուի որ Ս. Աթանաս զայն արդէն կը ճանչնայ և զայն իբր յանցանք մը կը համարի Կոստանդիոսի՝ իր Պատմութիւն Արիանոսաց առմիանձունս գրքին գլուխ 69ին մէջ: Աթանաս այդ գործը գրած է ՅՏԾին, հմմտ. O. Bardenhewer, Patrol. 52 224:

4. Ամմիան 15,13,4:

ներով զբաղած ըլլայ և խաղաղութեան պայմաններ խնդրէ¹ : Շապուհ, որուն այս տեղեկութիւնները շատ ուշ հասան (357ին), վասնզի ան կը պատերազմէր և կը ձմեռէր իր տէրութեան ամենէն արևելեան սահմաններուն վրայ, դեռ նոր հաշտութիւն կնքած էր Խիոնիտներու և Գելոններու հետ : Ուստի ամբարտաւան նամակ մը գրեց Կոստանդիոսի և պահանջեց որ Հայաստանը և Միջագետքը իրեն թողու. հակառակ պարագային սպառնացաւ, պատերազմ հրատարակել² : Պատգամաւորները, որոնք Ներսէսի մը առաջնորդութեամբ թագաւորին նամակը և նուէրներ կը բերէին³, Պոլիս հասան 358ի փետրուար 26ին, և անկից դիմեցին դէպի Սիրմիոն, ուր կը գտնուէր կայսրը : Բնականաբար Կոստանդիոս չընդունեցաւ թագաւորին պահանջները, բայց լրջօրէն խորհելով և զգուշաւոր կերպով պատասխանեց անոր. յետոյ երկու պատգամաւորութիւններ ղրկեց Շապուհին, որպէսզի զայն համոզեն ետ կենալ իր պատերազմական դիտաւորութիւններէն⁴ :

1. Ամմ. 16,9,2-4. Թեմիստիոս շատ Գ 57B կ'ըսէ թէ Պարսիկք խաղաղութիւնը խնդրեցին :

2. Ամմ. 17,5,1 և այլն :

3. Ամմ. 17,5,2. Պետրոս Պատրիկիոս ի FHG IV 190 հտկար. 17 :

4. Ամմ. 17,5,9-15. Զոնարաս 13,9 :

Ամէն փորձ ի զուր էր. Շապուհ անողորքելի մնաց իր խօսքին վրայ: Ան գրեթէ 100,000 հոգիէ բաղկացած բանակ մը կազմեց, որուն մէջ էին պատկառելի բազմութեամբ նաև իր արևելեան նոր դաշնակիցները: Շապուհ ՅՏԹի գարնան ճամբայ ելաւ: Հոովմայեցի դասալիք սպայ մը, Անտոնինոս անուամբ, խորհուրդ տուաւ թագաւորին որ փոխանակ սովորականի պէս Միջագետքի վրայ յարձկելու ուղղակի Ասորոց վրայ յարձակի, ուր քաղաքները այնքան լաւ պաշտպանուած չէին¹: Այս պատճառաւ Շապուհ Մծբինի առջևէն անցաւ և դիմեց դէպի հիւսիս, վասնզի Եփրատ ձիւնհալի պատճառաւ անանցանելի էր իր ստորին ընթացքին վրայ, և կը մտածէր Հայաստանի մէջ կամ ճիշտ անոր սահմաններուն մօտ անցնիլ գետը: Ճամբան հասաւ Ամիդ (այժմ Տիարպէքիր) և պատգամ դրկեց քաղաքացւոց որ դռները իր առջև բանան, բայց ինքն հաստատուն դիտաւորութիւն մը չունէր զայն պաշարելու: Սակայն երբ պարիսպներէն նետուած սլաք մը իր վերարկուն պատռեց և ուրիշ հարուած մը թիոնիտներու թագաւորին որդին սպաննեց, Շապուհ վճռեց

1. Ամմ. 18,6,3. 18,10,1:

այս նախատինքներուն վրէժը առնուլ Ամիգէն: Ուստի պաշարեց քաղաքը և յետ 73 օր աշխատելու և գրեթէ 30,000 մարդ կորսնցնելու՝ կրցաւ առնուլ զայն: Քաղաքին և զայն պաշարող եօթը լեզէոններուն բաղդը շատ ողբալի էր: Ամմիանոս սպայն և միանգամայն այս դէպքերուս պատմիչը էր այն սակաւ երջանիկներէն մէկը, որոնք փախստեամբ կրցան կեանքերնին ազատել¹:

Ամուր բերդաքաղաքին անկումը, որուն Ուրսիկինոս օգնութեան հասած էր եթէ Սաբինիանոս սպարապետ Արևելից իրեն թոյլ տուած ըլլար, խոր տպաւորութիւն մը գործեց Հոովմայեցոց և Հայոց վրայ, որոց Արշակ թագաւորը արդէն շատ անգամ խոստումներ և սպառնալիքներ ընդունած էր Շապուհէն²: Պարսից թագաւորը այժմ իբր յաղթող ամէն ակնկալութիւն ունէր, Հայաստանի մէջ իր նպատակներուն հասնելու:

Կոստանդինոս, որ պատերազմի պատ-

1. Ամմ. 18,7,8. 19,8. 19,9,9: Նաև Խորենացի Գ 26 և 28 կը պատմէ Ամիգին առումը. բայց խաբուելով ժողովրդական հին գրուցէ մը, որուն համեմատ իբր թէ Ամիգը հին Տիգրանակերտն ըլլայ, քաղաքը փոխանակ Ամիգ կոչելու Տիգրանակերտ կը կոչէ և զայն հայկական քաղաք մը կ'ընէ, ինչ որ իրականապէս չէր:

2. Ամմ. 20,11,2. Փաւստոս Գ 21.

րաստութեանց համար Պոլիս եկած էր (359), նախ 360ի գարնան շարժեցաւ իր մեծ բանակովը և եկաւ Կեսարիա Կապադովկացոց: Հոս իր քովը կանչեց Հայոց Արշակ թագաւորը, իր դաշնակիցը, և փառաւոր ընդունելութիւն մ'ըրաւ անոր և յորդորեց որ Հռովմայեցոց հետ բարեկամութեան մէջ հաստատուն մնայ: Արշակ ապահովցուց կայսրը, թէ մինչև վերջին շունչը հաւատարիմ պիտի մնայ Հռովմայեցոց, — և յիրաւի պահեց իր տուած խօսքը: Կոստանդ ճոխ նուէրներ ըրաւ Արշակայ և անոր ընկերացողներուն և ուղարկեց իրենց աշխարհը¹: Կայսրը արդէն յառաջագոյն ևս շատ բարեացակամ եղած էր Արշակայ հանդէպ, և տուրքէ ազատ հռչակած էր այն կալուածները, զորս Արշակ հռովմէական հողի վրայ ունէր²:

Մինչդեռ Կոստանդիոս դեռ միշտ պատրաստութեանց հետ էր, Շապուհ դարձեալ մտաւ Միջագետք (360), առաւ Սինգարա

1. Ամմ. 20, 11, 1-3.

2. Codex Theodosianus XI 1, 1. Այս օրէնքը, որ հրատարակութեանց մէջ Կոստանդիանոս Մեծի կը տրուի, Կոստանդիոսին է: Վասնզի հոն կը յիշուին Գատիանոս հիւպատոս (358ին) և Արշակ Հայոց, որոնք երկուքն ալ Կոստանդիոսի ժամանակ կ'ապրէին. հմմտ. Գաթըրճեան Բ 490. Seeck առ PW Datianus: Յիշուած երկիրները անշուշտ արքունի թագի կալուածներ էին, հմմտ. էջ 230 ծան. 1:

և Բեզարդէ (որ է Ծաւղէք) ամուր քաղաքները, — որոցմէ առաջինը Փրաշեան և Պարբևական առաջին լեզէոններէ, իսկ վերջինը Պարբևական երկրորդ և Հայկական երկրորդ լեզէոններէ պաշտպանուած էր — և ետ քաշուեցաւ¹: Այդ ժամանակ կոստանդիոս յառաջ քալեց մինչև Եդեսիա և սեպտեմբերին դիմեց թշնամեաց վրայ: Նախ այցելեց Ամդոյ աւերակները և լացաւ անոնց վրայ, յետոյ պաշարեց Բեզարդէն առանց զայն առնել կարենալու, և ձմեռը վրայ հասնելով բռնադատուեցաւ անանցանելի դարձած ճամբայներով Անտիոք դառնալ ունայնաձեռն:

Յաջորդ տարին (361) կայսրը դարձեալ նուիրակներ և թանկագին ընծայներ ղրկեց Անդրտիգրիսեան գաւառաց սատրապներուն և թագաւորներուն, որպէսզի զանոնք հաւատարմութեան յորդորեն: Բայց ամենէն աւելի Հայոց Արշակ և վրաց Մերիքան թագաւորները տեսակ տեսակ նուէրներով և հարուստ զգեստեղէններով պատուուեցան, որպէսզի ոչ մէկ պարագայի մէջ Պարսից հետ միաբանին: Ասկից կը տեսնուի որ ամէն անգամ որ Շապուհ արշաւանք մը կ'ընէր Միջագետք, իր զօրա-

1. Ամմիան 20,6,1-7. 20,7,1.

վարները մինչև Հայաստան և Վրաստան
ասպատակ կը սփռէին:

Մէկ կողմ այսպէս գործուած միջոց
կոստանդիոս դարձեալ անցաւ Եփրատը.
բայց երբ իմացաւ թէ Պարսիկք այս տարի
արշաւանք ընելու դիտաւորութիւն չունին,
ես դարձաւ և սկսաւ քալել Յուլիա-
նոսի դէմ, որ Գաղղիոյ մէջ կայսր հրո-
չակուած էր: Սակայն սաստիկ ջերմ մը
բռնադատեց զինքը Տարսոնի մօտ Մոպ-
սուքրենէ փոքրիկ քաղաքին մէջ դադար
առնելու, ուր մեռաւ 361ի նոյեմբեր 3ին:

Յուլիանոս թէ՛ Արևմուտքի և թէ՛ Ա-
րևելքի մէջ իբր միահեծան կայսր ողջու-
նուեցաւ, և աշխարհիս ամէն ծայրերէն
իրեն հասան պատգամաւորութիւններ, ի
մէջ այլոց նաև Հայոց թագաւորէն, որոնք
իրեն հետ բարեկամութիւնը և խաղաղու-
թիւնը նորոգեցին¹:

Յուլիան ուզեց շարունակել պարսկա-
կան պատերազմը, որուն համար կոստան-
դիոս արդէն մեծ պատրաստութիւններ տե-
սած էր: Արևելեան ժողովուրդներ առա-
ջարկեցին՝ իրեն աջակից ըլլալ յառաջի-
կայ պատերազմին մէջ, բայց կայսրը իր

1. Ա.մ. 22,7,10. Լիբանիոս նամակ 1457, յամէն
363. համտ. Sievers Studien 239.

ոյժերուն վրայ վատահացած մերժեց անոնց օգնութիւնը. միայն Հայոց Արշակ թագաւորին պատուէր ղրկեց որ քաջազէն գնդեր պատրաստ ունենայ և սպասէ հրամանի, երթալու համար այն տեղ՝ ուր որ հրամայուի¹: Յամի 363ի մարտ 4ին կայսրը ճամբայ ինկաւ Անտիոքէն դէպի Միջագետք, գրեթէ 65,000 հոգւոյ բանակով մը: Խառանու մօտ ան երկուքի բաժնեց իր բանակը. 20,000էն 30,000ի մօտ հոգի² յանձնեց իր ազգական Պրոկոպիոսին և Սեբաստիանոս կոմսին և զանոնք ղրկեց դէպ ի հիւսիս. հոս պէտք էին անոնք միանալ Արշակի հետ և միասին աւերել Մարաց Խիլիոզոմ երկիրը, յետոյ կորդուաց և Մոկաց կողմէն յարձակիլ Պարսկաստան, և անկից վերջ պէտք էին իրեն բանակին հետ միանալ, որ այդ ժամանակ արդէն Ասորեստան հասած պիտի ըլլար³:

Բանակին երկրորդ և զլխաւոր մասովը Յուլիան սովորական ճամբով, որ է Եփրատն ի վար, դիմեց Տիգրոնի վրայ,

1. Ամմ. 23,2,2. Սոզոմենոս 6,1:

2. Ամմ. 23,3,4 կու տայ 30,000, Զոսիմոս 3,12 կու տայ 18,000, իսկ Մագնոս Խառանցի ի FHG IV 4 սոսկ 16,000 կու տայ:

3. Ամմիան 23,6,1-5. Զոսիմոս 3,12 Արշակայ գործակցութիւնը չյիշեր:

զոր չհամաձակեցաւ պաշարել¹ : Թշնամին յայտնի իր դիմացը չելաւ, այլ հեռուէն դժուարացուց հռովմէական բանակին պարենաւորումը : Յուլիան անցաւ Տիգրիսը, այրել հրամայեց իր զօրաւոր նաւատորմիդը և գտնուեցաւ շատ վտանգաւոր դիրքի մը մէջ : Կը յուսար որ Պրոկոպիոսի բանակը շուտով իր քովը պիտի հասնի, բայց ոչ մէկ լուր չկար ո՛չ Պրոկոպիոսէն և ոչ Արշակէն : Արշակ զբաղած էր Խիլիոգոմ գաւառը աւերելու², և Պարսիկք թէ՛ անոր և թէ՛ Պրոկոպիոսի բանակին հաղորդակցութիւնները բոլորովին կտրած էին Յուլիանու գլխաւոր բանակին հետ³ : Այդ վտանգաւոր պահուն Շապուհ կը մօտենար քաջ սպառազինուած և խոշոր բանակով մը, վասնզի Պարսիկք նախ իրենց հիւսիսային սահմանագլխին վրայ սպասած էին թշնամւոյն⁴ : Հռովմայեցւոց համար սակայն ամենէն աղետաբերը այն եղաւ որ, ճիշդ այդ տագնապալից վայրկենին կայսրը թըշ-

1. Ամմ. 24,7,1:

2. Ամմ. 25,7,12. ուստի ճշմարիտ չէ, երբ Լիբանիոս ճառ Ա. 609 Արշակայ յապաղումը Յուլիանու հանդէպ անիրաւութիւն մը կը համարի: Լիբանիոսի այս կարծիքին հետեւած է նաև Gibbon IV 185:

3. Ամմիան 24,7,7-8:

4. Մագնոս Խառանցի և Եւտիքիանոս, որոնք երկուքն ալ Յուլիանու ընկերած էին, կ'աւանդեն թէ թագաւորը Պարսկահայք փախած էր, FHG IV 5-6:

նամեաց նետէ մը խոցուելով ինկաւ մե-
ռաւ¹ : Արշաւանքը կորսուած էր :

Վհատութիւնը տիրեց բանակին մէջ .
զօրքը կորսնցուց իր արիութիւնը և պա-
ղարիւնութիւնը : Սպայներու խորհրդի մը
մէջ Յովհանոս կայսր ընտրուեցաւ²,
բայց ան իսկոյն ցոյց տուաւ թէ այդ կա-
րևոր վայրկենին համար ամենէն աւելի
անյարմար անձն էր : Վասնզի ան քաջու-
թեան ո՛ր և է փորձ մը չըրաւ, այլ յու-
սահատեցաւ Հռովմայեցւոց վիճակին վրայ,
և Շապուհի պատգամաւորներ ղրկելով
խաղաղութեան և իր բանակին փրկու-
թեան համար պայմաններ խնդրեց : Վատա-
սիրտ ու երկչոտ Յովհանու և յաղթական
Շապուհոյ մէջ հետևեալ դաշինքը կնքուե-
ցաւ (յուլիս 363) . Այն երկիրներէն, զորս
երբեմն Գաղերիոս Պարսիկներէն առած էր,
Աղձնիք, Մոկք, Ծաւղէք, Ռեհիմենէ և
Կորդուք տասն և հինգ բերդերով միասին
ետ պիտի դարձուէին Պարսից³ . Կաստրա

1. Ամմ. 25,3 :

2. Ամմ. 25,5,4 :

3. Անուանց հինգ թիւը պէտք չէ զմեզ շփոթցնէ և
պէտք չենք կարծել որ հիմայ տրուած երկիրներու ծա-
ւալը նոյն ըլլայ, ինչ որ 297ի դաշինքով առնուած էր
(տես էջ 261) : Առ երևոյթ նոյնութիւն մը կայ միայն :
Առաջ Հռովմայեցիները առին մեծ սասորապութիւններն
Ծովք, Անգեղատուն, Աղձնիք, Կորդուք, և Ծաւղէք .
Կորդուքը ու Տիգրիս գետ Կորդուքէն դէպ ի վար սահ-

Մաւրորում, Սինգարա և Մծբին քաղաքները — վերջին երկուքը առանց բնակչաց — Պարսից պիտի յանձնուէին. Հոովմայեցիք պիտի չօգնէին Արշակայ, երբ Պարսիկք անոր վրայ յարձկէին¹ :

Վատ Յովիան ստորագրեց այս պայմաններուն: Ասով ոչ միայն Անդրադրիսեան կալուածները և դարերէ ի վեր հոովմէական Միջագետքը թշնամւոյն ձեռքը մատնուեցան, այլ նաև Հայաստան, որ Սասանեանց սկսելէն ի վեր գրեթէ ան-

ման եղան երկու տէրութեանց: Կորդուքէն դէպի հիւսիսակողմ հայկական երկիր էր, որ այդ ժամանակ դէպի Մարաց կողմն ընդարձակուեցաւ: Իսկ այժմ 363ի դաշինքով Պարսից եղան միայն Աղձնիք, Կորդուք և Մաւղէք. Ծոփք և Անգեղաուն Հոովմայեցոց մնացին և երկար ժամանակ իբր հոովմէական սատրապութիւնք կառավարուեցան: Յամի 363ին հոովմէական և պարսկական եղած սատրապութեանց, կամ լաւ ևս Հոովմայեցոց և Պարսից սահմանն եղաւ Նիմփիոս — Պաթմանսուգետը, որ հզօր օժանդակ մ'է Տիգրիսի: Մնացած երկու անուններէն Մոկքը գաւառ մ'է Կորդուք նահանգին և հետևաբար անոր մէջ կը հասկցուի: Մեզի ծանօթ չէ պատճառը, թէ ինչո՞ւ այդ անունը առաջին դաշանց մէջ յիշուած չէ իսկ երկրորդին մէջ յիշուած է: Ռեհիմենէն պէտք է, ըստ Güterbock էջ 10 ծան. 3ի, Մաւղէքի հարաւ-արևելեան կողմը փնտռել: Յամի 410էն մնացած սիւնհոդի մը գործերուն մէջ Աղձնիք, Կորդուք, Մաւղէք, Ռեհիմենէ և Մոկք միասին կը յիշուին իբր Մծբնայ մետրոպոլիտական եկեղեցւոյն հինգ թեմերը, հմմտ. Հիւրըշման Հին Հայոց տեղւոյ անունները էջ 32 ծան. 2. Marquart Eransahr էջ 170-171:

1. Ամմիան 25,7,9-12. Փաւստոս Դ 21. Զոսիմոս 3,31:

պայման ինքզինքը Հոովմայեցւոց բազկին մէջ նետած էր, և մանաւանդ Արշակ թագաւորը, որ կայսերաց միշտ բարեկամ և հաշտարիւմ մնացած էր, և իր կարևոր դիրքին մէջ անոնց մեծ ծառայութիւններ մատուցած և իր հոովմէասէր զգացումներով զամենքը գերազանցած էր, Հոովմայեցիներէ մատնուեցաւ իր ոխերիւմ թշնամւոյն ձեռքը:

Յովիանու այս գործը, զոր հեթանոս մատենագիրն Ամմիան իրաւամբ անպարիշտ կը կոչէ, մահացու հարուած մը եղաւ Հայոց թագաւորութեան համար, որ արդէն առանց ասոր բաւական տկար էր, և որ բնականաբար այսուհետև պիտի չկարենար ինքզինքը պաշտպանել անհամեմատ զօրաւոր թշնամւոյ մը դէմ. թշնամի մը՝ որուն առջև Հոովմայեցիք ինքնին այնքան անարգ կերպով խոնարհեցան: Ինչ որ մենք ասկէ վերջ պիտի տեսնենք ուրիշ բան չէ եթէ ոչ հոգևարքը երիտասարդի մը, որ չուզեր մեռնիլ և զոր սակայն թշնամւոյն սուրը վիրաւորած է և թոյլ չտար անգամ մ'ալ վեր կանգնելու:

Արշակայ իբրև յոյս միակ իր աշխարհին ներքին ուժերը կը մնային: Բայց երկրին նոր հանգամանքը նոր ակնկալութիւններ դրած էր նախարարներէն ոմանց առ-

ջև, որոցմէ մանաւանդ դեռ Միհրը պաշ-
 տողները Պարսից կուսակից էին: Արշակ
 լաւ գիտէր իր աւատականներու զգացու-
 մը, որոցմէ ոմանք գրեթէ այնչափ զօրաւոր
 էին որքան ինքն թագաւորը: Այսպիսի
 հզօրներու հանդէպ թագաւորին անզօրու-
 թիւնը Արշակ շատ լաւ ըմբռնած էր: Այս
 անտեղութիւնը վերցնելու համար անիկայ
 շինեց Արշակաւան քաղաքը, որպէսզի
 այդ քաղաքին բնակիչներէն միայն թա-
 գաւորին հնազանդող զնդեր պատրաստէ և
 անոնցմով իր նախարարներուն ոյժը կոտրէ
 և կամ գէթ զանոնք իրենց չափին մէջ
 պահէ: Արշակ կը մտածէր քօզաքներու
 տեսակ զնդեր մը ստեղծել, զորս ուզածին
 պէս պիտի կարենար գործածել ի պաշտ-
 պանութիւն թագի իրաւունքներուն: Քա-
 ղաքը շուտ բազմամարդացաւ, վասնզի
 ամէն յանցաւոր, ոճրագործ և պարտատէր
 կրնար հոն երթալ և անպատիժ ապրիլ:
 Նախարարները տեսան իրենց սպառնացող
 վտանգը և գացին կործանեցին արքունի
 այդ դաստակերտը¹: Այս պատճառ մ'էր
 գժտութեան թագաւորին և նախարարնե-
 րուն մէջ: Այս գործին վրայ աւելցան
 նաև Արշակայ կողմանէ ուրիշ պատճառ-

1. Փաւստոս Գ 12-13:

ներ — այսպէս իր եղբօրորդւոյն Գնէլայ սպանութիւնը, որպէս զի անոր Փառանձեմ կիներ իրեն առնու — որով ան չէր կրնար բռնորովին սիրով և խաղաղութեամբ ապրիլ իր նախարարներուն հետ:

Ներքին այս վիճակը Պարսից թագաւորին համար դիւրացուց իր շատոնց երկնած դիտաւորութիւնները գործադրելու: Այսուհանդերձ կը տեսնուի որ ան քիչ մը հանդարտ կեցած ըլլայ մինչև Յովիանու մահը (16 փետր. 364): Անոր մեռնելով Շապուհ ինքզինքը այլևս ազատ համարեց դաշանց պայմաններէն և սկսաւ յայտնապէս յարձակիլ Հայաստանի վրայ¹: Բայց դիւրին գործ մը չէր նուաճել քաջապէս ամրացուած երկիր մը, ինչպէս որ էր այդ ժամանակ Հայաստան: Արշակ և իր ժողովուրդը չորս ամբողջ տարիներ դիւցազնական դիմադրութիւն մ'ըրին Պարսից², որուն մանրամասնութիւնները Փաւստոս կենդանի գոյներով նկարագրած է³, ինչ որ նաև Ամմիան կարճ և ճշդիւ աւանդած է⁴:

Շապուհ սկզբան նենգ գործածեց և Ար-

1. Ամմիան 27,12,1. 30,2,3:

2. Ամմ. 27,12,2:

3. Փաւստոս Գ 22-54:

4. Ամմիան 27,12,1-4. 25,7,12:

շակը գեղեցիկ խոստումներով իր քով հրա-
ւիրեց: Արշակ չգնաց հոն: Պարսիկը վաստը-
կեցաւ քանի մը նախարարներ և յանկար-
ծական յարձակումներով ինչ ինչ տեղեր
գրաւեց Հայաստանի մէջ, բայց ոչ առանց
արիւն թափելու: Երբ տեսաւ որ բռնու-
թեամբ գործը երկայն կ'երթայ, սուտ երդ-
ման և խաբէութեան դիմեց: Արշակը իր
խօսքին վրայ վստահացնելու համար իր
վարազակնքովը կնքուած աղ խրկեց ա-
նոր, ինչ որ Պարսից մէջ ամենէն սրբա-
զան երդումն էր: Ասոր վրայ Արշակ,
գլխաւորապէս իր շրջակայէն բռնադա-
տուած, այցելութեան գնաց արքայից ար-
քային, որ զայն՝ հակառակ այնքան երդ-
մանց՝ ճաշի մը միջոց բռնեց, ոսկի շրդ-
թայներով կապեց և աչքերը կուրցնելով
Անյուշ բերդը փակեց ¹ (367): Դժբաղդին
կեանքը աւելի դառնացնելու համար նաև
անոր քաջ սպարապետ վասակ Մամիկոն-
եանը բռնեց, և պարսկական բարբարո-
սութեան համեմատ մորթազերծ ընելով՝
զայն յարդով լեցուց և Արշակայ առջև
դրաւ ²:

1. Հիւսիսային Շոշաստանի մէջ կիւկերտ, գոր Ի.
Rawlinson գտաւ, հմմտ. Nöldeke Aufsätze էջ 109:

2. Փաւստոս Գ 53-54. Ամմիան 27,12,2-3. 25,7,12.
Պրոկոպ. Պարսկական պատրգմ. 1,5:

Այս էր դժբաղդ թագաւորին, Հոովմա-
յեցւոց հաւատարիմ բարեկամին ճակա-
տագիրը: Արշակայ ժամանակ սուրբ Ներ-
սէս Պարթև կաթողիկոսի գործակցութեամբ
Հայաստանի մէջ շատ մը բարեզարդու-
թիւններ և հաստատութիւններ ստեղծուե-
ցան, որպիսիք հազիւ այսօրուան Եւրոպիոյ
տէրութեանց մէջ կան, այսպէս դպրոց-
ներ, հիւանդանոցներ, որբանոցներ, աղ-
քատանոցներ և նման հաստատութիւններ,
որոնք այդ ժամանակ Հայաստանի շատ
մը քաղաքներուն մէջ հիմնուեցան¹: Քա-
ղաքակրթական այս յառաջադիմութիւնը
դիւրաւ պիտի ըմբռնենք, եթէ միայն աչք
մը նետենք այդ ժամանակի մէջ ծաղկող
Լիբանիոս հռետորի հայ աշակերտաց բազ-
մութեան վրայ, զորս նշանաւոր Յոյնը իր
նամակաց մէջ կը յիշէ: Անշուշտ օտար
աշխարհներ գացող այս ուսանողներէն շա-
տերը արքունի ծախքով կը պահուէին,
ինչպէս որ Արշակայ յաջորդներէն ոմանք
այս առատաձեռնութիւնը ըրին: Հելլենա-
կանութեան նոր հոսանք մը սկսած էր
Հայաստան Տրդատ Գ^{էն} ի վեր, որուն
Արշակ և Ներսէս հայրապետ նոր զարկ
մը տուած էին:

1. Փաւստոս Գ 4:

Արշակայ ձերբակալութենէն անմիջապէս վերջ Շապուհ սկսաւ Հայաստանը վրդովել. «բայց դիւրին գործ չէր Հայաստանի տիրել: Իրաւ է որ Շապուհ Արշակը ձեռք ձգեց, բայց ատով դեռ հեռի էր տիրանալէ երկրին՝ որ շատ մը բնական բաժանումներով զատուած է, և նախարարներուն՝ որոնք գրեթէ անկախ կ'իշխէին հոն: Շապուհոյ տիրապետութիւնը չէր կրնար նաև տևական ըլլալ: Հայաստանի մէջ քրիստոնեայները ընդհանրապէս Հռովմայեցւոց կողմն էին, իսկ զրադաշտականները, որոնք դեռ միշտ բազմաթիւ էին, Պարսկաց կողմը: Ասոնց վրայ աւելցնելու է նաև անձնական և փոփոխուող շահերը նախարարներուն, որոնք կ'ախորժէին իրենցմէ վեր ոչ մէկ տէր ճանչնալ¹»:

Երկու ազդեցիկ Հայեր, Կիւլակ ներքինին և Արտաւան, Շապուհոյ կողմը անցած էին: Սա հայրենեաց երկու մատնիչները պարսկական բանակներու առաջնորդ կարգելով Հայաստան դրկեց, որպէսզի զայն նուաճեն: Ասոնք եկան և պաշարեցին (368 ձմեռ) Արտագերս բերդը, ուր Արշակայ թագուհին փառանձեմ և թագաժառանգը ՊԱՊ (367 – 374) հարուստ

1. Nöldeke, Aufsätze 101.

գնդերով ամրացեր էին¹։ Անառիկ բերդին պաշարումը շատ երկնցաւ և խիստ ձմեռը սաստիկ կը նեղէր պաշարողները։ Երկար բանակցութիւններէ յետոյ Փառանձեմ թոյլ տուաւ որ կիւլակ և Արտաւան բերդ մըտնեն, խաղաղութեան մասին խօսելու համար։ Հոն գեղեցիկ կնոջ արտասուքը երկու ուրացեալներուն ոչ միայն կարծր սիրտերը ամոքեց, այլ նաև զանոնք այնպէս շահեցաւ իր դատին համար, որ յաջորդ օրերու մէջ անոնց գործակցութեամբ Պարսից բանակը առնուեցաւ և պաշարողները բոլորովին ջարդուեցան²։

Պարսկական զօրքին կոտորածը ինչպէս նաև անոնց առաջնորդներուն անհաւատարմութիւնը արքայից արքային մէջ ամենամոլեգին զայրոյթ մը արթնցուցին, որ անով աւելի սաստկացաւ որ պաշարեալները կարճ ժամանակ առաջ գահաժառանգ Պապը գաղտնի կերպով վաղէս (364 - 378) կայսեր ղրկած էին, և սա երիտասարդ

1. Ամմիանու հրատարակութեանց մէջ Պապի անունը Para տպուած է, թէև վատիկանեան լաւագոյն ձեռագիրը ճշդիւ Papa ձևը պահած է։ Պապի անունը կը յիշէ նաև Ս. Բարսեղ իր Թղթերուն մէջ, 120. 121։ Պապ անուան կը հանդիպինք նմանապէս Պարսից մարտիրոսներուն մէջ, Bolland. Acta Sanctorum, 22 Apr. հար. 3 էջ 21։

2. Ամմ. 27, 12. 5-8.

իշխանն ընդունած և թագաւորական պատիւներով անոր բնակութեան տեղ տուած էր Պոնտոսի Նէոկեսարիա քաղաքը, ուր կայսերական ծախսով պիտի ապրէր¹ :

Կիւլակ և Արտաւան, որոնք այժմ Փառանձեմի հետ միասին տէրութեան վարիչի կամ խնամակալի դերն ունէին, պատգամաւորներ դրկեցին կայսեր և անոր օգնականութեան հետ միանգամայն Պապը իբրև թագաւոր խնդրեցին : Ասոր վրայ կայսրը Տերենտիոսին յանձնեց (369 զարնան) որ Պապը Հայաստան տանի, ուր նա ժամանակ մը առանց թագաւորի տիտղոս և նշանները կրելու երկիրը պէտք էր կառավարել : Յովիանու դաշանց համեմատ կայսրը զինուորական օգնութիւն չդրկեց² :

Այսու հանդերձ վաղէսի այս չափաւորութիւնը զինուորական միջամտութենէ մը աւելի թուեցաւ՝ ինքզինքը աստուած մը համարող Շապհոյ, որ իսկոյն մեծ բանակներ ժողովեց և ահագին զօրութեամբ մտաւ ի Հայս : Հոն Հռովմայեցի չկար, իսկ Պապ չէր կրնար յայտնի պատերազմով ճակատիլ անոր դէմ, ուստի հինգ ամսոյ չափ ծածկուեցաւ լեռներու և անտառ-

1. Ա.մ.մ. 27,12,9. Թեմիստիոս Ճառ Ը 116C:

2. Ա.մ.մ. 27,12,10:

ներու մէջ: Շապուհ և իրեն հետ Պարսից կուսակից Հայերը շատ մը բերդեր և քաղաքներ առնելէն յետոյ — որոց մէջ էր նաև Արտաշատ — իր բանակները կեդրոնացուց Արտագերսի շուրջը և վերջապէս առաւ զայն: Արշակի թագուհին և գանձերը Շապհոյ ձեռքն ինկան, որ նաև Հայոց դէպի Մարաստան տարածուող խոշոր գաւառ մը իր երկրին հետ միացուց: Տիգրոն դառնալէն վերջ այրասիրտ Փառանձեմը նախատալից սպաննեց¹:

Վաղէս կայսրը, որ աւելի պատերազմ ունենալ քան ընել կ'ուզէր, այնքան աւերում քանդումէն վերջ հռովմէական բանակ մը ուղարկեց Արինթէոս կոմսի հրամանատարութեան տակ՝ Հայաստանի պաշտպանութեան համար, ուր Պապ թագաւորը քիչ մնաց որ Շապհոյ հետ համաձայնութեան մը գար: Վասնզի ան տեսած էր որ Հռովմայեցւոց օգնութիւնը միշտ կ'ուշանայ, իր երկրին մայրաքաղաքը և ուրիշ շատ բերդեր առնուեցան, և ինքն իբր մահապարտ փախստական մը հինգ ամիսներէ ի վեր թաքստոցներու մէջ կը թափառի այն երկրին, որուն ապահով թագը իրեն կը խոստանար հզօր արքայից ար-

1. Փաւստոս Դ 54: Ամմ. 25,7,12. 27,12,12:

քայն: Այս մտածութիւններով Պապ խաբուեցաւ նենգաւոր Շապուհի խոստումներէն և անոր դրկեց (370) Կիւլակի և Արտաւանու գլուխները, որոնք յիրաւի իր հօր դաւաճաններ եղած էին, բայց այժմ իր լաւագոյն խորհրդականներն էին: Բարերազգարար ճիշդ այդ պահուն հասաւ Արինթէոս և ատով ընդհատուեցան անդրագոյն բանակցութիւններ Պարսկին հետ և երկրին աւերումը¹: Շապուհ դադրեցուց Պապին ետեէ իյնալը և կայսեր գանգատեցաւ դաշանց չպահուելուն համար: Բայց այդ ժամանակ Վաղէս արդէն Տերենտիոսը վրաստան դրկած էր, և ատով ոչ միայն Հայաստանի մէջ խաղաղութիւն տիրած էր, այլ նաև վրաստանէն հալածուած էին Պարսիկք և կայսեր հաւանութեամբ վրաստան երկու թագաւորութեանց բաժնուած էր:

Այս լուրին վրայ կատուեցաւ Շապուհ. վրէժ միայն գոռալով ժողովեց իր պետութեան և իր դրացիներու զօրութիւնը և բուն կերպով դիմեց Հայոց և Հռովմայեցւոց դէմ²:

1. Թեմիստիոս Ճառ ԺԱ. 149B. Sievers, Studien էջ 269. Tillemont V 384.

2. Ամմ. 27,12,13-18. Թեմիստիոս Ճառ ԺԱ. 148D. Թէոդորեոս Պատմ. Եկեղ. 4,32. հմմտ. Nöldeke, Aufsätze 102.

Յամի 371 գարնան թագաւորին և կայսեր ու Հայոց բանակները դիմացէ դիմաց էին Չիրաւայ դաշտին մէջ: Ինքն կայսրը մնաց Յերապոլիս և պատերազմի ղրկեց Տրայիանոս կոմսը և Ալամանաց իշխանը Վադոմար, ապսպրելով անոնց որ թշնամին կռուի չգրգռեն և պատերազմը նախ իրենք չսկսին: Պարսից գնդերը զիրենք այնպէս նեղեցին, որ Հռովմայեցիք զէնք գործածել ստիպուեցան և փառաւոր յաղթուեցին մը տարին թշնամեաց վրայ: Յետոյ փոքր ընդհարումներ տեղի ունեցան փոփոխ բաղդով, և վասնզի տարւոյն եղանակը առաջ գացած էր՝ զինադադար մը կնքեցին, որ կրնայ պատերազմին Պարսից համար անյաջող ելքը և կամ իրենց պետութեան ներքին խառնակութիւն մը ցուցնել: Կայսրը Անտիոք քաջուեցաւ իսկ Շապուհ Տիգրոն¹:

Ասոր յաջորդեցին խաղաղութեան քանի մը տարիներ, որոնք սոսկալի ողբերգութեամբ մը վերջացան: Տերենտիոս Հայաստան մնացած էր իբր հրամանատար հռովմէական գնդերու: Սա այն տեսակ մարդիկներէն էր, որոնք ամեն տեղ երկպա-

1. Ամմ. 29,1,1-4. համտ. Թեմիստիոս Ճառ ԺԱ. 149B: Թեմիստիոս այս ճառը խօսեցաւ 373 մարտ 28ին:

ոակութիւն կը ձգեն: Ինքը և իր զաղափա-
 րակիցները երիտասարդ Պապի յանդգնու-
 թենէն և ձեռներէցութենէն կը վախէին և
 շարունակ զայն կայսեր առջև կ'ամբաստա-
 նէին, չափազանցութիւններով: Հաւանա-
 կանաբար Պապ Շապուհէն եկող մարդիկ-
 ներ կոպտաբար չէր վռնտած, և կը մտա-
 ծէր նաև անոր հետ խաղաղութիւն մը
 կնքել¹: Վաղէս, արդէն կասկածոտ և դիւ-
 րահաւան մէկը, Պապը Տարսոն կանչեց
 (372) իբր թէ պատերազմի ստիպողական
 գործերու մասին անոր հետ պիտի խոր-
 հըրդակցի: Պապ եկաւ, բայց ոչ խորհըր-
 դակցութիւն տեղի ունեցաւ և ոչ ալ տե-
 սակցութիւն մը կայսեր հետ. այլ պա-
 տուաւոր կերպով ան հակողութեան տակ
 առնուեցաւ: Թագաւորը ծածկաբար լսեց
 թէ Տերենտիոս ինչ զրպարտութիւններ
 ըրած էր իր մասին, և իսկոյն գուշակեց
 թէ ո՛րքան ծանր վտանգ կը սպառնար իր
 կեանքին այժմ: Պապ վճռեց ամէն զնով
 իր գլուխը ազատել:

Ան իր քովը կանչեց Հայաստանէն ի-
 րեն ընկերացող երեք հարիւր հեծեալնե-
 րը, անոնց սեպածև բանակի մը ձև տուաւ,
 և լոյս օրով յանդուգն և աներկիւղ կեր-

1. Հմմտ. Փաւստոս Ե. 32. Ամմիան 30,2,1:

պով իր ամենաերագ ձիերով քաղաքին
ճամբայները ճեղքեց և դրան պահապան-
ները սարսափեցնելով փախաւ իրեններով:
Չինքը բռնելու համար ետևէն վազող լե-
զէոն մը շուտով ետ դարձաւ քաղաք,
վասնզի Հայոց կայծակի պէս թափող նե-
տերը թէ՛ զինուորները և թէ՛ զինուորա-
կան տրիբունները զարհուրեցուցած էին:
Պապ երկու օր երկու զիշեր անդադար
ճամբորդելով հասած էր Եփրատ գետը,
որ ջրոց յորդութեամբ անանցանելի էր
ձիով: Մերձակայ հնձաններէն տիկեր գլտ-
նելով նախարարք և ինքը թագաւորը ա-
նոնց վրայ նստած անցան գետը, և այլևս
իրենք զիրենք ապահով համարելով սկսան
կամաց երթալ, և ճամբայներուն շատ տեղ-
եակ չըլլալով ոլոր մոլոր ուղիներով բա-
ւական դանդաղ կը յառաջէին: Այս լսելով
վաղէս անմիջապէս հազար թեթևազէն
նետաձիգ հեծեալներ անոնց ետևէն արձա-
կեց Դանիէլ կոմսի և Բարզիմերէս ասպա-
րակրաց տրիբունի առաջնորդութեամբ, ո-
րոնք այդ կողմերը աւելի լաւ կը ճանչ-
նային քան Հայք: Դանիէլ և Բարզիմեր
կարճ ճամբայներով Հայերու առջևն առին
և գացին բռնեցին երկու ճամբայներ, ո-
րոնք երեք մզոն միայն իրարմէ հեռու էին
և որոցմէ հարկ էր անցնիլ Պապ: Բայց

երջանիկ դիպուած մը և իր արթնամտու-
 թիւնը փրկեց թագաւորը: Վասնզի դիմացի
 կողմէն եկող ուղևոր մը տեսնելով որ եր-
 կու ճամբայները զինուած զօրքերով բռ-
 նուած են, վախէն մացառներու մէջէն
 ծածուկ արահետներով անցաւ այդ կտորը
 և պատահեցաւ Հայոց, որոնք յոգնած կը
 հանգչէին: Հայ զինուորներ բռնեցին ու-
 ղևորը և Պապայ բերին, որուն ան ծածուկ
 կերպով պատմեց թէ ի՛նչպէս ճամբայները
 բռնուած էին: Պապ առանց պաղարիւնու-
 թիւնը կորսնցնելու կանչեց իր զինուոր-
 ներէն մէկը և վտանգը առանց անոր ի-
 մացնելու զայն ղրկեց դէպի ճամբայներէն
 մէկը, ուղևոյ պիտոյքները հոգալու պատ-
 րուակաւ. յետոյ կանչեց երկրորդ մը և
 զայն ևս նոյն պատրուակով միւս ճամբով
 ղրկեց: Մինչ Հոովմայեցի զօրավարները
 այդ զինուորները բռնելով իւրաքանչիւրը
 կը կարծէր թէ Պապը վայրկեանէ վայր-
 կեան իր ձեռքը պիտի ունենայ և բոլոր
 ուշադրութիւնը ճամբուն վրայ դարձուցած
 էր, Պապ հրամայեց ուղևորին որ իր ե-
 կած արահետով իրենց առաջնորդէ: Այս-
 պէս թփուտներու և մացառներու մէջէն
 անտեսաբար անցնելով ազատեցան և հա-
 սան Հայաստան, ուր ժողովուրդը զիրենք
 մեծ խնդութեամբ ընդունեցաւ: Շատ ուշ

էր երբ Դանիէլ և Բարզիմէր հասկցան թէ խարուած էին, և անիկայ զոր կը կարծէին միայն ձեռք երկնցնելով բռնել շատ հեռի էր իրենցմէ: Դարձան Տարսոն և անվերջ ծաղրածութեանց և հեզնութեանց նիւթ եղան. բայց ասիկայ ի մնաս Պապին եղաւ: Վասնզի այս զօրսովարները չդադրեցան այնուհետև Պապը կայսեր առջև զրպարտելէ, և նանրահաւատ Վաղէսը համոզեցին որ Պապ կիրկէա աստուածունչւոյն կախարդութիւններով թէ՛ իրեն և թէ իր ընկերներուն մարմինը մշուշի փոխած և այնպէս աներևութաբար իրենց աչքին առջևէն փախած ըլլայ:

Հակառակ այսքան դէպքերու Պապ շարունակեց հաւատարիմ մնալ կայսեր, բայց Վաղէս վճռած էր պատանի թագաւորը անհետացնել: Ան գաղտնի պատուէր ղրկեց Տրայիանոս կոմսին, որ Տերենտիոսի ձախորդ փորձերէն վերջ Հայաստանի լեզէոններուն գլուխ կարգուած էր, որ Պապը նենգով կամ բռնութեամբ սպաննէ: Միև կողմանէ կայսրը ամենասիրալիր նամակներ կը գրէր Պապին և պատիւներով և բարեկամական ցոյցերով զայն կը ճոխացնէր: Երկու տարի վերջ Պապ, որ այնչափ անգամներ կոչունքի հրաւիրած էր Հռովմայեցի զօրապետը, կարծեց թէ քրիստո-

նեայ կայսեր հետ հին բարեկամութիւնը այլևս վերահաստատուած է, և առանց կասկածի ընդունեցաւ Տրայիանու հրաւէր մը և փոխադարձ ճաշի գնաց անոր բանակը: Կոչուեցի ժամանակ, մինչ երիտասարդ թագաւորը գինւոյ բաժակը ձեռքը բռնած և երաժշտական գործեաց քաղցր ձայնովը կը զուարճանար, երկու Հռովմայեցի զինուորներ սակրով ետևէն զարկին զինքը և վիրաւորեցին: Պապ և իր ընկերները փորձեցին պաշտպանել իրենք զիրենք, բայց հարուածները աւելի շատցան և Արշակունի արիւնը խառնուելով հռովմէական զինիին հետ ողողեց հիւրընկալ սեղանը (374 աշուն)¹:

Այսպիսի վերջ ունեցաւ դժբաղդ թագաւորը: Հայր և որդի զոհ գացին Հռովմայեցւոց վատութեան: Երկուքին ալ դահիճ և դաւաճան Հռովմայեցիք եղան, սատարբերութեամբ միայն որ մէկը օտարի ձեռքով սպաննեցին իսկ միւսը իրենք անձամբ:

Այս ոճիրէն վերջ ազգին գլխաւորները ժողովեցան իրենց վիճակին վրայ խորհելու համար, բայց չէին կրնար որոշել երկու մարդասպաններէն ո՛րը լաւ համարիլ:

1. Ա.մ. 30, 1, 1-22. հ.մ.մ. Sievers, Studien էջ 269.

և վասնզի առանց երկու պետութիւններէն մէկուն յենլու չէին կրնար իրենք զիրենք միւսին դէմ պաշտպանել, իսկ երկուքը միանգամայն թշնամացնել խենդութիւն պիտի ըլլար¹, ուստի զարմանալի աստուածաբանութեամբ մը քրիստոնեայ մարդասպան մը աւելի լաւ համարեցին քան հեթանոս մը, և գոհ մնացին երբ Վաղէս երիտասարդ և քաջ Արշակունի մը, ՎԱՐԱԶԴԱՏ (374-377), թագաւոր պսակեց և Հայաստան ղրկեց²:

Պապի սպանութեան լուրը նաև Շապուհ ականջը հասած և զայն տխրութեամբ լեցուցած էր. վասնզի Շապուհ կը յուսար երիտասարդ թագաւորը իր կողմը շահիլ³: Երբ իր այս յոյսը օդ ելած տեսաւ՝ Արշակ անուամբ նուիրակ մը ղրկեց կայսեր, և առաջարկեց որ Հայաստանը՝ կռիւներու այս մշտնջենաւոր պատճառը՝ մէջերնին բաժնեն: Վաղէս պատասխանեց թէ ինք բան մը չկրնար փոխել դաշանց մէջ զրուածներէն: Սակայն երբ Շապուհ յայտարարեց թէ դաշինքը միայն Յովհանոսի հետ կը զօրէր, կայսրը անոր ղրկեց Վիկտորը՝

1. Փաւստոս Ե 33:

2. Փաւստոս Ե 34. անտարակոյս ասիկայ էր, զոր երբեմն Տերենտիոս Պապի տեղ ուզած էր, Ամմիան 30,1,4:

3. Ամմիան 30,2,1. Փաւստոս Ե 32:

որ իր ասպահապետն էր և Ուրբիկիոսը՝ որ հրամանատարն էր Միջագետաց, ըսելու որ Շապուհ անիրաւ տեղ Հայաստանը կը պահանջէ, վասնզի երկուքն ալ դաշանց մէջ Հայերու թոյլ տուած էին անկախ ապրիլ¹ :

Այս գեղեցիկ էր : Բայց կայսեր պատգամաւորները, ըստ Ամմիանու առանց կայսեր հրամանին, Հայաստանի քանի մը աննշան գաւառներ ընդունեցան, զորս իրենց տուաւ Պարսից թագաւորը : Այս գաւառները Շապուհ կայսեր ներկայացուց մասնաւոր պատուիրակութեամբ մը որուն գլուխ կեցած էր Սուրէն : Սակայն Վաղէս շուղեց ճանչնալ այս բաժանումը և յաջորդ ամառուան համար պատերազմի պատրաստուեցաւ² : Բայց Շապուհ բարկութեամբ լեցուած հրաման տուաւ Սուրէնի զէնքով գրաւել այն գաւառները, զորս Վիկտոր և Ուրբիկիոս իրեն տուած էին : Սուրէն շուտով կատարեց իր տիրոջ հրամանը³ :

Վաղէս սակայն չկրցաւ իր լեզէոնները Արևելքի մէջ Պարսից դէմ գործածել . վասնզի Գոթաց վտանգը օրէ օր աւելի

1. Ամմ. 30,2,1-4:

2. Ամմ. 30,2,5-6:

3. Ամմ. 30,2,7-8:

սպառնալից կ'ըլլար, Թրակիա արդէն աւերուած էր¹: Ուստի դարձեալ Վիկտորը զրկեց Շապուհին, որպէս զի եղած բաժանումը ճանչնայ: Ասով Հայաստան Հռովմայեցւոց և Հայոց համար մշտնջենապէս կորսուած էր: Լեզէոնները Հայաստանէն դուրս ելան²:

Յիրաւի Հայաստանը երկու ազդեցութեան շրջանակներու բաժնուեցաւ, բայց կերպական դաշնադրութիւն մը տեղի չունեցաւ: Այս ժամանակէն սկսեալ մենք կը լսենք պարսկական Հայաստան և յունական (որ է հռովմէական) Հայաստան անուանակոչութիւնները: Յունական Հայաստանը գլխաւորապէս կը բաղկանար Եկեղեացէ, Դերջանէ, Խորձեանէ, Կարինէ և հին հռովմէական սատրապութիւններէ, ինչպէս Ծոփք և Անգեղ տուն³, իսկ պարսկական Հայաստանը հինգ անգամ աւելի մեծ էր քան յունականը, որ, ինչպէս Փարպեցին կ'ըսէ, հազիւ միայն Այրարատ նահանգին կը համապատասխանէր⁴:

Սկզբան երկու կողմերն ևս անուանա-

1. Ամմ. 30,2,8. 31,8:

2. Ամմ. 31,7,1-2. Զոսիմոս 4,21:

3. Փաւստոս Զ 1. Խորենացի Գ 45. 46. Codex Theodosianus XII 13,6. հմմտ. Güterbock 21:

4. Փարպեցի էջ 20. հմմտ. Պրոկոպիոս, Շինուածք, 3,1:

կան թագաւորներ ունեցան: Վարազդատ, զոր կայսրը Պապայ տեղ դրկած էր, չկըրցաւ Հայաստանի մէջ հաստատուն կռուան մ' ունենալ. վասնզի անիկայ իր անխոհեմութեամբ թշնամացեր էր Մամիկոնեան հզօր ընտանեաց հետ, և Մանուէլ Մամիկոնեան, Հայոց սպարապետը, զայն հաւրածեց Հայաստանէն¹: ԱՐՇԱԿ Գ (20ւրջ 378-386), որդի Պապայ, Մանուէլի և իր մօր խնամակալութեան տակ Հայաստանի գահին վրայ դրուեցաւ. իսկ իր կրտսեր եղբայրը Վաղարշակ պէտք էր թագաւորին քով երկրորդական պատիւն ունենալ²:

Մինչդեռ Հռովմայեցիք Դանուբի ափանց վրայ բարբարոսաց հետ զբաղած էին, որոց դէմ տարուած էր նաև հայկական գունդ³, Շապուհ արշաւանք մ'ըրաւ իր վերջին տարիներուն մէջ դէպի Ասորիք և Կապադովկիա. վասնզի անիկայ ժամանակին համաձայնութիւն մ'ըրած էր Յուլիանոս կայսեր տեղակալին Սալուստիոսի հետ, թէ Իւրոյպահակ անցքը,

1. Փաւստոս Ե 36:

2. Փաւստոս Ե 44:

3. Թեմիստիոս ճառ ԺԶ 207A. հմմտ. Sievers, Studien էջ 330. Գաթրըճեանի Բ 519 ծան. 2ր բիջ ճիշդ է:

որ է այսօրուան Տէրպէնտ, հասարակաց ծախսով պիտի ամրացնէին և պիտի պահէին հիւսիսական բարբարոսներու յարձակումներու դէմ: Քանի որ անցքը միայն Պարսից ձեռքն էր՝ Հոովմայեցիք շատ հոգ չըրին անոր պահպանութեան, և երբ Հոնք անկից անցնելով սկսան աւերումներ գործել, Շապուհ անցքը ինք միայն ամրացուց և անոր ծախսին մէկ մասը հանեց հոովմէական երկիրներ աւարառութիւններ գործելով¹: Իր որդին Շապուհ Գ (383-388) հօրմէն աւելի շրջահայեաց մէկը չէր: Մինչև իրեն թագաւորութեան առաջին տարին թէ՛ պարսկական և թէ՛ յունական Հայաստանը մէկ թագաւոր միայն կը կառավարէր. իսկ ինքը քանի մը հայ նախարարներու փափագին համեմատ պարսկական Հայաստանի վրայ առանձին թագաւոր մը կարգեց, որ է երիտասարդ Արշակունին ԽՈՍՐՈՎ, Գ (383-391): Ասով Արշակ՝ որ Հոովմայեցիներէ ընդունած էր իր թագը՝ հարկադրուեցաւ իր բովանդակ Հայաստանի վրայ իշխելու իրաւունքէն հրաժարիլ, և ամփոփուեցաւ երկրին փոքրագոյն մասին մէջ, որ հոովմէական ազդեցութեան տակն էր²:

1. Յովհաննէս Լիւդացի 3, 52-53. հմմտ. Schiller II 410. Guldenpenning und Pfand էջ 120-1:

2. Փարպեցի էջ 19. Փաւստոս Զ 1. Խորեն. Գ 42:

Վերջապէս թէ ողոս Մեծ (379–395) ազատած էր Գոթաց տազնապէն և փորձեց հռովմէական պատիւը Արևելքի մէջ վերականգնել: Ուստի 383ին ատենները ան դրկեց բաւական մեծ բանակ մը¹, շատ հաւանաբար Ռիխոմար անուամբ Փրանկ զօրավարի հրամանատարութեան տակ², որ կ'ըսուի թէ մինչև Տիգրիս հասած ըլլայ: Այս բանակը պէտք էր նուաճել Սարակինոսաց ապստամբութիւն մը³ — թերևս ճանիքներու որոնք Հայաստանի հիւսիսակողմը խաղտեաց մէջ կը բնակէին⁴ — և պաշտպանել Հռովմայեցոց հովանաւորեալ Արշակը Հայաստանի մէջ ընդդէմ Պարսից. « Ապա եկին զօրքն Յունաց թագաւորին ի թիկունս, և թագաւորն Արշակ զԵկեղեաց գաւառաւ, և զօրքն Պարսից և արքայն խոսրով յԱյրարատ գաւառին»⁵: Բայց պատերազմ տեղի չունեցաւ, այլ վէճը համաձայնութեամբ մը վերջացաւ և բանակները քաշուեցան⁶:

1. Թեմիստիոս Ճառ ԺԸ 222. Պակաստիոս Paneg. Theod. 24 (pan. lat. 12). հմմտ. Խորեն. Գ 42:

2. Լիբանիոս Ճառ Ա 136. նամակ 891:

3. Մալալաս Chron. էջ 347. Պակաստիոս Paneg. Theod. 22.

4. Պրոկոպիոս, Գոթական պարզմ. 4,1:

5. Փաւստոս Զ 1:

6. Փաւստոս Զ 1. Թեմիստիոս Ճառ ԺԶ 213A այս տարւոյ (383) յունուար մէկին կայսերաց առջև ըրած իր

«Ապա դեսպանք և հրեշտակք երկուց թագաւորացն Յունացն և Պարսից, միմեանց առ միմեանս երթևեկէին: Եւ այնուհետև առնէ խորհուրդ միաբանութեան հաւանութեան ընդ միմեանս թագաւորն Յունաց և թագաւորն Պարսից, և համարեցան զաշխարհն Հայոց նախ ընդ երկուս ի մէջ իւրեանց բաժանել»¹:

Փաւստոսէ յիշատակուած հրեշտակութիւնները շատ անգամ կը յիշուին: Այսպէս թէոդոս հատ մը զրկեց Սպորակիոսի առաջնորդութեամբ², և երկրորդ մը՝ եթէ առաջնոյն հետ նոյն չէ՝ երիտասարդ Ստիլիքոնի առաջնորդութեամբ³: Յամին 384 Պոլիս հասաւ Պարսից Շապուհ Գ^{էն} հրեշտակութիւն մը, որ հռովմայեցի հեղինակաց ըսածին համեմատ պաղատագին խաղաղութիւն խնդրեց⁴, բայց իրականութեան մէջ արքայից արքային պահանջները պըն-

բանախօսութիւնը վերջացուց փափագով մը, թէ Հռովմայեցիք նաև Հայերը առանց արիւն թափելու կարենային վերստին իրենցն ընել, ինչպէս որ Սկիւթացիները առանց արեան եղած էին:

1. Փաւստոս 2 1:

2. Յովհ. Լիւդացի 3,53:

3. Կղ. Կղաւղիան, De consulatu Stilich. I 51-68. De nupt. Honor. 225:

4. Որոզիոս 7,34, Պակասիոս Paneg. Theod. 22. Սոկրատ 5,12. Մարկելլոս Կոմս, Chron. a. 384. հմմտ. Tillemont V 524. Nöldeke, Aufsätze 102.

դեց՝ յոյժ բարեբանուած և գովուած Թէոդոս կայսեր առջև, ինչպէս որ Փաւստոս և գործերը կը վկայեն: Դեռ ուրիշ պարսկական հրեշտակութիւններ ևս կը յիշուին. այսպէս 387ին հրեշտակութիւն մը պէտք չէր աւերուած Անտիոքը տեսնել¹. Երրորդ դեսպանութիւն մը Հռովմ ներկայացաւ կայսեր 389ին²:

Հայաստան այս դեսպանութիւններէն մէկուն ժամանակ բաժնուեցաւ: Որոշ թուականներ կը պակասին: Ամենէն հաւանականը ինձ այն կը տեսնուի որ, Թէոդոս տեսնելով վերջին կայսերաց ժամանակ հռովմէական զէնքերու ընդհանուր անյաջողութիւնը կորովի Սասանեաններու հետ և վախնալով իր բնիկ պետութեան սահմաններուն վրայ բարբարոսաց կողմանէ եղած անդադար յարձակումներէն, 384ին ընդունեցաւ Հայաստանը երկուքի բաժնելու սկզբունքը, որ Հռովմայեցւոց համար շատ փասակար էր: Այդ ժամանակ երկու պետութիւնները Հայաստանի խընդրի մասին գլխաւոր կէտերու մէջ համաձայնութիւն մը կրցան գոյացնել մէջերնին,

1. Լիբանիոս Ճառ Ա, 651. հմմտ. Sievers, Studien էջ 330:

2. Կղաւղիան VI. consul. Honor. 69-72. Թեմիստիոս Ճառ ԺԹ 227C. հմմտ. Sievers, Studien էջ 330:

այնպէս որ այլևս պատերազմի պատճառները հեռացուած էին¹ : Իսկ երկրորդական կէտերու կարգաւորումը տևեց դեռ մինչև 389 տարին, յորում Թէոդոս յունիս 13ին հանդիսաւոր կերպով Հռովմ քաղաքը մտաւ, և այս առթիւ Պակատիոս Դրեպանոս հռետորը ծերակոյտի մէջ իրեն բարի գալուստ շնորհաւորեց երկար ճառով մը. այս ճառին մէջ Պարսից թագաւորին համար կ'ըսուի, թէ մինչև հիմայ դաշնակից չէ, սակայն քեզի յարգանաց հարկ կը մատուցանէ² : Թէոդոս դեռ մինչև սեպտեմբեր մէկ Հռովմ մնաց և, ինչպէս որ տեսանք, հոս իրեն քով հասաւ Պարսից դեսպանութիւն մը, որ հաւանաբար բուն դաշինքով մը վերջացուց Հայաստանի մասին դեռ առկախ խնդիրները³ :

Նաև Փաւստոսի աւանդութիւնը յամրաքայլ կատարուած բաժանում մը կ'ենթադրէ : Ըստ իրեն երկու պետութիւնները մտածեցին Հայաստանը տկարացնել զայն

1. Լիբանիոս Ճատ Ա. 676, Բ 235 կը վկայէ թէ Պարսից և Հռովմայեցւոց մէջ խաղաղութիւն կը տիրէր :

2. Պակատիոս Paneg. Theod. 22. Baehrens կ'ուզէ բնագրին *adhuc non est foederatus* բացատրութիւնը *nomine foederatus*ի փոխել, բայց այդ սրբագրութիւնը շատ զոհացուցիչ է, հմմտ. Güterbock էջ 17 ծան. 4 :

3. Marquart, Eransahr էջ 114 առաջին բաժանում մը կը դնէ 384ին և երկրորդ մը 389ին :

նախ երկու թագաւորութեանց բաժնելով¹.
յետոյ իւրաքանչիւր պետութիւն Հայաս-
տանէն գաւառներ իրենին հետ միացուց,
այնպէս որ թագաւորք իւրաքանչիւրը ա-
ռանձինն անկարող էին դիմադրելու²:

384ի բաժանումէն վերջ գժտութիւն
մը ինկաւ երկու սոսկ անուանական դար-
ձած թագաւորներու մէջ. Արշակ պա-
տերազմի մէջ վիրաւորուեցաւ և մեռաւ
(իբր 386): Սա վերջին հայ թագաւորն
էր որ Հռովմայեցւոց հետ վերաբերու-
թիւն ունեցաւ: Արշակ զաւակ չթողուց և
կայսերք այնուհետև իրենց կողմանէ որ
և է անձ մը կ'ընտրէին և կը դրկէին, որ
կոմս Հայաստանի անուամբ յունա-
կան բաժինը կը կառավարէր³: Միանգա-

1. Փարպեցի էջ 19. 49 այս գործը Շապուհ Գի ժա-
մանակ կը դնէ: Փարպեցի միակ հեղինակն է, որ Պար-
սից թագաւորը յանուանէ կը յիշէ:

2. Փաւստոս Զ 1: Հայերը բնականապէս հանդարտ
աչքով չէին կրնար դիտել իրենց երկրին բաժանումը:
Թերևս Հայաստանի մէջ շփոթութեանց հետ վերաբերու-
թիւն ունենայ ինչ որ Մարկելլինոս Chron. ամ. 385
կ'ըսէ. «Թէոդոս կայսրը քանի մը արևելեան ազգերը իր
տեղակալներու ձեռքով իբր իր իշխանութեան տակ նուա-
ճեց»: Նաև Կղաւղիան բանաստեղծը Epith. nupt. Ho-
nor. 220-3 կ'երգէ. «ինչ որ քու (Հոնորիոսի) քաջա-
ռագմիկ հայրդ (Թէոդոս) Ստիլիգոնի ընկերակցութեամբ
ձեռք ձգեց անթիւ պատերազմներով, զորս Գելոնը կամ
Հայը տուաւ»:

3. Խորեն. Գ 46. Պրոկոպիոս Պարսկական պարզմ.
2,3. Շինուածք 3,1:

մայն դեռ հայ սատրապներ գոյութիւն ունէին, որոնք թերևս Արշակունի իշխաններ էին. ասոնցմէ մէկուն թէոդոս զրկեց կայսերական հրամանագիր մը ¹ :

Պարսկական Հայաստանի մէջ թագաւորութիւնը դեռ գրեթէ կէս դար ևս շարունակուեցաւ: Խոսրով Բ^{էն} վերջ հոն թագաւորեց խաղաղասէր արքայն ՎՌԱՄՇԱՊՈՒՀ ² (391-414), որուն ժամանակ Ս. Մեսրոպ († 441) գիտուն վարդապետը Հայոց գրերը գտաւ և Ս. Սահակայ գործակցութեամբ, որ շատ կարող և շատ ազդեցիկ կաթողիկոս մ'էր, Հայոց մատենագրութիւնը և Հայոց լեզուն իր գաթաթնակէտն հասաւ: Ամէն կողմ դպրոցներ բացուեցան և ամենէն աւելի տաղանդաւոր աշակերտներ արքունի ծախսով Աթէնք, Բիւզանդիոն, Անտիոք, Եդեսիա և Աղեքսանդրիա զրկուեցան: Ընդհանուր խանդավառութեան մէջ Ս. Գիրքը հա-

1. Պրոկոպիոս Երնուածք 3,1. Խորեն. Ք. 46. Codex Theod. XII 13,6 կը բովանդակէ Գրատիան, Վաղենտինիան և Թէոդոս կայսերաց պատուիրագիր մը, յամէն 387 յունիս 14, առ Գաղղանա սատրապ Ծոփաց: Նաև Խորեն. Ք. 47 այս ժամանակիս մէջ կը յիշէ Գաղղոն անուամբ նախարար մը, որ յունական Հայաստանի նախարարաց առաջնորդած է: Բոլորովին զուրկ չէր ըլլար շահեկանութենէ, եթէ այդ երկու անձանց նոյնութիւնը որ և է կերպով մը ապացուցուէր:

2. Փարպեցի 33 և այլն. Խորեն. Ք. 50.51:

յերէն թարգմանուեցաւ, և քաղաքական անկման հակադրութեամբ՝ Հայաստանի մշտաւորական կեանքը այնքան բարձրացաւ, որ Մեսրոպայ, Սահակայ և Վռամշապուհի ժամանակը իրաւամբ Ոսկեդար կոչուեցաւ հայ լեզուի և մատենագրութեան:

Բայց դժբաղդաբար Հայոց քաղաքական ազատութեան պէս նաև գրական զարգացումը կարճօրեայ եղաւ: Վասնզի Յազկերտ Ա. (399-420) իր հարազատ որդին ՇԱՊՈՒՀԸ (415-419) ղրկեց իբր թագաւոր, յուսալով որ այս կերպով երկիրը աւելի դիւրաւ պիտի կարենայ պարսկացնել և բարձրագոյն շրջանակներու մէջ աւելի դիւրաւ Պարսից կրօնքը և սովորութիւնները մտցնել: Բայց Շապուհ ո՛չ Արշակունի մ'էր և ոչ ալ քրիստոնեայ մը. ուստի հայ ազնուականութիւնը չէր կրնար անոր հետ շատ համաձայն երթալ. անոր համար Շապուհ երբ լսեց թէ իր հայրը մեռած է փութով վազեց Պարսկաստան, բայց ինքը հոն սպանուեցաւ և Վռամ Ե. (420-438 կամ 439) գահ բարձրացաւ¹: Սա երեք տարի հայ նախարարաց հետ կռուելէն յետոյ վերջապէս զիջաւ և Արշակունի մը պսակեց անոնց:

1. Փարպեցի 50-51. Խորեն. Գ. 55-56:

Ասիկայ էր ԱՐՏԱՇԷՍ Դ (422-428) կամ Արտաշիր, որդի Վռամշապուհի և Հայոց վերջին Արշակունի թագաւորը : Բայց երիտասարդ իշխանը իր անբարոյականութիւններով և անխելք գործերով անհանդուրժելի դարձաւ երկրին, և նախարարք անոր անկումը կ'ուզէին. միայն Ս. Սահակ կաթողիկոսը, ժամանակին ամենէն նշանաւոր և ամենէն հեռատես մարդը, չուզեց նախարարաց հետ միաբանիլ : Այսուհանդերձ ազգին գլխաւորները միացան և ամբաստանեցին իրենց թագաւորը Վռամի առջև, որ Արտաշէսի արդարացուցմանց առանց շատ մտիկ ընելու՝ գահէն վար առաւ զայն և կարճատես ու առանձնական շահ փնտռող հայ նախարարներու փափագին համեմատ 428ին Հայաստան տեղակալ մը դրկեց, որ մարզպան անուամբ այնուհետև երկիրը կը կառավարէր¹ : Ասով թագաւորութիւն և Արշակունեաց հարստութիւն նաև պարսկական Հայաստանէն վերցուեցան :

Եթէ մենք հայկական այս փոքրիկ թագաւորութեան կործանման պատճառները փնտռենք, գլխաւորապէս երկու գործիչ-

1. Փարպեցի 52-64.69-70. Խորենացի Գ. 58.63-64. Եղիշէ էջ 11.

ներու կը հանդիպինք, մին արտաքին իսկ
 միւսը ներքին: Պարսկաստանի մէջ Սասան-
 եան հարստութեան հաստատուելովը՝ Պար-
 սիկք յարձակման և աշխարհակալութեան
 քաղաքականութիւն մը սկսան, որուն հան-
 դէպ Հռովմ ինքզինքը տկար և կրաւորա-
 կան ցոյց տուաւ: Բացի Գաղերի յաղթա-
 նակէն, որ ուրիշ բան չէր բայց եթէ
 պաշտպանողական մը, հռովմայեցի կայ-
 սրրները շատ գոհ էին եթէ կրնային ի-
 րենց սահմանը պաշտպանել: Դէպքերը
 շուտով ցոյց տուին որ կայսերք նաև ա-
 տոր անկարող էին: Վասնզի Կոստանդիոսի
 ժամանակ Միջագետքի բուն տէրերը Պար-
 սիկները եղան, Յովիան զայն իրենց դա-
 ջինքով յանձնեց. վաղէս բռնադատուե-
 ցաւ Հայաստանի վրայ ունեցած իր գեր-
 իշխանութեան կամ աւատատէրի իրաւուն-
 քէն հրաժարիլ, իսկ Թէոդոս շարունակեց
 այս զիջման քաղաքականութիւնը՝ ընդու-
 նելով Հայաստանի բաժանումը, զոր իր
 նախորդներն սկսած էին և զայն աւար-
 տելով: Եթէ մենք վերջին կայսերաց ան-
 հատական կարողութիւնը չենք կրնար ոչ
 մէկ կերպով համեմատել Շապուհ Բ՛ պէս
 աննկուն և կորովաշատ թագաւորի մը հետ,
 սակայն պէտք ենք ըսել, որ կայսերք ստէպ
 պետութեան ուրիշ կողմերու մէջ զբաղած

էին. բարբարոսները իրենց դադար չէին
 թողուր, թէպէտև նաև արքայից արքայք
 յաճախ նման դիրքերու մէջ կը գտնուէին:

Երբ իւրաքանչիւր կայսր քայլ մը տե-
 դիք կու տար Պարսից առջև, բուն Հա-
 յաստանի մէջ կը պակսէր միութիւնը, որ
 թերևս աւելի երկար կեանք մը տար եր-
 կրին: Նախարարական դրութեան զօրա-
 նալը և զարգանալը՝ միանգամայն տկա-
 րանալ մ'էր Հայաստանի, վասնզի այդ
 դրութիւնը թագաւորութեան կործանման
 առաջնորդեց: Հայաստանի մէջ կը պակ-
 սէր կեդրոն կազմող ոյժ մը, որ երկրին
 բոլոր կարողութիւնները միացնէր և հզօ-
 րագոյն թշնամւոյն դէմ դնէր: Նախարար-
 ներ կամ աւատական իշխաններ ամէն ժա-
 մանակ և ամէն տեղ բնական նախան-
 ձորդներն եղած են թագաւորներու կամ
 աւատատէրերու, ինչպէս որ այս յայտնի
 կը տեսնուի նաև Միջին դարու Գաղղիոյ,
 Գերմանիոյ և ուրիշ ազգերու պատմու-
 թենէն. վասնզի ո՞վ էին կարողինեանները,
 կապետեանները և ուրիշներ, եթէ ոչ հզօր
 աւատականներ տկար աւատատէրերու:

Արշակունիներու ժամանակ, որոնք՝ սա-
 կաւ բացառութեամբ՝ զինուորական թա-
 գաւորներ չէին, իւրաքանչիւր նախարարի
 ցանկութիւնը դէպի թագաւորական թագը

երթալով աւելի զօրացաւ, և թագաւորը ստիպուած էր յաճախ այդպիսի շարժումներու նուաճմամբ զբաղիլ: Բայց քանի որ Պարսկաստանի մէջ Արշակունիներ գահ կը նստէին, ոչ մէկ նախարար կրնար Հայաստանի մէջ թագ երազել. անոնց անկումէն վերջ նաև Հայաստանի Արշակունիներու հանդէպ յարգանքը նուազեցաւ: Այնուհետև թագաւորին համար դիւրին գործ չէր իր նախարարներուն դէպի առանձնական անկախութեան ձգտումները խղղել, վասնզի անոնք ընդհանրապէս Սասանեան արքայից արքայն իրենց նեցուկ ունէին: Բնականապէս պէտք չէ մոռնալ որ նախարարներուն համար չար օրինակ մ' էր այն, որ իրենց հաւասար աստիճանի իշխաններ Անդրտիգրիսեան կոչուած հռովմէական սատրապութեանց մէջ գրեթէ անկախ կը տիրէին:

Հակառակ այնքան ձգտումներու և փորձերու, Հայաստանի մէջ ոչ մէկ նախարար յաջողեցաւ Արշակունիները տապալել և տէրութեան երակներու մէջ նոր կեանք մը շնչել, ինչպէս որ զայն ըրած էին Սասանեանները Պարսկաստանի մէջ: Իւրաքանչիւր ժառանգական տանուտէրի կամ նախարարի գրեթէ անկախ վիճակը հարկ էր որ պատճառ ըլլար ամբողջին հարկա-

տուութեանը. որչափ որ զարմանքով մը
կը դիտենք իրենց ազատութեան ձգտումնե-
րը, սակայն նոյնքան կը պախարակենք
իրենց կարճատեսութիւնը, որով չկրցան
ըմբռնել որ իրենց փոքր թագաւորին հան-
դէպ ցոյց տուած անկախութիւնը զիրենք
բոլորովին հպատակ պիտի ընէր կայսեր
կամ արքայից արքային: Առանձնական
շահերը, տեղական կամ ընտանեկան ան-
ձուկ հայրենասիրութիւնը, և թերևս նաև
իրենց ցեղական տարբերութիւնները չթո-
ղուցին իրենց *viribus unitis* միացեալ
ոյժերով դուրսը արտաքին թշնամւոյն դէմ
պատերազմիլ, իսկ ներսը միութիւն և խա-
ղաղութիւն ունենալ:

Յ Ա Ի Ե Լ ՈՒ Ա Ծ

Ա

Ա Ր Տ Ա Ի Ա Ջ Դ Ա

(տես էջ 26)

Հայոց Արտաւազդ Ա թագաւորին ժամանակը և անձը աւելի լաւ որոշելու համար գլխաւորապէս հետազայ վկայութիւնները նկատի առնելու է. Ասոր (Պարթևաց Արտաւանի) յաջորդեց որդին Միհրդատ, որ իր գործերուն համար Մեծ կոչուեցաւ...: Իր վերջին ատենները Հայոց Արտաւազդ քազաւորին պատերազմ տուաւ. Յուստինոս 42,2: Դարձեալ. Արդ Միհրդատ արքայ Պարթևաց Հայաստանի պատերազմէն վերջ իր անգրոշքեան համար քազաւորոշքեան հարածուեցաւ պարթևական ծերակոյտի կողմէն: Իր կորստի Որոտ...: Յուստին 42,4:

Յուստինոսի, որ է Տրոկոս Պոմպէոսի այս երկու վկայութիւններուն համար ես հետեւեալ սրբագրութիւնը՝ կամ լաւ ևս՝

հետևեալ մեկնութիւնը կ'առաջարկեմ: Հոս յիշուած Պարթևաց Միհրդատը պէտք է Միհրդատ Ա. (171-138 Ն. Ք.) հասկնալ և ոչ թէ Միհրդատ Բ. (123-86), ինչպէս զայն հասկցած են Gutschmid, Gesch. Irans 80. Th. Reinach, Mithr. Eupator 104. Rawlinson, The sixth monarchy 130-1. Գարագաշեան, Պամ. Հայոց Բ. 104:

Այսպէս հասկնալուս պատճառներն են. Նախ, Յուստինոս ինքնին Միհրդատները կը շփոթէ, և երկրորդ պարբերութեան Միհրդատ Բ-ը չորրորդին մէջ Միհրդատ Գ. կ'ընէ, անուանելով զայն եղբայր Որոտի, և այլն: Երկրորդ, Տրոգոս Պոմպէոսի Prologiներուն մէջ (42) մէկ Միհրդատ միայն կը յիշուի և այն՝ Հրահատին յաջորդեց արքայ Միհրդատ, Մեծ մակաւնշաւք, որ Հայոց հետ պատերազմ տոշաւ... և շատ մը քաղաւորներ Պարթևաց մէջ իրարոշ յաջորդելէն յետոյ իշխանաշրիշին առաւ Որոտ: Ուրեմն հոս խօսքը այնպիսի Միհրդատի մը վրայ է, որ Հրահատի մը յաջորդեց: Արդ ասիկայ է Միհրդատ Ա., որուն նախորդն էր Հրահատ Ա. (176-171 Ն. Ք.), ընդհակառակն Արտաւան կը կոչուէր այն թագաւորը, որուն յաջորդեց Միհրդատ Բ. (հմմտ. Gutschmid, Gesch. Ir. 74):

Միհրդատ Բէն Մեծ մակդիրը պէտք չէ զմեզ շփոթցնէ. վասնզի Միհրդատ Ա. արդէն անկէ առաջ Մեծ և Արքայից արքայ տիտղոսները կրած էր, ինչպէս որ դրամները կը վկայեն (Petrowicz, Arsacidenmünzen էջ 200): Նմանապէս Միհրդատ Առաջինին գործերը շատ աւելի մեծ են քան Երկրորդինը: Դարձեալ, շատ մը քաղաքներ իրարոք յաջորդելէն յետոյ բացատրութիւնը քիչ յարմար կը տեսնուի գրեթէ երեսուն տարուան շրջանի մը համար, յորում երեք թագաւորներ միայն կը յիշուին, եթէ մենք Միհրդատ Բէն մինչև Որոտ հասկնալ ուզենք (հմմտ. Gutschmid էջ 82-86): Երրորդ, Յուստինոս կը գործածէ *ad postremum* իր վերջին տեսնելերը բացատրութիւնը, « իր վերջին տարիներուն մէջ » իմաստով, ինչպէս որ նաև Գուտշմիտ հասկցած է: Ինչպէս ծանօթ է, Միհրդատ Բէ վերջի տարիներուն մէջ Հայաստանի մէջ Արտաւազդ մը չկար, այլ Տիգրան Բ, որ գրեթէ տասը տարի է վեր հոն կը թագաւորէր: Նաև Տիգրան Բէ հայրը Տիգրան կը կոչուէր:

Ուստի պարթևական այս առաջին պատերազմն ընդդէմ Հայոց մենք կը դնենք արքայից արքայ Միհրդատ Ա. ժամանակ, որ Մարաստանը, Բաբելոնիան, Ասորւոց

մաս մը և Ելամը նուաճելէն և իր տէրութիւնը հնդկական կաւկասէն մինչև Եփրատ տարածելէն յետոյ (Յուստին 41,6), փորձեց նաև Հայաստանը նուաճել: Պատերազմին ելքը չենք գիտեր. սակայն այսչափը ստոյգ է, որ «Պարթևք Մարաց երկրին վրայ իշխեցին, բայց ոչ երբեք Հայաստանի վրայ: Յարձակումներ ստէպտեղի ունեցան, բայց երկիրը երբեք չի գրաւուեցաւ բռնութեամբ. ընդհակառակն, Տիգրան յաղթեց անոնց . . . » Ստրաբոն 16,1,19:

Հայաստանի մէջ Արտաւազդ անուամբ թագաւոր մը կ'աւր Պարթևաց Միհրդատ Ա՛ ժամանակ: Ա.յո՛: Հին հեթանոսական ժամանակէ մնացած Հայոց ժողովրդական երգեր կ'երգեն և կը պատմեն Արտաշէս թագաւորին որդի և յաջորդ Արտաւազդի մը մասին, որ Արտաշատու շինութեան միջոց իր պալատին համար տեղ չգրտնելով՝ կ'երթայ ի Մարս և հոն Մարակերտը կը շինէ (Խորեն. Ա. 30):

Հոս յիշուած Արտաշէսը ծանօթ է մեզ. նա թագաւորութեան և Արտաշատ քաղաքի հիմնադիրն է: Երգիչք իր որդին կ'անուանեն Արտաւազդ, որ ասպետական և զրուցաշատ թագաւոր մ'է, և Յուստինոս զայն երգիչներու դրած ժամանակին մէջ կը

դնէ: Ան շուրջ 160-130ի ժամանակները
 թագաւորած է: Marquart, Beiträge
 zur Geschichte und Sage von Eran
 (ի ZDMG հտր. 49 էջ 645) Յուստինոսի
 42,2 վերոյիշեալ Արտաւազդը և
 Prologi 41ի մէջ յիշուած Արտաւա-
 ճը, յետոյ ակոր յաջորդք Արտաւաճ և Տի-
 գրան, միևնոյն անձը կը համարի և Ար-
 տաւան անունը Արտաւազդ սրբագրել կ'ա-
 ռաջարկէ:

Այս կերպով 65 տարիներու դատարկ
 մը, որ կայ Արտաշէս Ա՛ մահուան (161
 ...) և Տիգրան Բ՛ գահակալութեան մէջ
 (95 ն Ք.), կը լեցուի Արտաշէսի որդի Ար-
 տաւազդ Ա՛Վ, և Տիգրանայ հայր Տիգրան
 Ա՛Վ, ըստ Յուստինոսի, Ապպիանու և հայ
 երգիչներու: Յանդգնութիւն մը չեմ հա-
 մարիր 65 տարիներ երկու թագաւորով
 միայն լեցնել, քանի որ Արտաշէս Ա 30
 տարիէ աւելի թագաւորեց, Տիգրան Բ 40,
 իր որդին Արտաւազդ 24 տարի:

Բ.

ՊԼՈՒՏԱՐՔՈՍԻ ԱՐԺԱՆԱՀԱԻԱՏՈՒԹԻՒՆԸ

(տես էջ 46)

Լուկուլլոսի արշաւանքին գլխաւոր աղբիւրն է անոր կենսագրութիւնը Պլուտարքոսի քով: Իսկ Պլուտարք իբր իրեն աղբիւր կը յիշատակէ Սալուստիոսը (11), Կոռնելիոս Նեպոսը (43), Անտիոքոս և Ստրաբոն փիլիսոփայները ու Լիվիոսը (28): Բայց ինչ որ ինծի կը թուի Պլուտարք ամենէն աւելի գործածած է Լուկուլլոսի Յիշատակարան կամ ինքնակենսագրութիւն մը, և կամ Լուկուլլոսի բանակին ընկերացող զիտնականներէն մէկուն գրութիւն մը: Ինքն Լուկուլլոս կը թուած անձ մ' էր և շատ լաւ գիտէր յունարէն լեզուն: Սուլլա անոր յանձնեց իր Յիշատակարանները, որպէսզի կարգի դնէ կամ հրատարակէ (Պլուտ. Լուկ. 1. 4): Լուկուլլոս անձամբ Պատմութիւն գրած է, տես Կիկերոն առ Ատտիկոս Ա., 19, 10. Պլուտ. Լուկ. 1. հմմտ. W. S. Teuffel, Gesch. der röm. Lit § 156, տպ. 1890:

Ուրեմն Պլուտարք Լուկուլլոսի կենսագրութեան համար եթէ ոչ բուն ինքն դիւցազը, գէթ անոր նկատմամբ շատ լաւատես պատմիչ մը իր առջևն ունեցած է: Բովանդակ կենսագրութեան մէջ տեսնուող այս լաւատես ոգին կարելի է նոյն իսկ Պլուտարքոսի վերագրել: Վանգի Լուկուլլոս բարեկամ մ'է Հելլենաց. անիկայ կը սիրէ Յոյներու ընկերութիւնը. ան կ'ազատէ զանոնք ծանր պայմաններէն, զորս երբեմն Սուլլա իրենց վրայ դրած էր, և կը փրկէ «բարբարոսաց» լուծէն. ան այնքան բարեացակամ է Հելլենաց հանդէպ, որ իր զինուորներէն կողոպտուած Սմիտոսցիներուն (Սամսոն) ոչ միայն զգեստ կը բաժնէ, այլ նաև ճանապարհածախք կու տայ (19): Վերջը իր ծերութեան տարիներուն մէջ Յունաց առջև կը բանայ թէ՛ իր գրատունը և թէ՛ պալատը: Հոովմեկող Յունաց համար Լուկուլլոսի տունը իբրև Պրիտանէոն մ'էր, և ամէն Հելլէն կրնար իրմէ օգնութիւն յուսալ (42):

Ըսելու հարկ չկայ որ Պուլուտարքոսի պէս յոյն պատմիչ մը, « ոճի կողմանէ յոյժ ճարտար, բայց իբր պատմիչ առանց դատաստանի» (Wilamowitz, Aristoteles und Athen II 260), այսպիսի յունասէր մը միայն համակրութեամբ պի-

տի բարեբանէր, մանաւանդ եթէ զայն ի վնաս բարբարոսաց կրնար ընել: Նա ուզած է գովաբանական ճառ մը գրել Լուկուլլոսի վրայ, որուն հակառակորդը, ո՛վ որ ալ ըլլար, սաստիկ կերպով վար պիտի զարնուէր. ասով միայն կարելի է մեկնել նաև այն պարագայն, որ Պլուտարքը Միհրրդատը և Տիգրանը միևնոյն գոյներով նկարած է: Իբր Հելլէն մը ան կ'ատէ բարբարոսները. միևս կողմանէ սակայն դիտելու է որ, իր Հայաստանի մասին ունեցած ծանօթութիւնները, խիստ քննութենէ մը վերջ, չնչին փոքրագոյնի մը կը վերածուին: «Անկանխակալութիւն և դատողութեան լրջութիւն մեր հեղինակին զօրաւոր կողմերը չէին. այս բանիս համար ան չափազանց լաւատես մ'էր և շատ մեծ բարեկամ մը գեղեցիկ մանրավէպերու և բարոյական խորհրդածութիւններու », W. Christ, Gesch. der gr. Lit. էջ 657 տպ. 1898:

Այս պատճառաւ է որ ուշադիր ընթերցումի մը ժամանակ շատ մը հակասութեանց կը հանդիպինք Պլուտարքոսի մէջ: Նա 68 տարուան համար կը պատմէ, թէ Լուկուլլոս Միհրդատի և Տիգրանի ուժը այնպէս ջախջախած ըլլայ, որ իրեն ուրիշ բան մնացած չէ, բայց եթէ անոնց

անձը գերի բռնել, եթէ վայրենի անասուններու պէս անապատներու և անկոխ անտառներու մէջ փախչելով ազատած չըլլային (Չոզգակշիռք 3): Բայց ճիշդ այդ ժամանակ, յիշեալ անապատներու մէջ փախչող գազաններէն մէկը ոչընչացուց Փաբիոսի և Տրիարիոսի հոովմէական բանակները, իսկ միւսը ահագին ուժերով անոր օգնութեան փութաց և յետոյ կապադովկիան աւերեց (Լուկ. 35): Երբ Պլուտարքոս ուզէ Լուկուլլոսի ճարտարութիւնը դուրս ցատկեցնել, այն ատեն կը գովէ բարբարոսներու քաջութիւնը, այն ատեն Հայերը կ'ըլլան ազգ պատերազմիկ (Լուկ. 24). Լուկուլ իր յաղթանակները թշնամեաց վատութեան և ճախութեան չպարտիր, այլ... (Լուկ. 36). բայց Պլուտարքոսի մէջ ոչ մէկ տեղ կը հանդիպինք դէպքի մը, որ թշնամեաց քաջութիւնը ցոյց տայ, այլ անոնք ամէն անգամ վատ և անկարող ներկայացուած են, (հմմտ. Լուկ. 25. 28. 31 և այլն): Նոյն իսկ այն ընդհարման համար, յորում հայկական զնդերը մինչև վերջին շունչ յամառաբար կռուելով իրենց Մեհրուժան զօրավարին հետ միասին դիւցազնաբար ինկան (Լուկ. 25), Պլուտարք գովեստի բառ մը չգտնաւէն զատ, և ոչ իսկ կ'ըսէ, թէ արդեօք

այդ դիւցազները Հոովմայեցւոյ մը մատը վիրաւորած ըլլան:

Պլուտարքոսի կողմնակցութիւնը ցուցնելու համար կարելի էր դեռ շատ բան ըսել, բայց ես կը բաւականանամ այսչափովը, փոքրիկ գաղափար մը տալու համար անոր պատմութեան եղանակին վրայ: Պլուտարքոսի պատմութենէն պէտք է առնենք միայն պարզ իրականութիւնը. իսկ զայն դատել ապագայիցս գործն է:

Գ.

ԼՈՒԿՈՒԼԼՈՍԻ ԵՒ ՏԻԳՐԱՆԱՅ ԶՕՐԱՅ ԹԻԻԸ

(տես էջ 55)

Վասնզի պատերազմի մը կարևորութիւնը երկու կողմի ուժերու տարբերութենէն մեծապէս կը փոխուի, և ինչ ինչ պատմագիրներ (առ Պլուտ. Լոշկ. 28) կ'աւանդեն թէ Տիգրանակերտի պատերազմին մէջ հոովմէական բանակը քսան անգամ աւելի փոքր եղած ըլլայ քան հայկականը, ուստի կարևոր կը համարիմ երկու բանակներու զօրաց թիւը ճշտագոյն քննութենէ մը անցնել:

Լուկուլլոս յամի 74/73 Իտալիայէն մէկ լեզէոն մը միայն բերաւ (Պլուտ., Լուկ. 7), իսկ Արևելքի մէջ առաւ երկու վաղերեան կամ Փիմբրեան լեզէոններու հրամանատարութիւնը (հմմտ. Mommsen Röm. Gesch. III 62. Th. Reinach էջ 185): Բայց վասնզի ան կիւզիկէի պաշարման միջոց 30,000 հետևակք և 2,500 հեծեալ ունէր (Պլուտ., Լուկ. 8), ասկէ կը հետևի թէ դեռ երկուք ու կէս լեզէոն ևս պէտք է ունեցած ըլլայ: Բովանդակ՝ Լուկուլլոս ունէր հինգ լեզէոն և քիչ մ'ալ աւելի: Յամի 70ին ասոնց վրայ աւելցան իր ընկերակցին Կոտտայի լեզէոններուն մնացորդները (Մեմնոն 52): Լուկուլլոս բացի զանազան կերպով ունեցած կորուստներէն՝ 6000 զինուոր թողուց Սոռնատիոսի հրամանին տակ Պոնտոսի պաշտպանութեան համար և մնացածովը քալեց ընդդէմ Հայոց:

Այս մնացած մասը Պլուտարք (Լուկ. 24) սկզբան 12,000 հետևակ և 3000էն նուազ հեծեալ կը համարի, որ է 15,000 հոգի: Բայց քիչ մը վերջ (Լուկ. 27) Պլուտարք զանոնք կ'աճեցնէ հայկական պարարտ հողի վրայ, երբ 6000 մարդ Տիգրանակերտի մօտ Մուրենայի քով կը թողու և 14,000 զօրքով (այսչափ կ'ընեն

24 գունդեր cohortes . վասնզի ամէն cohortis 600 հոգիէ կը բաղկանար) Լուկուլլոսին քալել կու տայ Տիգրանայ վրայ, որ կ'ընեն 20,000 զօրք: Այս 20,000ներն են, 6000 պաշարող, 10,000 ասպարակիր, 3000 հեծեալ, 1000 թեթևազէն պարսատիկաւորք և աղեղնաձիգք: Պլուտարք (ի 24) հաւանաբար Մուրենայի լեզէոնը և թեթևազէնները մոռցած է: Փոխանակ 6000 հոգի Լուկուլլոսի ամբողջական բանակէն հանելու՝ Հայաստան եկող բանակէն հանած է: Եթէ մենք այս 6000ները փոխանակ Հայաստան եկող բանակէն հանելու յիշեալ 12,000 հետևակներու վրայ աւելցնենք (Լուկ. 24), այն ատեն Հայաստան եկող հռովմէական բանակն ըստ Պլուտարքեայ բաղկացած կ'ըլլայ, 18,000 ասպարակիրներէ, 3000 հեծեալ և 1000 թեթևազէններէ, որ կ'ընեն 22,000 մարդ: Յիշած ըլլանք որ Պլուտարքոս իր Բարոյականներուն մէջ (հտր. Բ էջ 85, Թագաւորաց և կայսերաց խօսքեր) Լուկուլլոսի սոսկ 10,000 հետևակ և 1000 հեծեալ կու տայ: Եւտրոպիոս 6,9 և Ռուփոս 15 Լուկուլլոսի 18,000 հոգևով յաղթել կու տան Տիգրանայ վրայ, զոր անշուշտ նոյն համարելու է Պլուտարքեայ 18,000 ասպարակիրներու հետ: Ապպիանէն դը-

ժուար է ճիշդ բան մը քաղել. թուի թէ ան 12,000 հետևակ և 500 հեծեալ միայն կու տայ:

Ինչ էր հայկական բանակին թիւը:

Մէկդի թողլով այն գնդերը, զորս Տիգրան իր շինած քաղաքին մէջ ձգեց, չըհաշուելով այն 3000 հեծեալները և ասոնցմէ աւելի բազմաթիւ հետևակները (Պլուտ. Լուկ. 25), որոնք գրեթէ ամէնքն ալ Մեհրուժանի հետ կուռի դաշտին վրայ ինկան, Լուկուլլոսի առ հոովմէական ծերակոյտն գրած տեղեկատուութեան մէջ (Պլուտ. Լուկ. 26) կ'ըսուի, թէ Տիգրան ունէր 20,000 աղեղնածիգ և պարսատիկաւոր, 55,000 հեծեալ, 150,000 հետևակ և 35,000 ուղեյարդար և ուրիշ աշխատողներ, որ է ընդ ամէնը 260,000 մարդ: Պլուտարք իր Բարոյականներուն մէջ (հտր. Բ էջ 85) Տիգրանայ կու տայ սոսկ 150,000 մարդ, 110,000 հոգւոյ չնչին տարբերութեամբ մը! Իսկ Սպպիան Միհր. 85 Տիգրանայ կու տայ 250,000 հետևակ և 50,000 հեծեալ. ուրեմն դեռ 40,000 մարդ աւելի քան Պլուտարք:

Այս սոսկալի չափազանցութիւններուն հանդէպ բարեբաղդաբար աւելի մեղմ և չափաւոր աւանդութիւն մը մնացած է: Մեմնոն Հերակլէացի, որ Պլուտարքոսէն

առաջ և հետևաբար անկէ անկախ գրած է, և աշխարհագրապէս պատերազմի ասպարէզին շատ աւելի մօտ կը գտնուէր քան Պլուտարք (այսինքն քան Սալուստիոս, որմէ Պլուտարք և Լիվիոս բովանդակ պատմութիւնը քաղած են, հմմտ. Eckhardt էջ 80. 98), և որ պոնտական և հայկական պատերազմները շատ աւելի պարզ ներկայացուցեր է և ոչ թէ Պլուտարքոսի պէս ճշմարտութիւնը հռետորութեան կանոններուն համեմատ ձևած և քողարկած է. ուստի Մեմնոն 80,000 զօրք միայն կու տայ Տիգրանայ (Մեմնոն զԼ. 57): Մեմնոնի ըսածին շատ կը մօտենայ Փլեգոն Տրալլացի, որ 40,000 հետևակ և 30,000 հեծեալ կու տայ (FHG III 606 հտկար. 12): Ներկայ գիտնականներէն շատեր իրաւամբ իբր անճիշդ կը համարին վերոյիշեալ չափազանցութիւնները, որոց ներկայացուցիչ Պլուտարքոսն է, և կ'ընդունին Մեմնոնին և Փլեգոնի աւանդութիւնը, այսպէս C. Müller FHG III 525b իր ծանօթութեանց մէջ. Th. Reinach էջ 360. Ferrero I 283. Eckhardt էջ 89:

Ամփոփելով մեր ըսածները և եզրակացութեանց յանգելով, կը տեսնենք որ երկու բանակներ զիմացէ զիմաց կեցեր են, որոց

մէկը փոխանակ 260,000 ըլլալու 70էն 80,000 է, իսկ միւսը փոխանակ 15,000 ըլլալու՝ 22,000 է, չհաշուելով վերջնոյս օգնականները: Հոովմէական բանակի թիւի մասին աւելի յստակ գաղափար մը պիտի ունենայինք, եթէ անոնց օգնականներու գնդաց մասին ճշդագոյն տեղեկութիւն ունենայինք, որոնք յաճախ թուով լեզէոններէն նուազ չէին: Եւ արդէն Տիգրանակերտի պատերազմին մէջ բուն Գաղղիացի և Թրակացի հեծելազորերն էին որ վճռական դեր մը խաղացին (Մեմնոն գլ. 56. Պլուտ. Լուկ. 28. Չորգակշիռք 2 կ'ըսէ, դաշնակցաց հրամայելով՝ առաւ քշնամշոյնը), և կապաղովկացիք յետոյ Ծոփքը վարձք ընդունեցան Պոմպէոսէն, իրենց մատուցած ծառայութեան համար: Նաև Բիւթանացիք սակաւաթիւ չէին (հմմտ. Eckhardt էջ 209): Լուկուլլոսի բանակին օգնական զնդերու թիւը և դերը հազիւ կը յիշատակուին, ընդհակառակն պատմիչք գիտեն շատ մանրամասն տեղեկութիւն տալ այն օգնականութեան վրայ, զոր Աղուանք, Վրացիք և կամ ուրիշ ժողովուրդներ բերած են Տիգրանայ:

Դ.

ԿՈՐԲՈՒՂՈՆԻ ԳՐՈՒԱԾՔ ԻՅՐ ԱՂԲԻԻՐ ԻՐ
ԳՈՐԾՈՑ

(տես էջ 177)

Ներոնի ժամանակ տեղի ունեցող պարթև-հայ և հռովմէական պատերազմին վրայ մեր գլխաւոր աղբիւրներն են Տակիտոս և Կասսիոս Դիոն, որոնք ևս իրենց կարգին կորբուղոնէն գրուած Յիշատակարանէ մը քաղած են: Կրթեալ Հռովմայեցի զօրավարներու մէջ գրեթէ սովորութիւն մը դարձած էր, պատերազմի դաշտին վրայ կատարած գործերնին նաև գրչով իրենց ժամանակակցաց և ապագայից աւանդել: Այսպէս Սուլլա, Լուկուլ, Կեսար, Օգոստոս, Արիանոս և ուրիշներ իրենց Յիշատակարանները կամ ինքնակենսագրութիւնները գրած են: Նաև կորբուղոն այսպիսի գործ մը գրեց, ինչպէս կը վկայեն Տակիտոս տար. 15, 16. Պլինիոս 2, 12, 5, 20 և 83:

Անժխտելի է թէ Տակիտոս և Դիոն միևնոյն աղբիւրէ առած են, թէև ինչ ինչ տարբերութիւններ ունին: Դիոն Տակի-

տոսի վրայէն եղած քաղուածոյք մը չէ: Դիոնի քով Կորբուղոնի սկզբնագրին հետքերը աւելի հաւատարմաբար պահուած են քան Տակիտոսի քով. վասնզի սա իր աղբիւրը քննութենէ մը կ'անցնէ, մինչդեռ Դիոն պարզութեամբ անոր կը հետևի: Այսպէս օրինակի համար, Կորբուղոն լռած էր իր 61ին հռովմէական գնդերը և Տիգրան Զ^ր Տիգրանակերտէն ետ կանչելը, որ իրեն համար շատ պատուաբեր չէր. Տակիտոս այս բանս իսկոյն անդրադարձած է և կ'իմացնէ իր ընթերցողներուն, մինչդեռ Դիոն Տիգրանակերտը տակաւին Հռովմայեցւոց ձեռքը կը համարի և Պետոսի անոր օգնութեան երթալ կու տայ, (հմմտ. Տակիտ. տար. 15,5-6. Դիոն 62,20-21). Դիոնի քով աւելի շատ մնացած են Կորբուղոնի նկատմամբ գովեստներ, կայսրը շողոքորթող բացատրութիւններ և սաստիկ շեշտուած է Պարթևաց թագաւորին վախը Կորբուղոնէն. Տակիտոս այս բաները քիչ մը մեղմած է. «չափազանց յայտնի սուտերը ան լռելով մէկդի թողած է, զոր օրինակ, անհաւատալի երագութիւնը որով Կորբուղոն ըստ Դիոնի 62,22 Պետոսի օգնութեան հասած ըլլայ» Gutschmid Gesch. Irans էջ 131: Ուրեմն չափազանցութիւններ և պարծենկոտութիւններ

բաւական առատօրէն գտնուած ըլլալուն կորբուղոնի գրքին մէջ, որոցմէ իր խմբագրողները դժուարաւ կրնային բոլորովին ազատ ըլլալ:

Մեզի կը պատմուի (Տակիտ. տար. 14, 24-25), թէ յամի 59ին Տիգրանակերտի բնակիչները Արտաշատու աւերման լուրէն սարսափած իրենց քաղաքին դռները — բաց ի դղեակէ մը — անոր առջև բացին և ոսկեղէն պսակ մը անոր ընդառաջ դրկեցին: Սակայն դէպքերուն ժամանակակից և ըստ Teuffelի (Gesch. der röm. Lit.) շատ վստահելի պատմիչ մը, Փրոնտինոս, կը պատմէ թէ կորբուղոն ստիպուեցաւ քաղաքը պաշարել. կորբոշոն ևրբ Տիգրանակերտը կը պաշարէր և Հայր յամառարար պաշարման տոկայ կը բռնէի (Stratagemma 2, 9, 5): « Հայ պարթևական արշաւանքին պատմութիւնը, Տակիտոսէն դատելով, իր պատմական և աշխարհագրական աւանդութեանց մէջ ազդեցութիւն կրած է կենսագրութենէ մը, որ կորբուղոնը բարեբանող տեսակէտով մը գրուած էր բոլորովին », Egli էջ 333:

Այն ազատութիւնը, որով Պետոս իր Հայաստանի մէջ կատարած գործերը կայսեր հաղորդեց, որուն վրայ Հռովմայ մէջ յաղթական կամարներ կանգնուեցան, ան-

շուշտ այդ ժամանակաց մէջ հասարակաց ապրանք մ' էր : Այսչափը ստոյգ է որ Կորբուղոն երբէք չհամարձակեցաւ կռուի դաշտին վրայ Պարթևաց հետ չափուիլ, և կարևոր վայրկեաններու մէջ անոնց հետ գաղտնի բանակցութեանց մէջ մտաւ : Իր բովանդակ զինուորական գործունէութիւնը կը կայանայ արշաւանքէ մը, զոր բարեկազմ լեգէոններով և այնքան դաշնակիցներով միասին ըրաւ ընդդէմ տկար և առանձին մնացած Հայաստանի :

Ուրեմն պատմութիւնը մեզի այսպիսի վիճակի մը մէջ աւանդուած ըլլալով, «մեր քննադատութիւնը միայն աւանդուած գործերուն ուշ կը դարձնէ, և ասով անհրաժեշտօրէն կը հասնի այն հետևանքին, թէ Կորբուղոնի այնքան հանդիսաւոր կերպով հռչակուած դիւցազնութեանց չափը փոքրագունի մը կը ձուլուի » , Gutschmid, Gesch. Irans 52 131 :

Ե.

ԿԵՆՍԱԳԻՐՔ ԿԱՅՍԵՐԱՅ

Կ Ա Մ

SCRIPTORES HISTORIAE AUGUSTAE

(տես էջ 233)

Կարակալլայէն մինչև Գիոկլետիան, որ է մեր Տրդատ Երկրորդէն մինչև Տրդատ Երրորդ, թէ՛ հռովմէական և թէ՛ հայկական պատմութեան մէջ այնպիսի շփոթութիւն մը կը տիրէ, որ՝ հակառակ այնքան ջանքերու՝ նորագոյն քննութիւնները չկրցան տակաւին առատ լոյս սփռել հոն: Ըլլայ պատմական գրուածոց, ըլլայ համայնագիտակ գործերու մէջ այս շրջանիս նկատմամբ չափազանց ենթադրութեանց և յարմարացուցմանց կը հանդիպինք: Բայց այս բանիս յանցանքը հին պատմագրութեան վրայ կ'իյնայ: Վասնզի ուղղակի այդ ժամանակներէն մնացած և վստահելի պատմական գրուածներ չունինք. հին և գրական գրեթէ միակ աղբիւրն է կայսերաց կենսագրութիւնները կամ *Scriptores Historiae Augustae*, Գրողք օգոստական պատմութեան: Քննադա-

տուժիւնը իր վերջի խօսքն ըսած չէ այս հաւաքածոյքի մասին :

Վերջին ժամանակներս այս գործիս վրայ շատ խօսեցան գիտնականները : H. Dessau (ի *Hermes* հտր. 24 Ueber die Zeit und Persönlichkeit der SHA) փորձեց անոր գրուածեան ժամանակը Դիոկլետիան – Կոստանդինեան շրջանէն թէոզոսի ատենները փոխադրել : O. Seeck (ի *Studien zur Geschichte Diocletians und Konstantins, III* և ի *Fleckeisens Jahrb. für Philol.* հտր. 141) Տեսասուի պէս ազատական ուղղութիւնը բռնեց : E. Klebs (ի *Rheinisches Museum* հտր. 45 և 47) ազատական ուղղութեան փաստերուն տկարութիւնը շեշտեց : Mommsen (ի *Hermes* հտր. 25) ընդունեցաւ վեց հեղինակներու գոյութիւթիւնը , բայց երկու խմբագրութիւններ դրաւ. մէկը Դիոկլետիան – Կոստանդինեան շրջանի մէջ, իսկ միւսը թէոզոսեան : Յետոյ Մոմսըն սա բանաձևը շինեց, թէ ամէն կտոր առանձին առանձին քննելու է :

Ասոր վրայ սկսան ազատական ուղղութեամբ իւրաքանչիւր կտորը առանձինն քննել և վաւերը անվաւերէն զատել : Այս բանիս աշխատեցան գլխաւորապէս Th. Schulz, E. Kornemann և J. Heer.

Բայց եղան ուրիշ բանասէրներ, որոնք պահպանողական ուղղութիւնը գերադասեցին, այսպէս H. Peter (Die SHA, sechs literar-geschichtl. Untersuchungen, Leipzig 1892), և Lécivain (Etude sur l'histoire Auguste, Paris 1904)․

Ինչպէս որ յայտնի կը տեսնուի, մինչև այսօր տակաւին վերջնական եզրակացութեան մը հասած չենք, որ գիտնականաց մեծամասնութեան մը գոհացուցիչ երևնայ: Այս կերպով այս «այնքան վրտանգաւոր որքան անհրաժեշտ գրքին» (Mommsen ի *Hermes* հտր. 25 էջ 281) գործածութիւնը կը շարունակուի ըլլալ շատ դժուարին գործ մը, վասնզի ստուգապէս չենք գիտեր ինչ բան պէտք է աւոր մէջէն առնուլ և ինչ բան մէկդի նետել:

Զ.

Հ Ա Յ Ո Յ Պ Ա Տ Մ Ի Չ Ն Ե Ր Ը

Հայկական պատմագրութիւնը կը սկսի հինգերորդ դարուն մէջ Քրիստոսէ վերջ: Հնագոյն ժամանակաց վրայ սոսկ հատակտորներ և աւանդութիւններ մնացած են

հետագայ դարուց պատմագիրներու քով:
Կ' ուզեմ հոս հայկական պատմիչներու
վրայ ամենահամառօտ տեղեկութիւն մը
տալ:

Մեր շրջանին համար նկատի առնուե-
լիք գլխաւոր մատենագիրներն են Ագա-
թանգեղոս, Փաւստոս Բիւզանդ, Ղա-
զար Փարպեցի և Մովսէս Խորենացի: Ե-
րեք առաջիններուն գրուածքը կը կազմեն
ամբողջութիւն կամ շրջանակ մը: Ասոնցմէ
դուրս կը մնայ փոքրիկ գրութիւն մը որ
Փաւստոսէն առաջ շարադրուած է և կը
բովանդակէ Վկայաբանութիւն Թադեոսի ա-
ռաքելոյն և Սանդիստոյ կոչսին: Յիրաւի այս
գրուածքը բուն պատմութիւնը մը չէ, բայց
մեզի կը ծառայէ Սանատրուկ թագաւորին
ժամանակը լաւ ստուգելու, որուն դուստրն
էր Սանդուխտ կոյսը: Այս գրութիւնը, որ
կը խօսի քրիստոնէութեան ի Հայս առա-
ջին քարոզութեան վրայ, անշուշտ նա-
խերգանք մ' է Ագաթանգեղոսէ գրուած
քրիստոնէութեան մուտքին պատմութեան:

Վկայաբանութիւնը հրատարակուած է Մխի-
թարեան Հարց ձեռքով Սոփերք հայկականք կո-
չուած հաւաքածոյին մէջ. հտր. Ը, Վենետիկ
1853: Ն. Անդրիկեան ապացուցած է (Բազմալիւ
1905 դեկտ. էջ 52 և 1907 փետր. էջ 80), որ
այս գիրքը 350ի ատենները ասորերէն լեզուով
գրուած է, և 425ին ատենները հայերէնի թարգ-
մանուած է: Փաւստոս Գ 1 գայն տեսած է:

Ա. Ագաթանգեղոս, որ ինքզինքը Տրդատ Գ^Ը (Իբր 287-337) քարտուղար կ'անուանէ, գրած է Հայոց Պատմութիւն մը, որ կը սկսի 224ին Պարսկաստանի Արշակունեաց Արտաշիր Սասանեանի ձեռքով բարձումէն և կը բովանդակէ մեր Խոսրով Ա^Ը և Տրդատ Գ^Ը պատմութիւնը: Ագաթանգեղի գործը իր սկզբնական ձևին մէջ հասած չէ մեզ. հիմակուան մեր ունեցածը սոսկ խմբագրութիւն մ'է Ե դարէն, և կը բովանդակէ կտորներ զանազան գրուածներէ, ինչպիսիք են ըստ Գուտշմիտի Վարք, Վկայաբանութիւն և Յայտնութիւն կամ Տեսիլ Ս. Գրիգորի, ըստ այլոց Վարք Ս. Հռիփսիմէի և այլն: Խմբագրողը, անտարակոյս եկեղեցական մը, քրիստոնէութեան ի Հայս մուտքին պատմութիւնը չափազանց ընդարձակ բռնած է, որուն համեմատութեամբ քաղաքական մասը շատ կարճ է, այնքան որ մենք յիշեալ երկու թագաւորներու ժամանակաց վրայ պայծառ գաղափար մը չենք կրնար կազմել: Այսու հանդերձ պատմական այդ համառօտ տեղեկութիւնները շատ թանկագին են՝ մանաւանդ այնպիսի ժամանակի մը համար, որուն վրայ նաև հռովմէական պատմագրութիւնը խիստ քիչ բան գիտէ, և կը համաձայնին արտաքին մատենագիրներու հետ ինչպէս որ տեսանք արդէն:

Հայերէն բնագիրը շատ անգամ հրատարակուած է, այսպէս 1835 և 1862ին վենետիկ, Մխիթարեանց ձեռքով. քննական հրատարակութիւն մը եղած է ի Թիֆլիս 1909: J. Stiltling զայն լատիներէն թարգմանեց ի Acta Sanct. Sept. հտ. VIII. Դեռ լաւագոյն իտալերէն թարգմանութիւն մը ըրին Մխիթարեան Հարք, վենետիկ 1843: Քաղղիերէն թարգմանութիւնը տես ի V. Langlois, Collection des historiens anciens et modernes de l' Arménie, I 99-194, Paris 1869. Հին յունարէն թարգմանութեան քննական հրատարակութիւնն ըրած է P. de Lagarde, Göttingen 1887. — Ագաթանգեղի վրայ քննական ուսումնասիրութիւններէն կը յիշեմ Գաթրրճեան, Պատմ. տիեզ. Բ 459-464. 476-480. Gutschmid ի ZDMG հտր. 31. Սարգիսեան, Ագաթանգեղոս, վենետիկ 1890: Տաշեան, Ագաթանգեղոս, Վիեննա 1891:

Բ. Փ ա լ ս տ ո ս Բ ի լ զ ա ն դ ա ց ի ն շ ա-
րունակեց Ագաթանգեղի Պատմոչքիշն Հա-
յոցը: Իր գործը կը բովանդակէ Խոսրով
Բ^{էն} (իբր 337-342) սկսեալ մինչև Հա-
յաստանի երկու բաժանման պատմութիւ-
նը, որ է 384 կամ 389: Մինչև մեզի
հասած հայ պատմիչներու մէջէն Փալստոս
ամենէն հինն է: Ամենահաւանաբար ինքը
կ'ապրէր Դ դարուն վերջերը, և ժամա-
նակակից է իր պատմած ղէպքերու մէկ
մասին, իսկ մնացած մասին ևս ժամանա-
կով շատ մօտ է: Քահանայական դասուն
և եկեղեցական խնդիրներու համար իր

ցոյց տուած շահաքրքրութիւնը ենթադրել
կու տայ թէ այն եկեղեցական մ' էր: Նա
Սահառունեաց նախարարական ցեղէն էր
(հմմտ. Փաւստոս Գ 12), և այդ պատ-
ճառաւ է որ շատ տեղեակ է հայ ազնուա-
կանութեան և բարձր դասակարգի մէջ
կատարուած գործերուն:

Փաւստոսի գործը ամբողջապէս ունինք,
և բաւական լաւ վիճակի մը մէջ: Պատ-
կերը զոր Փաւստոսի գործէն կը կազմենք
այդ ժամանակի Հայաստանին վրայ, ճոխ,
հաւատարիմ և շատ տեսակետներով մեր
միտքը լուսաւորող է: Ճիշդ թիւեր տալ և
ժամանակագրութիւն մը գործածել Փաւս-
տոսի գովելու կողմերն չեն, այս բանիս
համար Փաւստոս չափազանց երևակայու-
թիւն և կիրք ունի: Ընդհակառակն նա
լաւ տեղեակ է այն դէպքերուն՝ որ Հա-
յաստանի հողին վրայ տեղի կ'ունենան.
ան երբեմն ամենափոքր մանրամասնու-
թիւններն անգամ գիտէ իր նիւթին, զա-
նոնք արուեստագէտի մը աչքով կը տեսնէ
և իբր արուեստագէտ մը կը նկարէ, ա-
նոր համար իր պատմելու կերպը հրա-
պուրիչ և աշխոյժ է: Այս մանրամասնու-
թիւնները և տեղւոյ ու ժամանակի գոյնը,
իւր գործը հետաքրքրական կը դարձնեն ոչ
միայն պատմականօրէն այլ նաև հնախօ-

սօրէն: Երբ Փաւստոս կը փորձէ Հայաստանի զէպքերը կապակցութեան մը մէջ դնել կայսերաց կամ արքայից արքայներու հետ, լաւ չյաջողիր: Ասով սակայն իրենց կարևորութենէն ոչինչ կը կորսնցնեն իր առանձին տեղեկութիւնները, որոնք շատ կարևոր և յարգի են: Հայաստանի քաղաքական պատմութեան մէջ նա Ամմիանոսը կը լրացնէ, այս հեղինակին հետ ցոյց տուած իր լաւ համաձայնութիւնը, մանաւանդ Արշակ Բ՛ և Պապայ զէպքերու մասին, զինքը աւելի վստահելի կ'ընէ և կը վկայէ իր պատմածին ճշմարտութեան: Փաւստոս է և պիտի մնայ Հայոց կարևորագոյն պատմիչը, միայն պէտք է զայն զգուշութեամբ գործածել:

Փաւստոսի քննական հրատարակութիւն մը տակաւին կը պակսի: Հրատարակուած է Մխիթարեան Հայրերէ, Վենետիկ 1832, 1889 և Պատկանեանէ, Պետրպօլըկ 1883: Գերմաներէն թարգմանեց M. Lauer, Քոլոնիա 1879: Գաղղիերէն թարգմանեց Մ. Էմիլեան ի V. Langlois, Collection des historiens anciens et modernes de l'Arménie, II 209-310, Paris 1869: — Փաւստոսի վրայ եղած աշխատութիւններէն կը յիշեմ S. Martin ի Journal Asiatique 1828. C. F. Neumann ի Wiener Jahrb. der Lit. 1833 հտր. 62: H. Gelzer ի Berichte der kgl. Sächs. Gesell. der Wiss. 1895 էջ 109-174. J. Marquart ի Philologus հտր. 55 (1896). Norman H. Baynes ի English historical review, 1910.

Ե. Մատաթեան, Փալատոս Բիւզանդ, Վիեննա
1890 : Ս. Մալխասեան, Ուսումնասիրութիւն
Փալատոս Բիւզանդի պատմութեան, Վիեննա
1896, Հանդեսի մէջ :

Գ. Ազատանգեղի և Փալատոսի Պատմութիւն
Հայոցը շարունակեց Ղազար
Փարպեցի, որ կ'ապրէր Ե դարու երկրորդ կիսուն : Տեսնելով Փարպեցւոյն նախարարական ընտանիքներու և իր ժամանակին առաջնորդող անձնաւորութեանց հետ ունեցած անձուկ վերաբերութիւնները, կը հետևցնենք թէ անիկայ ազնուականաց դասակարգէ մէկն էր : Սկզբան աշակերտեցաւ Աղան Արծրունի գիտուն կրօնաւորին. յետոյ Բիւզանդիոն կամ Յունաստան ճանապարհորդեց, ուր հռետորական արուեստը սովորեցաւ և հելլենական կրթութիւն մ'առաւ, որ նաև իր գրուածոց մէջ կը փայլի : Յետոյ երևելի վահան Մամիկոնեան մարզպանը զայն վաղարշապատու կաթողիկէին և վանաց առաջնորդ կարգեց. բայց նախանձոտ վանականներէն հալածուելով Ամիդ քաշուեցաւ, ուսկից ընդարձակ թուղթ մը գրեց առ վերոյիշեալ մարզպանն, ինքզինքը արդարացնելու համար, այս թուղթը հասած է մեզի և է գլուխ գործոց մը ճարտասանութեան : վահան ճանչցաւ իր նախկին

բարեկամին՝ իր մանկութեան ընկերակցին արդարութիւնը, զայն դարձեալ յառաջ քաշեց, պատիւներով ճոխացուց և անոր յանձնեց Հայոց պատմութիւն մը գրել:

Փարպեցին իր պատմութիւնը կը սկսի Հայաստանի յամին 384ի երկու բաժանումէն և կը հասցնէ մինչև 485 տարին: Ուրեմն ան կը նկարագրէ Արշակունեաց բարձունքը. կը խօսի սուրբ Սահակայ և Մեսրոպայ († 439) վրայ և վերջնոյս ձեռքով եղած Հայոց գրերու գիւտին, և այդ գիւտի արդիւնքով Հայաստանի մէջ սկսած մտաւորական և գրական շարժման վրայ: Իր վարդանանց կրօնքի և ազատութեան պատերազմին (451) նկարագրութիւնը կ'ամբողջացնէ Եղիշէի գործը: Ազատութեան երկրորդ պատերազմին համար, որուն գլուխ անցած էր իր Մեկենասն վահան Մամիկոնեան, Փարպեցին միակ աղբիւրն է:

Ինքը ժամանակակից է իրմէ պատմուած դէպքերու մեծամասնութեան: Իր ջանքն եղած է միայն ճշմարտութիւնն ըսել, և ինձ կը թուի թէ իր նպատակին հասած է: Իր հայրենասիրութիւնը արգելք չըլլար, կատարուած գործերու վրայ ուղիղ դատաստան ընելու: Փարպեցւոյ քով կը նշմարենք լաւ հասկացողութիւն մը պատ-

մութեան, անոր համար ինքը արժանի է մեր վստահութեան: Այդ ժամանակի Հայաստանին վրայ տուած իր տեղեկութիւնները ամենէն լաւ և ամենէն վստահելիներն են, ինչպէս նաև իր բազմաթիւ ծանօթութիւնները Պարսից, Վրաց և ուրիշ ժողովուրդներու մասին մեծ յարգ ունին:

Մխիթարեան Հարք երեք անգամ հրատարակած են Փարպեցոյ գործը. վենետիկ 1793, 1873, 1891: Քննական հրատարակութիւնը եղաւ ի Թիֆլիս 1904: Գաղղիերէն թարգմանութիւն մ'ըրաւ Կեսարեան (Հ. Սամուէլ Գանթարեան, Մխիթարեան) ի V. Langlois, Collection des historiens anciens et modernes de l'Arménie, II 253-368, Paris 1869. — Փարպեցոյ վրայ գլխաւոր գրուածքն է Գ. Խալաթեանցի Ղազար Փարպեցի և գործք նորին, Մոսկուա 1883: Փոքրագոյն յօդուածներ գրած են Ղ. Աւիշան իր Հայաստանումին մէջ, Ա. 138-149, վենետիկ 1902. Գ. Զարբհանալեան իր Պատմութիւն հայկական դպրութեանին մէջ, էջ 391-406, վենետիկ 1897:

Դ. Մովսէս Խորենացին յիշեալ պատմիչներու շրջանակէն դուրս կը գրտնուի: Նա գրած է ամբողջական Պատմութիւն Հայոց մը, որ ամենահին ժամանակներէն սկսելով կը հասնի մինչև Արշակունեաց բարձունքն ի Հայս, և մինչև 440ի դէպքերը: Իր ըսածին համեմատ ինքը կ'ապրէր Ե դարուն մէջ. բայց ներկայ

քննադատութիւնը զայն կը փոխադրէ է
կամ թ դարերու մէջ, այս մասին վճիռ
մը տալ ամենադժուարին բան մ'է: Խո-
րենացւոյ վրայ առաջին և անտարակու-
սելի վկայութիւնը ժ դարէն է, (Թովմա
Արծրունի էջ 7). բայց ասիկայ ըսել չէ,
թէ նախ ժ դարու մէջ յիշուող մատե-
նագիր մը՝ Ե դարու մէջ ապրած չկրնար
ըլլալ:

Պատանեկութեան ատեն աշակերտեցաւ
Ս. Սահակայ և Մեսրոպայ (Խոր. Գ 68).
յետոյ ուղևորութիւն մ'ըրաւ դէպ ի Եդե-
սիա, ուր դիւանի մէջ աշխատեցաւ: Եր-
կար ժամանակ մնաց Աղեքսանդրիա, և
երևելի փիլիսոփայներու դասերուն յա-
ճախեց: Իր հելլենական կրթութիւնը կը
տեսնուի իր պատմութեան ամէն էջին,
իւր լեզուին և իր մտածմանց մէջ: Աղեք-
սանդրիայէն ելնելով սաստիկ փոթորիկ
մը զինքը իտալիա ձգեց, ուր այցելեց
Հռովմը. անկից մեկնեցաւ դէպ ի Աթէնք
և Բիւզանդիոն, բայց երկար ժամանակ
չմնաց այս քաղաքներուն մէջ (Խորեն. Գ
62): Ինքը եկեղեցական մ'էր և հաւանա-
բար եպիսկոպոս Բագրևանդայ: Չեմ ու-
զեր հոս իր սուտուածաբանական գրուա-
ծոց և ոչ ալ իր խիստ հետաքրքրական
աշխարհագրութեան վրայ խօսիլ, որ մա-

սամբ լուսաբանուած է արդէն Marquart/
Eransahr nach der Geographie des
Ps. Moses Chorenatzi, Berlin 1901
հմուտ գործին մէջ:

Ինչպէս ըսի, Խորենացոյ պատմութիւ-
նը կը սկսի աշխարհի ստեղծումէն և կը
հասնի մինչև 440ի ժամանակները յետ
Քրիստոսի: Բայց միւս կողմանէ որոշ կէտ
մ'է, որ Խորենացի իր պատմութեան ոչ
մէկ մասին մէջ անկախ՝ այսինքն սկզբնա-
կան և առաջին աղբիւր է իրմէ պատ-
մուած դէպքերուն, ինչպէս որ էին նա-
խորդ երեք հեղինակները: Խորենացոյ
կարևորութիւնը սակայն ուրիշ կէտի մը
մէջ է: Այսինքն ան գործածեր է բազ-
մութիւն մը պատմական յիշատակարան-
ներու և աղբիւրներու, որոնք մասամբ
կորսուած են:

Խորենացոյ աղբիւրները, ինչպէս նաև
անոր պատմութեան նիւթը և այս նիւթին
արժէքը, երեք խմբերու կը բաժնուին,
իրենց վերաբերած ժամանակին համեմատ:

1. Խորենացին ստեղծագործութենէն
մինչև Տիգրան Բ^{էն} անմիջապէս առաջ
եղող շրջանին համար իբր աղբիւր կը գոր-
ծածէ գլխաւորապէս ժողովրդական երգեր
և Մար Աբաս կատինա Ասորին: Մար
Աբասայ անձին և գրուածքին վրայ ուրիշ

կողմէ տեղեկութիւն չունինք: Ան յանձնարարութիւն ընդունած ըլլայ Հայոց Վաղարշակ թագաւորէն, որ Պարթևաց Արշակ Մեծի եղբայր մ'է, Հայոց հնագոյն պատմութիւնը գրելու. Մար Աբաս զայն գտած և հանած ըլլայ Նինուէի դիւանին բաբելոնական, ասսուրական և պարսկական յիշատակարաններէն:

Թէ արդեօք Վաղարշակ մը կամ Մար Աբաս մը գոյութիւն ունեցեր է, շատ տարակուսական է:

Այս առաջին մասին մէջ Մովսէս կը պատմէ Հայաստանի առասպելական պատմութիւնը, և կ'աւանդէ կէս պատմական և կէս դիցարանական պատմութիւնները դիւցազներուն և թագաւորներուն, որոնք Հայաստանի մէջ նահապետական ոճով իշխեցին մինչև Աղեքսանդր Մակեդոնացւոյ արշաւանքը: Խալդիներու կամ Ուրարտացիներու — որ է Արարադեան թագաւորութիւն — մասին ինքը բան մը չգիտեր. և այս պատճառաւ է որ Հայաստանը երկար ժամանակ Ասորեստանցոց գերիշխանութեան տակ կը դնէ, փոխանակ զայն Ասորեստանի մրցակից և հաւասարազօր պետութիւն մը դնելու, ինչպէս որ կ'ըսեն բևեռագիր արձանագրութիւնները:

Խորենացի այս զրոյցները առած է ժո.

դովրդեան բերնէն, հայ աշուղներէն և գրքերէն, ու անոնց տուած է պատմական ձև մը: Մենք խորենացոյ միայն գովեստ կը պարտինք, որ գիտցած է այս գրոյցները յարգել, և զանոնք հաւաքած ու մեզի աւանդած է իբր ոչ այլ ինչ եթէ ոչ իբր գրոյց:

Հին ժամանակ Հայոց առասպելական պատմութեան մը գոյութիւն ունենալուն կը վկայեն նաև արտաքին հեղինակներու քով պահուած սակաւ աւանդութիւններ: Այսպէս, Արաքս անուամբ Հայոց թագաւոր մը իր երկու դստերաց մահուան վրայ այնքան կը ցաւի, որ ինքզինքը Հալմոս գետը կը նետէ, որ այնուհետև Արաքս կը կոչուի, (Պլուտարք, Յաղագս գետոց և լերանց): Ուրիշ Հայ թագաւոր մը կ'արշաւէ Յունաստան՝ մինչև Փոկիա. Բևլոս, արքայ Հայոց, ևրբ Յունաստան յարձակոշմ գործեց և Փիշրեան Ապոդոնի տաճարը այրեց, ցրտէն իր բանակը կորսնցոշց, (Ամպելլիոս 32, հրտրկ. Woelfflin, Լայպցիկ 1879. հմմտ. խորեն. Բ 32): Քսենոփոն իր Կիւրամարզին մէջ շատ բաներ կը պատմէ Տիգրան անուամբ Հայ թագաւորի մը վրայ, որու մասին ինքը անշուշտ ժողովրդական աւանդութիւններ լսած էր 400ի ատենները Հայաստանէն անցած միջոց.

Տիգրան Կիւրոսին տուաւ օգնական զնդեր
 և անոր հետ միասին զնաց Բաբելոնի վրայ,
 որ 539 ն. Ք. առնուեցաւ: Նաև Դիոդոր
 Սիկիլիացի (2,1) կը պատմէ թէ Հայոց
 թագաւորն Բարզանէս ինչպէս Ասորես-
 տանցիներէն յարձակում կրեց:

Ինչպէս այս հեղինակները նոյնպէս նաև
 Խորենացի հայկական աւանդութիւններ
 գտած է իրմէ առաջ, և ըստ իրեն, զա-
 նոնք լսած է ժողովրդեան բերնէն:

Դարձեալ, ոուս գիտնականն Նիկոլսկի,
 որ 1893ին Մոսկուայի կայսերական ճե-
 մարանին կողմանէ Հայաստան զրկուեցաւ
 Ուրարտական արձանագրութիւններ ժողո-
 վելու համար, կրցաւ Խորենացւոյ ինչ ինչ
 աւանդութիւնները օգտակար ընել, (տես
 հայերէն թարգմ. Բազմալեպ 1897 էջ
 197): Թերևս շահեկանութենէ զուրկ չէ
 դիտելը, որ Արամ անուամբ թագաւոր մը,
 որուն գործերուն Խորենացի բազմաթիւ
 էջեր նուիրած է, նաև Ուրարտական բե-
 լեռագիր արձանագրութեանց մէջ կը յի-
 շուի:

Ասով չեմ ուզեր ըսել, թէ Մովսէսի
 առաջին գիրքը ճշմարիտ պատմութիւն մը
 կը բովանդակէ, այլ այսչափ միայն, թէ
 հոն պատմուածներուն հիմը՝ ընդհանուր
 խօսելով՝ հին աւանդութիւններն են, և

իբր այսպիսի անոնք մեծ յարգ ունին: Այս պատմութիւնները հեղինակէն հնարուած զրոյցներ չեն, այլ անոնք կը բովանդակեն ճշմարտութեան հետք մը, ինչպէս բոլոր ժողովրդական զրոյցները:

2. Տիգրան Բ^{էն} մինչև Տրդատ Գ Խորենացի շատ տեսակ աղբիւրներ գործածեր է, և իր Պատմութիւնը ամենէն լաւ այս մասին մէջ կրնայ քննութեան ենթարկուիլ: Հոս իր գլխաւոր աղբիւրներն են Լաբուբնիա (Ղեբուբնա) Ասորին, Բարդեժան Եղեսացի, Յովսեպոս, Յուլիոս Ափրիկանոս ու Եւսեբիոս: Ասկից յայտնի կը տեսնուի որ, Խորենացին ամբողջական Հայոց պատմութիւն մը չունի առջևը, ինչպէս որ ինքն ալ կ'ըսէ արդէն: Արդեօք այս հեղինակները Հայոց պատմութեան մասին ո՛րչափ շիտակ և ո՛րչափ ընդարձակ գրած են, դիւրին չէ ըսել: Բայց դիւրին է Խորենացւոյ պատմածները այս հեղինակներէն գէթ ոմանց հետ բաղդատել, և այս բաղդատութեան արդիւնքէն Խորենացւոյ վրայ գաղափար մը կազմել և զինքը աւելի մօտէն ճանչնալ:

Ուրեմն եթէ մենք, օրինակի համար, Տիգրան Մեծի և անոր որդւոյն Արտաւազդայ պատմութիւնը առնենք և քննենք, կը տեսնենք որ Մովսէս այդ երկու թա-

գաւորները գրեթէ միայն Յովսէպոսէն կը ճանչնայ, որուն գրուածքը սակայն շատ գէշ կերպով գործածեր է ինքը: Վասնզի Խորենացի Յովսէպոսի ըսածները բոլորովին անճիշդ կերպով հասկցած կամ մեկնած է, ըլլայ պատմական ըլլայ ժամանակագրական տեսակէտով. հոս երկար կոչումներ ընել աւելորդ կը համարիմ. համոզուելու համար բաւական է համեմատել Խորեն. Բ 15-21. 23. 25 գլուխները և Յովսէպոս Հր. պտրզմ. 1,6-9. 13-18. Հնախ. 14,6-8. 13: Իբրև երկրորդ օրինակ մը թող ծառայէ Լաբուրնիան գործածելը, որուն Եղեսացուց քրիստոնէութեան դարձին վրայ գրուածքը, (զոր գտաւ և հրատարակեց Ղ. Աւիշան վենետիկ 1868) Մովսէս գործածած է իր Բ գրքի 30-33 գլուխներուն մէջ: Խորենացին հոս ասորական աւանդութիւնները պարզապէս հայացուցեր է: Այս երկու օրինակները մեզի գաղափար մը կու տան, թէ Խորենացի ինչ կերպով գործածեր է իր աղբիւրները:

Խորենացին այսպէս յոռի և պակասաւոր կերպով գործածելով իր աղբիւրները՝ այս շրջանի Հայոց պատմութեան մէջ մեծ խառնակութիւն մը յառաջ բերած է: Իր անսահման հայրենասիրութիւնը թէ իրեն

և թէ Հայոց պատմութեան մեծապէս վնասած է: Եղեսիոյ Արգար թագաւորի մասին լսած քրիստոնէական—ասորական զրոյցներէն հրապուրուելով՝ առանց լուրջ խորհրդածութեան զայն և անոր կարծեցեալ Արշամ հայրը Հայոց թագաւոր ըրած է ճիշդ այնպիսի ժամանակի մը մէջ, յորում Եղեսիան և ոչ իսկ հայկական քաղաք մ'էր, այլ Հոովմայեցւոց հովանաւորութեան տակ առանձին փոքրիկ թագաւորութիւն մը. բուն Հայաստանի մէջ այդ ժամանակ կ'իշխէին ուրիշ թագաւորներ, որոց պատմութիւնը Տակիտոս, Ղրամներ և այլ յիշատակարաններ մեզի աւանդած են: Միւս կողմանէ Եղեսիոյ թագաւորաց անունները, ժամանակը և իրենց ամբողջական շարքը 132 ն. Ք, — 244 յ. Ք. մեզի ծանօթ է արդէն, որոց մէջ բնականապէս Արշամ մը գոյութիւն չունի (տես Gutschmid, Untersuchungen über die Geschichte des Königreichs Osroene):

Անշուշտ բաւականաչափ առաղծի պակասութեան և եղածին ալ գէշ գործածութեան վերագրելու ենք, որ Խորենացին հոս Բ գրքին մէջ իր ճառած նիւթին ամբողջապէս տիրացած չէ: Ասոր հետեւանքովն է որ ինքը, հակառակ իր մեծ հայ-

րենասիրութեան, բնիկ հայկական Արտաշէսեան հարստութիւնը չի ճանչնար, և Հայերը Սելևկեանց լուծէն Պարթևի մը ձեռքով ազատել կու տայ, փոխանակ հայ հողին քաջ զաւակի մը ձեռքով ազատուած դնելու, ինչպէս որ իրականութիւնն է: Իրեն համեմատ Հայաստանի մէջ Արշակունեաց հարստութեան հիմնադիրը Տրդատ Ա. չէ, այլ Պարթևաց Արշակ Մեծի վարարչակ անուամբ եղբայր մը, 150ին ժամանակները ն. Ք.:

Խորենացիէն զատ ուրիշ ոչ մէկ վկայութիւն չկայ այս թագաւորի գոյութեան: Իր արքայանիստ քաղաքն եղած ըլլայ Մծբին, որ այդ ժամանակ անշուշտ անշան տեղ մ'էր, զոր քառորդ դար յետոյ Տիգրան Բ առաւ զայն: Պարթևներէն և բերդաքաղաք ըրաւ, վասնզի իր զինուորականի հայեացքովը իսկոյն ճանչցաւ անոր ռազմական կարևորութիւնը: Քանի մը բարեկարգութիւններ, զորս Մովսէս վարարչակայ կը վերագրէ, կրնան ամէն թագաւորի ալ վերագրուիլ. ուրիշ գրեթէ ոչինչ կը պատմէ Մովսէս անոր մասին: Հայաստանի մէջ Արտաշէսեան հարստութեան գոյութիւնը՝ արդէն ինքնին կը ժխտէ հոն Արշակունեաց գոյութիւնը, որոնք նաև ըստ Ստրաբոնի մինչև Տիգրան Բ երբէք

չկրցան նուաճել Հայաստանը: Իրաւ է որ 160-95 ն. Ք. քիչ մը մուժ է մեր պատմութիւնը, բայց ո՛չ ինչ կը վկայէ պարթևական տիրապետութեան մը, թող թէ պարթև հարստութեան մը Հայոց գահը բարձրանալուն: Եթէ Վաղարշակը իբր ո՛ր և է պարթև իշխան մը չերևակայենք, որու մասին Խորենացին որ և է տեղեկութիւն մը լսած ըլլայ և զոր սխալ կերպով Հայոց թագաւոր կարծած է, այն ատեն անմեկնելի է իր գոյութիւնը այդ ժամանակի մէջ և այդ հանգամանքներով, և կրնանք զինքը երևակայական անձնաւորութիւն մը համարել. կամ լաւ ևս, երևակայական չըսելու համար, հեղինակին սխալ յերկրանք կամ յարմարեցումներով (Kombination) ստեղծուած անձ մը: Խորենացին կը սիրէ այսպիսի յարմարեցումներ, և իմ կարծիքիս համեմատ, նաև կարծեցեալ Արշամ թագաւորը ուրիշ մէկը չէ, եթէ ոչ սխալ յարմարեցումներէ ծնած թագաւոր մը: Ո՛չ մէկ վստահելի աղբիւր կը յիշէ այս երկու թագաւորները, և յստակապէս իրենց գոյութեան դէմ կը խօսի Հայոց պատմութեան ընթացքը:

Մովսէսի ընթերցումով այս շրջանի մասին մեր կազմած պատկերը շատ պակասաւոր, անճիշդ և շփոթ է: Մովսէս

յստակ գաղափար մը չունի ո՛չ բուն Հայաստանի վիճակին վրայ և ոչ ալ դրացի ժողովուրդներու վրայ: Անշուշտ այս համագամանքին վերագրելու է, որ օտար հեղինակներու նկարագրած այս շրջանիս Հայաստանը շատ աւելի զօրաւոր, աւելի մեծ և կարողութիւն ունեցող երկիր մը կը ներկայանայ քան Խորենացւոյ Հայաստանը, թէև Խորենացին հայրենասիրական ճրգտումներ ևս ունի, իսկ օտարք եթէ թշնամի չեն գէթ անտարբեր են: Խորենացւոյ Հայաստանը քրիստոնէական ժամանակէն սկսեալ հարկ կը վճարէ Հռովմայեցւոց, մինչդեռ արտաքին պատմիչներու համեմատ Հայաստան երբէք հարկ վճարած չէ, (տես իմ յօդուածս Բազմավեպ 1909 էջ 3): Հռովմէական գերիշխանութիւնը գլխաւորապէս անոր մէջ կը կայանար, որ Հայոց թագաւորները գահ ելնելու համար կայսեր հաւանութիւնը պիտի առնէին և պատերազմի ատեն օգնական զնդեր պիտի դրկէին իբր դաշնակից:

Ուրեմն Մովսէսի Բ գիրքը նուազ արժէք մ'ունի: Սակայն այդ գրքի մասին դատաստան մ'ըրած ժամանակ հետեւեալ տարբերութիւնը նկատի առնելու է. գլուխ 1էն մինչև 35, որ է Վաղարշակի գահակալութենէն մինչև Աբգարու մահը, ամե-

նէն նուազ պատմական արժէք ունեցող
 մասն է Խորենացւոյ ամբողջ գործին մէջ.
 վասնզի պատմական անճշդութեան մեծ
 բազմութիւն մը կը բովանդակէ և աղբե-
 րաց յոռի գործածութիւն մը կը ներ-
 կայացնէ: Գլուխ 36էն մինչև Տրդատ Գ
 Խորենացւոյ գործը յիրաւի բոլորովին վըս-
 տահելի պատմութիւն մը չբովանդակէր,
 այսուհանդերձ այս մասը համեմատաբար
 աւելի բարձր արժէք ունի այն պատճա-
 ռաւ որ, պատմիչը հոս ազգային հին ա-
 ւանդութիւններէ օգտուեր է: Այս գլուխ-
 ները կրնան Հայոց պատմութեան շատ մը
 էջերը լուսաբանել, և այն՝ ազգային տե-
 սակէտով: Խորենացին հոս կը պատմէ՝
 գրեթէ քնարերգական շեշտով մը՝ պատ-
 մութիւնը այն թագաւորներուն, որոց ա-
 նունը թէև երբեմն տարբեր, բայց իրենց
 անձը և գործը անժխտելի կերպով նոյն
 են արտաքին հեղինակներէ յիշուած թա-
 գաւորներուն հետ: Ուրեմն Խորենացի հոս
 իր պատմութեան ընդհանուր կէտերուն մէջ
 կը համաձայնի օտար պատմիչներու հետ,
 ինչ որ արդէն շատ բնական է եթէ դի-
 տենք որ հոս Խորենացի գիտնական պատ-
 մութիւն մը կամ ենթակայական յերիւ-
 րանքներ չներկայացնէր, այլ իր ծանօթ
 ոճովը ազգային աւանդութիւնները կը

կրկնէ, որոնք բանաստեղծութեան ձևի մը տակ պահուած ըլլալու են:

Այս մասին մէջ յարգի կտորները զատելու համար պէտք է իւրաքանչիւր պարբերութիւնը խստագոյն քննութեան ենթարկել և զայն ուրիշ պատմիչներու հետ բաղդատել: Հայ գիտնականներու կողմանէ արդէն սկսած է այսպիսի աշխատութիւն մը, և փորձը գեղեցիկ արդիւնքներով պսակուեցաւ: Այս մասին լաւագոյն աշխատութիւն մը չեմ կրնար ցուցնել քան Մ. Աբելեանի ընդարձակ յօդուածը, Արարատ 1900 թիւ 1-3: Աբելեան փորձեց խորենացւոյ տեղեկութիւնները ուղղել, և աւոր իւրաքանչիւր խօսքին իր յատուկ իմաստը և իր յատուկ տեղը կամ դիրքը տալ: Նման փորձ մ'ալ, բայց փոքրագոյն չափով, մենք ըրած ենք մեր Յառեղոշած Աին մէջ Արտաւազդի նկատմամբ, և ներկայ գրութեանս մէջ ինչ ինչ տեղ խորենացւոյ կոչումները մեր ըմբռնած տեսակէտով գործածելով:

3. Տրդատ Գէն մինչև հայ Արշակունեաց բարձման շրջանին համար խորենացի իր առջև ունի Ագաթանգեղի, Փաւստոսի և Կորիւնի գործերը, որոնք հոս իրեն իբր առաջնորդ կը ծառայեն: Վերջին երկու հեղինակները գործածեր է, առանց

անոնց անունը յիշելու: Նաև հոս հեղինակներ գործածելու իր եղանակը զերծ չէ պակասութենէ, բայց հոս գէթ թագաւորաց անունները և յաջորդութիւնը շիտակ են, և չկան թագաւորներ, որոց ծագումը և գոյութիւնը տարակուսական ըլլայ, ինչպէս որ կային նախորդ մասերու մէջ:

Համառօտիւ ասիկայ է ինչ որ ես խորենացւոյ գործին բովանդակութեան և արժէքին մասին ըսել կ'ուզէի, առանց մանրամասնութեանց իջնելու: Իր անձին և ժամանակին վրայ խօսիլ իմ դիտաւորութենէս դուրս է: Սակայն պէտք է յիշեմ, թէ յաճախ անիրաւ ելան խորենացւոյ արժանահաւատութեան մասին վերջին ժամանակներու քննադատից կողմանէ եղած ամբաստանութիւնները: Օրինակի համար, խորենացի զրպարտուեցաւ թէ Լաբուրնիայի անունը ինքն հնարած ըլլայ. բայց երբ Ասորի հեղինակին հայերէն թարգմանութիւնը գտնուեցաւ, խորենացւոյ պատուաւորութիւնը դուրս ելաւ: Բնականապէս ուրիշ բան է հեղինակները գործածելու նկատմամբ ունեցած իր զարմանալի ըմբռնումը:

Ընդհանուր խօսելով, իր անկեղծութեան կրնանք հաւատալ. բայց ասով պէտք չէ իր պակասութեանց վրայ լռել: Յայտնի

է թէ պէտք է զգուշանանք խորենացւոյ
գործին հետեւելէ՝ իբր ամբողջական Հայոց
պատմութեան մը. սակայն իր առանձին
տեղեկութիւնները, յետ պատշաճ քննու-
թենէ մը անցնելու, ոչ միայն կարող են
Հայոց պատմութիւնը հարստացնել և ար-
տաքին հեղինակներու աւանդածը ամբող-
ջացնել, այլ նաև մասամբ անհրաժեշտ
կարևոր են:

Առ հասարակ խորենացւոյ քով, թէ՛
Առաջին և թէ՛ Երկրորդ մասին մէջ, ա-
մենէն թանկագին կտորներն են հին պատ-
մական երգերու քաղուածներ կամ բովան-
դակութիւնները, զորս ինքն անձամբ լսած
և հաւաքած է: Այս բովանդակութիւննե-
րու հաւաքումը մենք միայն իր ջանասի-
րութեան կը պարտինք. ասով իր գիրքը
կ'ըլլայ Հայոց պատմութեան բով մը, և
այս հանգամանքը խորենացւոյ գործին կու-
տայ մնայուն արժէք մը: Բնականապէս իր
պատմածները պէտք չէ այն իմաստով և
այն ժամանակագրական կարգով հասկնալ,
ինչպէս որ խորենացին կ'ուզէ, այլ իբր
առանձին առանձին պատմական կտորներ:
Խորենացի զանազան համանուն թագա-
ւորներու գործեր յաճախ մէկ անձի վրայ
պատմած է, որ միայն ծանօթ էր իրեն:

Խորենացւոյ ժամանակագրութիւնը շատ

գովելի չէ: Ինքն ի մէջ այլոց նաև Եւսեբիոսի Քրոնիկոնը գործածեր է: Նա ջանացած է որչափ որ կարելի է օտար հեղինակներու հայկական հին թարգմանութիւնները գործածել, որոնք ոչ սակաւ անգամ զինքը մոլորացուցած են: Այս և ուրիշ պարագայները պարտք կը դնեն մեր վրայ, Խորենացւոյ գրքի նիւթին վրայ խօսած միջոց լիովի գործածել քննադատութեան ազատութիւնները, բայց նաև շատ զգուշաւոր ըլլալ պատմչի անձը դատած միջոց:

Խորենացւոյ բնագիրը շատ անգամներ տպուած է, բայց քննական հրատարակութիւն մը դեռ կը պակսի: Whiston եղբարք զայն լատիներէն թարգմանեցին, Լոնտոն 1736: Երկու ռուսական թարգմանութիւններէն Մ. Էմինեանինը, Մոսկուա 1858, երկու իտալականներէն Միսիթարեան Հարցը, Վենետիկ 1850, լաւագոյն են: Քաղղիերէն, V. Langlois ի Colection des historiens anciens et modernes de l'Arménie, II 45-174, Բարիզ 1869. Քերմաներէն թարգմանեց M. Lauer, Ռէկէնսպուրկ 1869: — Այս շատ վիճուած հեղինակին վրայ եղած գրութիւններէն քանի մը կարևորները կը յիշեմ. V. Langlois, Etudes sur les sources de l'histoire de M. de Chorène, ի Melanges asiatiques 52 293, Պետերպուրկ 1861: A. Gutschmid, Ueber die Glaubwürdigkeit der armenischen Geschichte des M. von Khoren, ի Berichte der philos. — hist. Klasse d. kgl. Sächs. Gesell. der Wiss. Լայպցիկ 1876 և յօդուած մը ի En-

cyclop. Brit. հտր. 14 էջ 861, Լոնտոն 1883: P. Vetterի գանազան յօդուածներ, ի Nirschl, Patrologie հտր. 3 էջ 239-51, Մայնց 1885. ի Kirchenlexicon 1883 հտր. 8. ի Theol. Quartalschrift, Տիւպինգըն 1894, և այլն: Հայ գիտնականներու կողմանէ արդիւնաւոր հանդիսացան Էմին, Գաթրըճեան, Գ. Խալաթեանց, Խ. Ստեփանէ, Բ. Նորայր, Յ. Տաշեան, Բ. Սարգիսեան, Միաբան և դեռ շատեր, որոց իւրաքանչիւրին գրուածոց և ուրիշ հարիւրաւոր յօդուածներու մասին չեմ կրնար հոս մանրամասնութեանց իջնել: Յօդուածներու բազմութիւն մը լոյս տեսած են Վենետկոյ Միսիթարեանց Բազմապէս և Վիեննայի Հանդէս ամսօրեայ թերթերուն մէջ: Ասոնց մէջ հրատարակուած են նաև Ն. Մառի, A. Carrièreի և C. F. Conybeareի յօդուածները:

Ինչպէս որ տեսանք, ժամանակագրութիւնը հայ պատմիչներու զօրաւոր կողմը չէ: Նաև իրենց կրօնական գաղափարները — մեծ մասով եկեղեցական են — և իրենց համակրութիւնները այս կամ այն նախարարական ցեղի համար, կ'ազդեն իրենց ներկայացնելու կերպին և իրենց դատաստաններուն վրայ: Միւս կողմանէ սակայն ճոխ են եզականութեամբ և պատմական ու հնախօսական նիւթերով: Ընդհանուր Հայ հեղինակները յարգի տեղեկութիւններ կը բովանդակեն իրենց դրացի ժողովուրդներու վրայ, մանաւանդ Պարսից կրօնքի, բարուց, պաշտամանց և նահանգ-

Ներու վարչութեանց մասին: Կրնան մեծ ծառայութիւններ մատուցանել հին Արևելքի պատմութեան, աշխարհագրութեան և ազգագրութեան, եթէ գիտնանք զիրենք աղէկ գործածել:

Է.

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԹԱԳԱԻՈՐԱՅ

Հ Ա Յ Ա Ջ Գ Ի Թ Ա Գ Ա Ի Ո Ր Ն Ե Ր

190 Ն. Ք. - 1 յ. Ք.

	Ն. Ք.
Արտաշէս Ա.	190-161..
Արտաւազդ Ա.	} 160էն 96ի
Տիգրան Ա.	} մէջ
Տիգրան Բ Մեծն	95-55
Արտաւազդ Բ	55-34, †30
Արտաշէս Բ	34-20
Տիգրան Գ	20-19
Տիգրան Գ և Երատոյ	19 - յ. Ք. 1

Օ Տ Ա Ր Ա Ջ Գ Ի Թ Ա Գ Ա Ի Ո Ր Ն Ե Ր

1-52 յ. Ք.

	յ. Ք.
Արիորարզան, Մար	իբր 2-3
Արտաւազդ Գ, Մար	3- յառաջ քան 11
Տիգրան Ե. Հրեայ	իբր 11-13
Երատոյ կին կրկին, Հայ	իբր 14-15
Վոնոն, Պարթև	իբր 16-17
Արտաշէս Գ. Պոնտացի	18-34
Արշակ Ա Պարթև	իբր 34
Միհրդատ, Վրացի	35-51
	<i>ընդհատութեամբ</i>
Հոադամիզդ, Վրացի	51-52

Յ Ա Ն Կ

- Աբգար 199
 Աբգար (Ժ) 227. 366 Հա-
 յոց թղթ. չԸԼԼաԼԸ
 Աբլարիոս 284
 Ագաթանգեղոս 351. 352
 իր գրուածքը. 353 հրա-
 տարակուժիւնքը և ու-
 սումնասիրութիւնք իր
 վրայ. 356. 371
 Ագրիպպաս 169
 Ադիաբէն 40. 56. 174.
 181. 205. 224. 234
 Ադոն կամ Ադոր 143
 Ադրաբանան 40
 Ադրիանոս 195. 211-4
 Աթենաս 38 ծ.
 Աթէնք 132. 321. 359
 Աւանք 190-1. 213. 235
 դուռն Աւանաց
 Աւիս 10
 Ածով 244
 Ակիսենէ 19
 Ակկոն 49
 Ակուիլիոս 33
 Ակտիոն 120. 123
 Ադան Արծր. 356
 Ադեքսանդր Մակեդ. 11.
 361
 — որդի Անտոնիոսի 116
 — որդի Հերովդի 145 ծ.
 — Սկերոս կայսր 237-9
 Ադեքսանդրա 36
 Ադեքսանդրիա 44. 112.
 116-7. 120. 227. 321
 Ադմնիք 42. 261. 293
 Ադուանք 40. 88. 91. 107.
 152. 234. 235 ծ. դուռն
 Ադուանից
 Ամիդ 286-9 և այլն
 Ամիսոս 70
 Այրարատ նահանգ 20.
 313. 316. 361 թագաւո-
 թութիւն
 Անակ 242
 Անգեղ տուն 261. 313
 Անդրաթիզրիսեան գաւառք
 261. 271. 289. 294. 326
 Անի բերդ 38 ծ. 197
 Անկիւրիա 130
 Անյուշ բերդ 298
 Աննիբադ 22. 50
 Անտիոք 25. 35 Տիզրանէ
 գրաւուած. 48-9. 150.
 174. 227. 291 և այլն
 Անտիոքիա 44
 Անտիոքոս Գ Մեծ 18
 — Դ Եպիփան 24
 — Ժ Եւսեբիոս 35
 — արքայ Կոմագինէի 169
 — Կիլիկեցի մը 226
 Անտիոմ քղք. 90
 Անտիտաւրոս 20
 Անտոնիա 149 ծ.
 Անտոնինոս սպայ 286
 Անտոնիոս (Մարկոս) 107-
 120. 161. 280
 Աշխադար արքայ Հայոց
 195. 200

- Ապողոն (Փիւթեան) 362
 Ապպիան ճանապարհ 90
 Ապպիոս տես Կղաւղիոս
 Ասիա աշխարհ 12. 24.
 42. 98
 — նահանգ հո. 47 ծ. 50.
 71. 74-5. 224
 Ասորեստան 7. 8. 234.
 237. 292. 361
 Ասորի 20. 34. 69
 Ասորիք 8. 34. 35 գրաւ-
 ուած Տիգրանէ. 36. 48.
 62. 85. 102. 106. 132.
 140 և այլն
 Ասսիրիա նահանգ հո. 205
 Ատիլիոս Յուլիանոս 205
 Ատիտիոս Կոռնելիանոս
 216
 Ատոմ 143
 Ատրպատական 40. 60.
 109. 142. 213. 220.
 233-4. 262
 Արար, Արարացիք 40. 69.
 132. 236. 274
 Արածանի գետ. 63-69 պա-
 տերագմը. 73. 75. 181
 Արամ Թագաւոր 363
 Արաքս առսպլկն. Թգր.
 Հայոց 362
 Արբելա քղք. 40. 228
 Արիանոս Փլաւիոս զրվր.
 213. 344
 Արիարաթ Դ. Թգր. Կա-
 պադովկիոյ 23
 — Է 21
 — Ը 31. 33
 Արինթէոս զրվր. 303-4
 Արիոբարզան Կապ. 31-3.
 52. 71. 92. 106. 141-
 143
 Արիստորուղոս Թգր. 168
 Արմաւիր 197
 Արմէնիա նահանգ հո. 204
 Արմինիա սատրապուլթիւն
 պարս. 10
 Արշակ Մեծ Պարթև 161 ծ.
 361. 367
 — Ա արքայ Հայոց 151-2
 — Բ 230 ծ. 282 Թագա-
 ւորէ. 284 առնու զՈւլիմ-
 պիա. 288 երթայ Կե-
 սարիա. 289 ընդունի
 նուէրներ. 290-2 Յու-
 լիանու հետ. 295 մատ-
 նուի Յովիանոսէ. 296
 շինէ զԱրշակաւան. 296
 -7 գժտի նախարարաց
 հետ. 298-300 սպանուի.
 355
 — Գ 314. 315-7 բաժա-
 նում Թագաւորութեան.
 320
 Արշակաւան 296
 Արշակունիք 13-15. 135.
 140. 161-8 Է Հայս
 հաստատուիլնին. 228
 գերեզմաններ. 232 վերջ
 Է Պարսս. 323-7 վերջ
 Է Հայս. և այլն
 Արշարունիք 143
 Արշամ իշխող Ծոփաց 12
 — տարակուսական Թգր.
 Հայոց 366
 Արտաբազան իշխող Հա-
 յոց 12
 Արտագերս 143. 300. 303
 Արտանէս Թգր. Ծոփաց 34
 Արտաշատ 23 հիմնարկ.
 43. 44. 62. 64. 78. 81.
 97. 116. 149. 152. 163
 առնեն Պարթևք. 171-2
 աւերումն. 197. 219
 Պրիսկոսէ առեալ. 242.
 303

- Արտաշէս Ա. (Արտաքսիաս) արքայ Հայոց 12-15. 17. 18 թագաւոր. 19 առնու Մեծ Հայքը. 20 գրաւումները. 22 ազգային լեզու. 22-3 Աննիբադի հետ. 24 յաղթուի Անտիոքոս Գէն. 24-25 վրէժ առնու. 27 սերունդը. 122 ծ. անուան ձևը. 134. 367
- Բ 117. 121-2 դաշնակցի Պարթևաց հետ. 123 տիրէ Հայոց և Մարաց. 124-6. 137. 139. 141. 162
- Գ. (Զենոն) 149. 150 պսակումն Գերմանիկոսէ
- Դ. կամ Արտաշիր. 323 վերջին Արշակունին
- Արտաշիր Սասանեան 231-7. 352
- Արտաւազդ Ա. արքայ Հայոց 26. 28 ծ. 329-33
- Բ 96. 97 կրթութիւնը. 98-100 իր ժամանակի Հայաստանի նոր վիճակը. 101-106 կրասոսի հետ. 107-115 Անտոնիոսի հետ. 116 - 121 ձերբակալութիւն և մահ. 137. 141. 364
- Գ 143 ցեղով Մար.
- Իշխող Հայոց 12. 14
- արքայ Մարաց 110-1. 117. 122. 125. 141-2
- ախոյեան Տիգրան Գի 129-31
- Մամիկոնեան 193. 245
- Արտաւան Գ Պարթև 146. 148-54. 163
- Ե 228-31
- հայ նախարար 300-2. 304
- Արտեմիս 38 ծ.
- Արքեղայոս թգր. 126. 145 ծ.
- Աւիտիոս Կասսիոս զրվր. 218-9
- Աւրեղիանոս 248-50. 256
- Աւրեղիոս (Մարկ.) 216-7
- Ափրանիոս զրվր. 87. 91
- Ափրոդիտէ 38 ծ.
- Աքիմենեան 11. 161 ծ. 214
- Աքիմենիդէս 209 ծ. 215 ծ.
- Բարեւոն 41. 363
- Բարեւոնիա 25. 206-7. 218-9
- Բազայառինջ 38 ծ.
- Բազարատ Բազր. զրվր. Տիգրան Բի 35
- Բազր. զրվր. Խոսրով Բի 275
- Բազաւան 197
- Բազուաս զրվր. 32
- Բազրեանդ 146. 359
- Բալու 197
- Բակուր փեսայ Արտաւազդ Բի 105-6
- արքայ Մարաց 160. 180. 186
- Բ Պարթևաց 200
- արքայ Հայոց 217. 220. 222-3 երթ ի Հոովմ.
- Բակտրիա 18
- Բասեն 244
- Բարզանէս առասպելական թգր. Հայոց 363
- Բարզիմեր զրվր. 307. 309
- Բեզարդէ քղք. 261. 289
- Բելլոս առասպելիկն. թգր. Հայոց 362
- Բինակ բերդ 34

- Բիւզանդիոն 252. 321.
 356. 359
 Բիւթանիա 23. 32
 Բիւրոս 167
 Բնարեղ բերդ 53 ծ.
 Բորտոյ տ'Անցիոյ քղք. 90
 Բրիտանիա 268
 Բրուսիաս Բիւթ. 23
 Գազաղա քղք. 109
 Գաղատիա 23. 79. 85.
 92. 101. 178. 224
 Գաղերիոս Մաքսիմիանոս
 259. 260. 264. 271. 293
 Գաղղիացի 56. 94. 290.
 325. 343
 Գաղղիենոս 246
 Գաղղոս 243
 Գայիոս Կեսար 130 - 2.
 140-3
 Գանձակ 109
 Գաննի 155. 156
 Գարասու 197
 Գարաքիլիսա 197
 Գարեգին Ռշտունի 275
 Գելոնք 285
 Գերմանիա 325
 Գերմանիկոս 148-150
 Գերմանք 239
 Գլափիւրա 145 ծ.
 Գնէլ 297
 Գոթք 259. 312. 316
 Գոռ եղք. Տիգրանի 40. 69
 Գոտարզ Ա Պարթև 39 ծ.
 — Բ 154. 155
 Գորդիանոս Գ. 240. 252
 Գորդիոս Կապադ. 31
 Գուգարք 20
 Գրիգոր (Ս.) Լուսաւորիչ
 263. 266. 352
 Դակք 200
 Դամասկոս 35
 Դանիէլ Կոմս 307. 309
 Դանուր 259. 314
 Դարանաղիք 197
 Դարեհ Վշաասպեայ 10.
 161 ծ.
 — արքայ Մարաց 92
 Դափնիք 217
 Դելլիոս պատմագիր 114
 ծ. 116
 Դեկերալ 200
 Դեմետր Ա. 24
 Դենշապուհ 284
 Դերջան 20. 314
 Դիմոնաքս զրվր. 155
 Դիոկլետիան 251. 254-
 260
 Դիոտարոս արքայ Գաղա-
 տիոյ 92. 101
 Դիրաքիոն քղք. 189
 Դոմեաիանոս 191
 Դրերանոս (Պակատիոս)
 հռետոր 319
 Եգէական ծով 45
 Եգիպտոս 36. 111. 132.
 209. 236. 248. 250
 Եդեսիա 34. 40. 198. 205.
 208. 211. 247. 264.
 268. 366 և այլն
 Եկրատան 40
 Եկեղեաց 20. 81. 313. 316
 Եղեգիա քղք. 202. 217
 Եմեսա 115 ծ. 214
 Երակլէս 38 ծ.
 Երասիս 23. 166. 197
 Երատոյ Թագուհի, 129
 Տիգրան Դի հետ. 133.
 145 առանձին
 Երուսաղէմ 91
 Եւմենէս 23
 Եւրիպիդէս 105
 Եւրոպա, 10 նախկին հայ-
 րենիք Հայոց. 41. 45.
 218. 266. 299

- Եփեսոս 45
 Եփրատ 7. 24. 39. 51.
 103. 141. 153. 283.
 307 և այլն
 Զարեհ (Զարիադր) արքայ
 Մոփաց 12. 18-20. 33.
 — որդի Տիգրան Բի 77.
 Զարբիենոս 61. 137
 Զենոբիա կին Հռադամիզ-
 դի 165-6
 — թագուհի Պալմիրայի
 247-8
 Զենոն (Արտաշէս Գ) 148
 Զեզմա քղք. 24
 Զէյթուն 36
 Զիատա 197
 Զինդա 262
 Էջմիածին 229
 Էրզրում 197
 Թադէոս առաք. 196. 351
 Թէա Մուզա 128
 Թէոդոս Մեծ 316-319.
 324
 Թէոկրիտոս զրվր. 227-8
 Թիւ 38 ծ.
 Թիֆլիս 191
 Թուկիդիտէս զրվր. 221-2
 Թրակացիք 10. 57. 313.
 343
 Խաալիա 128. 143. 186.
 209. 241. 359
 Խրան 164. 231
 Խրոյսպահակ անցք 235.
 314
 Խւչքիւհսա 197
 Լարուրնիա 364-5. 372
 Լամպրիտիոս պատմգր. 3
 Լեզերդա 173
 Լիբանիոս 299
 Լիկաոնիա 50. 51
 Լիկինիոս 265. 268. 270
 Լիւկիա 143
 Լիւրիկէ 259
 Լուզիոս Կուիէտոս զրվր.
 207
 Լուկիոս Վերոս կայսր 216
 -23
 Լուկիոս Փաննիոս զրվր.
 71
 Լուկուլլոս 45 Կիւզիկէի
 մօտ. 48 Միհրդատը
 պահանջէ Տիգրանէն. 52
 արշաւէ ի Հայս. 55-7
 յաղթէ Տիգրանայ. 58-9
 առնու Տիգրանակերտը.
 62-8 Արաժանիի պա-
 տերազմէն միասով դառ-
 նայ. 69-70 առնու Մծբի-
 նը. 74-6 Լքուած Հոովմ
 քաշուի. 137. 335 յու-
 նասէր. 339-43 իր զօ-
 րաց թիւը
 Խալիւքք 20
 Խաղաիք 7-10. 316. 361
 Խառան 40. 240. 259. 291
 Խարբերդ 185 ծ.
 Խիլիոգոմ 291-2
 Խիոնիտ 285-6
 Խնուս 197
 Խոսրով Ա. Հայոց 193.
 233-6 յաղթէ Արտաշրի.
 237 օգնէ Հոովմայեցւոց.
 242 սպանուի Անակէն.
 352
 — Բ Հայոց 272. 273
 փախչի ապստամբներէն.
 275 յաղթէ Մազրթաց.
 — Գ Հայոց 315-6. 320
 գժտուի թիւն ընդ Արշա-
 կայ. 321
 — ? Հայոց 225 ծ.
 — Բ Պարթև 200. 206-8
 — զրվր. Պարթևաց 217
 Խոտենէ 81

- Խորենացի (Մովսէս) 358**
 -9 վարքը ըստ իրեն.
 360 աղբիւրներու և նիւթի բաժանումները. 361
 -3 առասպելական պամ.
 և անոր յարգը. 364-5
 աղբիւրները զէշ զործածելը. 366 Արգարները
 Հայ ընելը. 367 Արտաշէսեան հարստութիւնը
 չճանչնալը. 367-8 վարարշակի և Արշամի յոյժ
 տարակուսելի գոյութիւնը.
 369 Հայքը հարկատու դնելը. 369-70 Բ
 գրքին արժէքը. 371-2
 Գ գրքին արժէքը. 372
 իր անկեղծութիւնը. 373
 մնայուն յարգը. 374-5
 թարգմ. և ուսումնասիրութիւնք
Խորսենէ 20. 81
Խուրս 40. 69
Մաղէք քղք. 261. 289. 293
Մովք 12. 19. 22. 33. 34. 52. 85. 87. 92. 169. 261. 313. 343
Կալիգուլա 154
Կալլիմաքոս 70
Կանիդիոս Կրասսոս 107-8
Կապադովկիա 21. 23. 31. 33. 58. 92. 126. 230
 ստացուածք հայ թագաւորացի Կապ. 244 և այլն
Կապետեանք 325
Կապիտոլինոս պամգր. 3
Կապիտոլիոն 88
Կասսիոս (Աւիտ.) 218-9
Կասպիական նահանգ 20
Կասպից դրունք 152. 235 ծ. — ծով 7. 40
Կաստրա Մալրօրում 293-4
Կատաւոնք 20
Կատոն 212
Կաւկաս 95. 107. 191. Դոներ 213. 234-5. 332
Կարակալլա 225-9
Կարին 197. 313. 20 գաւառ
Կարկաղիոկերա մայրքղք. Մովաց 19
Կարոլինեանք 325
Կարոս 250-3. 256
Կարս 171
Կարքեղոնացի 22-3
Կելիոս Պոլլիոն 156-7
Կեսար (Յուլիոս) 101. 344
Կեսարիա Կապադ. 245. 288
Կեսերիկ գիւղ 185 ծ.
Կելիկիա 31. 37. 50. 51. 58. 71. 77. 85. 95. 150. 209. 251
Կիկերոն 84. 106-7
Կիմնազիոն 118
Կիրկէա աստուածուհի 309
Կիւզիկոս քղք. 45. 75. 224
Կիւլակ 300-4
Կիւրոս Ա. 151
Կղարջք 20. 81
Կղէոպատրա թագուհի Տիգրան Բի 31. 74
 — Ասորոց 35. 49 ծ.
 — Եզիպատոսի 115. 118. 120
Կղոզիոս (Ապպիոս-Պուլքեր) 48. 50. 74. 80-91
 ազատէ զՏիգր. Կրտսեր. 93 ծ.
 — Կայսր 154-5. 158
Կողիս արքայ Փոքր Հայոց 155

- կոմագինէ 36-7. 181. 207
 կոմոդոս 223 ծ.
 կոռնելիանոս 216
 կոստանդիանոս 265-72.
 278
 կոստանդիոս 271-90. 324
 կոստաս 278. 284
 կոտտա 339
 կորբուզոն 163. 169. 170.
 172. 173-9. 210. 344-7
 իր Յիշատակարանները
 կորդուք 34. 40. 61. 78.
 85. 87. 91. 137. 205.
 261. 291. 293
 կուադրատոս 158. 168.
 174
 կուր 7. 40
 կրասոս 68. 101-6. 112.
 128
 կրեաիկոս Սիլանոս 146
 կրման (կարմանիա) 231
 Հալմոս գետ 362
 Համագասպ 193
 Հանձիթ 19
 Հատրա քղք. 208. 225
 Հարմոզիկա քղք. 191
 Հելուեաիոս Պրիսկոս 158
 Հենիոք 222 ծ.
 Հերովդէս Մեծ 144 ծ.
 — Քաղկիդեայ 169
 Հնդերոպականք 8
 Հնդկաստան 206
 Հոկտաւիանոս 113
 Հոմս 214
 Հոնք 234. — Դուռն 235
 ծ. 315
 Հոադամիզդ արքայ Հայոց
 156. 157-8 կը սպաննէ
 զՄիհրդատ. 165-6 փա-
 խուստը
 Հոոդոս 130
 Հրահատ Ա Պարթևաց 330

- Գ 52. 60. 78. 85. 92
 — Դ 109-10. 117. 122.
 125. 127
 Հրահատ(ակէս) Ե 128-30.
 140
 Հրանդէա (Հրանդական)
 163. 179. 184
 Հրեայ 18. 36
 Զիրաւ 305
 Ճանիկ 316
 Ճէզիրէ իպն Օմար 261
 Ճոր 235 ծ.
 Մագնենտիոս 278. 279
 Մագնեսիա 18
 Մագրութք 235. 275. 280
 Մալաթիա 52. 184
 Մակեդոնացիք 11. 212
 Մակեդոնիա 45. 94
 Մակրինոս 228-31
 Մայաֆարկին 42
 Մամիկոնեանք 192-4 գա-
 լուստ ի Հայս. 245
 Մանազկերտ 197
 Մանգէոս զրվր. 54. 58
 Մանլիոս Մալտինոս 33
 Մանիսարէս 205
 Մանուէլ Մամիկ. 246 ծ.
 314
 Մասսագետք 235
 Մար Աքաս կատինա 360
 Մարաշ 36
 Մարաստան կամ Մարք
 20. 24. 40. 122. 220.
 237. 303 և այլն
 Մարիամնէ 145 ծ.
 Մարկոս Աւրեղիոս 216
 Մարտիոս Վերոս 219-21
 Մարք 24. 56. 92. 142.
 233 և այլն
 Մարսենտիոս 265. 267
 Մարսիմիանոս (Պաղեր.)
 239-40. 259

- Մաքսիմիանոս Ա. կայսր**
 239-40
 — **Բ Դայա** 264-9
Մաքսիմոս զրվր. 207
Մեզիա 178 ծ. 259
Մեզոպոտամիա 205
Մելիտինէ 52. 184. 197
Մեծ հովիտք 60
Մեհոնդակ Ռշտունի 275
Մենեմախոս 71
Մեսենէ 231
Մեսրոպ Ս. 321-2. 357
Մետելլոս 88
Մերիբան 289
Մերովինկեանք 136
Մերուժան կամ Մեհրու-
ժան ժառանգ Ջարեհի 21
 — զրվր. **Տիգրանի** 53-4.
 337
Մէողիտեան ծով 244
Միլան 268-9
Միլոն 91
Միհր 97 ծ. 296
Միհրան կուսակալ 11
 — զրվր. **Տիգրանի** 32
Միհրդատ արքայ Փոքր
Հայոց 23
 — **Ա Պարթևաց** 26. 329.
 332
 — **Բ** 28. 29. 330-32
 — **Զ** 207
 — **Զ Պոնտացի** 29-83.
 336
 — արքայ **Մարաց** 56. 72.
 74
 — արքայ **Հայոց.** 151 **Տի-**
բերէն զրկուած. 154
Հոովմի շղթայս. 156-7
սպանութիւնը
 — **եղբայր Բակուրի** 223
Միհրոբուզան 21 ծ.
Միջագետք 8. 39. 62 **և**
այլն
- Մծբին** 39. 69. 70. 205.
 279 **և այլն**
Մծուրք 197-8
Մոկք 291. 293
Մոնէզ 175-6
Մոնոբագ 181
Մոսիւնիք 20
Մոսկեանք 171
Մոպսուքրենէ 290
Մուզա (Թէա) 128
Մուզոնիանոս 284
Մումմիոս 172
Մուշ 172
Մուրատ գետ 197
Մուրենա զրվր. 45. 56.
 58. 339
Մուրսա 279
Յագկերտ Ա. 332
Յամբլիքոս Թզր. 115 ծ.
Յերապոլիս 305
Յոյնք 10 նահանջ **Բիւրին.**
 34. 44. 58. 59 մատնեն
զՏիգրանակերտ. 71.
 138. 316-7
Յովիանոս 293-5. 297.
 302. 311. 324
Յովսեպոս 364-5
Յոտապէ 118
Յուլիանոս 290-2. 314
Յուլիոս կեսար 89
 — **Պելիկնոս** 158
Յունաստան 45. 356. 362
Յունիոս Պալմատոս 239
Ներատիոս Պրոկլոս 216
Ներոն 134. 166. 168-9.
 173. 181. 183. 185-6.
 187 պսակէ **զՏրդատ.**
 188-191. 199. 201-3
Ներոնիա 188
Ներսէս արքայ Պարսից
 258. 260
Ներսէս Մեծ, հայրապետ
 299

- զրվր. Պարսիկ 281-2.
285 (?)
- Նէապոլիս 186
- Նէոպտղոմէոս կուսակալ
11
- Նիզէր 224
- Նիկեփորիում 259
- Նիկոմիդէս Բ 32
— Գ 32-3
- Նիկոմիդիա 225. 269
- Նիկոպոլիս 116
- Նինուէ 40
- Նոր-քաղաք 199. 214. 222
- Շահ Աբաս 37
- Շապուհ Ա. 240. 242-5.
251
— Բ 197. 271-315. 324
— Գ 315. 317
— արքայ Հայոց 322
- Շոշաստան 231
- Ողենատոս 245-6
- Ողոմանդիս 19
- Որմիզդ իշխան 253
- Որոզ 88
- Որոնտէս 11. 12
- Որոտ Ա. արքայ Պարթևաց
39 ծ.
— Բ 103-4. 329
— որդի Արտաւանայ 152
- Որքոմենոս քղք. 45. 47.
- Ումիտիոս կուադրատոս
158. 168
- Ուրարտացիք 7. 8. 361.
363
- Ուրբիկիոս 312
- Ուրծիկինոս 281. 287
- Պալմատոս 239
- Պալմիրա 237. 245-6
- Պակատիոս Գրեքանոս 319
- Պաղեստին 106. 250
- Պայազիտ քղք. 172
- Պաննոնիա 274
- Պապ արքայ Հայոց 300-2
ի Նէոկեսարիա. 302
դարձը. 305-9 փախուս-
տը Տարսոնէն. 310-11
սպանուիլը. 355
- Պապիրիոս 90
- Պարթամասիր արքայ Հա-
յոց 200-1. 202 Տրա-
յիանու առջև. 203-4
սպանուիլը. 209 ծ.
- Պարթամասպատ 207-11
- Պարիատրիս 20
- Պարսիկ նահանգ 231
- Պարսկաստան 14. 37 և
այլն
- Պելիկնոս 158
- Պետոս 178-82. 345-6
- Պերգամացիք 23
- Պերիտոս 35
- Պիթլիս 42. 172
- Պիոս (Անտոնինոս) 213-6
- Պիսոն 148
- Պլուտարքոս պատմիչ, կող-
մնակցական ոգին 46. 51
ծ. 57 ծ. 63-9. 71. 73.
քիչ արժանահաւատու-
թիւնը 334-43
- Պուլեմոն 148
- Պուլիոն 156-7
- Պուլիս 272. 317
- Պոմպէոս 75. 79. 137.
148. 210
- Պոնտոս 29. 35. 45. 48.
52. 70. 72. 74. 236.
244
- Պտղոմայիս 48
- Պրինտիզիոն 188
- Պրիսկոս զրվր. 219. 220
— կուսակալ 158
- Պրոքոս 250. 256
- Պրոկոպիոս զրվր. 291-2
- Պրուսիաս 50

- Ռիխտմար 316
 Սաբինիանոս 287
 Սալուսարիոս տեղակալ 314
 Սազակ Ս. հայրապետ 321.
 323. 357
 Սահառունիք 354
 Սամոսատ 202
 Սանատրուկ արքայ Հայոց
 194. 197 շինէ զՄծուրք.
 199 տիրէ Եդեսիոյ
 — Պարթև 207. 211. 351
 Սանդուխտ 196. 351
 Սասանեանք 14. 231 գա-
 հակալուծիւն. 294. 318.
 324. 326
 Սատալա 202. 249
 Սարակինոսք 236. 248.
 254. 316
 Սարմատք 152
 Սարիզ քղք. 34
 Սերաստիանոս կոմս 291
 Սելենէ 35
 Սելեկեանք 11. 12. 17.
 18. 24. 34. 37. 98.
 367
 Սելեկիա Որոնտէսի վրայ
 44
 — Տիգրիսի վրայ 206. 218
 — բերդ 49 ծ.
 Սելեկոս Նիկատոր 11. 17
 Սենեկա 167
 Սևերիանոս զրվր. 217
 Սևերոս զրվր. 195. 211
 Սևերոս (Սեպտ.) կայսր
 224
 Սեքստիլիոս 54
 Սիզալկ քղք. 34
 Սիզոն 35. 111
 Սիլանոս 146
 Սինգարա 278. 288
 Սիրիա 216
 Սիրմիոն 285
 Սկիպիոն Ափրիկեցի 18
 Սկիւթք 153. 244. 251
 Սոկրատ Բիւթանացի 32
 Սղերդ 42
 Սոյեմ արքայ Ծովաց 169.
 215 ծ.
 — արքայ Հայոց 214. 220.
 223 երկրորդ անգամ
 Սոնատիոս 339
 Սուլլա 31. 32. 37. 39.
 45. 46. 344
 Սուրէն զրվր. Որոտի 103.
 105
 — զրվր. Շապուհի 312
 Սպանիացի 94
 Սպարտիանոս պտմզիր. 3
 Սպորակիոս 317
 Ստատիանոս զրվր. 109-
 112. 115
 Ստատիոս Պրիսկոս զրվր.
 219
 Ստիլիքոն զրվր. 317
 Վարալաթ 247 ծ.
 Վաղարշ Ա. Պարթեւաց
 160. 163. 165. 169-86.
 191. 193. 199
 — Բ 215
 — Գ 215-8
 — Ե 226
 — արքայ Հայոց 198.
 207. 210. 213 կուռի
 Ալանաց հետ. 214 կը
 հալածուի Պիոսէն. 220.
 221. 230 ծ.
 Վաղարշակ եղբայր Ար-
 շակ Պարթևի 26 ծ. 161.
 361. 367-8 տարակու-
 սական թգր. 369
 — եղբայր Հայոց Արշակ
 Գի 314
 Վաղարշապատ 199. 214.
 222. 236. 356

- վաղերիանոս 245
 վաղէս 301-313. 324
 վահան Մամիկ. 246 ծ.
 356-7
 — Ամատունի 275
 վաչէ Մամիկ. 275-6
 վասակ զրվր. Պարթևաց
 180. 193
 — Մամիկ. 298
 վասպուրական 20. 146
 վատոմար զրվր. 305
 վարազ Կամինեան 275
 վարազդատ արքայ Հայոց
 311. 314 կը հալածուի
 վարդ 193
 վարդան արքայ Պարթև-
 աց 154-5. 163
 — Մամիկոնեան 246 ծ.
 357
 վեսպասիանոս 189. 191.
 199
 վերոս կայսր 216-223
 — զրվր. 219
 վիբիոս Մարտոս 155
 վիկտոր 311-3
 վիտելիոս 151. 153. 189
 վիրք կամ վրացիք 20.
 40. 88. 107. 152. 234
 և այլն
 վոնոն արքայ Հայոց 146.
 149
 վոպիսկոս պատմիչ 3
 վուլկատիոս պատմիչ 3
 վոամ Բ 251-4. 257
 — Ե 322-3
 վոամշապուհ արքայ Հա-
 յոց 321-3
 վրաստան 290. 304
 վրկանք 171. 174. 190
 Տաբերական կամուրջ 242
 Տալաւրեան բարձունք 72
 Տամաշապուհ 284
 Տայք 20
 Տարիէլ անցք 235 ծ.
 Տարսոն 245. 290. 306.
 309
 Տաւրոս 7. 54. 55. 62.
 66. 179. 224
 Տերենտիոս կոմս 302-6.
 309
 Տէրպէնտ անցք 230 ծ.
 235 ծ. 315
 Տիաաին 197
 Տիբերիոս 126. 128-30.
 145. 148
 Տիբերիս 90
 Տիգրան Կիւրոսի ժամա-
 նակակից 362-3
 — Ա. արքայ Հայոց 26.
 333
 — Բ Մեծն 22. 27 պա-
 տանդ. 27 թագաւոր. 29-
 33 Միհրդատայ հետ. 31-
 32 զրաւէ Կապադով-
 կիան. 33 Ծովքը. 34
 Կորդուքը. 35 Ասորիքը.
 36. 37. 39 Միջագետքը.
 40 Ադիարէնը և Մարքը.
 42 հիմնէ Տիգրանակեր-
 տը. 46. 48 Միհրդատը
 չյանձներ. 52 Լուկուլլոս
 մանէ ի Հայս. 53 հար-
 ճեր. 54-57 ճակատ Տի-
 գրանակերտի. 58 առումն
 քաղաքին. 62-68 Արա-
 ծանիի կռիւը. 71 Տի-
 գրան աւերէ Կապադով-
 կիան. 78. 79. 82. 86
 դաշինք Պոմպէի հետ.
 91-5 վերջին տարիները.
 134. 331. 336. 341 իր
 զօրաց թիւը. 360. 364
 — Կրտսեր, որդի Տիգրան
 Բի. 58 ծ. 78 ապրս-

- տամբի հօրմէն. 79 պար-
թեաց հետ կռուի հօրը
դէմ. 81 առաջնորդէ Պոմ-
պէի. 83. 87 գերի Պոմ-
պէի. 88 ի Հոովմ. 89
Կղողիոսէ ազատուած .
90-1 փախուստը և մա-
հը. 96 ծ. 137
- Գ 126 Տիբերիոսէն
պսակուած ի Հայս. 128.
137
- Դ 128-9 իշխէ Երա-
տոյի հետ. 130-3. 140.
145
- Ե 144-6 հրէական ծա-
գումով
- Զ 173 հրէական ծա-
գումով. 345
- Տիգրանակերտ 37. 39. 42.
44 շինութիւնը. 54. 58.
59 կործանի. 64. 71.
74. 97. 165 առնեն
Պարթևք. 173 գրաւուի
Կորբուղոնէն. 338. 346
- Տիգրիս 40. 42. 212. 254.
283. 292. 316
- Տիգրոն 99. 206. 218.
244 և այլն
- Տիմարքոս 24
- Տիմեսիթէոս 240
- Տիրան արքայ Հայոց. 276
երկմիտ քաղաքականու-
թիւնը. 280 Շապուհէն
գերի բռնուի
- Տիւրոս 35
- Տմորիք 20
- Տրայիանոս կայսր 195-
210. 225
- կոմս 305. 309-10
- Տրդատ Ա. (Տիրիթ) արքայ
Հայոց. 160. 165 հա-
ւածէ զՀոադամիզդ. 171.
- 175 Վաղարշէն պսա-
կուի. 184 տեսութիւն
Կորբուղոնի հետ ի Հը-
րանդէա. 186-7 ճամբոր-
դութիւնը և պսակումն ի
Հոովմ. 188 վերականգնէ
զԱրտաշատ. 190 պատե-
րագմ Աւանաց հետ. 198.
202
- Բ 229-30 դաշինք Մա-
կրինոսի հետ. 232. 348
- Գ (Սուրբ). 242. 243.
244 փախուստը. 252
դարձ. 256-7 պսակումը.
258-62. 263 քրիստո-
նեայ. 264-5 յաղթէ
Հոովմայեցւոց. 266-70
դաշինք Կոստանդիանո-
սի հետ. 270 մահը. 299.
190-192 ծ. Տրդատ Աի
հետ շփոթուած. 348.
352
- հայ նխորդ. մը 222 ծ.
- իշխանագուն պարթև
226
- ախոյեան Արտաւանայ
151. 153
- Տրեպելլիոս պատմիչ 3
- Տրիարիոս զրվր. 71. 337
- Փաբիոս զրվր. 71. 337
- Փայտակարան 20
- Փաննիոս Լուկիոս զրվր. 71
- Փառանձեմ 298. 300-3
- Փառնակ 23
- Փասիս 244
- Փարպեցի (Ղազար) 351.
356 վարքը. 357 զը-
րուածքը. 358 հրատա-
րակութիւնը և ուսումնա-
սիրութիւնը
- Փարսման արքայ Վրաց
151-4. 156. 158. 171

- արքայ Վրաց 213
 Փաւնիտիս 20
 Փաւստոս (Բիւզանդ) 351.
 353 վարքը. 354 գրուած-
 քը և անոր յարգը. 354
 հրատարակութիւնք և ու
 սումնասիրութիւնք
 Փիլիպպոս 240. 252. 253
 Փիւթողորիս 148-9 ծ.
 Փիւթողորոս 148-9 ծ.
 Փիւնիկէ 35. 36. 85. 95.
 250.
 Փլաւիոս 88-90
 Փոկիա 362
 Փոքր Ասիա 10. 18. 45.
 46. 164. 244. 268
 Փոքր Հայք 12. 23. 92.
 116. 124. 126
 Փոքր Մարք 234
 Փոբիւզացիք 9. 10
 Փրատա 109. 111. 115
 Քաղկիս 169
 Քարիրա 75
 Քարպ 259
 Քերոնէ 45. 47
 Քսերքսէս իշխող Մովսէս
 12
 Օգոստոս 124-147. 201.
 210. 249. 344
 Տարկին 42



